

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն  
(Հայաստան)



Արեւմտեան Հայաստանի հայերու եւ  
Արեւմտեան Հայաստանի իրաւունքներու պաշտպանութեան  
իրաւական-քաղաքական միասնական փաթեթ

(Փաստաթուղթերու ժողովածու)

5-րդ լրամշակուած հրատարակութիւն

2019 թ.



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան)  
Դրօշը

հտդ 941(479.25):32.001  
ԳՄԴ 63.3(2h)+66.01  
ISBN 978-9939-9105-6-7  
(c) ՆՏ Հովիթինգ, 2019  
Նոյեան Տապան

Հրատարակում է՝

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան եւ  
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) համատեղ որոշմամբ:

(5-րդ լրամշակուած հրատարակութիւն)

Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի իրաւունքներու պաշտպանութեան իրաւական-քաղաքական միասնական փաթեթ. Երեւան, ՆՏ Հովիթինգ, 11 օգոստոսի, 2019 թ.:

Ժողովածուն կը ներկայացնէ Հայկական Հարցի վերջնական կարգաւորման, Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան, ինչպէս նաեւ Հայաստանի նկատմամբ հայութեան իրաւունքներու պաշտպանութեան իրաւական-քաղաքական փաթեթի առանցքային-հիմնական բաժինը, անոր մաս կազմող հոչակագրերն ու հրամանագրերը, որոշումներն ու յայտարարութիւնները:

5-րդ լրամշակուած հրատարակութիւնը կը պարունակէ նոր կարեւոր փաստաթուղթեր, որոնք զետեղուած են ժողովածուի բոլոր գլուխներուն մէջ:

Ստորեւ կը ներկայացնենք Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) պաշտօնական կայքէջերը, ուր կ'ընաք գտնել վերոյիշյալ նիւթերը, այդ թւում՝ ժողովածուի հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, ռուսերէն, թուրքերէն լեզուներով օրինակները «Իրաւական փաթեթ» բաժնին մէջ. [www.western-armenia.info](http://www.western-armenia.info), [www.parliament-wa.info](http://www.parliament-wa.info), [www.gov-wa.info](http://www.gov-wa.info), [www.government-western-armenia.info](http://www.government-western-armenia.info), [www.citizenship-western-armenia.info](http://www.citizenship-western-armenia.info), [www.elections-western-armenia.info](http://www.elections-western-armenia.info), [www.hamshenian.info](http://www.hamshenian.info):

Կառավարութեան եւ խորհրդարանի էլ. հասցէներն են. [gov-westernarmenia@mail.ru](mailto:gov-westernarmenia@mail.ru), [parliamentwesternarmenia@gmail.com](mailto:parliamentwesternarmenia@gmail.com), [citizenshipwesternarmenia@gmail.com](mailto:citizenshipwesternarmenia@gmail.com):

Ժողովածուն այլ լեզուներով հրատարակելու պարագային բնագիր կը համարուի հայերէնը:

Շնորհակալութիւն կը յայտնենք Հայրենակցական Միութիւններու Խորհուրդի «Բնօրրան» հանդէսի ղեկավար - իմբազիր Ժոզեֆ Ավետիսեանին, ում նախաձեռնութեամբ, ելնելով ժամանակի հրամայականէն, շարք մը կարեւոր նիւթեր 2013 թ. հրապարակուեցան հանդէսին մէջ (թիւ 1-6 (21-26), էջ 208-235):

**ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	8
<b>ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ</b>	10
<b>ԳԼՈՒԽ I</b>	
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ Իրաւական-քաղաքական ՀԻՄՔԵՐԸ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ Իրաւական-քաղաքական ՀԻՄՔԵՐՈՒ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՓԱԹԵԹԸ	
<b>Հայկական Հարցի կարգաւորման իրաւական-քաղաքական հիմքերը</b>	11
<b>Յամառօտ տեղեկանք Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) ձեւաւորման իրաւական-քաղաքական հիմքերու մասին</b>	14
Հայոց Ցեղասպանութեան դատապարտումը Մեծ Բրիտանիոյ, Ֆրանսայի, Ռուսիոյ կողմէ, 24 Մայիս 1915 թ.	15
Թիրքահայաստանի մասին հռչակագիրը, 1918 թ. Յունուար 13	16
Երիտթիւրքերու դատաւարութիւնը (1919-1920 թթ.)	17
Սեւրի խաղաղութեան պայմանագիրը	19
ԱՄՆ 28-րդ նախագահ Վուոքո Ուիլսոնի կայացուցած Իրաւարար վճիռը, 22 Նոյեմբեր 1920 թ.	20
Կիլիկիոյ անկախութեան արտը	20
<b>ԳԼՈՒԽ II</b>	
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՆՆԵՐՈՒ ՁԵՒԱԻՈՐՈՒՄԸ (հիմնարար փաստաթուղթեր)	
Արեւմտեան Հայաստանի հայերու պետականաստեղծ 10-ամեայ գործունէութիւնը	24
Արեւմտեան Հայաստանի հայերու Ազգային Խորհուրդի հիմնադիր ժողովի որոշումը, 17 դեկտեմբեր 2004 թ.	26
Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքի հռչակագիրը, 17 դեկտեմբեր 2004 թ.	26
Հռչակագիր Արեւմտեան Հայաստանի հայերու Ազգային Խորհուրդի	28
Որոշում Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի մշտական, զինուած, դրական չեզոքութեան վերաբերեալ	31
Հրամանագիր Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշի մասին	37
Հրամանագիր Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան զինանշանի մասին	38
Հրամանագիր Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնապաշտպանութեան ուժերու ստեղծման մասին, հիմնական նպատակ ունենալով պաշտպանելու հայրթիւնն ու Հայաստանը	38
Հրամանագիր Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը որպէս շարունակող պետութիւն	40
Հրամանագիր Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը մշակելու վերաբերեալ	42

<b>ԳԼՈՒԽ III</b>	
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՄԱԿ-ԻՆ ԵՒ ՄԱԿ-Ի ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ	
Ուղերձ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի անդամներուն, Սեւրի խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններուն, միջազգային ընկերակցության անդամ պետություններուն Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու վերաբերեալ	44
Դիմում Ապտիւլլահ Կիլիւն, Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահին	45
Ուղերձ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին, ՄԱԿ-ի անդամ պետություններուն, Սեւրի խաղաղութեան դաշնագիրը ստորագրած պետություններուն, 24.04.2015	47
Ուղերձ Համայն հայութեան, Արեւմտեան Հայաստանի հայերուն ու քաղաքացիներուն, հայ անհատին ու հայկական կառոյցներուն, 24.04.2015 թ.	48
Ուղերձ ՄԱԿ-ի անդամ երկիրներու խորհրդարաններուն, 25.04.2015 թ.	49
Ուղերձ ՄԱԿ-ի անդամ երկիրներու կառավարություններուն, 26.04.2015 թ.	50
<b>ԳԼՈՒԽ IV</b>	
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԵՒ ՆԻԹԵՐ	
Հոչակագիր Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին	52
Որոշում Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորող Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովի	56
Քաղուածք № 1 Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 1-ին նստաշրջանի 1-ին նիստի արձանագրութենէն	59
Քաղուածք № 2 Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 1-ին նստաշրջանի 2-րդ նիստի արձանագրութենէն	62
Յայտարարութիւն Հայերի ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերու շուրջ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ռազմավարութեան մասին	65
Յայտարարութիւն Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ասորիների եւ յոյների ցեղասպանութիւնը դատապարտելու մասին	74
Օր է ն ք Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան լեզուի մասին	75
Ուղերձ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի անդամ պետությունների խորհրդարաններին (Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ ուղղուած Ադրբեջանի Հանրապետութեան յարձակման վերաբերեալ)	76
Օր է ն ք	77

«Մերի խաղաղութեան պայմանագիրը վաերացնելու մասին, ստորագրուած 10 օգոստոս 1920 թ., Մերում»	
Օր է ն ք «Օովային Իրաւունքի մասին» ՄԱԿ-ի Համաձայնագիրը (Կոնուենցիայ) վաերացնելու մասին, ստորագրուած 10 դեկտեմբերի 1982 թ.՝ Մոնտեգո-Բէյ քաղաքում, եւ 29 յուլիսի 1994 թ. «Օովային Իրաւունքի մասին» ՄԱԿ-ի Համաձայնագրի (Կոնուենցիայ) XI մասի համաձայնութեան իրականացման վերաբերեալ»	78
Օր է ն ք «Պետութիւնների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին» Համաձայնագիրը (Կոնուենցիայ) (ստորագրուած 26 դեկտեմբեր 1933 թ., Համաամերիկեան պետութիւնների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեւիդէոյի Կոնուենցիայ), որպէս պետութիւնների իրաւունքներ եւ պարտականութիւններ ճանաչելու մասին»	80
<b>ԳԼՈՒԽ V</b>	
<b>ԾՐԱԳՐԱՅԻՆ ՅՕՂՈՒԱԾՆԵՐ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ</b>	
Ո՞րն է Թուրքիայի Հանրապետութեան արեւելեան սահմանը հարեւանների հետ	82
Հայկական Հարցը եւ Թուրքիոյ նոր-օսմանական քաղաքականութիւնը, մարտահրաւերներ եւ սպառնալիքներ	84
Հայ ժողովուրդի մշակութային ու հոգեւոր արժէքներու իւրացումն ու չնչացումը՝ եւ Թուրքիոյ նոր-օսմանական քաղաքականութիւնը, մարտահրաւերներ եւ սպառնալիքներ	87
Մերձատր Արեւելքում եւ Արեւմտեան Հայաստանում ապրող հայութեանը պէտք է դիտել որպէս Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան չորրորդ բաղադրիչ	91
Պէտք է օգտագործենք բոլոր միջոցները՝ օգնելու համշէնահայերին՝ վերադառնալու իրենց հայկական արմատներին	93
«Ազգային ինքնութենէն հեռացած հայերն աշխարհի տարածքին» թեմայով Կլոր սեղանի մասնակիցներուն որոշումը	95
Հայկական Հարցի լուծման վերաբերեալ Եւրամիութեան, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնութեան դիրքորոշումները	96, 99, 101
<b>ԳԼՈՒԽ VI</b>	
<b>ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի որոշումներն ու նիւթերը (11.06.2017)</b>	
Քաղուածք № 1 Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի արձանագրութիւնից	105
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի լիազօրութիւնները դադարեցուած են	112
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը նոր նախագահ ունի	116
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետը վերահաստատուել է իր պաշտօնում	116
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահի ուղերձը պատգամաւորներին ու պաշտօնեաներին	117
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետի ուղերձը պաշտօնեաներին ու պատգամաւորներին	121
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահի ուղերձը պաշտօնեաներին ու պատգամաւորներին	128

Արեւմտեան Հայաստանի, այսպէս կոչուած, կառավարութիւնների մասին	133
<b>ԳԼՈՒԽ VII</b>	
<b>ԴԻՄՈՒՄՆԵՐ ՄԱԿ ԵՒ ՅՈՒՆԵՍԿՕ</b>	
(2018-2019 թթ.)	
Միջազգային առաւել կարեւոր այն Պայմանագրերի, Կոնուենցիաների, Հռչակագրերի եւ Կանոնադրութիւնների ցանկը, որոնք ճանաչել, որոնց միացել եւ վաւերացրել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան)	137
Մամլոյ հաղորդագրութիւն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) դիմել է ՄԱԿ՝ կեանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) հաստատումը ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճռով սահմանազատուած տարածքի վրայ	140
Մամլոյ հաղորդագրութիւն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) դիմել է ՄԱԿ՝ Հայաստան պետութեան եւ Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ սահմանազատումն իրականացնելու վերաբերեալ առաջարկով	141
Բաց նամակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխաւոր տնօրէնին, տիկին Օդրէ Ագուլէ-ին	142
ԴԻՄՈՒՄ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Անվտանգութեան Խորհրդի անդամ-պետութիւններին, Եւրոպական Խորհրդարանին, Եւրոպայի Խորհրդի անդամ-պետութիւններին, յոյն, հայ եւ ասորի ժողովրդներին, նրանց հոգեւոր ու ազգային առաջնորդներին, ինչպէս նաեւ Մեծ Մերձաւոր Արեւելքի եւ Բալկանների ժողովրդներին, ում պատմական իրաւունքները ոտնահարուած էին Թուրքիայի պետութեան եւ կառավարութիւնների կողմից (Կիպրոսի Հանրապետութեան հիւսիսային մասի՝ Թուրքիայի Հանրապետութեան կողմից բռնազաւթման 45-ամեակի առթիւ)	145
<b>ՀԱՒԵԼՈՒՄՍ</b>	
Ինքնութեան եւ քաղաքացիութեան դիմում	150
Ինչպէս ստանալ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն	151
<b>ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ՔԱՐՏԷԶՆԵՐ</b>	
	153-159

## ՆԱԽԱԲԱՆ

Հայկական Հարցի սկզբնաւորումէն (1878 թ.) եւ Հայերու ցեղասպանութենէն (1894-1923 թթ.) յետոյ ինկած ժամանակահատուածին Հայկական Հարցի վերջնական կարգաւորման նոր օրակարգ (ազգային ծրագիր) չէ ձեւաւորուած, բացառութեամբ 1973-1985 թթ. Նորագոյն զինեալ-ազատագրական պայքարի գործունէութեան ու ծրագրի: Փոխարէնը՝ Արտերկրի հայութեան օրակարգին մէջ տեղական համայնքներու կազմաւորման, Հայապահպանութեան, Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան ապագային հետ կապուած խնդիրներն էին: Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան օրակարգին մէջ Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան վերածնունդի ու զարգացման, Հայրենադարձութեան խնդիրներն էին: Հայաստանի Հանրապետութեան օրակարգին մէջ Արցախի հայութեան, Արցախի եւ Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան, շրջափակման յաղթահարման, ինքնորոշման իրաւունքի, ազատութեան եւ անկախութեան հաստատման ու պահպանման խնդիրներն են:

Եւ ինչպէս 1980-ի վերջերն ու 1990-ի սկզբները հայ հասարակական-քաղաքական միտքը, մեծ հաշուով, պատրաստ չէր Հայաստանի Հանրապետութեան անկախութեան վերահաս իրողութեան, այնպէս ալ այսօր ան պատրաստ չէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ներառեալ Կիլիկիոյ) անկախութեան անկասելի վերահաս իրողութեան:

Այսօր, սակայն, հակուած ենք այն մտքին, որ Հայկական Հարցի վերջնական կարգաւորման նոր օրակարգ կը ձեւաւորուի 2004-2014 թթ. ընթացքին, երբ 2004 թ. Դեկտեմբեր 17-ին՝ Շուշիի մէջ, կը հիմնադրուի Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը: Նոյն օրը կ'ընդունուի հռչակագիր Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքին վերաբերեալ, իսկ 2007 թ. հռչակագիր Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներուն վերաբերեալ, իբրեւ Հայկական լեռնաշխարհի բնիկներ: 2011 թ. Փետրուար 4-ին կը յայտարարուի Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան կազմաւորման գործընթացին սկիզբը: 2014 թ. Յունուարին նախօրօք կայացած ընտրութիւններու միջոցով կը ձեւաւորուի Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը), որն ալ կ'ընտրէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ:

Այստեղ պէտք է յատուկ նշել Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի կողմէ ՄԱԿ-ի Բնիկ Ժողովուրդներու Փորձագիտական յանձնաժողովին ծիրէն ներս 2006-էն ի վեր իրականացուած աշխատանքը եւ անոր հիման վրայ ստեղծուած Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնութեան եւ քաղաքացիութեան կառոյցը: Այս իրաւական քաղաքական հիմքին վրայ կը ձեւաւորուի Արեւմտեան Հայաստանի պետական համակարգը, որուն միջոցով ալ կ'իրականացուի Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան ողջ գործընթացը:



Այսպիսով տեսանելի է, որ Հայկական Հարցի կարգաւորման եւ Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան նոր օրակարգի ձեւաւորումը սերտօրէն կը կապուի երկու հիմնական հարցադրումներու հետ.

ա) Արեւմտեան Հայաստանի նկատմամբ Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան, աւելի ստոյգ՝ Հայաստանի նկատմամբ հայութեան իրաւունքներու պաշտպանութեան, եւ

բ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) պետական համակարգի ձեւաւորման:

Այս ժողովածուն կը ներկայացնէ Հայկական Հարցի վերջնական կարգաւորման, Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան, ինչպէս նաեւ Հայաստանի նկատմամբ հայութեան իրաւունքներու պաշտպանութեան իրաւական - քաղաքական փաթեթի հիմնական բաժինը, անոր մաս կազմող հոչակագրերն ու հրամանագրերը, որոշումներն ու յայտարարութիւնները:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

01.09.2015 թ.

## Հրատարակչության ԿՈՂՄԵՆ

Շատերուն համար Արեւմտեան Հայաստանը կը համարուի կորսուած տարածք եւ քիչերը գիտեն, որ Հայաստան պետութիւնը իբրեւ Հայկական պետութիւն ճանչցուած է Փարիզի վեհաժողովին կողմէ դեռ 1920 թ.-ի Յունուար 19-ին: Շատերը կարելոր չեն համարեր 1920-ին կայացած այն կարելոր որոշումները, ըստ որուն՝ Հայաստան պետութեան սահմանը Թուրքիոյ հետ սահմանագծուած է ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրօ Ուիլսոնի կողմէն կայացուած Իրաւարար վճիռով եւ որ այդ որոշումները առկայ են Սեւրի խաղաղութեան պայմանագրի Հայաստանին վերաբերող յօդուածներուն մէջ:

Ըստ էութեան, առ այսօր, նոյն միջազգային իրաւա-քաղաքական դաշտին մէջ կայացուած եւ գործող այդ որոշումները բաւարար են, որպէսզի արդէն իսկ գոյութիւն ունենայ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան պետութիւնը):

Գոյութիւն ունեցող հակափաստարկը այն է, որ եթէ ցեղասպանութեան հետեւանքով հայերը այդ տարածքներուն մէջ չեն ապրիր, ուրեմն Հայաստան պետութեան վերաբերեալ կայացուած որոշումները կորսնցուցած են իրենց այժմեականութիւնը: Սակայն այնտեղ ապրող իսլամացած հայերը կը վերադառնան իրենց ինքնութեան եւ հայերէն բացի այնտեղ կ'ապրին այլ ժողովուրդներ եւս, որոնց իրաւունքները նոյնպէս կ'ոտնահարուին առ այսօր: Հետեւաբար Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան հաստատումը Ուիլսոնեան իրաւարար վճիռով որոշուած սահմաններուն մէջ կրկին կը դառնայ այժմեական եւ կրնայ իբրեւ բնաւի ծառայել տարածաշրջանին մէջ համընդհանուր խաղաղութեան եւ խաղաղ համագործակցութեան հաստատման:

Այդ իմաստով այս ժողովածուն կարելոր է, քանի որ այստեղ ամփոփուած են ոչ միայն քիչ յայտնի փաստաթուղթեր, այլեւ մեր օրերուն այդ իրաւունքի պաշտպանութեան գործը շարունակողներուն կողմէ ձեւակերպուած իրաւական-քաղաքական վճիռներ, որոնք Արեւմտեան Հայաստան պետութեան գոյութիւնը կը դարձնեն եւ՝ պատճառաբանուած, եւ՝ իրաւական-քաղաքական տեսակէտէն լիովին արդարացուած:

Խնդիրին ոչ շատ ծանօթ մարդոց մօտ քիչ մը անհաւատալի կրնայ թուիլ Արեւմտեան Հայաստանի պետական կառոյցներու այժմեան գոյութիւնը, սակայն մեր կարծիքով ասիկա այն պահանջուած ձեւաչափն է, որ մինչ այժմ որեւէ կերպ չէ գործածուած եւ դատելով շարք մը կարելոր պետութիւններու կողմէն այս կառոյցին նկատմամբ դրսեւորուող անթաքոյց հետաքրքրութենէն, պարզ է որ այս ձեւաչափն է միակ իրականն ու գործունը Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական կարգաւորման համար:

Տիգրան Յարութիւնեան

Փիլիսոփայական գիտութիւններու թեկնածու,

«Նոյեան Տապան» լրատուական-վերլուծական կեդրոնի հիմնադիր տնօրէն,

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր

31.07.2015 թ.

## ԳԼՈՒԽ I

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ Իրաւական-քաղաքական ՀԻՄՔԵՐԸ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ Իրաւական-քաղաքական ՀԻՄՔԵՐՈՒ ՓԱԹԵԹԸ

#### Հայկական Հարցի կարգաւորման իրաւական-քաղաքական հիմքերը

Հայկական Հարցի սկզբնաւորումէն՝ 1878-էն ի վեր, ճիշդ է անհկա արդարացի լուծման տակաւին չէյանգած, սակայն նոյն այդ գործընթացին իբրեւ արդիւնք ձեւաւորուած է Հայկական Հարցի արդարացի լուծման եւ հայ-թիւրքական յարաբերութիւններու խաղաղ, քաղաքակիրթ, արդիւնաւետ եւ վերջնական կարգաւորման իրաւական-քաղաքական պատկառելի փաթեթ:

Նշենք զանոնք.

-1878 թ. Փետրուար 19-ին (Մարտ 3-ին) Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ ստորագրուած Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ յօդուածին մէջ նշուած էր: «Նկատի ունենալով այն, որ ռուսական զօրքերու դուրս բերումը անոնց կողմէն գրաւուած Հայաստանի՝ Թուրքիոյ վերադարձուելիք վայրերէն կրնայ առիթ տալ բախումներու եւ բարդութիւններու, որոնք երկու պետութիւններու բարի յարաբերութիւններուն վրայ պիտի ունենան վնասակար ազդեցութիւն, Բարձր դուռը կը պարտաւորուի անյապաղ կենսագործել հայաբնակ վիլայեթներու տեղական կարիքներէն յարուցուող բարելաւումներ ու բարենորոգութիւններ, եւ ապահովել հայերու անվտանգութիւնը քիւրտերէն ու չերքեզներէն»:

Բարեփոխումներուն ընթացքը պիտի վերահսկէր Ռուսաստանը:

-1878 թ. Յուլիս 4-6 Պեդլինի խորհրդածոյովի (Յունիս 13 - Յուլիս 13) 61-րդ յօդուածով՝ «Բարձր դուռը, յանձնկ'առնէր հայաբնակ վայրերումէջ անյապաղ իրագործել տեղական պահանջներէն բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ եւ ապահովել հայերու անվտանգութիւնը քիւրտերէն ու չերքեզներէն: Այդ նպատակով ձեռնարկուած քայլերուն մասին ան պարտաւոր է պարբերաբար հաղորդել պետութիւններուն, որոնք պէտք է հսկեն անոնց գործադրութիւնը»:

61-րդ յօդուածը Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ յօդուածի հակադարձումն էր, բովանդակութեամբ ամբողջովին շրջուած տարբերակը, որմով ժամանակի բրիտանական քաղաքական վերնախաւը, լորտ Շերպուքի պատկերաւոր արտայայտութեամբ, Թուրքիոյ քրիստոնէաներուն համար «Կը փակէր դժոխքէն դուրս գալու ելքը»:

-1895 թ. Մայիսին Կ. Պոլսոյ մէջ Մեծ Բրիտանիոյ, Ռուսաստանի եւ Ֆրանսայի դեսպանները թիւրքական կառավարութեան ներկայացուցին «Մայիսեան բարենորոգումներ»-ու ծրագիրը, որմով կը նախատեսուէր դատական եւ այլ բարեփոխումներ իրականացնել Արեւմտեան Հայաստանի վեց վիլայեթներումէջ՝ Էրզրում, Պիթլիս, Վան, Սեբաստիա, Մամուրեթ ու Ազիզ, Տիարպէիր:

Բարենորոգումներու ենթակայ էին նաեւ Օսմանեան կայսրութեան միւս հայաբնակ վայրերը, օրինակ՝ Հաճընը Ատանայի մարզին մէջ, Զէյթունը՝ Հալէպի:

-1913 Յուլիս 3-24-ը Ռուսաստանի կառավարութիւնը տէրութիւններուն ներկայացուց հայկական բարենորոգումներու իր նախագիծը, որքննարկուեցաւ Կ. Պոլսոյ դեսպանաժողովին: Նախագիծը, որ կազմած էր ռուսական դեսպանութեան առաջին թարգման Ա. Մանտելշդամը 1895-ի Մայիսեան բարենորոգումներու ծրագիրի եւ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի կազմած նախագծի հիման վրայ, կ'առաջարկէր հայկական վեց վիլայեթներէն (Էրզրում, Վան, Պիթլիս, Տիարպէքիր, Խարբերդ, Սվազ) ստեղծել մէկ նահանգ: Ընդհանուր նահանգապետը պէտք է ըլլար քրիստոնէայ օսմանեան հպատակ կամ, որ աւելի գերադասելի էր՝ երոպացի, որ կը նշանակուէր 5 տարի ժամանակով, մեծ տէրութիւններու համաձայնութեամբ: Պետութիւններու յանձնարարութեամբ Ընդհանուր տեսուչներ նշանակուեցան Վեստենենկը (Հոլանտա) եւ Հոֆը (Նորվեկիա):

-1915 թ. Հոկտեմբեր 27-ին Հայկական Կիլիկիոյ ինքնավարութեան վերաբերեալ համաձայնութիւն կայացաւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի ներկայացուցիչ Պօղոս Նուպարի եւ Ֆրանսայի Արտաքին գործերու նախարարութեան արեւելեան բաժնի պետ Ֆրանսուա Ճորճ-Փիքոտի միջեւ:

-1918 թ. Հոկտեմբեր 30-ին Դաշնակիցներու եւ Թուրքիոյ միջեւ Լեմնոս կղզիի Մուտրոս նաւահանգիստին մէջ կնքուած զինադադարի փաստաթուղթին մէջ նշուած է. 16-րդ յօդուած. «Հեճասի, Ասիրի եւ Եմենի, Սուրիոյ եւ Միջագետքի բոլոր կայազօրներու յանձնումը դաշնակցային հրամանատարութեան... Թիրքական զօրքերու դուրս բերումը Կիլիկիայէն»:

24-րդ յօդուած. «Հայկական վիլայեթներէն (որեւէ) մէկուն մէջ անկարգութիւններ ծագելու պարագային, դաշնակիցները իրենց կը վերապահեն անոր մէկ մասը գրաւելու իրաւունքը»:

-1918 թ. Յունուար 13-ին Պետրոգրադի մէջ հրապարակուեցաւ «Թիրքահայաստանի մասին» Հռչակագիրը, ուր «Ռուսաստանը կը հռչակէ Հայաստանի ինքնավարութիւնը. Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը կը յայտնէ հայ ժողովուրդին, որ Ռուսաստանի բանուորագիւղացիական կառավարութիւնը Ռուսաստանի կողմէ կը պաշտպանէ գրաւուած Թիրքահայաստանի հայերու իրաւունքը՝ ազատօրէն ինքնորոշուելու, ներառեալ նոյնիսկ անոնց անկախութեան իրաւունքը»:

Յետագային այս դրոյթը զետեղուեցաւ 1918 թ. Ռուսաստանի Սահմանադրութեան 6-րդ յօդուածի մէջ:

-1919-ի սկիզբը Փարիզի մէջ հրաւիրուեցաւ Հայ ազգային համագումար: Համագումարի կարեւոր ձեռնարկներէն մէկը եղաւ «Ամբողջական Հայաստանի պատուիրակութեան» ընտրութիւնը Պօղոս Նուպարի ու Աւետիս Ահարոնեանի համանախագահութեամբ եւ նախապէս պատրաստուած ու 1919-ի Փետրուար 12-ին Փարիզի հաշտութեան խորհրդաժողովին ներկայացուած հայկական պահանջներու համատեղ յուշագիրին վաւերացումը, որ կը հիմնաւորէր հայկական անկախ պետութեան ստեղծման

անհրաժեշտությունը եւ կը ճշտէր անոր տարածքը Արեւմտեան Հայաստանի եօթ վիլայեթներու (ներառեալ Տրապիզոնը), Հայաստանի Հանրապետութեան եւ Կիլիկիոյ միացումով:

Միացեալ պատուիրակութիւնը Փետրուար 26-ին ներկայացաւ Տասի խորհուրդի նիստին՝ կրկնելով յուշագիրի հիմնական պահանջները: Պատուիրակութեանը ընդունեց (1919-ի Ապրիլ 17-ին) նաեւ ԱՄՆ Նախագահ Վուորո Ուիլսընը եւ հաւաստիացուց, որ հնարաւոր ամէն ինչ պիտի ընէ հայերու տարածքային պահանջները պաշտպանելու համար:

-1920 թ.-ի Յունուար 19-ի Փարիզի Վեհաժողովի ժամանակ՝ Դաշնակից Տէրութիւններու Գերագոյն Խորհուրդը դէ ֆակտո (de facto) ճանչցաւ Հայաստան պետութեան անկախութիւնը,

-1920 թ.-ի Մայիս 11-ին՝ Դաշնակից Տէրութիւններու Գերագոյն Խորհուրդը դէ Յուրե (de jure) ճանչցաւ Հայաստան պետութեան անկախութիւնը:

-1919 թ. Կոստանդնուպոլսոյ ռազմական ատեանին մէջ տեղի ունեցաւ Օսմանեան Թուրքիոյ իշխող վերնախաւի՝ երիտթիւրք պարագլուխներու, դատավարութիւնը հետեւեալ մեղադրանքներով.

ա) Օսմանեան կայսրութիւնը Առաջին համաշխարհային պատերազմի մէջ ներքաշելու,

բ) Օսմանեան կայսրութեան հայազգի հպատակներու համապարփակ կոտորածներն ու բռնագաղթը կազմակերպելու եւ իրականացնելու համար:

Երիտթիւրք պարագլուխներէն շատերը դատարանը հեռակայ կարգով մահուան դատապարտեց:

-1920 թ. Օգոստոս 4-ին յայտարարուեցաւ Հայկական Կիլիկիոյ անկախութեան հռչակման մասին:

-1920 թ. Օգոստոս 10-ին կնքուեցաւ Սեւրի խաղաղութեան դաշնագիրը, որուն 88-93 կը վերաբերի Հայաստան պետութեան:

-1920 թ. Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուորո Ուիլսընը կայացուց Իրաւարար վճիռ, որուն ամբողջական անուանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թիրաքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»:

Բերուած օրինակները բաւարար են եւ անոնցմէ արդէն իսկ պարզ է հայութեան եւ Հայաստանի բնական իրաւունքներու փաթեթի իրական ծանրակշռութիւնը:

Ըստ էութեան կարելի է ընդգծել, որ Հայկական Հարցի լուծման նպատակով հիմնական որոշումները կայացուած են, սակայն առ այսօր չեն իրականացուած: Կարելի է ընդգծել, որ անոնց իրականացման ժամանակը հասունցած է: Եւ ներկայի յամառ իրականութիւնը այն է, որ Մերձաւոր Արեւելքի մէջ եւ ոչ մէկ պետութիւն եւ ժողովուրդ անմասն պիտի մնայ ներկայի ու ապագայի սպառնալիքներէն, եթէ անոնցմէ ամէն մէկը իր կարգին չընտրէ գոյութիւն ունեցող խնդիրներու եւ հակամարտութիւններու խաղաղ կարգաւորման իրաւական-քաղաքական ճանապարհը:

Բոլոր ոչ իրաւական, այսինքն՝ կամային քաղաքական որոշումները պատանդի կարգավիճակի մէջ պիտի պահեն հակամարտող կողմերը, անոնց երկիրներն ու սերունդները եւ յիսուն տարին մէկ նոր ուժով պիտի բորբոքուի հակամարտութիւնն ու դիմակայութիւնը, պատերազմն ու քառսը՝ Պալգաններու, Մերձաւոր Արեւելքի, Կովկասի, Աֆղանիստանի մէջ: Այն տարածքին մէջ, ուր թիրքական քաղաքական վերնախաւը կը հրաւիրեն պատասխանատու դերակատարութիւն ստանձնել: Վտանգաւոր յանձնարարական, որ սպառնալիքներ կը պարունակէ տարածաշրջանի բոլոր պետութիւններու եւ ժողովուրդներու համար, ներառեալ՝ Թուրքիոյ Հանրապետութեան եւ թիրքերու:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

20.08.2015 թ.

### **ՅԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱՆՔ**

#### **Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) ձեւաւորման իրաւական-քաղաքական հիմքերու մասին**

Արեւմտեան Հայաստանի վերածնունդի իրականացման գաղափարը, որպէս պետութիւն, յառաջացաւ 1990-ականներու սկզբնաւորութեան, Արցախի պաշտպաններուն մէջ: Վերածնունդի եւ վերականգման գաղափարի գլխաւոր ոգեշնչողներէն էր Ազատագրական բանակի հիմնադիր Լեւոնիդ Ազգալիդեան (23.11.1942 Թիֆլիս – 21.06.1992 Մարտակերտ): Գաղափարն արձագանգ գտաւ այն մարտիկներու ու մտաւորականներու մօտ, որոնցմէ շատեր պատերազմէն առաջ Արեւմտեան Հայաստանի տարբեր հայրենասիրական եւ հայրենակցական միութիւններու անդամներ էին:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան՝ որպէս պետութեան, վերականգնումի հիմք յանդիսացաւ այն փաստը, որ ան անխզելի շարունակող պետութիւնն է Հայաստան պետութեան՝ 1918 - 1920 թթ. ընդունուած շարք մը միջազգային փաստաթուղթերու հիմքերու վրայ.

- Ռուսաստանի Կարավարութեան Դեկրետի «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին»), (Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդ), 11 յունուար 1918 թուական,
- Դաշնակից տերութիւններու գերագոյն խորհուրդի կողմէ տր ֆակտո (de facto) Հայաստան պետութեան անկախութեան ճանաչման, Փարիզ, 19 յունուար 1920 թ,
- Դաշնակից տերութիւններու գերագոյն խորհուրդի կողմէ տր իւրէ (de jure) Հայաստան պետութեան անկախութեան ճանաչման, Փարիզ, 11 մայիս 1920 թ,
- Կիլիկիայի հայերու ընդունած «Կիլիկիոյ անկախութեան մասին» Հռչակագիրի, 4 օգոստոս 1920 թ,
- Սեւրի խաղաղութեան պայմանագիրի, 10 օգոստոս 1920 թ,
- ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուոքո Ուիլսոնի կայացուցած Իրաւարար վճիռի, որու ամբողջական անուանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահի

որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ», 22 նոյեմբեր 1920 թ.:

2004 թուականի դեկտեմբերի 17-ին ընդունուեց «Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքի մասին» Հռչակագիրը: 2011 թուականի փետրուարի 4-ին՝ «Արեւմտեան Հայաստանի կառավարութեան ձեւաւորման գործընթաց սկսելու մասին» Հռչակագիրը:

Հետագային, ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդներու իրաւունքներու մասին» Հռչակագիրի (13.09.2007թ.) հիման վրայ, ստեղծուած է Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնութեան եւ քաղաքացիութեան համակարգը, որու վրայ ձեւավորուած են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) իրաւական- քաղաքական եւ պետական կառոյցները: Համաձայն Մարդու Իրաւունքներու Համընդհանուր Հռչակագիրի 21-րդ յօդուածի, սկսած 2013 թուականէն, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) կը ձեւաւորէ իշխանութեան օղակներ՝ Ազգային Ժողով (Խորհրդարան), Կառավարութիւն եւ Նախագահական համակարգ:

2013 թուականի նոյեմբերին, առաջին անգամ, համացանցին մէջ, էլեկտրոնային ուղղակի քուէարկութեան միջոցով, տեղի կունենա Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու ընտրութիւններ: Ընտրութիւններուն կը մասնակցին շուրջ 18 հազար ընտրող՝ 41 երկիրներէ, կընտրեն 64 պատգամաւոր:

2018 թ. սեպտեմբերի 1-5-ը տեղի կունենայ Խորհրդարանի 2-րդ գումարման ընտրութիւններ, որուն կմասնակցին 51 հազար 500 ընտրող՝ 47 երկիրներէ, միասնական ցուցակով կընտրեն Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 101 պատգամաւոր:

Ներկայիս Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) նախագահը Ռատիկ Խամոյեանն է, վարչապետը՝ Տիգրան Փաշաբեգեանը, Ազգային Ժողովի (Խորհրդարան) նախագահը՝ Արմէն Տէր-Սարգիսեանը:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Մամլոյ Ծառայութիւն  
11.08.2018 թ.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ**  
**Մեծ Բրիտանիոյ, Ֆրանսայի, Ռուսաստանի կողմէն**  
**24 Մայիս, 1915 թ.**

Մեծ Բրիտանիան, Ֆրանսան եւ Ռուսաստանը 1915 թ. Մայիս 24-ին հանդէս եկան երիտթիւրքական կառավարութեան սանձազերծած հայերու կոտորածներն ու ցեղասպանութիւնը դատապարտող յատուկ յայտարարութեամբ, ուր 1915 թ. ապրիլեան կոտորածները որակեցին, իբրեւ Թուրքիոյ նոր ոճիւրը մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ:

Բնագրում մասնաւորապէս ասուած էր. «Գրեթէ մէկ ամիսէ ի վեր, Հայաստանի թիւրք եւ քիւրտ բնակիչները օսմանեան հեղինակութիւնների թոյլտուութեամբ ու յաճախ անոնց նեցուկը ունենալով ջարդեր կը գործադրեն Հայերի դէմ: Նման ջարդեր տեղի ունեցան ապրիլի կէսին Էրզրումի մէջ (Կարին), Թերձան, Եղինէ, Պիթլիս, Մուշ, Սասուն, Զէյթուն եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ: Վանի շրջակայ գրեթէ հարիւր գիւղերու հայերը բոլորն ալ սպաննուեցան եւ Վանի հայկական թաղամասը շրջապատուած էր քիւրտերու կողմէ: Միեւնոյն ժամանակ Օսմանեան կառավարութիւնը չարչրկեց Կոստանդնուպոլսոյ անպաշտպան հայ բնակչութիւնը: Մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ գործուած Թուրքիոյ այս նոր ոճիրներուն հանդէպ դաշնակից կառավարութիւնները հանրօրէն կը տեղեկացնեն Մեծ դրան, որ թիւրք կառավարութեան բոլոր անդամները անհատապէս պատասխանատու պիտի համարուին, ինչպէս նաեւ բոլոր այն պաշտօնեաները, որոնք մասնակից դարձան այս ջարդերուն»:

### **ԹԻԻՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ ընդունուած 1918 թ. Յունուար 13-ին**

«Ռուսաստանը կը հռչակէ Հայաստանի ինքնավարութիւնը.

Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը կը յայտնէ հայ ժողովուրդին, որ Ռուսաստանի բանուորագիւղացիական կառավարութիւնը Ռուսաստանի կողմէ կը պաշտպանէ զբաւուած Թիւրքահայաստանի հայերու իրաւունքը՝ ազատօրէն ինքնորոշուելու, ներառեալ նոյնիսկ անոնց անկախութեան իրաւունքը: Կոմիսարներու Խորհուրդը կ'ընդունի, որ այս իրաւունքի իրականացումը հնարաւոր է միայն շարք մը նախնական երաշխիքներու հաստատումով, որոնք միանգամայն անհրաժեշտ են հայ ժողովուրդի հանրաքուէին համար: Կոմիսարներու Խորհուրդը իբրեւ մասնակի երաշխիքներ կը ճանչնայ հետեւեալ պայմանները.

Յօդուած Ա. Թիւրքահայաստանէն ռուսական զօրքերու դուրսբերում եւ անյապաղ հայ ազգային ոստիկանական կազմավորումներու ստեղծում՝ Թիւրքահայաստանի բնակիչներու անձնական եւ նիւթական անվտանգութիւնը ապահովելու նպատակով:

Յօդուած Բ. Հայ փախստականներու, ինչպէս նաեւ տարբեր երկիրներու մէջ սփռուած հայ գաղթականներու՝ անխոչընդոտ վերադարձը Թիւրքահայաստան:

Յօդուած Գ. Պատերազմի ժամանակ թիւրքական իշխանութիւններուն կողմէ Թուրքիոյ մէջ բռնի կերպով աքսորած հայերու՝ անխոչընդոտ վերադարձը Թիւրքահայաստան:  
...Կոմիսարներու Խորհուրդը կը պնդէ այս պայմանը թիւրք պատուիրակներու հետ բանակցութիւններու ընթացքին:

Յօդուած Դ. Թիւրքահայաստանի մէջ ժամանակաւոր կառավարութեան կազմաւորում՝ հայ ժողովուրդի պատգամաւորներու խորհուրդի ձեւով. պատգամաւորները կ'ընտրուին ժողովրդավարութեան սկզբունքով:



Ստեփան Շահումեանը, նշանակուելով Կովկասի գործերով ժամանակաւոր արտակարգ կոմիսար, ամենայն օժանդակութիւն կը ցուցաբերէ Թիւրքահայաստանի հայ բնակիչներուն՝ Բ եւ Գ յօդուածներու իրականացման համար, ինչպէս նաեւ ձեւաւորելու համար Խառն յանձնաժողով՝ ռուսական զօրքերու դուրսբերման օրը եւ միջոցները որոշելու նպատակով՝ համաձայն յօդուած Ա-ի:

Թիւրքահայաստանի աշխարհագրական սահմանները կ'որոշուին հայ ժողովուրդի՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրուած ներկայացուցիչներու կողմէն՝ հարեւան վիճելի շրջաններու մահմետական եւ այլ բնակիչներու եւ կոմիսար Շահումեանի հետ»:

### **ԵՐԻՏԹԻԻՐՔԵՐՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ (1919-1920)**

Օսմանեան կայսրութիւնը առաջին համաշխարհային պատերազմի մէջ ներքաշած եւ հայերու տեղահանութիւնն ու ցեղասպանութիւնը կազմակերպած երիտթիւրքական «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան ղեկավար գործիչներու դատավարութիւնը Կ. Պոլսոյ մէջ:

Մուդրոսի զինադադարի (1918) կնքումէն անմիջապէս յետոյ, համաշխարհային հասարակայնութեան ճնշման տակ, թիւրքական նոր կառավարութիւնը որոշեց պատասխանատուութեան ենթարկել Թուրքիան պատերազմի մէջ ներքաշած եւ հայերու ցեղասպանութիւնը կազմակերպած մեղաւորները:

1918 թ. Դեկտեմբեր 16-ի որոշմամբ կազմուեցան արեւմտահայութեան կոտորածներուն վերաբերող մեղադրական ապացոյցներ (ծածկագիր հեռագրեր, պաշտօնական գրութիւններ, հրահանգներ եւ հրամաններ, ականատեսներու վկայութիւններ եւ այլն) հաւաքող հարցաքննիչ յանձնախումբեր: Օսմանեան կայսրութեան տարածքը բաժնուեցաւ 10 դատաքննչական շրջանի, նշանակուեցան դատախազներ, քննիչներ, քարտուղարներ: 1919 թ. Յունուար 8-ին կազմուեցան ռազմական արտակարգատեաններ: Դատական նիստերու ընթացքին քննուեցաւ երիտթիւրքական կառավարութեան ղեկավարներու, «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան ԿԿ անդամներու եւ շրջանային պատասխանատու քարտուղարներու եւ պաշտօնեաներու, հայկական կոտորածները իրականացնող «Թեշքիլաթ-ը մահսուսէ»-ի («Յատուկ կազմակերպութիւն»), Եօզդատի, Տրապիզոնի, Պեռուքտերէի (Կ. Պոլսոյ արուարձան) եւ Խարբերդի տեղահանութիւնն ու կոտորածները կազմակերպողներու յանցաւոր գործունէութիւնը:

Երիտթիւրքերու դատավարութիւնը ցոյց տուաւ, որ արեւմտահայութեան տեղահանութիւններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական քայլեր չէին եւ սահմանափակ կամ տեղական բնոյթ չեն կրած, ինչպէս կ'ուզէին ներկայացնել յանցագործները, այլ եղած են կանխամտածուած ու մշակուած գործողութիւններ, իրականացուած բացարձակապէս երիտթիւրքական կուսակցութեան ԿԿ

նախաձեռնությամբ ու կարգադրությամբ, իսկ կոտորածները անմիջականորեն իրականացուցած են այդ նպատակով բանտերէն ազատ արձակուած մարդասպաններն ու այլ ոճրագործներ:

Երիտթիրքերու կուսակցութեան պարագլուխներու եւ նախարարներու դատավարութիւնը սկսաւ 1919 թ. Ապրիլ 27-ին եւ ընդհատուով (Մայիս 28-ին անգլիական հրամանատարութիւնը 77 հոգի անսպասելիօրէն արքայրեց Մալթա կղզի եւ ատով ընդհատեց դատաքննութիւնը) շարունակուեցաւ մինչեւ Յունիս 26 (13 նիստ): Դատավճիռը հրապարակուեցաւ 1919 թ. Յունիս 5-ին:

31 յանցագործներէն 4-ը՝ Թալէաթը, Էնվէրը, Ճեմալը եւ Նազիմը, հեռակայ կարգով դատապարտուեցան մահուան, իսկ մնացած 27-էն ոմանք՝ տարբեր տարիներու ազատազրկման, ոմանք արդարացուեցան յանցանշաններու բացակայութեան պատճառով: Դատավճիռին մէջ մոռացութեան մատնուեցան անգլիացիներու՝ Մալթա արքայրած յանցագործները:

1919 թ. Յունիսի 21-ին, 23-ին եւ 29-ին տեղի ունեցան «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կուսակցութեան շրջանային պատասխանատու քարտուղարներու եւ պաշտօնատար այլ անձանց դատավարութիւնները: Դատավճիռը հրապարակուեցաւ 1920 թ. Յունուարի 8-ին: 36 մեղադրեալներէն 3-ը դատապարտուեցան 10 տարուան, միւսները՝ քանի մը տարուայ ազատազրկման:

Եոզղատի հայերու կոտորածն իրականացնողներու դատավճիռը հրապարակուեցաւ 1919 թ. Ապրիլի 8-ին. Եոզղատի մութասարիֆի (գաւառապետ) տեղակալ եւ Բողազլեանի կայմակամ (գաւառապետ) Քեմալ բէյը դատապարտուեցաւ մահուան, իսկ Եոզղատի ոստիկանապետ Թեվֆիկ բէյը՝ 15 տարուայ տաժանակրութեան:

Տրապիզոնի կոտորածներն իրականացնողներու դատավճիռը կայացաւ 1919-ի Մայիսի 22-ին: 8 հանցագործներէն երկուքը՝ Ջեմալ Ազմի եւ Նայիմ բէյերը, հեռակայ կարգով դատապարտուեցան մահուան, միւսները՝ տարբեր ժամկետներով ազատազրկման:

Բէօյուքդերէյի ոչ մահմեդական բնակչութեան՝ հայերու եւ յույներու հալածանքները կազմակերպողներու դատավճիռը հրապարակուեցաւ 1919 թ. Մայիսի 24-ին: Բոլոր մեղադրեալները (4 հոգի) դատապարտուեցան քանի մը տարուայ ազատազրկման:

Խարբերդի հայերու տեղահանութեան եւ կոտորածներու յանցագործներու դատավճիռը կայացաւ 1920 թ. Յունուարի 14-ին. Բեհաեդդին Շաքիրը հեռակայ կարգով դատապարտուեցաւ մահուան, իսկ երիտթիրքական կուսակցութեան Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնէլի Նազիմբէյը՝ 15 տարուայ տաժանակրութեան:

Դատավարութեան արձանագրութիւնները հրատարակուած են 1919-20 թթ., «Թաքուիմ-ի վէքայի» («Իրադարձություններու օրացոյց») արաբատառ թիրքական պաշտօնաթերթի յաւելուածին մէջ: Երիտթիրքերու դատավարութիւնը թէւ չստացաւ լայն արձագանք՝ այնուամենայնիւ բացայայտեց Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան հայաբնակ վայրերուն մէջ թիրքական իշխանութիւններու իրագործած Հայերու

ցեղասպանությունը: Երիտթիւրքերու դատավարութեան նիւթերը կը հերքեն թիւրքական պաշտօնական շրջաններու չայերու ցեղասպանությունը ժխտող պնդումները:

**ՄԵԻՐԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ**  
**Թարգմանությունը ռուսերենից**

**Մասն 3-րդ**  
**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՅԹՆԵՐ**

**Բաժին 6-րդ**  
**ՀԱՅԱՍՏԱՆ**

**Յօդուած 88.** Թուրքիան յայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպէս այդ բանն արդէն արել են Դաշնակից տէրութիւնները, որպէս ազատ եւ անկախ պետութիւն:

**Յօդուած 89.** Թուրքիան եւ Հայաստանը, ինչպէս եւ Բարձր պայմանաւորուող կողմերը, համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանատումը թողնել Ամերիկայի Միացեալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպէս նրա որոշումը, նոյնպէս եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դէպի ծով ելք տալու եւ յիշեալ սահմանագծին հարող օսմանեան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերեալ:

**Յօդուած 90.** Այն դէպքում, եթէ 89-րդ յօդուածի համաձայն սահմանագիծը որոշելիս յիշեալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը յանձնուի Հայաստանին, Թուրքիան այսօր արդէն յայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարում է յանձնուած տարածքի նկատմամբ բոլոր իրաւունքներից եւ իրաւահիմունքներից: Սոյն պայմանագրի որոշումները, որոնք կիրառուելու են Թուրքիայից անջատուող տարածքների նկատմամբ, այս պահից սկսած կը գործադրուեն նաեւ այդ տարածքի նկատմամբ: Հայաստանի սոււերէնութեանը յանձնուող տարածքի կապակցութեամբ նրա վրայ դրուող Թուրքիայի ֆինանսական պարտաւորութիւնների բաժինը, եւ դրանց բնոյթն ու այն իրաւունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կը սահմանուեն սոյն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրոյթներ) 241-244-րդ յօդուածների համաձայն: Յաջորդ համաձայնագիրները կը կարգաւօրէն, եթէ դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգաւորուել սոյն Պայմանագրով եւ որոնք կարող են ծնունդ առնել յիշեալ տարածքի փոխանցման կապակցութեամբ:

**Յօդուած 91.** Եթէ 89-րդ յօդուածում նշուած տարածքի մի մասը յանձնուի Հայաստանին, ապա Սահմանագծման յանձնաժողով, որի կազմը կ'որոշուի յետագայում, կը ստեղծուի երեք ամսուայ ընթացքում այն բանից յետոյ, երբ արդէն ընդունուած կը լինի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերեալ յիշեալ յօդուածում նախատեսուող որոշումը:

**Յօդուած 92.** Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպէս նաեւ Վրաստանի, միջեւ սահմանները կ'որոշուեն շահագրգիռ երկրների ուղղակի համաձայնութեան միջոցով:

Այն դէպքում, երբ շահագրգիռ երկրները մինչեւ 89-րդ հոդուածում յիշատակուած որոշման օրը չեն կարողանայ համաձայնութեամբ որոշել սահմանները, ապա խնդրոյ առարկայ սահմանը կորոշուի Գլխաւոր դաշնակից ուժերի կողմից, որոնք էլ տեղում կ'իրականացնեն նաեւ սահմանանշումը:

**Յօդուած 93.** Հայաստանն ընդունում է, համաձայնուելով դրանք մտցնել Գլխաւոր տէրութիւնների հետ պայմանագրի մէջ, այն որոշումները, որոնք Տէրութիւններն անհրաժեշտ կը համարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզուի եւ կրօնի առումով տարբերուում են ազգաբնակչութեան մեծամասնութիւնից:

Հայաստանը նմանապէս համաձայնում է Գլխաւոր տէրութիւնների հետ Պայմանագրի մէջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տէրութիւններն անհրաժեշտ կը համարեն տարանցման ազատութիւնը եւ այլ ազգերի առեստրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:

10 օգոստոս, 1920 թ.

Մէր

-----  
Պայմանագիր Առաջին աշխարհամարտի յաղթող պետութիւններու եւ Թուրքիոյ միջեւ, որը ստորագրած են մէկ կողմէ Թուրքիայ, միւս կողմէ՝ Մեծ Բրիտանիայ, Ֆրանսայ, Իտալիայ, Ճապոնիայ, Բելգիայ, Յունաստան, Լեհաստան, Պորտուգալիայ, Ռումինիայ, Հայաստան, Չեխոսլովակիայ, Սերբերի, Խորուաթների եւ Սլովենների Թագաւորութիւն, Հեջագ:

**ԱՄՆ 28-ՐԴ ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒՏՐՕ ՈՒԻԼՍՇՆԻ**  
**կայացուցած Իրաւարար վճիռը, 22 Նոյեմբեր, 1920 թ.**

1920 թ. Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուորո Ուիլսընը կայացուց Իրաւարար վճիռ, որուն ամբողջական անուանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թիրաքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»:

(ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուորո Ուիլսընի կայացուցած Իրաւարար վճռի գունաւոր քարտեզը տե՛ս, Լուսանկարներ եւ քարտեզներ բաժնի մէջ)

**ԿԻԼԻԿԻՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՔՏԸ**

Ստորագրեալքս իրաւասու ներկայացուցիչներ Կիլիկիոյ բոլոր Քրիստոնեայ հասարակութեանց, այսու կը յայտարարենք.

Նկատելով, որ Կիլիկիոյ մեծ պատերազմին, որպէս հետեւանք, գրաւուեցաւ դաշնակից ուժերով, որ այդ գրաւումը եւ ֆրանսական վարչութիւնը հոն պահուեցան զինադադարի ամբողջ տեսողութեան:

Նկատելով, որ բոլոր այս միջոցին թուրքերը չդադրեցան խանգարելէ երկրին անդորրութիւնը՝ ներմուծելով մահ, աւեր, արհաւիրք, որով եւ անոնք յայտնօրէն բռնաբարեցին իրենց յանձնառութիւնները եւ զինադադարը:

Նկատելով, որ իրենց այս կացութիւնը մեր կրօնակիցներուն արժեց կեանքը տասնեակ հազարաւորներու, որ ֆրանսական արիւնն եւս միաժամանակ հոսեցաւ առատօրէն մեր մարտիբոսներուն հետ:

Նկատելով, որ նոյնիսկ Թուրքիոյ հետ կնքելի խաղաղութեան վաղորդեանին մեր շատ մը քաղաքներ սպառնալիքի տակ են՝ պաշարուած կամ ռմբակոծուած արիւնարբու հորդաններու կողմէ՝ կազմակերպուած ներողամիտ աչքերուն տակ թուրք իշխանութեանց, որոնք ատկէ զատ են եւ պիտի ըլլան միշտ անկարող զսպելու նմանօրինակ վայրագութիւններ եւ ըմբոստութիւնք, ենթադրելով թէ անոնք պիտի ուզէին ընել զայդ:

Նկատելով, որ լման խաղաղութեան այս շրջանին անգամ մենք պիտի շարունակենք ապրիլ դէռ երկար ատենուան համար պատերազմական վիճակի մէջ, որ վերջ չպիտի գտնէ, եթէ ոչ միայն զինուորական կարգ-կանոնով գործողութիւններու՝ ձեռնարկուած ֆրանսական քաջարի ուժերու կողմէ, որոնք միշտ ալ պիտի երկրորդուին նաեւ անվերապահ աջակցութիւններով քրիստոնեայ հասարակութեանց, որոնց այդ աջակցութիւնը այնքա՛ն օգտակար հանդիսացաւ ֆրանսական ուժերուն յաջողութեանց:

Նկատելով, որ այն պահուն իսկ, երբ պատրաստելու վրայ ենք սոյն Յայտարարութիւնը, այս երկրին հին տէրերուն գնդակները կը ճարճատեն մեր գլուխներուն վերեւէն, որ այս միեւնոյն կացութիւնը կը տիրէ նաեւ Տարսոնի եւ

Մերսինի մէջ:

Նկատելով, որ անըմբռնելի է, որ օտար երկրի մը մէջ կնքուած խաղաղութիւն մը նման կացութեան մը պատճառ դառնայ:

Նկատելով, որ Կիլիկիոյ 275.000 քրիստոնեաները՝ սերտիւ համերաշխ իրենց եղբայրական զգացումներուն, իրենց շահերուն, թուրքերուն դէմ նողկանքի եւ Ֆրանսիայի հետ իրենց յարումին մէջ՝ առանց իսկ պէտք ունենալու վերյիշել սարսազդեցիկ յիշատակները անիծեալ անցեալի մը – խմորուած ամէնքն ալ ջարդերով, բռնագաղթերով, աւարառութիւններով, քեներով, բռնարարութիւններով, ամէն տեսակ արհաւիրքներով եւ խայտառակութիւններով – հպարտ են, որ չկասեցան առջեւ ոչ մէկ զոհողութեան ու ջանքերու, որոնք ճնշուած ժողովուրդներուն համար կը կազմեն փրկագինը իրենց անկախութեան, որ, ընդհակառակն, անոնք կրնան ի նպաստ իրենց յուշածել՝ պատերազմի եւ զինադադարի երկար եւ ցաւալից շրջանին վճարած ըլլալ ամենէն թանկագին եւ ամենէն սարսափելի փրկանքները:

Նկատելով, որ Կիլիկիոյ քրիստոնեայ համայնքները ամէն պարագայի մէջ՝ Ամերիկեան երկու քննութեանց, թէ իրենց բոլոր դիմումներու ընթացքին ֆրանսական իշխանութեանց մօտ անփոփոխելիօրէն յայտնեցին իրենց անսասան որոշումը չընդունիլ վերադարձը թուրք տիրապետութեան:

Նկատելով, որ, մասնաւորաբար, իրենց անցեալ Մարտի 31 եւ Մայիս 15 թուակիր բողոքագիրներովը՝ ուղղուած Համաձայնական պետութիւններուն եւ Խաղաղութեան Խորհրդածոդովին, ինչպէս եւ իրենց առաջուց կատարած դիմումներովը, որոշակի հասկցուցին թէ զիրենք չպիտի թոյլ տային գոհանալ կիսամիջոցներով, արուեստական կարգադրութիւնները կամ խորթ, (batarde) անհարազատ լուծումներով, թէ իրենք, մանաւանդ, վերջին ծայր ուժգնութեամբ բողոքեցին ընդդէմ հաշտութեան այն դաշինքին, որ արուեստականօրէն Կիլիկիան – պատմականօրէն, ցեղագրականօրէն, ռազմականօրէն, եւ տնտեսպէս մէկ եւ անբաժանելի – կը բաժնէր երկու մասերու, որմէն մէկ մասը

Ֆրանսական Սուրիոյ մնացած, եւ միւսը կը վերածէ թրքական գաւառի մը:

Նկատելով, որ ժողովուրդները, զորս իրենք կը ներկայացնեն, վստահալից սպասումէ մը վերջ՝ հանդէպ Դաշնակիցներուն արդարադատութեան, պիտի դատապարտուին ամենէն դառն յուսախաբութեան՝ եթէ Խաղաղութեան Խորհուրդին վերջնական որոշումները չպսակեն իրենց օրինաւոր պահանջները եւ իրենց ամենէն թանկագին յոյսերը, այդ պարագային սոյն Յայտարարութիւնը ստորագրող ներկայացուցիչները, չկարենալով պէտք եղածին պէս պատասխանել իրենց պատկան ժողովուրդներուն ցանկութեանց, անոնք խմբովին պիտի ըմբոստանան, ընդդէմ այդ հրեշային փորձին, եթէ կ'ըսենք, Կիլիկիոյ մէջ վերահաստատուի թրքական վեհապետութիւնը եւ վարչութիւնը:

Նկատելով, որ մինչեւ վերջին վայրկեան չստացուեցաւ հաւաստիքը թէ՛ իրենց պահանջները ընդունուած են, թէ՛ խաղաղութեան դաշինքը պիտի բարեփոխուի, ինչպէս որ պէտք է, թէ իրենք նոյնիսկ այսօր, խաղաղութեան դաշինքին կնքումի վաղորդայնին, լքուած են ամենէն անձկալից անորոշութեան:

Նկատելով միանգամայն, թէ ներկայ շփոթ կացութիւնը եւ անիշխանական վիճակը մասամբ մը արդիւնք են տեղական թուրք վարչութեան անդամալուծման, եւ որ չէ այլեւս, եթէ ոչ անուանական կառավարութիւն մը, թէ այս պայմանաց մէջ միմիայն անհրաժեշտ իշխանութեամբ օժտուած տեղական իշխանութիւն մը կրնայ ամենուն ալ յարգանք եւ վստահութիւն ներշնչելով, փրկել երկիրը անիշխանութենէ եւ լիակատար աւերումէ:

Բոլոր այս պատճառներուն համար եւ արժեցնելով բոլոր իրաւունքները՝ փաստերը եւ վերոյիշեալ 31 Մարտ եւ 25 Մայիս թուակիր երկու յիշատակագրութեանց մէջ մատնանշուած նկատումները, որոնց տրամաբանական վերջաւորութիւնն է ներկայ ձեռնարկը: Մենք հիմնուելով, մանաւանդ բոլոր ժողովուրդներուն եւս յստակ անանցանելի իրաւանց վրայ՝ ճշդելու իրենց ճակատագիրը, իրաւունք մը, որ իր առաջին աղբիւրն ունի Ֆրանսական յեղափոխութեան անմահ սկզբունքները:

Մենք հանդիսաւորապէս կը յայտարարենք. Կիլիկիան, սկսեալ այս օրուանէն, ազատ երկիր մը՝ բոլորովին անկախ Թուրքիայէն, օժտուած տեղական ինքնավար քրիստոնէայ վարչութեամբ մը՝ զետեղուած Ֆրանսայի հոգատարութեան տակ: Կիլիկիոյ հողամասերուն Օսմանեան նախկին կայսրութենէն այս անջատումը մենք կ'ըմբռնենք նոյնքան կատարեալ եւ վերջնական եւ այն միեւնոյն ձեւովը, ինչպէս՝ Հայաստանը, Սուրիան, Պաղեստինը, Միջագետքը եւ Արաբիան:

Իրագրծելու եւ պահպանելու համար այս անկախութիւնը՝ թշնամին մեր դուռներէն վտարելու եւ մեր պաշարուած քաղաքները փրկելու համար, վերակազմելու համար այդ քաղաքները եւ գրաւուած շրջանները, եւ ազատելու համար մեր քրիստոնէայ եղբայրները իրենց գերութենէն, մենք պատրաստ ենք ամէն կարգի զոհողութիւններու, մենք այս

երկրին հոգատար Ֆրանսայի ծառայութեան տակ կը դնենք մեր ժողովուրդներուն բոլոր կենդանի ուժերը:

Հատուածները, դաւանութիւնները, համայնքները, քրիստոնեայ ցեղերը, մենք ամենքս միացած ենք միեւնոյն նուիրական նպատակին համար:

Մենք պիտի աշխատինք ձեռք-ձեռքի բարձրացնելու այս երկրին բարոյականը, մշակոյթը եւ տնտեսականը հովանիին տակ Ֆրանսայի: Կը փափաքինք Կիլիկիան ընել մէկ երկարաձգումը Եւրոպայի, մէկ նոր կեդրոնը քաղաքկրթութեան եւ զարգացման, ուր իսլամ անջատ ցեղերը նոյնպէս հաւասարապէս պիտի վայելեն ազատութեան եւ յառաջադիմութեան բարիքները եւ երաշխաւորութիւնները, որոնք իրենց անձանօթ էին թուրք կառավարութեան ներքեւ եւ պիտի օրհնեն այն օրը, երբ իրենք եւս անջատուեցան անկէ:

Անկախութիւնը Ֆրանսայի հոգատարութեան տակ, բացարձակ պայմանն է Քրիստոնէից գոյութեան՝ աս երկրին մէջ: Մենք նախապատիւ պիտի սեպենք մեռնիլ, քան ընդունիլ ուրիշ լուծում:

Վստահ ենք՝ թէ մեծանձն եւ ասպետական Ֆրանսան, աւանդական պաշտպանը Արեւելքի Քրիստոնէից, պիտի գնահատէ մեր պահանջաց արդարութիւնը, թէ ան պիտի բարեհաճի ճանչնալ մեր այս անկախութիւնը՝ առնելով զայն իր պաշտպանութեան տակ:

Կեցցէ՛, անկախ Կիլիկիան:

Կեցցէ՛, Ֆրանսան՝ հոգատարը Կիլիկիոյ:

Մ. Տամատեան

Ամբողջական Հայաստանի Ներկայացուցիչ

Գ. Վրդ. Արսլանեան

Ատանայի Հայոց Առաջնորդ

4 օգոստոսի, 1920 թ.

## Գլուխ II

### ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՁԵՒԱԻՈՐՈՒՄԸ (հիմնարար փաստաթուղթեր)

#### ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ 10-ամեայ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան աւելի քան 10-ամեայ գործունէութեան իբրեւ արդիւնք ձեւակերպուած, մշակուած ու ձեւաւորուած են հետեւեալ ծրագիրները, հիմքերը:

1. Գործունէութեան իրաւական - քաղաքական միասնական փաթեթի հիմնական դրոյթներն ու ուղղութիւններն են.

ա) Իրաւական-քաղաքական ուղղութիւն, որ կը ներառէ

-Ռուսաստանի Կառավարութեան Հռչակագիրը «Թիւրքահայաստանի մասին», 29 Դեկտեմբեր 1917 թ.,

-Սերի խաղաղութեան պայմանագիրը, 10 Օգոստոս 1920 թ.,

-ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուորո Ուիլսոնի Իրաւարար վճիռը՝ 22 Նոյեմբեր 1920 թ.,

-Կիլիկիոյ Անկախութեան Հռչակագիրը, 4 Օգոստոս 1920 թ.,

-յարակից այլ պայմանագրեր եւ իրաւական փաստաթուղթեր:

բ) Իրաւական-քաղաքական ուղղութիւն եւ գործունէութիւն, որ կը ներառէ

-«Բնիկ ժողովուրդներու իրաւունքներու մասին» հռչակագիրը,

-Արեւմտեան Հայաստանի հայերու ազգային ինքնութեան եւ քաղաքացիութեան կառոյցի ստեղծումն ու կայացումը,

-յարակից այլ իրաւական փաստաթուղթեր եւ աշխատանքներ:

գ) Իրաւական ուղղութիւն, որ կը ներառէ Հայերու ցեղասպանութեան դատապարտման եւ հատուցման ուղղութեամբ իրականացուող աշխատանքները միջազգային դատական ատեաններու մէջ, ներառեալ՝ Հաագայի դատարանին մէջ:

դ) Իրաւական ուղղութիւն, որ կը ներառէ Հայոց պատմամշակութային եւ քաղաքակրթական արժէքներու պաշտպանութեան ուղղութիւնը Եւրոպական Մարդու իրաւունքներու դատարանին մէջ եւ համապատասխան այլ ատեաններուն մէջ:

2. Գործունէութեան իրաւական - քաղաքական հիմքերն են.

ա) «Արեւմտեան Հայաստանի հայերի ինքնորոշման իրաւունքի մասին» հռչակագիրը (ընդունուած՝ 2004 թուականի Դեկտեմբեր 17-ին),

բ) «Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու մասին» հռչակագիրը (ընդունուած՝ 2007 թուականի Յունուար 20-ին),

գ) Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան ստեղծման վերաբերեալ հռչակագիրը (ընդունուած՝ 2011 թուականի Փետրուար 4-ին),



- դ) Արեւմտեան Հայաստանի պետական համակարգի մասին որոշումը (ընդունուած՝ 2011 թուականի Մարտ 2-ին),
- է) «Արեւմտեան Հայաստանի եւ Արեւմտեան Հայաստանի հայերու Մշտական, զինուած, դրական չեզոքութեան մասին» որոշումը, (ընդունուած՝ 2011 թուականի Մարտ 29-ին),
- զ) «Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին» հռչակագիրը (ընդունուած՝ 2013 թուականի Մայիս 24-ին),
- է) «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորներու կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրէնքը (ընդունուած՝ 2014 թուականի Մարտ 7-ին),
- ը) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի հրամանագիրը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծի մշակման յանձնաժողով ստեղծելու մասին (հրապարակուած՝ 2014 թուականի Օգոստոս 10-ին):

### 3. Գործունէութեան լծակներն են.

- ա) Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը, որուն գործունէութեան իբրեւ արդիւնք կը ձեւաւորուի Արեւմտեան Հայաստանի հայերու ազգային ինքնութեան եւ քաղաքացիութեան կառոյցը, որ կու տայ Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքները միջազգային ամենատարբեր ձեւաչափերու մէջ պաշտպանելու եւ իրականացնելու հնարաւորութիւն: Ասիկա ի հակադրութիւն «սփիւռքահայ» որակման, որ ունի թերի ազգային ինքնութիւն եւ չ'ենթադրեր ազգային - պետական նշանակութեան յստակ իրաւունքներ եւ զանոնք պաշտպանելու եւ իրագործելու հնարաւորութիւն:
- բ) Այսպիսով, Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետականութեան երեք կառոյցները՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը), Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը եւ Նախագահական Խորհուրդը միասին կ'իրականացնեն աշխատանքներ պաշտպանելու Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքները Արեւմտեան Հայաստանի նկատմամբ եւ ձեւաւորելու ու հաստատելու Արեւմտեան Հայաստանի պետութիւնը՝ Բնօրրան Հայրենիքի մէջ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կայացումը, Հայոց պետականաշինութեան գործին մէջ, շարունակական եւ կարեւոր քայլ է՝ ազատ, անկախ, ինքնիշխան եւ միացեալ Հայաստանի հաստատման գործին մէջ:

Յաղթանակը մերը պիտի ըլլայ:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

20.08.2014 թ.

**ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

2004 թուականի Դեկտեմբեր 17-ին, Արցախի Շուշի քաղաքին մեջ, տեղի ունեցավ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի հիմնադիր ժողովը, ուր ներկայ էին հիմնադիր ժողովի անդամներ՝ Արմենակ Աբրահամեանը, Յովսէփ Յովսէփեանը, Աշոտ Բաբայեանը, Վաչագան Իշխանեանը, Հրաչեայ Փիլիպոսեանը, Վիտալի Բալասանեանը, Կոմիտաս Դանիէլեանը, Մելանեայ Բալայեանը, Սամուէլ Կարապետեանը, Ժիրայր Սեֆիլեանը, Գագիկ Սարգսեանը:

Հիմնադիր ժողովը քննութեան առաւ հետեւեալ հարցերը՝

1. Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի կազմաւորման հարցը,
2. Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի կողմէն՝ «Արեւմտեան Հայաստանի Հայերու իրաւունքներու մասին» Հռչակագրի պատրաստումը,
3. Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի աշխատանքներու համակարգողի թեկնածութեան յառաջադրման եւ ընտրութեան հարցը:

Միաձայն քուէարկութեամբ՝

հաստատուեցաւ Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի հիմնադրումը, հաստատուեցաւ Արեւմտեան Հայաստանի հայերու Ազգային Խորհուրդին կողմէ՝ «Արեւմտեան Հայաստանի Հայերու իրաւունքներու մասին» Հռչակագրի պատրաստման յանձնարարականը,

Արմենակ Աբրահամեան ընտրուեցաւ Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի աշխատանքներու համակարգող եւ կազմակերպիչ:

Այդպիսով՝ Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի աշխատանքները աւարտեցան:

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդ  
Շուշի, 17 Դեկտեմբեր 2004 թ.

**ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ  
ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ**

Արեւմտեան Հայաստանի հայոց Ազգային Խորհուրդը տարագիր հայ ժողովուրդի միասնական կամքը արտայայտելով, բոլոր հայերու ձգտումներուն իրականացման եւ պատմական արդարութեան վերականգնման յանձնառու հայ ազգի ճակատագրին հանդէպ իր պատասխանատուութեան գիտակից, մարդու իրաւունքներու հռչակագրի համընդհանուր սկզբունքներուն եւ առհասարակ միջազգային իրաւունքով ընդունուած չափանիշներուն հիմնուելով ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը կիրառելով՝

## ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ

Արդարության վրայ հիմնուած ժողովրդավար ընկերութեան հաստատումը հետապնդող ազգի վերակենդանացման գործընթացի մեկնարկը.

1) «Թրքահայաստան» կոչուած Հայաստանը կը վերանուանուի Արեւմտեան Հայաստան (Հայրենիք): Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) պիտի ունենայ իր դրօշը, զինանշանը եւ ազգային օրհներգը:

2) Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) պիտի ըլլա ինքնավար պետութիւն՝ ազգային գերագոյն իշխանութիւն, անկախութիւն, լիարժէք գերիշխանութիւն եւ իրաւունքներ վայելող: Ազգային բացառապէս Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) Սահմանադրութիւնն ու Արդարադատութիւնը:

3) Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) երաշխաւորը իր ժողովուրդն է՝ այսօր տարագիր, որ իր իշխանութիւնը պիտի կիրառէ ուղղակիօրէն, ինչպէս նաեւ իր ներկայացուցիչներուն միջոցով՝ հիմնուելով Սահմանադրութեան եւ օրէնքներուն վրայ: Յանուն Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) արտայայտուելու իրաւունքը Ազգային Խորհուրդի բացառիկ իրաւունքն է:

4) Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) անդամ կը հանդիսանան բոլոր այն անդամները, որոնք կրնան հիմնաւորել իրենց տարագրեալ ըլլալը եւ իրենց ընտանեկան ծագումը՝ նոյնիսկ մի քանի սերունդ վաղեմութիւն ունեցող: Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) անդամները կը վայելեն Ազգային Խորհուրդի պաշտպանութիւնն ու օգնութիւնը: Ազգային Խորհուրդը իր բոլոր անդամներուն ազատութիւնը եւ անոնց միջեւ հաւասարութիւնը կ'երաշխաւորէ:

5) Մարդոց եւ իրերու անվտանգութիւնը եւ սահմաններու անձեռնմխելիութիւնը ապահովելու նպատակով Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) կը ստեղծէ իր ուրոյն պաշտպանական կառոյցը, հանրային ապահովութեան եւ պետական կառոյցները՝ Ազգային Խորհուրդին ընդդատեայ: Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) իր անդամներուն իւրաքանչիւրի ազգային ծառայութեան խնդիրի կարգաւորումը կը տնօրինէ անկախաբար կերպով: Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) պաշտպանական ուժերը կրնան տեղակայուիլ/տեղաբաշխուիլ բացառապէս Ազգային Խորհուրդի որոշումով՝ Ազգային Խորհուրդի Նախագահի բարձր հրամանատարութեան ներքոյ:

6) Միջազգային իրաւունքի գետնի առումով Արեւմտեան Հայաստանը արտաքին անկախ քաղաքականութիւն կը վարէ: Ան ուղղակի յարաբերութիւններ կը հաստատէ միւս պետութիւններուն հետ եւ կը մասնակցի միջազգային կազմակերպութիւններու գործունէութիւններուն:

7) Արեւմտեան Հայաստանի ազգային հարստութիւնը՝ իր ժողովուրդը, հողը, ընդերքը, օդային տարածքը, ջուրերը եւ այլ բնական պաշարները, տնտեսական եւ մտաւոր ներուժն ու մշակութային կարողութիւնը Ազգին կը հանդիսանան: Անոնց վարումը, օգտագործումը, վայելումը եւ տիրանալը կը վերահսկուին Արեւմտեան Հայաստանի օրէնքներով:

8) Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) կ'որոշէ իր տնտեսական համակարգի սկզբունքները եւ կը տնօրինէ համակարգի կարգաւորումը. անհրաժեշտութեան պարագային կրնայ ստեղծել իր սեփական տարադրամը, ազգային դրամատունը, ելեւտական փոխառութեան, հարկերու եւ այլազան ծառայութիւններու իր համակարգը՝ հիմնուած սեփականութեան տարբեր ձեւերու դրութեան վրայ:

9) Իր իսկ մեջ Ազգային Խորհուրդը կ'երաշխաւորէ խօսքի, մամուլի եւ խղճի ազատութիւնը, օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւններու իրարմէ անջատ գոյութիւնը, արհեստակցական եւ մասնագիտական միութենական համակարգը, բազմակարծութիւնը եւ պետական պաշտօնեաներու ու պաշտպանական ուժերու ապաքաղաքական բնոյթը:

10) Ազգային Խորհուրդը կ'երաշխաւորէ կեանքի բոլոր ոլորտներուն մեջ արեւմտահայերէնի կիրառումը՝ որպէս պետական լեզու: Ազգային Խորհուրդը կը ստեղծէ իր ուրոյն կրթական համակարգը եւ գիտական ու մշակութային զարգացման դրութիւնը.

11) Ազգային Խորհուրդը 1894-էն 1923 գրաւման ենթարկուած իր տարածքին վրայ (Արեւմտեան Հայաստան, Հայրենիք) թուրքերուն կողմէ կատարուած Յեղասպանութեան միջազգային ճանաչումին հասնելու պարտականութեան զօրավիգ է:

12) Ազգային Խորհուրդը զօրավիգ է տարագրեալներու սերունդներու վերահաստատումին զուգահեռ պէտք է վճարուի վնասուց յատուցում՝ ստեղծելով Միջազգային Հիմնադրամ՝ մեծ մասամբ Հայոց Յեղասպանութեան մեջ պատասխանատու ճանչցուած պետութիւններու արդեամբ:

13) Այս հռչակագիրը հիմք կը ծառայէ Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) Սահմանադրութեան մշակման, եւ, մինչեւ անոր ընդունումը, հիմք կը ծառայէ օրէնքներ ներմուծելու եւ գործող սահմանադրութեան յաւելումներ ընելու համար, ազգային իշխանութիւններու գործունէութեան համար եւ նոր օրէնսդրութեան մշակման համար:

Արեւմտեան Հայաստանի Հայոց Ազգային Խորհուրդ  
Շուշի, 17 Դեկտեմբեր 2004թ.

## ՀՌՉԱԿԱԳԻՐ

### ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդը, արտայայտելով Արեւմտեան Հայաստանի հայոց կամքը ու գիտակցելով իր պատասխանատուութեան խիստ կարեւորութիւնը իր ժողովուրդի հանդէպ, գոր կ'առնչուի անոնց իղձերու իրականացման եւ խեղաթիւրուած արդարութեան վերականգնման գործընթացին, հանդէս կու գայ հրապարակելու հետեւեալ որոշումը՝

Յենուելով միջազգային հետեւեալ հանգամանքներու վրայ.

ա) ՄԱԿ-ի մարդու իրաւանց համընդհանուր սկզբունքներուն,

բ) միջազգային իրաւունքի հանրաձանօթ չափանիշներուն,

գ) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքի կիրառման անհրաժեշտութեան, որ պահանջուած է Ազգային Խորհուրդի կողմէ 2004 թ. դեկտեմբեր 17-ին,

ԿԸ ՀՌՉԱԿԷ

Աշխարհասփիռ հայութեան լիիրաւ պետական կառոյցի մը ստեղծումը, այսինքն՝ Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութեան սկիզբը:

Սոյն կառավարութեան ձեւաւորման երաշխիքները հաստատուած են իրաւական հետեւեալ որոշումներով.

### ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

1. 29 Դեկտեմբեր 1917 թ. (11 Յունուար 1918 թ.) Ռուսաստանի Հռչակագիրը, որ կը ճանչնայ Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը. Ռուսիոյ Ժողովրդական պատուիրակներու Խորհուրդը լոյս կ'ընծայէ «Թիրքահայաստանի մասին» Հռչակագիրը 1917 թ. Դեկտեմբեր 31-ին (1918 թ. Յունուար 13) «Բրաւտայի» թիւ 227-ի մէջ:
2. 2 Յունուար 1918 թ. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի դիմումը՝ ներկայացուած ֆրանսական կառավարութեան ճանչնալու Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը:
3. 10 Օգոստոս 1920 թ. Սերի խաղաղութեան դաշնագիրը եւ ԱՄՆ Նախագահ Վուորո Ուիլսոնի իրաւարար վճիռը (22 Նոյեմբեր, 1920 թ.) եւ մինչեւ օրս վավերական ու իրենց իրաւաբանական ոյժը չկորսնցուցած միջազգային փաստաթուղթերու տը իւրէ (De jure) եւ տը ֆաքթօ (De facto) գոյութիւնը Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ:

Կը նշենք հետեւեալ կարեւոր ամսաթիւերը. 1920 թ. Սան Ռեմօյի խորհրդածոյցով, 1920 թ. Ապրիլ 24: Սերի խաղաղութեան դաշնագրի ստորագրումը արեւմտեան տէրութիւններու կողմէ, 1920 թ. Մայիս 11: Սերի խաղաղութեան դաշնագրի յանձնումը թիրքական կառավարութեան, 1920 թ. Օգոստոս 10, Սերի խաղաղութեան դաշնագրի ստորագրումը Թուրքիոյ կողմէ:

4. 14 Դեկտեմբեր 1960, ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի Որոշումը «Գաղութային ժողովուրդներու եւ երկիրներու անկախութեան արտօնութեան» Համաձայնագրի հիմամբ:
5. Արեւմտեան Հայաստանի հայերը իբրեւ բնիկ ժողովուրդ իրենց ինքնորոշման իրաւունքի տէրն են՝ համաձայն ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի կողմէ ընդունուած Հռչակագրի 2007 թ. Սեպտեմբեր 13-ին:

«Բնիկ ժողովուրդները ինքնորոշման իրաւունք ունին, որու հիման վրայ անոնք ազատօրէն կ'որոշեն իրենց քաղաքական կարգավիճակը, եւ ազատօրէն կ'ապահովեն իրենց տնտեսական, ընկերային եւ մշակութային բարգաւաճումը» (Յօդ. 3):

### ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

1. Արեւմտեան Հայաստանի հայոց իրաւունքներու ապահովումն ու իրականացումը կարելի է միայն Արեւմտեան Հայաստանի կառավարութեան հովանաւորութեամբ:
2. Ամէն աքսորուած հայու շառաւիղի իրաւունքն է վերադառնալու իր պապենական հայրենիքը ու բարգաւաճելու այդտեղ:
3. Հայ Ազգային Խորհուրդը կը հրաւիրէ արտաքին աշխարհի ուշադրութիւնը՝ մասնակցելու Արեւմտեան Հայաստանի պատմական տարածքներու ճանաչմանը իր նահանգներով (վիլայեթներով)՝ ներառեալ ուիլսոնեան սահմանները եւ ընդունելու զայն իբրեւ անհերքելի իրողութիւն:

4. 1894-1923 թթ. թիւրքական յաջորդական իշխանութիւններու կողմէն Անատոլիայի եւ Արեւմտեան Հայաստանի մէջ գործադրած ցեղասպանութեան հետեւանքով ոչնչացուած եւ իւրացուած են բռնութեամբ աքսորուած հայերու գոյքերը, որոնց համար կը պահանջուի վերադարձնել Արեւմտեան Հայաստանի կառավարութեանը՝ իբրեւ միակ հեղինակաւոր իշխանութիւն:

#### ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութիւնը տարագիր հայոց կարգավիճակի ծնունդն է:

Ուստի, հարկ է նկատի ունենալ հետեւեալ սահմանումները.

1. Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութիւնը կը կազմուի Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի պատգամաւորներու կողմէ: Վտարանդի կառավարութիւնը օժտուած է նաեւ պետական իշխանութեան գերակայութեամբ եւ լիազօրութեամբ:
2. Արեւմտեան Հայաստանի հայոց անունով հանդէս գալու իրաւունքը կը պատկանի քացառապէս Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեանը:
3. Աշխարհասփիւռ հայութիւնը Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութեան իրաւունք ունի: Արեւմտեան Հայաստանի քաղաքացիները կը գտնուին անոր պաշտպանութեան եւ հովանաւորութեան ներքոյ:
4. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կ'ապահովէ իր քաղաքացիներու ազատ եւ իրաւահաւասար զարգացումը՝ անկախ անոնց ազգային, ցեղային եւ դաւանական պատկանելիութենէն:
5. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը հանրային անվտանգութեան պահպանման համար կը ստեղծէ համապատասխան մարմիններ եւ կառավարական կառոյցներ:
6. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը, իբրեւ միջազգային իրաւունքի ենթակայ, անմիջական յարաբերութիւններ կը հաստատէ այլ պետութիւններու եւ ազգային պետական կազմաւորումներու հետ, կը մասնակցի միջազգային կազմակերպութիւններու գործունէութիւններուն:

#### ՅՕԴՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

1. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը կը յանձնարարէ Արեւմտեան Հայաստանի կառավարութեան՝ միջազգային յայտարարութիւններու եւ պայմանագրերու ընդունման միջոցով հաստատել, որ.
  - ա) Արեւմտեան Հայաստանի հարստութիւնը՝ հողը, ընդերքը, օդային տարածութիւնը, ջրային եւ այլ բնական պաշարները, տնտեսական, մտաւոր եւ պատմամշակութային կարողութիւնները, Արեւմտեան Հայաստանի հայերու սեփականութիւնն են:
  - բ) Արեւմտեան Հայաստանի հարստութեան տիրապետման, օգտագործման եւ տնօրինման կարգը կ'որոշուի Արեւմտեան Հայաստանի կառավարութեան օրէնքներով:
  - գ) Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան մէջ նաեւ ունի ազգային հարստութիւն, որոնց կարգին ոսկիի պաշարներու, արծաթի եւ արտարժոյթի հիմնադրամներու մասնաբաժնի իրաւունք:

2. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը իր տիրապետութեան տակ գտնուելիք ամբողջ տարածքին վրայ ապահովելու է խօսքի, մամուլի եւ խղճի ազատութիւն, օրէնսդրական, դատական եւ գործադիր իշխանութիւններու իրաւահաւասարութիւն, ինչպէս նաեւ՝ Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ տեղակայուելիք իրաւապահ մարմիններու եւ զինեալ ոյժերու ապաքաղաքականացում:

3. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կը հռչակէ հայերենը իբրեւ պետական լեզու, ընդունելով արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի համագործակցութեամբ, կառավարութեան պաշտօնական գրագրութեան լեզուն կը յայտարարէ արեւմտահայերէնը: Կառավարութիւնը կը ստեղծէ կրթական, գիտական եւ մշակութային սեփական համակարգ:

4. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կը սատարէ Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ կատարուած ցեղասպանութեան ճանաչման գործին՝ համաձայն Հայ Ազգային Խորհուրդի յայտարարութեան:

5. Սոյն Հռչակագիրը հիմք կը ծառայէ Ազգային Խորհուրդի համար՝ ժամանակաւորապէս նշանակելու եւ հաստատելու Արեւմտեան Հայաստանի կառավարութեան լիազօր ներկայացուցիչ մը միջազգային կառոյցներու մէջ՝ որոշում կայացնելու իրաւունքով:

Ուստի, կոչ կ'ընենք ձեզ, հայեր, Արեւմտեան Հայաստանի, Հայաստանի Հանրապետութեան, Արցախի, Ջաւախքի, եւ թե՛ աշխարհով մէկ սփռուած, մասնակցիլ կառավարութեան գործունէութեանց՝ ձեր գիտելիքներով, փորձառութիւններով եւ մասնագիտութիւններով:

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդ  
4 Փետրուար, 2011 թ.

## ՈՐՈՇՈՒՄ

թիւ 1/2011 - 29.03.2011 թ.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
«ԶԷԶՈՔ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԵՒ  
ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ» ՀԱԱԳԱ,  
18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907 Թ. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (Convention V)  
ՀԻՄԱՆ ՎՐԱՅ

-ԿԸ ՑԱՅՏԱՐԱՐԷ-

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՄՇՏԱԿԱՆ, ԶԻՆՈՒԱԾ, ԴՐԱԿԱՆ ԶԷԶՈՔՈՒԹԻՒՆԸ

Նկատի առնելով մարդկութեան եւ հայութեան կրած մարդկային, հոգեւոր, մշակութային, նիւթական եւ տարածքային կորուստները Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմներու ժամանակ,

Հաշուի առնելով այն ճշմարտությունը, որ մարդկությունը այսօր կը գտնուի հոգեւոր-մշակութային, բարոյա-հոգեբանական եւ տնտեսական-քաղաքական խոր ճգնաժամի մէջ, որոնք կը սպառնան քաղաքակրթություններու բախմամբ եւ Երրորդ համաշխարհային պատերազմի հրահրմամբ,

Նկատի ունենալով «Չէզոք պետություններու եւ անձանց իրաւունքներու եւ պարտաւորություններու մասին ցամաքային պատերազմի ժամանակէ Հաագա, 18 Հոկտեմբեր 1907 թ. Համաձայնագիրը (Convention V), իբրեւ մարդկութեան եւ հայութեան իրաւական ուղիղ ճանապարհ՝ խուսափելու համար ազգամիջեան եւ միջկրօնական բախումներէն, նաեւ հակամարտություններէն,

Հաշուի առնելով այն փաստը, որ Արեւմտեան Հայաստանի պետականութեան բացակայութիւնը ծաւալապաշտական քաղաքականութեան պատճառով Արեւմտեան Հայաստանի հայութիւնը իրաւականօրէն զրկեց նոյն՝ «Չէզոք պետություններու եւ անձերու իրաւունքներու եւ պարտաւորություններու մասին ցամաքային պատերազմի ժամանակ» Հաագա, 18 Հոկտեմբեր 1907 թ. պայմանագրին (Convention V) մաս կազմելու հնարաւորութենէն, ինչպէս նաեւ՝ համապարփակ ինքնապաշտպանութիւն կազմակերպելու իր բնական իրաւունքէն, որով Հայկական պետութիւնը, իբրեւ անկախ իշխանութիւն, եթէ գոյութիւն ունենար՝ անպայման պիտի օգտուէր «Չէզոք պետություններու եւ անձերու իրաւունքներու եւ պարտաւորություններու մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 Հոկտեմբեր 1907 թ. պայմանագրի (Convention V) դրոյթներէն, նաեւ խաղաղութեան առաջին պայմանագրէն՝ 1899 թ.:

Անհրաժեշտ համարելով ընդգծել այն փաստը, որ արժանի է յատուկ վերլիչեցման ու գնահատման, երբ 1915 թ. Մայիս 24-ին Եռեակ համաձայնութեան պետությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսան եւ Ռուսաստանը, առաջինը հանդէս եկան Օսմանեան կառավարութեան կողմէն հայերու բնաջնջման քաղաքականութեան դէմ համատեղ յայտարարութեամբ, որով Օսմանեան կառավարութեան կողմէն հայերու նկատմամբ իրականացուած բռնությունները որակեցին իբրեւ «Թուրքիոյ նոր ոճիրը ընդդէմ մարդկութեան եւ քաղաքակրթութեան» (1):

Հիմնուելով պատմական այն փաստին վրայ, որ Հայկական Կիլիկիան անկախութիւն հռչակեց 1920 թ. Օգոստոս 4-ին, բայց Ֆրանսան, շրջանցելով 1915 թ. Հոկտեմբեր 27-ին Հայկական Կիլիկիոյ ինքնավարութեան վերաբերեալ համաձայնութիւնը Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի ներկայացուցիչ Պօղոս Նուպար Փաշայի եւ Ֆրանսայի արտաքին գործերու նախարարութեան արեւելեան բաժնի պետ Ֆրանսուա Ճորձ-Փիքոտի միջեւ, զինաթափեց ու լքեց Կիլիկիոյ հայերը, որուն հետեւանքով Կիլիկիոյ անկախութիւնը չգոյատեւեց (2):

Այս տարին այն ժամանակաշրջանն էր, երբ, յենուելով միջազգային ընդունուած չափանիշներու վրայ, Օսմանեան կայսրութիւնը անդամահատուեցաւ, եւ որուն հիման վրայ ստեղծուեցան նոր, անկախ արաբական պետություններ:



Հիմնուելով նաեւ այն իրողութեան վրայ, որ 1918 – 1920 թթ. Հայկական Աշխարհի ազատագրական պայքար մղող նահանգները՝ Նախիջեւան, Ջանգեզուր, Արցախ, Ջաւախք եւ Հայաստանի Հանրապետութիւն, ոսնձգութիւններու ենթակայ դարձան թրքական եւ ատրպէյճանական զինուած ուժերուն կողմէ,

Եւ այն հանգամանքը, որ մինչ 1920 թ. Հայաստանի Հանրապետութիւնը անդամակցութեան խնդրանքով Ազգերու Լիգային ուղղուած դիմումի պատասխանին կը սպասէր, քեմալական Թուրքիան նոր յարձակման կ'ենթարկէր Հայաստանն ու հայութիւնը՝ տապալելու համար Մերի Դաշնագրի դրութիւններու եւ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուորո Ուիլսոնի Իրաւարար վճիռի իրագործումը Հայաստանի մէջ,

Ինչպէս նաեւ պատմական այլ իրադարձութիւններ, որոնք տասնամեակներ շարունակ արգելափակեցին հայ ժողովուրդի ազատ, ինքնիշխան ապրելու, զարգանալու եւ առաջընթացի իրաւունքը իր իսկ տարածքներուն վրայ՝ իբրեւ բնիկ ժողովուրդ:

Եւ վերջապէս, ՄԱԿ-ի հռչակած միջազգային սկզբունքներու եւ չափանիշներու համաձայն, վերահաստատելով մեր յանձնառութիւնը հակամարտութիւններու խաղաղ կարգաւորման սկզբունքին՝ նպաստելու համար տարածաշրջանային խաղաղութեան ու անվտանգութեան, ապահովելու համար ժողովուրդներու ազատ զարգացման եւ առաջընթացի իրաւունքը,

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը սոյն որոշմամբ կը յայտարարէ՝

1. Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի Մշտական, Զինուած, Դրական Չէզոքութիւնը բռնագրաւուած Երկրամասի՝ Արեւմտեան Հայաստանի տէ իւրէ (de jure) եւ տէ ֆաքթօ (de facto) տարածքներու վրայ, նկատի ունենալով առաջին հերթին՝ ա) ինչպէս Հայաստան – Թուրքիա սահմանագատումը՝ համաձայն ԱՄՆ 28-րդ նախագահ Վուորո Ուիլսոնի Իրաւարար վճիռի, 22 Նոյեմբեր 1920 թ. (3),

բ) այնպէս ալ պատմական Հայաստանի, ներառեալ՝ Արեւմտեան Հայաստանի եւ Հայկական Կիլիկիոյ, համաձայն՝ ՄԱԿ-ի «Գաղութային երկիրներուն եւ ժողովուրդներուն անյապաղ անկախութիւն շնորհելու մասին» Հռչակագիրի, 14 Դեկտեմբեր 1960 թ.,

գ) եւ վերջապէս, Արեւմտեան Հայաստանի նկատմամբ, իբրեւ բնիկ ժողովուրդ, Արեւմտեան Հայաստանի Հայերու ունեցած՝ պատմական, ծագումնաբանական, մշակութային, քաղաքակրթական, պետականաստեղծ անժխտելի, անբեկանելի եւ անժամանցելի իրաւունքները՝ համաձայն ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդներու իրաւունքներու մասին» Հռչակագիրի, 13 Սեպտեմբեր 2007 թ.:

2. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Մշտական, Զինուած, Դրական Չէզոքութեան Յայտարարութիւնը կը տարածուի, թէ՛ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութիւն ստացած եւ թէ՛ դեռ չստացած բոլոր հայերու վրայ՝ հիմք ընդունելով այն փաստը, որ անոնք սփիւռքահայեր չեն, ինչպէս կը ներկայացուի մինչեւ այսօր, այլ Հայոց Ցեղասպանութեան եւ բռնագաղթի հետեւանքով աշխարհի տարբեր երկիրներու մէջ բնակութիւն հաստատած Արեւմտեան Հայաստանի հայեր:

3. Արեւմտեան Հայաստանի հայերը, ներառեալ՝ Հայկական գաղթավայրերու բնակչութիւնը, ժամանակակից աշխարհի մէջ տեղի ունեցող պատերազմներու, յեղաշրջումներու, ազգամիջեան եւ միջկրօնական ընդհարումներու, նաեւ այսպէս կոչուած քաղաքակրթութիւններու բախման եւ անոնցմէ բխող բռնութիւններուն, կոտորածներուն եւ ցեղասպանութիւններուն, առաւել եւս հրահրուած կամ ուղղորդուած քառսային վիճակներուն չմասնակցելու իրաւունք ունի համաձայն՝ «Չէզոք պետութիւններու եւ անձերու իրաւունքներու եւ պարտաւորութիւններու մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 Հոկտեմբեր 1907 թ. համաձայնագրի (Convention V):

4. Արեւմտեան Հայաստանի հայերը, ներառեալ՝ Հայկական գաղթավայրերու բնակչութիւնը, յաջորդական բռնութիւններէն, յարձակումներէն, բռնագաղթերէն ու կոտորածներէն պաշտպանուելու, ինչպէս նաեւ իր բնակութեան երկիրը արտաքին վտանգներէ պաշտպանելու իրաւունք ունի, համաձայն՝ ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածի, որ կը շեշտէ՝ «Անհատական եւ հաւաքական ինքնապաշտպանութեան իրաւունքը»:

5. Արեւմտեան Հայաստանի հայերը, ներառեալ՝ Հայկական գաղթավայրերու բնակչութիւնը, իր բնակութեան երկրի կողմէն այլ երկրի նկատմամբ իրականացուած յարձակման ու ներքաղաքական բախումներուն, նաեւ քաղաքացիական կռիւներուն չմասնակցելու իրաւունք ունի, համաձայն՝ «Չէզոք պետութիւններու եւ անձերու իրաւունքներու եւ պարտաւորութիւններու մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 Հոկտեմբեր 1907 թ. համաձայնագրի (Convention V):

Արեւմտեան Հայաստանի հայերու խաղաղ ու անվտանգ ապրելու եւ զարգանալու իբրեւ օրինակ ունինք Լիբանանի հայ համայնքի քաղաքական առաջատար ուժերու միացեալ յայտարարութիւնը՝ 1975–1990 թթ. տեղի ունեցած ներքաղաքական ճգնաժամի յաղթահարման խնդիրով, որ բնորոշուեցաւ իբրեւ «Լիբանանի հայութեան դրական չէզոքութիւն»:

6. Արեւմտեան Հայաստանի հայերը, բոլոր այն պարագաներուն, երբ հարկադրուած են պաշտպանուելու իրենց Մշտական, Զինուած, Դրական Չէզոքութիւնը՝ կը կազմակերպեն հասարակական կարգի եւ համայնքի անվտանգութեան, պաշտպանութեան եւ տարածքային ապահովութեան զինուած ուժեր, համաձայն՝ ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածի, որ կը շեշտէ «Անհատական եւ հաւաքական ինքնապաշտպանութեան իրաւունքը»:

7. Ինչպէս Արեւմտեան Հայաստանի հայերը, նոյնպէս Հայոց Հայրենիքէն տարբեր ժամանակաշրջաններու, տարբեր պատճառներով բռնագաղթուած ու տարագրուած հայութիւնը՝ բարոյական, պատմական, քաղաքակրթական, քաղաքական եւ քաղաքացիական բոլոր իրաւունքները ունին կիրառելու Մշտական, Զինուած, Դրական Չէզոքութեան քաղաքականութիւնը, այն պատճառով, որ մինչեւ օրս Ազգերու Լիգան, ապա ՄԱԿ-ը ու Միջազգային ընկերակցութիւնը պատշաճ մակարդակով չեն պաշտպանած Հայաստանի ու հայութեան բնական, մշտական եւ անօտարելի իրաւունքները:

8. Այս առումով դատապարտելի են Ազգերու Լիգայի եւ ՄԱԿ-ի փաստաթուղթերու պարունակած անընդունելի այն դրոյթները, որոնք տեղ գտած են առաջինի ստեղծած Միջկառավարական Խորհրդակցական Կոմիտէի որոշման մէջ՝ «Հայ փախստականներու հարցերու եւ լքած գոյքի մասին» (2 Օգոստոս 1929 թ.) եւ երկրորդի՝ «Միջազգային

մարդասիրական իրաւունքի լուրջ խախտումներու եւ միջազգային իրաւունքի կոպիտ խախտումներու գոհ դարձած անձանց իրաւական պաշտպանութեան եւ փոխհատուցման հիմնական սկզբունքներու եւ ուղեցոյցներու մասին» որոշման մէջ (թիւ 60/147 – 16 Դեկտեմբեր 2005 թ.):

9. Արեւմտեան Հայաստանի հայերը, ներառեալ՝ Հայկական գաղթավայրերու բնակչութիւնը քաղաքական քաշկոտութիւններու եւ չարաշահութիւններու դաշտէն դուրս գալու եւ իր ազգային հիմնախնդիրները իրաւական մէկ հարթութիւն տեղափոխելու իրաւունք ունի:

10. Աշխարհով մէկ սփռուած 10 միլիոն հայերը կարողութիւն ունին մեծամասնութիւն ապահովելու եւ անվտանգութիւն հաստատելու Արեւմտեան Հայաստանի մէջ, հետեւաբար իրաւասու է եւ անհրաժեշտութիւն է Ուիլսընեան Իրաւարար վճիռի տէ ֆաքթօ (de facto) իրականացումը:

11. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան կը յանձնարարէ՝ այսուհետ իր օրէնսդրական, իրաւական, հայեցակարգային, կառուցուածքային եւ կազմակերպչական գործունէութեան մէջ առաջնորդուիլ «Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի Մշտական, Զինուած, Դրական Չեզոքութեան» քաղաքականութեան իրաւական քաղաքական սկզբունքներուն համաձայն, ըստ որուն՝ «Արեւմտեան Հայաստանը Մշտական, Զինուած, Դրական եւ Անկախ, Ինքնիշխան Ժողովրդավարական Պետութիւն է»:

12. «Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի Մշտական, Զինուած, Դրական Չեզոքութեան Մասին» Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Յայտարարութիւնը տէ իւրէ (de jure) ուժի մէջ կը մտնէ յայտարարութենէն անմիջապէս յետոյ, իսկ տէ ֆաքթօ (de facto)՝ Յայտարարութեան մասին Որոշումը Նիտրոլանտներու կառավարութեան յանձնելէ 60 օր յետոյ, համաձայն՝ «Չեզոք պետութիւններու եւ անձերու իրաւունքներու եւ պարտաւորութիւններու մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 Հոկտեմբեր 1907 թ. Համաձայնագրի (Convention V):

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ

---

Այլ լեզուներու թարգմանութեան պարագային բնագիր կը համարուի փաստաթուղթին հայերէնը:

---

Ծանօթագրութիւն

1. տես, Le premier communiqué turc. Agence Tnlng. Wolff. Constantinople, le 4 juin 1915, L'Agence Havas avait publié, le 24 mai, la déclaration suivante, après une entente préalable entre les Gouvernements de France, de Grande-Bretagne et de Russie:

**France, Grande-Bretagne et Russie. — DÉCLARATION DE LA TRIPLÉ-ENTENTE  
TENANT POUR RESPONSABLE LE GOUVERNEMENT TURC DES MASSACRES COMMIS PAR LA TUR-  
QUIE EN ARMÉNIE, EN DATE DU 24 MAI 1915.**

24 mai 1915. — Depuis un mois environ, la population kurde et turque de l'Arménie procède, de connivence et souvent avec l'aide des autorités ottomanes, à des massacres des Arméniens. De tels massacres ont eu lieu vers la mi-avril (nouveau style) à Erzeroum, Bertchun, Eghaine, Akn, Bitlis, Mouch, Sassoun, Zeitoun et dans toute la Cilicie; les habitants d'une centaine de villages aux environs de Van ont été tous assassinés; dans la ville même, le quartier arménien est assiégé par les Kurdes. En même temps, à Constantinople, le gouvernement ottoman sévit contre la population arménienne inoffensive. — En présence de ces nouveaux crimes de la Turquie contre l'humanité et la civilisation, les gouvernements alliés font savoir publiquement à la Sublime-Porte qu'ils tiendront personnellement responsables desdits crimes tous les membres du gouvernement ottoman ainsi que ceux de ses agents qui se trouveraient impliqués dans de pareils massacres.

"Depuis un mois environ, les populations turque et kurde de l'Arménie procède, de connivence et souvent avec l'appui des autorités ottomanes, à des massacres des Arméniens. De tels massacres ont eu lieu vers la mi-avril (nouveau style) à Erzeroum, Terdjian, Eghaine, Akn, Bitlis, Mouch, Sassoun, Zeitoun et dans toute la Cilicie; Les habitants d'une centaine de villages aux environs de Van ont été tous assassinés; dans la ville même, le quartier arménien est assiégé par les Kurdes. En même temps, à Constantinople, le Gouvernement ottoman sévit contre la population arménienne inoffensive.

En présence de ces nouveaux crimes de la Turquie contre l'humanité et la civilisation, les Gouvernements alliés font savoir publiquement à la Sublime Porte qu'ils tiendront personnellement responsables desdits crimes tous les membres du Gouvernement ottoman ainsi que ceux de ses agents qui se trouveraient impliqués dans de pareils massacres. "

«Գրեթէ մէկ ամիս է ի վեր, Հայաստանի թուրք եւ քիւրտ բնակիչները օսմանեան հեղինակութիւններու արտօնութեամբ ու յաճախ անոնց նեցուկը ունենալով ջարդեր կը գործադրեն Հայերու դէմ: Նման ջարդեր տեղի ունեցան Ապրիլի կիսուն Էրզրումի մեջ (Կարին), Թերճան, Եղինէ, Պիթլիս, Մուշ, Սասուն, Զեյթուն եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ: Վանի շրջակայ գրեթէ հարիւր գիւղերու հայերը բոլորն ալ սպաննուեցան եւ Վանի հայկական թաղամասը շրջապատուած էր քիւրտերու կողմէ: Միեւնուն ժամանակ օսմանեան Կառավարութիւնը չարչրկեցին Կոստանդնուպոլսոյ անպաշտպան հայ բնակչութիւնը: Մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ գործուած Թուրքիոյ այս նոր ոճիրներուն հանդէպ դաշնակից կառավարութիւնները հանրօրէն կը տեղեկացնեն Մեծ Դրան, որ թուրք կառավարութեան բոլոր անդամները անհատապէս պատասխանատու պիտի համարուին, ինչպէս նաեւ բոլոր այն պաշտօնեաները, որոնք մասնակից դարձան այս ջարդերուն»:

2. La Correspondance d'Orient, Revue économique, politique et littéraire

Le 19 janvier, 1920,

1/ Le conseil supreme des allies a decider que le gouvernement de l'Etat Arménien est reconnu comme gouvernement de fait;

2/ Que cette reconnaissance ne préjuge pas la question des frontières de l'Etat armenien.

2. La Correspondance d'Orient, Revue économique, politique et littéraire

Յունուար 19, 1920,

1/ Դաշնակիցներու Գերագոյն Խորհուրդը յայտարարութեամբ կը տեղեկացնէ, որ կը ճանչնայ Հայկական պետութեան կառավարութիւնը, իբրեւ փաստացի կառավարութիւն,

2/ որոշուած է, որ այդ ճանաչումը չի կանխորոշեր Հայկական պետութեան սահմաններուն հարցը:

3. Իրավարար վճիռի պաշտօնական եւ ամբողջական անուանումն է. «Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ», 22 Նոյեմբեր, 1920թ.:

3. Voici la Sentence Arbitrale officiel et complet; "La décision du Président des Etats–Unis d'Amérique pour la détermination de la frontière entre la Turquie et l'Arménie, l'accès à la mer de l'Arménie et la démilitarisation de tout territoire turc adjacent".

### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴՐՕՇԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի 17 Դեկտեմբեր 2004 թ. Հռչակագրի ա) Կէտի Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) պէտք է ունենայ իր պետական դրօշը, զինանշանը եւ օրհներգը: Մեկնելով սոյն Հռչակագրի դրոյթներէն՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը որոշեց հաստատել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նոր դրօշը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական խորհրդանիշներէն է:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշը քառագոյն է: Կեդրոնին երկու խորհրդանշաններն են՝ մուգ կապոյտ ութանկեան մէջ՝ ծիրանագոյն յաւերժութեան ութաթել նշանը, որոնք կ'իմաստաւորեն տիեզերական ներդաշնակութիւնը:

Ութանկեան չորս գագաթներէն՝ սկիզբ առնող մուգ կապոյտ ճառագայթները կ'երկարին չորս ուղղութեամբ, ինչպէս աշխարհի չորս ծագերը, մուգ կապոյտը երիզուած է ծիրանագոյնով, դրօշի չորս հատուածները բաց երկնագոյն են:

Դրօշը կը խորհրդանշէ Հայկական բարձրաւանդակը, իբրեւ քաղաքակրթութեան բնօրրան:

Մուգ կապոյտը կը խորհրդանշէ հայ ժողովուրդի յաւերժականութիւնը: Ծիրանագոյնը կը խորհրդանշէ հայ ժողովուրդի բանախօսութիւնը, արիականութիւնը եւ ստեղծագործ ազատութեան կենսասիրութիւնը: Բաց երկնագոյնը կը խորհրդանշէ հայ ժողովուրդի լուսաւորչականութիւնը եւ առաքելականութիւնը: Մպիտակը կը խորհրդանշէ հայ ժողովուրդի բարեպաշտութիւնը: Դրօշի լայնութեան եւ երկարութեան չափերու յարաբերութիւնն է՝ 1:2 – ի:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշի լայնութեան եւ երկարութեան յարաբերակցութեան չափերու պահպանումով կարելի է օգտագործել նաեւ փոքր կամ մեծ չափի դրօշ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշի նկարագրութեան գունաւոր պատկերը կը ներկայացուի սոյն օրէնքին կից:

Անցումային դրոյթներ

1. Մինչև Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան եւ Խորհրդարանի վերջնական ձեւաորումը սոյն հրամանագիրը ունի օրէնքի ուժ:
2. Սոյն հրամանագրի ուժի մէջ մտնելու պահէն Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի նախկին դրօշը կը եանձնուի Արեւմտեան Հայաստանի Հայերու Ասամպլեային, իբրեւ Ասամպլեայի խորհրդանիշ:
3. Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշը կիրառութեան մէջ կը մտնէ հրամանագրի ստորագրման պահէն:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ  
21.10.2011 թ.

(Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշը տես, շապիկի 2-րդ էջին)

### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ** **ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ**

Սոյն Հրամանագրով կը հաստատուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Զինանշանը:

Զինանշանը վահան է, երկու եզրաշերտերով՝ կապոյտ եւ ծիրանագոյն: Վահանի վրայ յաւերժութեան նշանն է՝ ութանկեան մէջ, որուն ճառագայթներու շարունակման միջոցով վահանը կը բաժնուի չորս մասի:

Զինանշանի բոլոր գոյները կը կրկնեն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Դրօշի գոյները՝ կապոյտ, ծիրանագոյն, մուգ կապոյտ, սպիտակ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ  
06.04.2015 թ.

(Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան զինանշանը տես, շապիկի 1-ին էջին)

### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ** **Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնապաշտպանութեան ուժերու ստեղծման մասին, հիմնական նպատակ ունենալով պաշտպանելու հայութիւնն ու Հայաստանը**

Հաշուի առնելով՝ մարդկութեան եւ հայութեան կրած մարդկային, հոգեւոր, մշակութային, նիւթական եւ տարածքային կորուստները Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմներու ժամանակ,

հաշուի առնելով՝ այն իրողութիւնը, որ մարդկութիւնն այսօր կը գտնուի հոգեւոր-մշակութային, բարոյա-հոգեբանական եւ տնտեսա-քաղաքական խոր ճգնաժամի մէջ,

որոնք կը սպառնան միջկրօնական ու քաղաքացիական բախումներով եւ Երրորդ համաշխարհային պատերազմի հրահրմամբ,

հաշուի առնելով՝ Մերձաւոր Արեւելքի մէջ ընթացող եւ խորացող ռազմաքաղաքական գործընթացները, որոնք կրնան սպառնալ տարածաշրջանի հայութեան եւ Հայաստանի ապահովութիւնը,

ինչպէս նաեւ ՄԱԿ-ի հռչակած միջազգային սկզբունքներու եւ չափանիշներու համաձայն՝ կրկին վերահաստատելով մեր եանձնառութիւնը նպաստելու հակամարտութիւններու խաղաղ կարգաւորման սկզբունքին, տարածաշրջանային խաղաղութեան ու անվտանգութեան, ապահովելու ժողովուրդներու ազատ զարգացման եւ առաջընթացի իրաւունքը,

Նկատի առնելով՝ Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքի կիրառման անհրաժեշտութիւնը, որ պահանջուած է Ազգային Խորհուրդի կողմէն 2004 թ. Դեկտեմբեր 17-ին,

նկատի առնելով՝ Աշխարհասփիւռ հայութեան իրաւունքը լիիրաւ պետական կառոյցի ստեղծման, այն է՝ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան կազմութեան մասին Հռչակագիրը ընդունուած՝ 4 Փետրուար, 2011-ին, Փարիզ, Ֆրանսա,

նկատի առնելով՝ Արեւմտեան Հայաստանի Հայերու եւ Արեւմտեան Հայաստանի Մշտական, Զինուած, Դրական Չէզոքութեան քաղաքականութիւն որդեգրելու մասին (29.03.2011 թ.) Որոշումը «Չէզոք պետութիւններու եւ չէզոք անձանց իրաւունքներու եւ պարտականութիւններու մասին՝ ցամաքային պատերազմի ժամանակ» Պայմանագրի յօդուածներու եւ դրոյթներու համաձայն (Հաագա, 18 Հոկտեմբեր 1907 թ.):

գիտակցելով մեր պատասխանատուութիւնը հայութեան խնդիրներու հանդէպ, որ կ'առնչուին անոնց ինքնապաշտպանութեան իրաւունքին եւ կեանքի ու գոյքի ապահովութեան, ինչպէս նաեւ հայութեան զարգացման ու առաջընթացի բնական իրաւունքին հիմնուած՝ ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Համընդհանուր Հռչակագրի եւ ներպետական ու միջազգային հիմնարար այլ սկզբունքներու ու չափանիշներու վրայ.

Հրամանագրի մէջ են՝

Արեւմտեան Հայաստանի Հայերու, Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի եւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Ինքնապաշտպանութեան յատուկ ուժերու ստեղծման գործընթացի սկիզբը՝ հիմնական նպատակ ունենալով պաշտպանել հայութիւնն ու Հայաստանը:

ա) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնապաշտպանութեան ուժերը կը ստեղծուին բոլոր այն վայրերուն մէջ, ուր կ'ապրին Արեւմտեան Հայաստանի հայերը, ունենալով մէկ հիմնական խնդիր, կարիքի պարագային մասնակցելու հայութեան եւ Հայաստանի պաշտպանութեան:

բ) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնապաշտպանութեան ուժերը պիտի ունենան իրենց Կանոնագիրը եւ Վարքականոնը, որ պիտի դրուի շրջանառութեան մէջ յետագային:

գ) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնապաշտպանութեան ուժերը օժտուած պիտի ըլլան շարժունակութեամբ եւ ըստ պահանջի տեղաշարժուելու եւ պահանջուած տեղը համախմբուելու նպատակով:

դ) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնապաշտպանութեան ուժերը պիտի գործեն բացառապէս Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի Մշտական, Զինուած, Դրական Չեզոքութեան մասին Որոշման (29.03.2011 թ.) եւ «Չեզոք պետութիւններու եւ չեզոք անձանց իրաւունքներու եւ պարտականութիւններու մասին՝ ցամաքային պատերազմի ժամանակ» Պայմանագրի յօդուածներու եւ դրոյթներու համապատասխան:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ  
26.12.2012 թ.

#### **ՀՐԱՄԱՆԱԳԻՐ**

#### **«Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը իբրեւ շարունակող պետութիւն»**

Թիւ 12 – 2014–02–23

Որոշում՝ յիշեցում, արեւմտեան հայաստանի Հանրապետութեան վերաբերեալ, որը կ'հանդիսանա 1920–ին ճանաչուած հայկական պետութեան՝ Հայաստանի, շարունակութիւնը:

Հայկական պետութեան՝ Հայաստանի, անկախութիւնը ճանաչուած է 1920 թուականի Յունուար 19–ին:

Մերի պայմանագրի 93–րդ յօդուածով հաստատուած են Հայաստան պետութեան մէջ բնակուող փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութիւնը:

Յօդուած 1 – Հիմք ընդունելով այն փաստերը, որ Հայկական պետութիւնը Դաշնակից տերութիւններու կողմէն՝ «տէ ֆաքթօ» ճանաչուած է 1920 թ. Յունուար 19–ին եւ «տէ իւրէ» 1920 թ. Մայիս 11–ին, կը յայտարարենք, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) կը հանդիսանայ Հայկական պետութեան՝ Հայաստանի, շարունակող պետութիւն:

Յօդուած 2 – Հաշուի առնելով վերոնշեալ փաստերը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը այսօր, իբրեւ Հայկական պետութեան՝ Հայաստանի շարունակող, պարտաւորութիւն կը կրէ՝ բոլոր ուխտերով, պայմանագրերով, համաձայնագրերով եւ դատավճիռներով, որոնք կայացուած են 1920 թ. ճանաչուած Հայկական պետութեան՝ Հայաստանի, կողմէն:



Հայաստան պետության անկախության պաշտօնական ճանաչումները

1917 թուականի Դեկտեմբեր 29-ի հրամանագիրով Ռուսաստանի Սովետական ժողովրդական կոմիսարներու խորհուրդը (Սովնարկոմ) կը ճանչնայ Արեւմտեան Հայաստանի (Տաճկահայաստանի) անկախութիւնը:

1919 թուականի Փետրուար 12-ին Արեւմտեան Հայաստանի հայերու Ազգային պատուիրակութիւնը եւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը կը հանդիպին Փարիզի մէջ գումարուած Խաղաղութեան վեհաժողովի ծիրէն ներս, որպէսզի ներկայացնեն յուշագիր հայ ժողովուրդի պահանջներուն վերաբերեալ, որ յետագային՝ 1919 թուականի Փետրուար 26-ին, կը ներկայացուի Վերսալեան խաղաղութեան խորհրդաժողովին:

Այս փաստաթուղթը, Ազգերու Լիգայի եւ Դաշնակից տերութիւններու հովանաւորութեան ներքոյ, կը պահանջէ մասնաւորապէս Հայաստան պետութեան անկախութեան ճանաչումը, որ կազմուած է Արեւմտեան Հայաստանի 6 մարզերէն, Կիլիկիայէն, ինչպէս նաեւ նոր հռչակուած Հայաստանի Հանրապետութենէն:

Ներկայացուած պահանջներուն ի պատասխան Դաշնակիցներու Գերագոյն Խորհուրդը 1920 թ. Յունուար 19-ին կայացուցած է հետեւեալ որոշումը եւ «տէ ֆաքթօ» ճանչցած է Հայկական պետութիւնը.

- 1) Հայկական պետութեան կառավարութիւնը կը ճանչցուի, իբրեւ կառավարութիւն,
- 2) այս որոշումը չի կանխորոշեր Հայկական պետութեան սահմաններու հարցը:

1920 թուականի Յունուար 27-ին Խաղաղութեան վեհաժողովի քարտուղարութիւնը այս երկու որոշումները պաշտօնապէս ներկայացուցած է Հայ Ազգային Միացեալ պատուիրակութեան:

1920 թուականի Մայիս 11-ին թրքական պատուիրակութիւնը կը հրաւիրուի վեհաժողով, ուր անոր կը ներկայացուին «խաղաղութեան պայմաններ»-ը: Դաշնակից Ուժերու մէջ էր նաեւ Հայկական պետութեան պատուիրակութիւնը: «Խաղաղութեան Պայմաններ»-ու նախաբանին մէջ, որ յետագային դարձաւ Սեւրի Դաշնագրի նախաբանը, Հայաստանը նշուած է Դաշնակից տերութիւններու շարքին: Հայկական պետութիւնը ճանչցուեցաւ նաեւ «տէ իրէ»:

1920 թ. Օգոստոս 10-ին ստորագրուեցաւ Սեւրի դաշնագիրը, որուն 88-93-րդ յօդուածները կը վերաբերին Հայաստան պետութեան:

1920 թ. Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ նախագահ Վուորօ Ուիլսոնը վաւերացուց Իրաւարար վճիռ՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐ**  
**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան**  
**նախագիծը մշակելու վերաբերեալ**

**Թիւ 23, 2014–08.10**

Արեւմտեան հայաստանի ազգային խորհուրդի ստեղծման 10–րդ,  
Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմաւորման գործընթացի  
սկզբնաւորման 4–րդ տարեդարձի,  
Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի ձեւաւորման,  
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութեան փաստի,

Այն է՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառոյցներու  
ձեւաւորման փաստի առնչութեամբ՝

կը հաստատենք եւ կը վերահաստատենք, որ Արեւմտեան Հայաստանի  
Հանրապետութիւնը (Հայաստան) ազատ, անկախ, ինքնիշխան, սոցիալական,  
իրաւական, ժողովրդավարական, ինչպէս նաեւ մշտական զինուած, դրական չէզոք  
պետութիւն է,

որ հիմնաւորուած է հետեւեալ հոչակագրերու, որոշումներու, օրէնքներու եւ իրաւական  
փաստաթուղթերու վրայ՝

1. Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի հիմնադիր ժողովի որոշման,  
17.12.2004 թ.,
2. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդարանի պատգամաւորներու ընդունած  
հոչակագրի, 20.01.2007 թ.,
3. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Արեւմտեան Հայաստանի Վտարանդի  
Կառավարութիւն կազմելու մասին հոչակագրի, 04.02.2011 թ.,
4. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի չէզոքութեան մասին որոշման,  
29.03.2011 թ.,
5. Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշի մասին հրամանագրի, 21.10.2011  
թ.,
6. Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնապաշտպանութեան ուժերու ստեղծման  
մասին հրամանագրի, 26.12.2012 թ.,
7. Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին  
հոչակագրի, 24.05.2013 թ.,
8. Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագիր, Որոշում՝  
յիշեցում, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վերաբերեալ, որ կը  
հանդիսանայ 1920–ի Հայկական պետութեան շարունակութիւնը: Թիւ 12 – 2014–02–23:

եւ ըստ այդմ՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովին (Խորհրդարանին) կ'առաջարկենք ձեւաւորել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մշակման յանձնաժողով եւ ձեռնարկած Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի մշակումը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառոյցներու ձեւի եւ բովանդակութեան համար՝ իբրեւ հիմք ընդունելով Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներու կամարտայայտութեան վերաբերեալ վերոյիշեալ հռչակագրերը, որոշումները, օրէնքներն ու իրաւական փաստաթուղթերը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

### ԳԼՈՒԽ III

## ԱՐԵՎՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ԿՈՂՄԷՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՄԱԿ-ԻՆ ԵՒ ՄԱԿ-Ի ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

### ՈՒՂԵՐՁ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի անդամներուն, Մերի խաղաղութեան դաշնագիրը ստորագրած պետութիւններուն, միջազգային ընկերակցութեան անդամ պետութիւններուն

**Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու վերաբերեալ**

Իւրաքանչիւր ազգ ապրելու, զարգանալու եւ ապագայ ունենալու իրաւունք ունի:

Ապրելու, զարգանալու եւ ապագայ ունենալու իրաւունք ունի նաեւ հայութիւնը՝ Արեւմտեան Հայաստանի հայութիւնը, Մերձաւոր Արեւելքի մէջ ապրող հայութիւնը, որ, ի դէպ, այդ իրաւունքը վաստակած է քաղաքակրթական հարուստ անցեալով, ստեղծագործ ներկայով եւ ապագայի նկատմամբ լուսաւոր հաւատով:

Յիշեցնենք, որ Մերձաւոր Արեւելքի մէջ ապրող հայութիւնը տարածաշրջանին մէջ վերահաստատուած է 1894-1923 թթ. հայութեան նկատմամբ թիրաքական երեք կտորավարութիւններու իրականացուցած ցեղասպանութեան ու բռնագաղթի՝ ծրագրուած յանցագործ քաղաքականութեան հետեւանքով, որ 1915 թուականի Մայիս 24-ին դատապարտեցին Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը եւ Ֆրանսան՝ որակելով զայն իբրեւ «յանցագործութիւն մարդկայնութեան դէմ»:

Ինչպէս նշեցինք, Միջազգային ընկերակցութեան կողմէն՝ 1920-ական թուականներուն, ճանչցուած եւ հաստատուած են հայութեան իրաւունքները Բնօրրան Հայրենիքի (Արեւմտեան Հայաստանի) նկատմամբ, բայց չեն իրականացուած: Ատիկա այդ ժամանակաշրջանին գործող միջազգային ընկերակցութեան մեծ բացթողումն էր, որ հնարաւոր է թելադրուած էր նեղ շահադիտական ռազմա-քաղաքական ինչ-ինչ հաշուարկներով: Սակայն նոյն սխալը նոյն հետեւանքներով աններելի է կրկնել այսօր, տարածաշրջանի պետութիւններու եւ ժողովուրդներու համար պատմական այս բարդ ժամանակահատուածին, նկատի առնելով այն հանգամանքը, որ կայուն խաղաղութիւն եւ խաղաղ համագործակցութիւն հաստատելու համար անհրաժեշտ է կեանքի կոչել եւ վերջնականապէս հանգուցալուծել տարածաշրջանին մէջ առկայ շարք մը բարդ խնդիրներ, ներառեալ՝ Հայկական Հարցը:

Հետեւաբար, Արտերկրի հայութեան, մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքի եւ Սիրիայի հայութեան հիմնախնդիրները լուծելու համար առաջարկում ենք.

-կեանքի կոչել եւ իրականացնել Արեւմտեան Հայաստանի հայութեան Բնօրրան Հայրենիք վերադառնալու իրաւունքը՝ անկէ բխող իրաւական - քաղաքական բոլոր պարտաւորութիւններով եւ իրաւունքներով հանդերձ, ներառեալ՝ անկախ պետութեան

հաստատման, հաշուի առնելով ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուոթո Ուիլսոնի 1920 թ. Նոյեբեր 22-ին կայացուցած Իրաւարար վճիռը եւ այդ վճիռով Հայաստանին յատկացուած տարածքը, որ բռնագրաւուած է առ այսօր:

-կեանքի կոչել եւ իրականացնել Կիլիկիոյ անյապաղ անկախութիւն շնորհելու իրաւական - քաղաքական դրոյթը, հաշուի առնելով՝ 1920 թ. Օգոստոս 4-ի Կիլիկիոյ Անկախութեան մասին հռչակագիրը եւ ՄԱԿ-ի 1968թ. «Գաղութային երկիրներուն անյապաղ անկախութիւն շնորհելու մասին» Համաձայնագիրը:

-կեանքի կոչել եւ իրականացնել Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկեան Հայաստանի տարածքի ապառազմականացումը, հաշուի առնելով՝

-2011 թուականին Մարտ 29-ի Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի եւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Որոշումը «Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի՝ Մշտական, զինուած, դրական չեզոքութեան քաղաքականութիւն ընտրելու մասին»,

-եւ 2011 թուականի Սեպտեմբերին Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի եւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին ուղղուած դիմումը, ուր կ'առաջարկուէր կեանքի կոչել ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուոթո Ուիլսոնի Իրաւարար վճիռը եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի եւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան չեզոքութեան որոշման հիման վրայ՝ ապառազմականացնել Կիլիկեան Հայաստանի եւ Արեւմտեան Հայաստանի տարածքը:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան վարչապետ

12.03.2014 թ.

**Դիմում պրն. Ապտիւլլահ Կիլին,  
Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահին,  
Անգարա**

Փարիզ, 18 Ապրիլ 2011

Պարոն Նախագահ,

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Հայերու Համագումարը (արձանագրուած՝ ՄԱԿ-ի հետեւեալ յանձնախումբերուն, ՄՍՀԿ - Մտաւոր Սեփականութեան Համաշխարհային Կազմակերպութիւն, ԲԺԻՓԿ - Բնիկ Ժողովուրդներու Իրաւունքներու Փորձագէտ Կազմութիւն եւ ՏՆՏԸՆԽ - Տնտեսական եւ Ընկերային Խորհուրդ), ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւնը, նստավայր ունենալով Փարիզ, ՖՐԱՆՍԱ՝ սոյն պաշտօնական նամակագրութեամբ կը պահանջէ Թուրքիոյ Հանրապետութեան Կառավարութենէն՝ պաշտօնապէս ճանչնալ 1894-1923 թթ. օսմանեան, երիտթիւրքական, քեմալական

կառավարություններու կողմէ՝ հայութեան եւ հայկական քաղաքակրթութեան դէմ կատարուած շարունակական ոճրագործութիւնը, այսինքն հայերու դէմ կատարուած ցեղասպանութեան փաստը, եւ միանգամայն վերջ տալ ժխտողականութեան քաղաքականութեան:

Երեք թիւրքական կառավարություններու կողմէ նախապէս ծրագրուած եւ իրականացուած ոճրագործություններու առ ի հետեւանք, հայութիւնը ունեցաւ մօտ երկու միլիոն նահատակ: Իսկ բռնագաղթի, հայրենագրկման եւ ուժացման ենթարկուեցան աւելի քան մէկ միլիոն հայ:

Այսօր, որպէս բնիկ ժողովուրդ, մօտաւորապէս տասը միլիոն հայեր, Թուրքիոյ Հանրապետութեան վարած հայատեաց քաղաքականութեան հետեւանքով՝ կ'ապրին իրենց հայրենիքէն դուրս, ու կ'ենթարկուին ձուլման եւ ոչնչացման:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Վտարանդի կառավարութիւնը կտրականապէս կը մերժէ Հայոց ցեղասպանութեան հարցի քաղաքականացուած կեդրոնացումը միայն 1915 թուականի վրայ:

Ցեղասպանութիւնը սկսուած է 1894 թուականէն Սասունի ջարդերով, որու նպատակով 1891 թուականէն նախապէս կազմուած էին Համիտեան գունդերը:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Վտարանդի կառավարութիւնը Թուրքիոյ կողմէ իրականացուած ցեղասպանութեան փաստը կը բաժնէ երեք ժամանակաշրջաններու.

1. 1894 - 1896 թթ. Ապտիւլ Համիտ Բ.ի կողմէ կատարուած ցեղասպանութիւնը,
2. 1909 թ. Հայկական Կիլիկիոյ Ատանայի ջարդերը, երիտթիւրքերու կողմէ կատարուած ցեղասպանութիւնը,
3. 1915 - 1923 թթ. երիտթիւրքերու եւ քեմալական կառավարութեանց կատարած ցեղասպանութիւնը:

Ըստ այնմ, Թուրքիոյ Հանրապետութեան կառավարութենէն կը պահանջուի 1894 - 1923 թթ. Հայերու դէմ պետականօրէն ծրագրուած եւ իրականացուած ցեղասպանութեան փաստի ամբողջական ճանաչումը, հիմնուած պատմական-իրաւական արխիւային փաստաթուղթերու վրայ.

- «1915 թ. մայիս 24-ին Եռեակ Համաձայնութեան տէրութիւնները՝ Մեծն Բրիտանեան, Ֆրանսան եւ Ռուսաստանը, առաջինն էին որոնք հանդէս եկան Օսմանեան կառավարութեան կողմէ հայերու բնաջնջման քաղաքականութեան դէմ համատեղ մէկ յայտարարութեամբ, որով Օսմանեան կառավարութեան կողմէ հայերու նկատմամբ ի գործ դրուած բռնութիւններն ու ջարդերը որակեցին իբրեւ «Թուրքիոյ նոր ոճիրները ընդդէմ մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան»:

- 1919 թ. Կ. Պոլսոյ Ռազմական յատուկ ատեանի վճիռները:

- 1965 - 2010 թթ. ցեղասպանութիւնը դատապարտած պետութիւններու ցանկը:

- 1984 թ. ժողովուրդներու մշտական ատեանի վճիռը:

- 1985 թ. ՄԱԿ-ի մարդկային իրաւանց ենթայանձնախումբի որոշումը:

- 1987 թ. Եւրոպական խորհրդարանի բանաձեւը:

- 2007 թ. «Բնիկ Ժողովուրդներու իրաւունքներու մասին» Հռչակագիրը:
- 2011 թ. Արժանթինի գերագոյն ատեանի վճիռը:

Պրն. Արմենակ Աբրահամեան  
Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահ

Պրն. Տիգրան Փաշաբեգեան  
Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Վարչապետ

## ՈՒՂԵՐՉ

### Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի

#### ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին, ՄԱԿ-ի անդամ պետութիւններուն, Մերի խաղաղութեան դաշնագիրը ստորագրած պետութիւններուն

Հաշուի առնելով՝ ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Համընդհանուր Հռչակագիրը, «Ցեղասպանութեան յանցագործութիւնները կանխարգիլելու եւ դատապարտելու մասին» եւ «Պատերազմի եւ մարդկայնութեան դէմ յանցագործութիւններու նկատմամբ վաղեմութեան ժամկէտ չկիրառելու մասին» համաձայնագրերը,

Հաշուի առնելով, որ Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչները դատապարտուած են 1919-ին Կոնստանդնուպոլսոյ ռազմական յատուկ ատեանին կողմէ,

հաշուի առնելով, որ իբրեւ ցեղասպանութեան հատուցում 1919-ին Փարիզի վեհաժողովի յատուկ յանձնաժողովը հաշուարկած է 1915-1918-ին Արեւմտեան Հայաստանին հասցուած վնասին չափը, իսկ 1920 Օգոստոս 10-ին ստորագրուած է Մերի խաղաղութեան պայմանագիրը եւ 1920 Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուորո Ուիպլընը վաւերացուցած է Իրաւարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանի մասին,

որ կը նշանակէ, որ ցեղասպանութեան կազմակերպիչներու եւ յանցագործներու դատապարտումը տեղի ունեցած է, նիւթական վնասի չափը հաշուարկուած է, որոշուած է տարածքը, որուն վրայ կը տարածուի Հայաստան Պետութեան տիտղոսը,

նկատի առնելով, որ 2004-էն սկսեալ ձեւաւորուած է Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնութեան եւ քաղաքացիութեան կառոյցը, որուն համակարգին վրայ ձեւաւորուած է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) իրաւական-քաղաքական հիմքերը եւ պետականաստեղծ կառոյցները՝ կառավարութիւնը, խորհրդարանը, նախագահի կառոյցը,

նկատի առնելով, որ Արեւմտեան Հայաստանի հայերը, ինչպէս իւրաքանչիւր ազգ այս աշխարհի մէջ՝ ապրելու, զարգանալու եւ ապագայ ունենալու իրաւունք ունին, որ կը նշանակէ, որ անոնք իրաւունք ունին պահանջելու սեփական պետութեան հաստատումը Բնօրրան Հայրենիքի մէջ՝ Արեւմտեան Հայաստանի,

կը յայտնենք, 2015 Ապրիլ 24-էն յետոյ, Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներու, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պատրաստակամութիւնը Հայոց ցեղասպանութեան հետեւանքներու վերացման նպատակով՝ 1915-1918-ի ընթացքին, հայութեան հասցուած բարոյական, նիւթական եւ տարածքային վնասի հատուցման իրականացման իրաւական-քաղաքական գործընթաց սկսելու մասին:

Արմենակ Աբրահամեան  
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ  
24.04.2015 թ.

## ՈՒՂԵՐՁ

### Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի

**«Համայն հայութեան, Արեւմտեան Հայաստանի հայերուն ու քաղաքացիներուն, հայ անհատին ու հայկական կառոյցներուն»**

Հաշուի առնելով, որ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի ձեռնարկներու աւարտով իրականութեան մէջ կը սկսի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան եւ հաստատման նոր վճռական փուլը,

հաշուի առնելով, որ 2014 Հոկտեմբեր 10-ին հրապարակուած է «Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան իրաւական-քաղաքական միասնական փաթեթը»,

հաշուի առնելով, որ 2015 Յունուար 29-ին հռչակուած է «Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի համայնական հռչակագիրը»,

ինչպէս նաեւ հաշուի առնելով՝ Մերձաւոր Արեւելքի հայ համայնքներուն, ՀՀ-ին ու ԼՂՀ-ին ու համայն հայութեան սպառնացող ներկայի ռազմաքաղաքական մարտահրաւերները,

նկատի առնելով, որ Հայոց ցեղասպանութեան կազմակերպիչները դատապարտուած են 1919-ին Կոնստանդնուպոլսոյ ռազմական յատուկ ատեանին կողմէ եւ իբրեւ ցեղասպանութեան հատուցում՝ 1919-ին Փարիզի վեհաժողովի յատուկ յանձնաժողովը հաշուարկած է 1915-1918-ին Արեւմտեան Հայաստանին հասցուած վնասին չափը, որ 1920 Օգոստոս 10-ին ստորագրուած է Մերի խաղաղութեան պայմանագիրը, իսկ 1920 Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուոթրօ Ուիսլընը վաւերացուցած է Իրաւարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանի մասին,

որ կը նշանակէ, որ ցեղասպանութեան կազմակերպիչներու դատապարտումը տեղի ունեցած է, նիւթական վնասի չափը հաշուարկուած է, որոշուած է տարածքը, որուն վրայ կը տարածուի Հայաստան պետութեան տիրոջութիւնը,



նկատի առնելով, որ 2014-ին աւարտած է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) պետական կառոյցներու ձեւաւորումը՝ կառավարութեան, խորհրդարանի, նախագահի կառոյցի,

կը յայտնենք, 2015 Ապրիլ 24-էն յետոյ, Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներու, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պատրաստակամութիւնը Հայոց ցեղասպանութեան հետեւանքներու վերացման նպատակով՝ 1915-1918-ի ընթացքին, հայութեան հասցուած բարոյական, նիւթական եւ տարածքային վնասի հատուցման իրականացման իրաւական-քաղաքական գործընթաց սկսելու մասին:

Համայն հայութեան կը հրաւիրենք Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետականաստեղծ կառոյցներուն մէջ եւ անոր շուրջ համախմբուելու եւ միասնաբար պաշտպանելու եւ հաստատելու մեր բոլոր իրաւունքները:

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

24.04.2015 թ.

## **ՈՒՂԵՐՉ**

### **Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)**

#### **«ՄԱԿ-ի անդամ երկիրներու խորհրդարաններուն»**

Նկատի առնելով, որ 1965-2015-ի ընթացքին Հայոց ցեղասպանութիւնը արդէն իսկ ճանչցած եւ դատապարտած են 20-էն աւելի պետութիւններու խորհրդարաններ եւ բազմաթիւ միջազգային կազմակերպութիւններ եւ կառոյցներ,

նկատի առնելով, որ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի յիշատակի ոգեկոչումներուն զուգահեռ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած ու դատապարտած են Եւրոխորհրդարանը, Վատիկանը, Աւստրիան, Գերմանիան եւ շարք մը այլ երկիրներ ու կառոյցներ եւ որ ցեղասպանութեան դատապարտման գործընթացը կը շարունակուի,

նկատի առնելով՝ Մերձաւոր Արեւելքի հայ համայնքներուն, ՀՀ-ին ու ԼՂՀ-ին եւ համայն հայութեան սպառնացող ներկայի ռազմաքաղաքական մարտահրաւերները,

նկատի առնելով այն յայտնի իրողութիւնը, որ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի ձեռնարկներու աւարտով իրականութեան մէջ կը սկսի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան նոր վճռական փուլը,

հաշուի առնելով, որ Թուրքիոյ Հանրապետութիւնը կը շարունակէ ժխտել Հայոց ցեղասպանութեան փաստը եւ կը վարէ այդ փաստի ժխտման ներքին եւ արտաքին քաղաքականութիւն,

հաշուի առնելով, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչները Կոնստանդնուպոլսոյ ռազմական յատուկ ատեանի կողմէն 1919-ին ճանչցուած են իբրեւ մարդկայնութեան դէմ ուղղուած յանցագործութեան պատասխանատուներ եւ այդ ատեանի վճիռով դատապարտուած, որ 1919-ին Փարիզի վեհաժողովի յատուկ յանձնաժողովը հաշուարկած է 1915-1918-ին Արեւմտեան Հայաստանին հասցուած վնասին չափը, որ 1920 Օգոստոս 10-ին ստորագրուած է Մէրի խաղաղութեան պայմանագիրը, իսկ 1920 Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուոթո Ուիլսընը վաւերացուցած է Իրաւարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանի մասին,

հաշուի առնելով, որ 2014-ին աւարտած է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) պետական կառոյցներու ձեւաւորումը՝ կառավարութեան, խորհրդարանի, նախագահի կառոյցի,

ՄԱԿ-ի անդամ երկիրներու խորհրդարաններէն կը խնդրենք, ՄԱԿ-ի հովանիին տակ, իրաւական-քաղաքական գործընթաց ձեւաւորել ապահովելու համար 1919-1920-ին կայացած վերոնշեալ որոշումներու իրականացումը, պաշտպանելու եւ հաստատելու համար Արեւմտեան Հայաստանի հայերու եւ քաղաքացիներու եւ Արեւմտեան Հայաստանի բնիկներու ազատ ապրելու, զարգանալու եւ ապագայ ունենալու իրաւունքը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան հովանիի տակ՝ Բնօրրան Հայրենիքի մէջ:

Արմէն Տէր-Սարգսեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

25.04.2015 թ.

## ՈՒՂԵՐՁ

### Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան «ՄԱԿ-ի անդամ երկիրներու կառավարութիւններուն»

Նկատի առնելով, որ 1921 թուականէն սկսեալ Հայկական Հարցի կարգաւորման եւ Փարիզի վեհաժողովի որոշումներու իրականացման գործընթացը կասեցուեցաւ շուրջ 50 տարիով,

նկատի առնելով, որ 1965 Ապրիլ 24-ին երեւանեան շարժումով ու ցոյցերով չեզոքացուեցաւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ իրաւունքներու շուրջ 50-ամեայ շրջափակումը, որուն յաջորդեց հայութեան նոր պայքարը սեփական իրաւունքներու պաշտպանութեան խնդիրով,

նկատի առնելով, որ 1965-2015-ի ընթացքին Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած եւ դատապարտած են 20-էն աւելի պետութիւններ եւ բազմաթիւ միջազգային կազմակերպութիւններ եւ կառոյցներ, եւ որ այդ գործընթացը այսօր ալ կը շարունակուի,

հաշուի առնելով՝ Մերձաւոր Արեւելքի հայ համայնքներուն, ՀՀ-ին ու ԼՂՀ-ին եւ համայն հայութեան սպառնացող ներկայ ռազմաքաղաքական մարտահրաւերները,

հաշուի առնելով այն յայտնի իրողութիւնը, որ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի ձեռնարկներու աւարտով իրականութեան մէջ կը սկսի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան նոր վճռական փուլը,

հաշուի առնելով, որ Հայոց ցեղասպանութեան պատասխանատուները, իբրեւ ցեղասպանութեան կազմակերպիչ յանցագործներ, դատապարտուած են 1919-ի Կոնստանդնուպոլսոյ ռազմական յատուկ ատեանի կողմէն, եւ իբրեւ ցեղասպանութեան հետեւանքներու վերացման ուղղուած որոշումներ 1919-ի Փարիզի վեհաժողովի յատուկ յանձնաժողովը հաշուարկած է 1915-1918-ի Արեւմտեան Հայաստանին հասցուած վնասին չափը, որ 1920 Օգոստոս 10-ին ստորագրուած է Սեւրի խաղաղութեան պայմանագիրը, իսկ 1920 Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Ուիլսոնո Ուիլսընը վաւերացուցած է Իրաւարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանի մասին,

հաշուի առնելով, որ 2014-ին աւարտած է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) պետական կառոյցներու ձեւաւորումը՝ կառավարութեան, խորհրդարանի, նախագահի կառոյցի,

ՄԱԿ-ի անդամ երկիրներու կառավարութիւններէն կը խնդրենք, ՄԱԿ-ի հովանիին տակ, իրաւական-քաղաքական գործընթաց սկսիլ ապահովելու համար 1919-1920-ին կայացած որոշումներու իրականացումը, պաշտպանելու եւ հաստատելու համար Արեւմտեան Հայաստանի հայերու եւ քաղաքացիներու եւ Արեւմտեան Հայաստանի բնիկներու ազատ ապրելու, զարգանալու եւ ապագայ ունենալու իրաւունքը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան հովանիին տակ՝ Բնօրրան Հայրենիքի մէջ:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

26.04.2015 թ.

## ԳԼՈՒԽ IV

### ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՒ ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ԿՈՂՄԷՆ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԵՒ ՆԻՒԹԵՐ

#### ՀՈՉՄԿԱԳԻՐ

#### Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին

24 Մայիս, 2013 թ.

Յարգելի՛ հայրենակիցներ

Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւաւորող յատուկ եանձնաժողովը, ստանձնելով Արեւմտեան Հայաստանի պետական համակարգերու կազմաւորման ու ստեղծման, հայերու գոյութեան ու ինքնութեան պահպանման, Արեւմտեան Հայաստանի տնտեսութեան վերականգնման ու վերաշինութեան պատասխանատուութիւնը,

Կը յայտարարեն՝

Ստեղծել Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան), որ պիտի իրականացնէ հայութեան ուժերու համախմբումը:

Հենքային համարել Հայկական հարցի՝ Հայոց պահանջատիրութեան լուծման խնդրին մէջ ազգային միասնութիւնը եւ հայոց անժամանցելի իրաւունքը:

Ընդունիլ մէկ բանաձեւ. հայ ժողովուրդը պէտք է ապրի ինքնաբաւ, իսկ ապագային մէկ միասնական եւ անկախ Հայոց պետութեան կազմի մէջ:

Կ՝առաջնորդուին՝

ա) Արեւմտեան Հայաստանի հայերու Ազգային խորհուրդի պաշտօնական յայտարարութեամբ (ընդունուած՝ 2004 թուականի Դեկտեմբեր 17-ին) եւ «Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու մասին» հռչակագրով (ընդունուած՝ 2007 թուականի Յունուար 20-ին):

բ) Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան ստեղծման (ընդունուած՝ 2011 թուականի Փետրուար 4-ին) եւ Արեւմտեան Հայաստանի պետական համակարգի մասին որոշումներով (ընդունուած՝ 2011 թուականի Մարտ 2-ին):

գ) 2012 թուականի Նոյեմբեր 30-ի Արեւմտեան Հայաստանի հայերու՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւաւորելու մասին 5-րդ վեհաժողովի որոշմամբ:

Կը հռչակեն, որ՝

Նկատի առնելով այն փաստը, որ հակառակ մարդկային բարոյականութեան եւ ցանկացած իրաւունքի՝ ճանչնալու Հայոց իրաւունքները բնօրրան հայրենիքի նկատմամբ, Թուրքիայի իրարյաջորդ կառավարութիւններ՝ սուլթանական, երիտթրքական եւ քեմալական, 1894–1923 թթ. իրականացուցած են Հայերու ցեղասպանութիւն եւ բռնագաղթ, որու միջոցով աննախադէպ փոփոխած են ազգագրական պատկերը տարածաշրջանին մէջ, իսկ իբրեւ հետեւանք կրճատելով հայերուն թիւը բռնագրաւուած տարածքներուն մէջ, իբրեւ «յաւելավճար» իրենց եանցագործութիւններու՝ խախտած են ազգութիւններու միջեւ բնականոն յարաբերակցութիւնը՝ Արեւմտեան Հայաստանին մէջ, եւ

նկատի առնելով վերոհիշյալ ողջ իրողութիւնը կը հռչակեն, որ՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) իրաւասութիւնը կը տարածուի ինչպէս Արեւմտեան Հայաստան պետութեան քաղաքացիներու, այնպէս ալ Արեւմտեան Հայաստանի բռնագրաւուած երկրամասի՝ Արեւմտեան Հայաստանի իրաւական (de jure) եւ փաստական (de facto) տարածքներու վրայ՝ նկատի ունենալով ա) Հայաստան – Թուրքիա սահմանազատումը՝ համաձայն ԱՄՆ–ի 28–րդ նախագահ Վուտրօ Ուիլսոնի Իրաւարար վճիռը (22 Նոյեմբեր, 1920 թ.):

բ) Պատմական Հայաստանի, ներառեալ՝ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկեան Հայաստանի անկախութիւնը՝ համաձայն ՄԱԿ–ի՝ «Գաղութային երկիրներուն եւ ժողովուրդներուն անյապաղ անկախութիւն տրամադրելու մասին» հռչակագիրի (14 Դեկտեմբեր, 1960 թ.):

գ) Իբրեւ բնիկ ժողովուրդ՝ Արեւմտեան Հայաստանի հայերու ունեցած պատմական, ծագումնաբանական, մշակութային, քաղաքակրթական, պետականաստեղծ անժամկէտ եւ անժխտելի իրաւունքները՝ համաձայն ՄԱԿ–ի «Բնիկ ժողովուրդներու իրաւունքներու մասին» հռչակագիրի (13 Սեպտեմբեր, 2007 թ.):

Վերոյիշեալ իրաւասութիւնը կը տարածուի Արեւմտեան Հայաստանի հետեւեալ նահանգներու եւ տարածքներու վրայ՝

1. Վան,
2. Պիթլիս,
3. Էրզրում (Կարին),
4. Տրապիզոն (Համշեն),
5. Սվազ (Սեբաստիա),
6. Տիարպէքիք (Տիգրանակերտ),
7. Խարփուք (Խարբերդ),
8. Կիլիկիա (ներառեալ՝ Կեսարիա, Մարաշ, Ատանա, Զէյթուն, Այնթապ, Անտիոք),
9. Կարս (եւ Սուրմալու),
10. Ջաւախք,
11. Նախիջեւան:

Առաջնորդուելով վերը նշուած փաստաթուղթերով եւ դրոյթներով՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան)

## ձեւաւորող յատուկ յանձնաժողովը

Կը յայտարարեն, որ՝

Կը ստեղծուի Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւաւորող Կեդրոնական ընտրական յանձնաժողով (ԿԸՅ), որ լիազօրուած է կազմակերպելու եւ իրականացնելու ընտրական ողջ գործընթացը:

(Տես արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւաւորող Կեդրոնական ընտրական յանձնաժողովի կայքը՝ <http://www.western-armenia-election.org>):

## Քաղաքացիներու արձանագրութիւնը

Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներ են բոլոր այն անձինք, որոնք կրնան հիմնաւորել թէ՛ իրենց տարագրեալ ըլլալը Հայրենիքէն (Արեւմտեան Հայաստանէն), թէ՛ իրենց ծագումը՝ նոյնիսկ քանի մը սերունդ վաղեմութեամբ (ուղիղ ժառանգական կապով):

1) Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրութիւններուն մասնակցելու ցանկութիւն յայտնած Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներու, ինչպէս նաեւ հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպութիւններու եւ միութիւններու արձանագրութեան գործընթացը կ'իրականացուի՝ 2013 թ. Մայիս 24-էն մինչեւ Դեկտեմբեր 1:

2) Ընտրութիւններուն մասնակցելու ցանկութիւն յայտնած Արեւմտեան Հայաստանի քաղաքացիները կ'արձանագրուին հետեւեալ կայքին՝

<http://www.western-armenia-election.org/votes/Enregistrement2013-fr-arm.php>

## Թեկնածուներու արձանագրութիւնը

1) 2013 թ. Յունիս 1-էն կը սկսի Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորութեան թեկնածուի կողմէն իրականացուող ստորագրահաւաքը՝ յատուկ հաստատուած ձեւաթուղթերու միջոցով:

2) Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը) բաղկացած է Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներէն: Արեւմտեան Հայաստանի քաղաքացիի անձնագիր ունենալը պարտադիր է պատգամաւորութեան թեկնածուի համար:

3) Թեկնածուներու արձանագրութիւնը կ'իրականացուի 2013 թ. Հոկտեմբեր 1-էն ժամը 08:00, մինչեւ Հոկտեմբեր 22՝ ժամը 24:00:

4) Ընտրութիւնները կ'իրականացուին 2013 թ. Նոյեմբեր 22-էն ժամը 08:00, մինչեւ Դեկտեմբեր 1՝ ժամը 00:00 (Կեդրոնական ընտրական յանձնաժողովի կայքի միջոցով կամ գրաւոր):

5) Ընտրութիւններու արդիւնքները Կեդրոնական ընտրական յանձնաժողովի կողմէն կը հաստատուին եւ կը հրապարակուին 2013 թ. Դեկտեմբեր 17-ին:

6) Առաջադրուելու համար թեկնածուն պէտք է ներկայացնէ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներու նուազագոյնը 100 ստորագրութիւն:

7) Թեկնածուն պետք է ներկայացնէ ինքնակենսագրութիւն եւ գործունէութեան համառօտ ծրագիր:

8) Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորութեան թեկնածուները կ'արձանագրուին հետեւեալ կայքին`  
<http://www.western-armenia-election.org/votes/Candidature2013-fr-arm-en-ru.php>  
[http://www.western-armenia-election.org/Consultation-Electorale/2013/Teqnadzouneri\\_timoume-2013.pdf](http://www.western-armenia-election.org/Consultation-Electorale/2013/Teqnadzouneri_timoume-2013.pdf)  
[http://www.western-armenia-election.org/Consultation-Electorale/2013/Requete\\_de\\_candidature-2013.pdf](http://www.western-armenia-election.org/Consultation-Electorale/2013/Requete_de_candidature-2013.pdf)

Կը հաստատեն, որ`

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորութեան թեկնածուները, որոնք պաշտօնապէս կ'ընդունին Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդի եւ Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան Հռչակագիրը եւ հիմնադիր փաստաթուղթերը, կրնան ինքնառաջադրուիլ եւ կամ ներկայացուիլ հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպութիւններու եւ միութիւններու, Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդի ու Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կողմէն:

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման հիմնական մեքենակաւորութիւնները, ներառեալ` կանոնակարգի նախագիծը, որմով կը հաստատուի Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) առաջին նստաշրջանի գումարման ժամկէտը, պատգամաւորներու քանակը, հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպութիւններու եւ միութիւններու ներգրաման օրինակարգը` հաստատուած Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդին կողմէ:

Կոչ կ'ուղղեն համայն հայութեան`

պաշտպանելու ու հաստատելու իր անսակարկելի եւ անժամանցելի իրաւունքները, որուն կարեւորագոյն գործողութիւններէն մէկը Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորումն է, աշխոյժօրէն մասնակցելու այս ընտրութիւններուն` Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութիւն ձեռք բերելու եւ անոր ընձեռած բացառիկ հնարաւորութեան ծիրին մէջ:

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդի նախագահ

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան վարչապետ

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւաւորող  
յատուկ յանձնաժողով

## ՈՐՈՇՈՒՄ

### Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորող Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովի

16 Դեկտեմբեր, 2013 թ.

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (խորհրդարանի)  
Ընտրութիւններու արդիւնքներուն ամփոփումը

Համաձայն «Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորելու մասին» Հռչակագրի ( 24 Մայիս 2013), ընդունուած Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի, Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորող Յատուկ Ցանձնաժողովի կողմէն, 2013 թուականի Նոյեմբեր 22-ի ժամը 08:00-էն, մինչեւ Դեկտեմբեր 1` 00:00 ամբողջ աշխարհի մէջ բնակող հայ ժողովուրդի պատմութեան մէջ առաջին անգամ իրականացուեցաւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու ընտրութիւններ:

Ընտրութիւնները անցան ուղղակի եւ գաղտնի քուէարկութեամբ: Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորելու եւ ընտրութիւնները կազմակերպելու համար ստեղծուեցաւ Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովը (ԿԸՅ), բաղկացած 15 անձերէ: ԿԸՅ անդամները կ'ապրին Հայաստանի մէջ, Ռուսիոյ, Ֆրանսայի, ԱՄՆ-ի, Գերմանիոյ, Սուրիոյ, Ջաւախքի: Անոնք լիազօրուած էին կազմակերպելու եւ իրականացնելու ամբողջ նախընտրական քարոզարշաւը, ընտրութիւններու փաստացի ամփոփումը:

2013 թուականի Յունիս 1-էն մինչեւ 2013 թուականի Դեկտեմբեր 17 ԿԸՅ իրականացուց 28 նիստ, որոնց ընթացքին Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորելու վերաբերեալ ընդունուեցան կանոնակարգային անհրաժեշտ փաստաթուղթեր, հաստատուեցան ընտրողներու ցուցակները, ստուգուեցան եւ հաստատուեցան պատգամաւորութեան թեկնածուներու ցուցակները, ինչպէս նաեւ ստուգուեցան եւ հաստատուեցան Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման ընտրութեան արդիւնքները:

Նախընտրական քարոզարշաւի եւ ընտրութիւններու վերաբերեալ նիւթերը պարբերաբար հրապարակուած են ԿԸՅ պաշտօնական կայքին եւ ՋԼՄ-ներու մէջ:

Ընտրութիւններու կազմակերպման, ներառեալ` ընտրողներու արձանագրութեան, պատգամաւորութեան թեկնածուներու եւ քուէարկութեան համար ԿԸՅ կողմէ ստեղծուած էր յատուկ կայք հետեւեալ հասցեով [www.western-armenia-election.org](http://www.western-armenia-election.org), ուր բոլոր ցանկացողները կրնային`

- 1) Դիմել Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութիւն ստանալու համար:
- 2) Արձանագրուիլ իբրեւ ընտրող:



3) «Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորելու մասին» Հռչակագրին մէջ հրապարակուած պայմաններուն համաձայն՝ արձանագրուիլ, իբրեւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորական թեկնածու:

4) Արձանագրուած ընտրողները՝ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիները, կրնային մասնակցիլ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու ընտրութիւններուն՝ ուղղակի եւ գաղտնի քուէարկութեամբ:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորութեան թեկնածու առաջադրուած էին 75 անձ: Ներկայացուած փաստաթուղթերու ստուգման իբրեւ արդիւնք՝ անհրաժեշտ փաստաթուղթերու բացակայութեան պատճառով 11 անձի դիմում մերժուած է ԿԸՅ կողմէ: ԿԸՅ այս որոշումը չէ բողոքարկուած իրենց կողմէ:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման կանոնադրութեան պայմաններուն համաձայն՝ թեկնածուներու ցուցակին մէջ վերջնականապէս արձանագրուած է 64 անձ, որոնց անունները մտցուած են քուէաթերթիկ:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու թեկնածուներու պաշտօնական ցուցակը հրապարակուած է 2013 Նոյեմբեր 22-ին ԿԸՅ կայքին մէջ՝ քուէարկութեան համար:

2013 թուականի Յունիս 1-էն մինչեւ Նոյեմբեր 30՝ 41 երկիրներէ արձանագրուած էին 17837 ընտրողներ, որոնք իբրեւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներ իրաւունք ստացած էին մասնակցելու Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու ընտրութիւններուն:

Ընտրողները Հայաստանի Հանրապետութենէն էին, Արցախէն, Արեւմտեան Հայաստանէն, Ռուսիան, Ֆրանսան, Աբխազիան, Ջաւախքէն, Ուքրաինան, նաեւ՝ Ղրիմէն, Վրաստանէն, Լաթվիան, Լիթվիան, Մոլտովան, Պելառուսիան, Ղազախստանէն, Ուզպէքիստանէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, Գանատան, Արժանթինէն, Ուրուկուան, Պրազիլէն, Մեքսիքոյէն, Աւստրալիան, Գերմանիան, Յունաստանէն, Կիպրոսէն, Չեխիան, Աւստրիան, Շուէտէն, Դանիան, Հունգարիան, Լեհաստանէն, Պոլկարիան, Իսրայէլէն, Իրանէն, Սուրիան, Լիբանանէն, Իրաքէն, Քուէթէն, Եգիպտոսէն, Թուրքիոյ Հանրապետութենէն:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման պատգամաւորներու ընտրութիւններուն մասնակցած եւ քուէարկած են 17155 ընտրողներ, որ կը կազմէ արձանագրուած ընտրողներու 96,176 %-ը:

72 քուէաթերթեր համարուած են անվաւեր, որ կը կազմէ քուէարկութեան մասնակցողներու 0,42%-ը:

17062 ընտրող քուէարկած է կողմ, որ կը կազմէ քուէարկութեան մասնակցողներու 99,458 %-ը:

Դէմ քուէարկած է 0 ընտրող:

Ձեռնպահ քուէարկած է 21 ընտրող, որ կը կազմէ 0.122 %-ը:

Ընտրութիւններու արդիւնքներուն համաձայն Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման պատգամաւոր ընտրուած 64 անձ: Պատգամաւորները ընտրուած են 10 երկիրներու 27 քաղաքներէ:

Երկիրներն են՝ Հայաստան, Ռուսիա, Ֆրանսա, ԱՄՆ, Գերմանիա, Արիւստրալիա, Չինաստան, Դանիա, Հունգարիա, Շուէտ եւ քաղաքներն են՝ Երեւան, Էջմիածին, Արմաւիր, Արովեան, Մոսկուա, Տոնի Ռոստով, Սոչի, Կակրա, Սուխումի, Ախալցխա, Փարիզ, Մարսելյ, Նիս, Գրեթէ, Վիեննա, Պոսթըն, Կլենտոն, Կոդենպորկ, Մայնց, Օտենս, Պուտափէշտ եւ այլն:

Ընտրուած անդամները արմատով եւ ազգային ինքնութեամբ կը ներկայացնէին Արեւմտեան Հայաստանի աւելի քան տարածքներ եւ վիլայեթներ, ներառեալ Կարս, Պիթլիս, Վան, Տիգրանակերտ, Խարբերդ, Համշեն, Տրապիզոն, Կարին (Էրզրում), Իգդիր, Մուշ, Սեբաստիա, Սասուն, Կիլիկիա, Չուսիսք եւ այլն:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կազմին մէջ պատգամաւոր ընտրուած են 20 կին, որ կը կազմէ ընդհանուր թիւի 31%-ը:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու տարիքային կազմը հետեւեալն է՝

60 տարեկանէն բարձր - 7 պատգամաւոր,

50 -60 տարեկան - 20 պատգամաւոր,

40 -50 - 16 պատգամաւոր,

30 -40 - 11 պատգամաւոր,

30-էն փոքր - 10 պատգամաւոր:

Ամենատարեց պատգամաւորը 78 տարեկան է, ամենաերիտասարդ պատգամաւորը 21: Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու ընտրութիւններու ընթացքին խախտումներ չեն յայտնաբերուած: Քուէարկութեան իրականացման եւ ընտրութիւններու արդիւնքներուն վերաբերեալ ԿԸՅ հասցեով բողոքներ չեն եղած:

Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը կ'որոշէ՝

1) Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման պատգամաւորներու ընտրութիւնները համարել կայացած:

2) Հաստատել Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման 64 պատգամաւորներու ընտրութիւնները:

3) Ներկայացնել հաստատման Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման 64 պատգամաւորներու լիազօրութիւնները՝ համաձայն հետեւեալ ցուցակի...

Որոշումն ընդունուած է:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւաւորող  
Կեդրոնական Ընտրական Յանձնաժողով

## ՔԱՂՈՒԱԾՔ N° 1

### Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 1-ին նստաշրջանի նիստի արձանագրութենէն

18 Յունուար, 2014 թ.

Նիստի սկիզբը ժամը 10:00-ին, ւարտը՝ 17:00-ին:

Ընտրուած 64 պատգամաւորներէն մասնակցեր են 50 պատգամաւոր:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորներու գրանցում(այսուհետեւ բնագրի մէջ՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարան):

Ընտրուած 64 պատգամաւորներէն գրանցուել են 50 պատգամաւոր (29-ն դահլիճին մէջ, եւ 21-ը համացանցային կապով), ինչը կը կազմէ աւելի քան 78 տոկոս:

Քուտրումը ապահովուած է:

Հնչեց Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի օրհներգը:

Բարձրացուեցաւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական դրօշակը:

1. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի առաջին նստաշրջանի օրակարգի մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի առաջին նստաշրջանի օրակարգը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0,

Որոշումը ընդունուեցաւ միաձայն:

2. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի կանոնակարգի մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի կանոնակարգը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0,

Որոշումը ընդունուեցաւ միաձայն:

3. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահ Արմենակ Աբրահամեանը, որ ըստ կանոնակարգի առաջարկեց, որ մինչեւ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահի ընտրութիւնը, նիստը վարեց ամենատարեց պատգամաւորը:

Որոշեցին՝ ըստ կանոնակարգի, մինչեւ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահի ընտրութիւնը, նիստը վարեց ամենատարեց պատգամաւոր Վրէժ Աբրահամեանը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

Մէկ վայրկեան լուրթամբ յարգանքի տուրք կը տրուի Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին, որ տեղի ունեցած է 1894-1923 թթ., երեք թիւրքական իրարյաջորդ կառավարութիւններու կողմէն՝ Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեանմէջ:

4. Լսեցին՝ նստաշրջանի հաշուիչ յանձնաժողովի ընտրութեան մասին:

Որոշեցին՝ ընտրել նստաշրջանի հաշուիչ յանձնաժողով.

Նախագահ՝ Տիգրան Բաբայեան, տեղակալներ՝ Վիոլեթա Ղազարոսեան եւ Արամ Յարութիւնեան:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

5. Լսեցին՝ Կեդրոնական ընտրական յանձնաժողովի զեկոյցը Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի պատգամաւորներու ընտրութեան արդիւնքներու վերաբերեալ:

Որոշեցին՝ հաստատել Կեդրոնական ընտրական յանձնաժողովի զեկոյցը պատգամաւորներու ընտրութեան արդիւնքներուն վերաբերեալ:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

6. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի պատգամաւորներու լիազօրութիւններու հաստատման մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի 64 պատգամաւորներու լիազօրութիւնները, որոնց ըստ ընդհանուր ցուցակի ընտրած են 17.837 ընտրողներ՝ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներ, 41 երկիրներէն:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

7. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահի ընտրութեան մասին:

Որոշեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահ ընտրել Արմէն Տէր-Սարգսեանը, 17-ը Յունուար 2014 թ. Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի 1-ին նստաշրջանի նախապատրաստական նիստի աշխատանքային խումբերու ընդունած որոշումներու եւ առաջարկներու հիման վրայ:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 49, դէմ - 0, ձեռնպահ - 1

Որոշումն ընդունուած է:

8. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահի տեղակալներու ընտրութեան մասին:

Որոշեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահ Արմէն Տէր-Սարգսեանի առաջարկով Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Նախագահի տեղակալներ ընտրել Տիգրան Բաբայեանը եւ Հայկ Յարութիւնեանը:

Քուէարկութեան արդիւնքները.  
Կողմ - 49, դէմ - 0, ձեռնպահ - 1  
Որոշումն ընդունուած է:

9. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի քարտուղարներու ընտրութեան մասին:

Որոշեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի քարտուղարներ ընտրել Պիաթրիս Նազարեանը եւ Սաթենիկ Ալեքսանեանը:

Քուէարկութեան արդիւնքները.  
Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0  
Որոշումն ընդունուած է:

10. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի հետեւեալ մշտական յանձնաժողովները, 17 Յունուար 2014 թ. Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի 1-ին նստաշրջանի նախապատրաստական նիստի աշխատանքային խումբերու ընդունած որոշումներու եւ առաջարկներու հիման վրայ. Իրաւական, օրէնսդրական եւ պետական հարցերու յանձնաժողով, Պաշտպանութեան, ներքին գործերու եւ ազգային անվտանգութեան հարցերու յանձնաժողով, Արտաքին դիւանագիտական եւ խորհրդարանական կապերու յանձնաժողով, Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միութիւններու յանձնաժողով, Ֆինանսական, տնտեսական հարցերու յանձնաժողով, Կրթութեան եւ գիտութեան հարցերու յանձնաժողով, Մշակոյթի հարցերու յանձնաժողով, Ընտանիքի, կանանց եւ առողջապահութեան հարցերու յանձնաժողով, Երիտասարդութեան եւ սփորթի հարցերու յանձնաժողով, Լրատութեան հարցերու յանձնաժողով, Հոգեւոր ոլորտի եւ կրօնի հարցերու յանձնաժողով, Վեթեւաններու եւ հաշմանդամներու հարցերու յանձնաժողով, Ներքին կանոնակարգի եւ աշխատակարգի յանձնաժողով:

Քուէարկութեան արդիւնքները,  
Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0  
Որոշումն ընդունուած է:

11. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու Նախագահներու ընտրութեան մասին:

Որոշեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի մշտական յանձնաժողովներու Նախագահներ ընտրել, 17 Յունուար 2014 թ. Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի 1-ին նստաշրջանի նախապատրաստական նիստի աշխատանքային խումբերու ընդունած որոշումներու եւ առաջարկներու հիման վրայ. Իրաւական, օրէնսդրական եւ պետական հարցերու յանձնաժողով՝ Նախագահ չէ ընտրուած, Պաշտպանութեան, ներքին գործերու եւ ազգային անվտանգութեան հարցերու յանձնաժողով՝ Նախագահ չէ ընտրուած, Արտաքին դիւանագիտական եւ խորհրդարանական կապերու յանձնաժողով՝ Պասամ Թահան, Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միութիւններու յանձնաժողով՝ Դաւիթ Ալեքսանեան, Ֆինանսական, տնտեսական հարցերու յանձնաժողով՝ Վարդան Մանճիկեան, Կրթութեան եւ

գիտութեան հարցերույանձնաժողով՝ Կարինէ Հայրապետեան, Մշակոյթի հարցերույանձնաժողով՝ Յուլիա Կիւլոյեան, Ընտանիքի, կանանց եւ առողջապահութեան հարցերու յանձնաժողով՝ Սայտա Օհանեան, Երիտասարդութեան եւ սփորթի հարցերույանձնաժողով՝ Վաղարշակ Սահգելդեանց, Լրատութեան հարցերույանձնաժողով՝ Տիգրան Յարութիւնեան, Հոգեւոր ոլորտի եւ կրօնի հարցերու յանձնաժողով՝ Արմենակ Հարմանտարեան, Վեթերաններու եւ հաշմանդամներու հարցերույանձնաժողով՝ Վրէժ Աբրահամեան, Ներքին կանոնակարգի եւ աշխատակարգի յանձնաժողով՝ Արամ Յարութիւնեան:

Քուէարկութեան արդիւնքները,

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

12. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու անդամներու հաստատման մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու անդամներու ներկայացուած ցանկը:

Քուէարկութեան արդիւնքները,

Կողմ - 50, դէմ 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

13. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու Նախագահներու ելոյթները աշխատանքային ծրագրերու մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու աշխատանքային ծրագրերը:

Քուէարկութեան արդիւնքները,

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

Արմէն Տէր-Սարգսեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Պիաթրիս Նազարեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

## **ՔԱՂՈՒԱԾՔ № 2**

**Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)  
1-ին գումարման 1-ին նստաշրջանի 2-րդ նիստի արձանագրութենէն**

20 Յունուար, 2014 թ.

Նիստի սկիզբը ժամը 10:00-ին, աւարտը՝ 17:00-ին:

Ընտրուած 64 պատգամաւորներէն մասնակցած են 50 պատգամաւոր (29-ը նիստերու դահլիճին մէջ, 21-ը համացանցային կապի միջոցով), որ կը կազմէ աւելի քան 78 տոկոս: Քուէարկութիւնը ապահովուած է:

1. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի ընտրութեան մասին:

Որոշեցին՝ Հաշուի առնելով այն իրողութիւնը, որ Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիներու պետական համակարգը՝ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանը պարտադրուած են առայժմ գործել արտերկրի մէջ, Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանը կը հաստատէ, որ մինչեւ Բնօրրան Հայրենիքի մէջ հաստատուիլը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ պետութեան գլուխ, կ'ընտրէ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

2. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի թեկնածուի մասին: Իբրեւ թեկնածուներ առաջադրուեցին Արմենակ Աբրահամեանը եւ Արամ Մկրտչեանը: Հաշուի առնելով, որ Արամ Մկրտչեանը հանեց իր թեկնածութիւնը կը քուէարկուի Արմենակ Աբրահամեանի թեկնածութիւնը:

Որոշեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ պետութեան գլուխ, ընտրել Արմենակ Աբրահամեանը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 49, դէմ - 0, ձեռնպահ - 1

Որոշումն ընդունուած է:

3. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմենակ Աբրահամեանի քաղաքական ելոյթը:

Որոշեցին՝

ա/ Հաստատել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմենակ Աբրահամեանի քաղաքական ելոյթի դրոյթները, դրական գնահատական տալով Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի 10-ամեայ աշխատանքներուն:

բ/ Հաստատել, որ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը պետք է շարունակէ աշխատանքները ՄԱԿ-ի Բնիկ Ժողովուրդներու ձեւաչափին մէջ՝ վերջնականապէս հաստատելու համար Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքները Արեւմտեան Հայաստանի նկատմամբ:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

Ըստ կանոնակարգի՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը կ'ընդունի Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան վարչապետ Տիգրան

Փաշաբեգեանի եւ անոր ղեկավարած Կառավարութեան հրաժարականը, որ գործած է երեք տարի:

4. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան վարչապետի ընտրութեան մասին:

Որոշեցին՝ Ըստ կանոնակարգի՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը, իբրեւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան վարչապետ կ'առաջարկէ Տիգրան Փաշաբեգեանի թեկնածութիւնը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

5. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի հաշուետւութիւնը 2011-2014 թթ. աշխատանքներուն վերաբերեալ:

Որոշեցին՝ Հաստատել Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի հաշուետւութիւնը 2011-2014 թթ. աշխատանքներուն վերաբերեալ:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

6. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան կազմի՝ Նախարարներու մասին: Որոշեցին՝

ա/ Ըստ կանոնակարգի Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան նոր կազմը՝ Նախարարներու թեկնածութիւնը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահին կը ներկայացնէ վարչապետը, որ յատուկ Հրամանագրով կը հաստատէ Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան կազմը՝ նախարարները:

բ/ Լրացուցիչ՝ պատգամաւոր Արամ Մկրտչեանի առաջարկութեամբ, Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան նոր կազմի՝ Նախարարներու մասին տեղեակ պահել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանը եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան կազմը հաստատելու ժամանակ հաշուի առնել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի պատգամաւորներու կարծիքները:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

7. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան ապագա ծրագրերի մասին:

Որոշեցին՝ Առաջիկա երկու ամիսների ընթացքում Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան ապագա ծրագրերը:

Քվէարկութեան արդիւնքները.

Կողմ - 50, դէմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:



8. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական դրոշի հաստատման մասին:

Որոշեցին՝ Հիմք ընդունելով Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի Հրամանագիրը Արեւմտեան Հայաստանի դրոշի մասին, հաստատել դրոշը, որպէս Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական դրոշ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 50, դեմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունուած է:

Այսպիսով Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի առաջին գումարման, առաջին նստաշրջանի աշխատանքներն ավարտվում են:

Արմեն Տեր-Սարգսյան

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Բիատրիս Նազարյան

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

### **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

**Հայերի ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերի շուրջ  
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) ռազմավարութեան մասին**

**(լրամշակուած օրինակ)**

Հայերի ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հատուցման խնդիրներում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ռազմավարութիւնը կառուցուած է հետեւեալ հարցադրումներին տրուած ճշգրիտ պատասխանների վրայ.

- Հայերի ցեղասպանութիւնը դատապարտուել է 1896, 1909, 1915, 1919 թթ., որտե՞ղից ծագեց Հայերի ցեղասպանութեան ճանաչման խնդիրը եւ Հայերի ցեղասպանութիւնը մէկ անգամ եւս կրկին դատապարտելու խնդիրը:

- Ե՞րբ է իրականացուել Հայերի ցեղասպանութիւնը, ո՞ր տարիներին, ո՞ւմ կողմից եւ ո՞րն է Հայերի ցեղասպանութեան ժամանակագրութիւնը, 1915-1923, թե՞ 1894-1923 թթ.:

- Ո՞րն է Հայերի ցեղասպանութեան հետեւանքով հայութեանն ու Հայաստանին հասցուած վնասը եւ իրականացուել է, արդե՞՞ք այդ վնասի գնահատումը, հաշուարկը, այլ կերպ ասած, գոյութիւն ունի, արդե՞՞ք վնասի հատուցման հաշուարկի ամբողջական փաթեթը:

1. **Հայերի ցեղասպանութեան դատապարտման ժամանակը:**

Միջազգային ընկերակցությունը Լոզանի կոնֆերանսից յետոյ՝ 1923-1965 թթ., Հայերի ցեղասպանության խնդիրը վարպետորեն շրջանցեց եւ մոռացութեան մատնեց:

Մոռացութեան պատը հնարաւոր եղաւ քանդել 1965 թ. Մեծ եղեռնի 50-ամեայ տարելիցի օրերին Խորհրդային Հայաստանում բռնկուած պահանջատիրութեան ցոյցերով, շարժումով եւ, մանաւանդ, 1973-1975 թթ. Հայկական սփիւոքում ձեւաւորուած ազգային ազատագրական պայքարի՝ Գուրգէն Եանիկեանի, Գեւորգ Աճեմեանի, Միմոն Միմոնեանի, Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի, Հայերի Ցեղասպանութեան Արդարութեան Մարտիկների եւ այլ կազմակերպությունների ու անհատների մեծ ջանքերի ու զոհողությունների գնով:

1965-1985 թուականները Հայերի ցեղասպանութեան ճանաչման տարիներն են: Այդ ժամանակ էր, որ հայ ազատագրական պայքարի ծաւալմանը զուգընթաց՝ համաշխարհային լրատուամիջոցները բառացիօրէն ողողուեցին հայութեան եւ Հայաստանի, ինչպէս նաեւ Հայերի ցեղասպանութեան վերաբերեալ տեղեկություններով, հարցազրոյցներով, յօդուածներով, գրքերով, հաղորդաշարերով ու ֆիլմերով...

1985-ը Գորբաչովեան պերեստրոյկայի եւ 1987-ը՝ Եւրոպական պառլամենտի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւի ընդունման տարեթուերն են, որոնց անմիջապէս յաջորդել են Սումգայիթում, Բաքում, Գանձակում եւ այլ վայրերում բնակուող ազգութեամբ հայ քաղաքացիների հալածանքները, կոտորածը, բռնագաղթը եւ ԼՂՀ-ի ու ՀՀ-ի դէմ Ադրբեջանի Հանրապետութեան սանձազերծած ագրեսիան:

Նոր ժամանակների հայ ազգային ազատագրական պայքարի նոր փուլը Արցախեան ազատամարտն է՝ 1988-1994 թթ., որի յաղթական աւարտից յետոյ, իսկապէս, որ պէտք է գար Հայերի ցեղասպանութեան դատապարտման եւ հատուցման ժամանակը՝ մանաւանդ, որ ազգովին դիմակայել էինք հայերի նոր ցեղասպանութիւն կազմակերպելու դաւադրութեանը:

Ու թէեւ թանկարժէք ժամանակը կորսուած է, սակայն ամէն ինչ չէ, որ կորած է:

Պարզապէս, պէտք է ընդունել, որ Հայերի ցեղասպանութեան ճանաչման պարտադրուած գործընթացն աւարտուած է եւ պէտք է անցում կատարել Հայերի ցեղասպանութեան միջազգային դատապարտման եւ հատուցման գործընթացին:

## **2. Հայերի ցեղասպանութեան իրականացման ժամանակաշրջանը եւ ցեղասպանութեան դատապարտումները:**

Հայերի ցեղասպանութիւնը իրականացուել է 1894-1923 թթ. ընթացքում Թուրքիայի իրար յաջորդող կառավարությունների կողմից՝ սուլթանական, երիտթուրքական քեմալական,

յետագայում՝ հանրապետական: Իրականացուել է Օսմանեան կայսրութեան տարածքում, Արեւմտեան Հայաստանում, Կիլիկեան Հայաստանում, Արեւելեան Հայաստանում, Բաքում, Շուշիում...

Եւ 1918-2016 թթ. ընթացքում Ադրբեջանի իրար յաջորդող կառավարութիւնների կողմից Ադրբեջանում, Արցախում, Նախիջեւանում եւ հայկական այլ տարածքներում:

Հայերի ցեղասպանութեան, հայատեացութեան, հալածանքների, հայկական մշակութային ու քաղաքակրթական արժէքների ոչնչացման, ինչպէս նաեւ հայ մշակոյթի կեղծարարութեան եւ մշակութային արժէքների իրացման քաղաքականութիւնն է գործելակերպը վերոնշեալ կառավարութիւնների կողմից շարունակուում է մինչեւ այսօր:

Աւելին, պետական ահաբեկչութեան այդ նոյն քաղաքականութիւնն իրականացուում է նաեւ Մեծ Մերձաւոր Արեւելքի այլ հին ժողովուրդների նկատմամբ՝ յոյների, ասորիների, թալիշների եւ այլ:

- 1) Հայերի ցեղասպանութիւնը դատարապարտուել է 1896, 1909, 1915, 1919 թթ.:
- 2) 1894-1896 թթ. Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կազմակերպած կոտորածներին զոհ են գնացել 300 հազար, բռնի կրօնափոխութեան ենթարկուել 200 հազար, տարագրուել 100 հազար հայ: Հայկական կոտորածներն իրականացրել են թուրքական կանոնաւոր զօրամասերը, «Համիդիէ» գնդերը, ոստիկանութիւնը եւ ազգայնամոլ ամբոխը:
- 3) Համիդեան կոտորածների ընթացքում տեղի է ունեցել հայերի բռնի կրօնափոխութիւնը, ինչը հիմք է հանդիսացել իսլամացման ու թուրքացման քաղաքականութեան սկզբնաւորման եւ էլ աւելի բիրտ եղանակներով դրա շարունակութեան համար:
- 4) 1894-1896 թթ. Համիդեան կոտորածները դատապարտել են ժամանակի առաջադէմ գործիչներ Ժան Ժորեսը, Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը, Եօհաննես Լեփսիուսը, Լինչը եւ ուրիշներ:
- 5) 1909 թ. Ադանայի կոտորածների ձեռագիրը նոյնն է, այն կազմակերպել է թուրքական իշխանութիւնը, իրականացրել ազգայնամոլ ամբոխը, մասնակցել թուրքական բանակը: Ադանայի կոտորածներին զոհ է գնացել շուրջ 30 հազար հայ: Ցեղասպանութեան փաստի առնչութեամբ դատավարութիւն է կազմակերպուել, որը սակայն ձեւական բնոյթ է կրել: Կազմակերպուած հրդեհի միջոցով դատավարութեան նիւթերը փորձել են կրակի մատնել ու ոչնչացնել, թէւ շատ նյութեր փրկուել են եւ պահպանուում են առ այսօր:
- 6) 1915 թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսի հայ մտաւորականների ձերբակալութեամբ սկսուել է Հայերի ցեղասպանութեան ամենամեծ ալիքը, որը շարունակուել է մինչեւ 1923 թ. եւ, ըստ էութեան, չի աւարտուել մինչեւ այսօր: Հայերի ցեղասպանութեան հետեւանքով զոհուել է աւելի քան մէկ ու կէս միլիոն հայ եւ կէս միլիոն հայ բռնագաղթուել է, դարձել փախստական ու տարագիր:
- 7) 1915 թ. մայիսի 24-ին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը հանդէս են եկել երիտթուրքական կառավարութեան սանձազերծած հայերի կոտորածներն ու

ցեղասպանութիւնը դատապարտող յատուկ յայտարարութեամբ, որտեղ 1915 թ. ապրիլեան կոտորածները որակել են, որպէս «Թուրքիայի նոր ոճիրը մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ»: Տեքստում մասնաւորապէս ասուած էր. «Մարդկության եւ քաղաքակրթության դէմ գործված Թուրքիո այս նոր ոճիրներու հանդէպ դաշնակից տերությունների կառավարությունները հանրորէն կը տեղեկացնեն Մեծ Դռանը, որ թուրք կառավարության բոլոր անդամները անհատապէս պատասխանատու պիտի համարվին, ինչպէս նաեւ բոլոր այն պաշտոնյաները, որոնք մասնակից դարձան այս ջարդերուն»:

8) Օսմանեան կայսրութիւնը ինքն է առաջիններից մէկը, որ ճանաչել ու դատապարտել է Հայերի ցեղասպանութիւնը: Կոստանդնուպոլսի Ռազմական յատուկ ատեանը 1919 – 1920 թթ. իրականացրել է երիտթուրք պարագլուխների դատավարութիւնը նրանց ներկայացնելով երկու մեղադրանք. Օսմանեան կայսրութիւնը պատերազմի մէջ ներքաշելու եւ կայսրութեան հպատակ հայ քաղաքացիների կոտորածները, ցեղասպանութիւնը ու բռնագաղթը իրականացնելու համար, ինչի հիման վրայ երիտթուրք պարագլուխներից Թալէաթը, Էնուերը, Ջեմալը, Նազիմը, Քեմալ բէյը, Ջեմալ Ազմին, Նայիմը, Բեհաեդդին Շաքիրը հեռակայ կարգով դատապարտուել են մահուան, որն յետագայում ի կատար են ածել «Նեմեսիս գործողութիւն» հայ վրիժառուները:

9) Հայերի ցեղասպանութիւնը ճանաչել եւ դատապարտել են ՄԱԿ-ի անդամ 39 պետություններ, ՄԱԿ-ի մի քանի յանձնաժողովներ (1985), Եւրոպայի Խորհուրդը (1998, 2001), Եւրախորհրդարանը (1987, 2000, 2002, 2015), Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (1983), Ժողովուրդների մշտական դատական ատեանը (1984), ԱՄՆ 50 նահանգներից 49-ը եւ այլն:

10) 1919 թ. կատարուել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Հայաստանին հասցուած նիւթական վնասի գնահատումը:

11) 1920 թ. ստորագրուել է Սեւրի պայմանագիրը, որի 88-93-րդ յօդուածները վերաբերում էին Հայաստանին եւ 1920 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրոյ Վիլսոնը վաւերացրել է Իրաւարար վճիռ Թուրքիայի եւ Հայաստանի սահմանի վերաբերեալ:

Վերոնշեալ փաստերը ցոյց են տալիս, որ հայ ժողովրդին ու Հայաստանին հասցուած վնասի հատուցումը, որն իրականացուելու էր Սեւրի դաշնագրի եւ Վիլսոնի Իրաւարար վճռի դրոյթների գործադրմամբ, ինչպէս նաեւ պատճառուած նիւթական վնասի հատուցմամբ՝ որոշուել է, ստորագրուել, վաւերացուել, սակայն չի իրականացուել:

Աւելին, 1923 թ. յետոյ այդ ամէնը միտումնաւոր կերպով մոռացութեան է մատնուել:

### **3. Հայերի ցեղասպանութեան ժամանակագրութեան հարցը՝ 1915-1923 թթ., թե՞ 1894-1923 թթ.:**

Այս հարցում, իրաւական դիրքորոշման տեսակէտից, կարելոր է, թէ ի՞նչ ժամանակահատուածում եւ ո՞ւմ կողմից է իրականացուել Հայերի ցեղասպանութիւնը: Այդ իմաստով մերժելի է 1915-1923 թթ. ձեւակերպումը: Ճիշտ է եւ պատմականօրէն

փաստարկուած՝ 1894-1923 թթ. ձեւակերպումն ու ժամանակագրութիւնը, որովհետեւ երեք եւ աւելի իրար յաջորդող թուրքական կ'առավարութիւններ՝ օսմանեան, երիտթուրքական, քեմալական, նոյնատիպ բնաջնջման գործողութիւններ են իրականացրել հայութեան նկատմամբ:

Անպայման պէտք է յիշատակել նաեւ 1894-96 թթ. Արդուլ Համիդ 2-ի կազմակերպած Համիդեան կոտորածները, 1909 թ. Երիտթուրքերի կազմակերպած Ադանայի հայութեան կոտորածը, որոնք նոյնպէս Հայերի ցեղասպանութեան դրուագներից են: Մենք ոչ իրաւական, ոչ քաղաքական, եւ ոչ էլ բարոյական իրաւունք ունենք դրանք անտեսելու եւ մոռացութեան մատնելու, առաւել եւս, որ դրանք Հայերի պահանջատիրութեան ապագայ քայլերի իմաստով խիստ կարեւոր նշանակութիւն ունեն ընդհանուր շղթայի մէջ:

**4. Հայ ժողովրդի, մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ՝ Թուրքիայի իրար յաջորդող կառավարութիւնների իրականացրած յանցագործութիւնները, առնուազն վերջին 100 տարիների ընթացքում:**

Որպէսզի պատկերացում կազմենք Հայերի ցեղասպանութեան հետեւանքով հայերին հասցուած ամբողջական վնասի վերաբերեալ, հարկաւոր է պարզապէս յիշել թուրքական իրար յաջորդող կառավարութիւնների՝ սուլթանական, երիտթուրքական, քեմալական, կողմից իրականացուած բոլոր յանցագործութիւնները մարդկութեան եւ հայութեան նկատմամբ:

Պարզապէս թուարկենք դրանք:

- 1) Այլատեացութեան, հայատեացութեան, ազգային գերազանցութեան ու սնապարծութեան, ռասիզմի գաղափարախօսութեան՝ պանթուրքիզմի ձեւաւորում, տարածում եւ քարոզչութիւն:
- 2) Հայերի տեղահանութեան եւ ցեղասպանութեան ծրագրերի ու գաղափարների մշակում, տարածում, քարոզչութիւն:
- 3) 1894-1896, 1909, 1915-1918, 1919-1923 թթ. ընթացքում հայ ժողովրդի բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում, եւ Օսմանեան կայսրութեան տարածքում Հայերի ցեղասպանութեան ու բռնագաղթի իրականացում, հայ ժողովրդի ունեցուածքի յափշտակում եւ իւրացում:
- 4) 1915-ին եւ դրան յաջորդող տարիներին՝ յոյների, ասորիների, արաբների (յետագայում, 1920-ական թթ. կեսերից սկսած, նաեւ քրդերի) կոտորածների ու ցեղասպանութեան իրականացում, նրանց ունեցուածքի յափշտակում եւ իւրացում:
- 5) 1918 թ., ագրեսիայի ձեռնարկում Արեւելեան Հայաստանի հայութեան նկատմամբ, Բաթումի ապօրինի պայմանագրի պարտադրում նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեանը («Հաշտութեան եւ բարեկամութեան պայմանագիր Օսմանեան կայսերական կառավարութեան եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան միջեւ», 4 յունիս 1918 թ., Բաթում):
- 6) 1918 թ., Բաթումի հայերի կոտորած, ցեղասպանութիւն, հայերի ունեցուածքի կողոպուտ:

7) 1920 թ., Շուշիի հայերի կոտորած, քաղաքի հրդեհում, հայերի ունեցուածքի կողոպուտ:

8) 1920 թ., ագրեսիայի ձեռնարկում անկախ եւ ինքնիշխան պետութեան՝ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, այնուհետեւ Ալեքսանդրապոլի անօրինական եւ ապօրինի պայմանագրի պարտադրում ագրեսիայի ենթարկուած կողմին՝ Հայաստանի Հանրապետութեանը («Հաշտութեան պայմանագիր Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութեան միջեւ», 2 դեկտեմբեր 1920 թ., Ալեքսանդրապոլ):

9) Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիւ Սոցիալիստական Հանրապետութեան մասնակցութեամբ անօրինական եւ ապօրինի պայմանագրի պարտադրում Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեանը («Բարեկամութեան պայմանագիր մի կողմից Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան, Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական ժանրապետութեան եւ Վրաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան կառավարութիւնների եւ միւս կողմից՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութեան միջեւ, Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիւ Սոցիալիստական Հանրապետութեան մասնակցութեամբ», 13 հոկտեմբեր 1921 թ., Կարս):

10) Հայ ժողովրդի իրաւունքների հաշուին, 3 մարտ 1918 թ.-ին, մի կողմից Ռուսաստանի Ֆեդերատիւ Սոցիալիստական Հանրապետութեան եւ միւս կողմից՝ Գերմանիայի, Աւստրո-հունգարիայի, Բուլղարիայի եւ Օսմանեան կայսերական կառավարութեան միջեւ ստորագրուեց Բրեստի լրացուցիչ պայմանագիրը: Այդ պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային յանձնեց Արեւմտեան Հայաստանը եւ Արեւելեան Հայաստանի մի զգալի մասը: Պայմանագրով ստանձնած յանձնառութեան համաձայն՝ Ռուսաստանը զօրացրեց Հայկական կամաւորական գնդերը եւ զօրքերը դուրս բերեց Հայաստանից: 16 մարտ 1921 թ.-ին ստորագրուած, այսպէս կոչուած, Մոսկուայի անօրինական պայմանագիրը՝ «Բարեկամութեան եւ եղբայրութեան պայմանագիր Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութեան կառավարութեան եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութեան միջեւ», ըստ էութեան, Բրեստի լրացուցիչ պայմանագրի շարունակութիւն էր եւ դրա «վաւերացումը»: Վերոյիշեալ պայմանագրերը փաստօրէն կոպտօրէն խախտել են միջազգային իրաւունքի հիմնարար դրոյթները, քանի որ կնքուել են ագրեսիայի ու պարտադրանքի արդիւնքում

11) 1937 թ., Դերսիմի հայերի ու ալեւիների կոտորածների ու ցեղասպանութեան իրականացում:

12) 1955 թ., սեպտեմբեր, Կոստանդնուպոլսի յոյների ու հայերի կոտորածներ, ցեղասպանութիւն, յոյների ու հայերի ունեցուածքի թալան, յափշտակում: Ըստ պաշտօնական տուեալների՝ սեպտեմբերի 6-7-ին մահացել է 11 մարդ, մինչդեռ հայկական ու յունական համայնքների մօտ եղած տեղեկութիւններն այլ են. 37 սպանուած, 300-ից աւելի բռնաբարուած կին, աւերուած 71 եկեղեցի, 3 թերթի խմբագրութիւն, 4.500 արհեստանոց ու խանութ, 26 դպրոց, 2.100 տուն ու բնակարան:

13) 1974 թ., Կիպրոսի Հանրապետութեան հիւսիսային տարածքների բռնազաւթում, տեղի յոյն եւ հայ բնակչութեան կոտորածներ, ցեղասպանութիւն, բռնազաւթ, ունեցուածքի յափշտակում:

14) 1894-1923 թթ., 1923 թ.-ից մինչեւ այսօր Հայոց քաղաքակրթական արժէքների, այդ թւում՝ պատմաճարտարապետական յուշարձանների եւ եկեղեցիների ու խաչքարերի

ոչնչացում ու ավերում: Համաձայն 1914 թ. տուեալների հայկական եկեղեցիների ու եկեղեցական համալիրների ընդհանուր թիւն Արեւմտեան Հայաստանում եւ Օսմանեան կայսրութեան մէջ կազմել է 2549 (այդ թւում IV-V դդ. վաղ քրիստոնէական յուշարձանները): Դրանց մեծ մասը թալանուել, հրկիզուել եւ ավերուել է ցեղասպանութեան ժամանակ: ՅՈՒՆԵՍԿՕԻ-ի 1974 թ. տուեալների համաձայն՝ 1923 թ.-ից յետոյ պահպանուած 913 պատմա-ճարտարապետական յուշարձաններից 464-ը հիմնահատակ ոչնչացուել են, 252-ը ավերակ վիճակում է, 197-ը հիմնական վերանորոգման կարիք ունի: Այսօր արդէն գրեթէ ոչինչ չի մնացել վերականգնելու, Թուրքիայի Հանրապետութեան կառավարութիւնները դրանք բոլորը ծրագրաւորուած կերպով ոչնչացրել են:

15) Հայերի եւ տարածաշրջանի այլ ժողովուրդների պատմութեան, մշակոյթի եւ քաղաքակրթական այլ արժէքների կեղծարարութիւն, իւրացում:

16) Հայերի ցեղասպանութեան ժխտողականութիւն: Այս հարցով ժամանակ շահելու եւ հատուցումը յետաձգելու ակնկալիքներով՝ պատմաբանների յանձնաժողովի ստեղծման առաջարկներ:

17) ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրոյ Վիլսոնի 1920թ. նոյեմբերի 22-ի Իրաւարար վճռով Հայաստանին պատկանող տարածքի բռնագաւառում:

18) 1993 թ.-ից Հայաստանի Հանրապետութեան շրջափակում:

Ադրբեջանի Հանրապետութեան իշխանութիւնների իրականացրած յանցագործութիւնները Հայաստանի, հայերի, տարածաշրջանի այլ ժողովուրդների եւ մարդկութեան նկատմամբ Թուրքիայի Հանրապետութեան իշխանութիւնների ձեռագրի ու ծրագրի կրկնութիւնն են, որի ամբողջական պատկերը կը ներկայացնենք յաջորդ պարագրաֆում՝ ստորեւ:

**5. Հայ ժողովրդի, մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ՝ Ադրբեջանի իրար յաջորդող կառավարութիւնների յանցագործութիւնները, առնուազն վերջին 100 տարիների ընթացքում, որոնք Թուրքիայի իրար յաջորդող կառավարութիւնների ցեղասպանական ծրագրերին մասն են կազմում եւ այդ ծրագրերի ուղղակի պատճենահանումն ու կրկնօրինակումներն են: Աւելի մեծ ժամանակային ծաւալ ընդգրկել չենք կարող, քանի որ Ադրբեջան անուանումով արհեստական պետութիւնը ստեղծուել է 1918 թ.-ին:**

1) 1905-1906 թթ., մասնակցութիւն Կովկասում հայերի դէմ հրահրուած խժողութիւններին, հայերի հալածանքներ ու սպանութիւններ, նրանց ունեցուածքի յափշտակում:

2) 1918 թ., մասնակցութիւն թուրքական զօրքերի կողմից իրականացուած Բաքուի հայերի կոտորածներին, նրանց ունեցուածքի յափշտակում:

3) 1918-1921 թթ., զինուած յարձակումներ ու բռնութիւններ Ղարաբաղի, Նախիջեւանի, Զանգեզուրի հայ բնակչութեան նկատմամբ, ազրեսիայ՝ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, տարածքային անհիմն պահանջների ներկայացում, անկայունութեան հրահրում տարածաշրջանում:

4) 1920 թ., Շուշի քաղաքի հայ բնակչութեան կոտորած, քաղաքի հրդեհում, քաղաքի հայերի ունեցուածքի յափշտակում:

5) Արցախը Ադրբեջանին բռնակցելու անօրինական որոշման ընդունում: 1921 թ.-ի յուլիսի 5-ին Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կովկասեան Բիւրոյի նիստը, արհամարհելով Ազգերի լիգայի համապատասխան որոշումը եւ Արցախի ժողովրդի կարծիքը՝ որպէս Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի միջեւ սահմանների որոշման ժողովրդավարական գործիք, ի հակադրութիւն միացման բանաձեւի, արարողակարգային խախտումներով՝ անօրինական որոշում ընդունեց Խորհրդային Հայաստանից Արցախի բռնի անջատման մասին՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում լայն իրաւասութիւններով ազգային ինքնավարութիւն կազմաւորելու պայմանով: Այսպիսով, պատմական հայկական ու հայաբնակ տարածքների մեծ մասը յանձնուեց Խորհրդային Ադրբեջանին:

6) 1921 թ., Մոսկուայի ապօրինի պայմանագրի ստորագրում, Նախիջեւանի երկրամասի բռնակցում Ադրբեջանին՝ ինամակալութեան անուան ներքոյ («Պայմանագիր Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութեան կառավարութեան եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի միջեւ», Մոսկուայ, 16 մարտի, 1921 թ.): Նախիջեւանի երկրամասի բռնագաւթում եւ շահագործում, յանցագործութիւններ եւ հալածանքներ Նախիջեւանի բնիկ հայերի նկատմամբ, ի վերջոյ՝ Նախիջեւանի երկրամասի հայաթափում:

7) 1921-1988 թթ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բռնագաւթում եւ շահագործում, յանցագործութիւններ Արցախի բնիկ հայութեան նկատմամբ:

8) 1930-ական թթ. մինչեւ մեր օրերը, Ադրբեջանում, Նախիջեւանում եւ Արցախում ապրող ժողովուրդների՝ հայերի, ուղիների, թալիշների, թաթերի, աւարների, լեզգիների բռնի ձուլում, նրանցից շատերի նկատմամբ ցեղասպանական գործողութիւնների իրականացում:

9) 1960-ական թթ. մինչեւ մեր օրերը, տարածաշրջանի ժողովուրդների, այդ թւում, մասնաւորապէս, հայերի պատմութեան եւ մշակոյթի կեղծարարութիւն, քաղաքակրթական եւ պատմական, ճարտարապետական արժեքների ոչնչացում կամ իւրացում:

10) 1988 թ., Արցախի հայութեան ազատ ապրելու եւ ազատօրէն զարգանալու կամքի եւ իրաւունքի արտայայտութեան ճնշում բռնամիջոցներով, իրականացուած հայերի զանգուածային սպանութիւններով, հալածանքներով, ահաբեկումներով, բանտարկութիւններով:

11) 1988 թ., Սպիտակի երկրաշարժի վերականգնողական աշխատանքների համար նախատեսուած շինանիւթի, ինչպէս նաեւ աղէտի գօտու համար ժողովուած մարդասիրական օգնութեան ամօթալի կողոպուտ ու թալան:

12) 1988-1990 թթ., Ադրբեջանի Հանրապետութեան քաղաքացի հայ բնակչութեան ցեղասպանութեան եւ բռնագաղթի իրականացում, ունեցուածքի յափշտակում:

13) 1991-1994 թթ., լայնածաւալ ագրեսիայ ԼՂՀ-ի, ինչպէս նաեւ ՀՀ-ի սահմանամերձ շրջանների նկատմամբ:

14) Ադրբեջանի Հանրապետութիւնը, պետութիւն է, որի կառավարութիւնը աւերել է եւ շարունակում է ոչնչացնել բազմաթիւ հին հայկական յուշարձաններ, եկեղեցիներ, հայ ժողովրդի մշակութային ժառանգութիւնը: Այս ամենի խօսուն վկայութիւն է Ադրբեջանի Հանրապետութեան, Արցախի եւ Նախիջեւանի հայկական տարածքներում գտնուող 89 միջնադարեան հայկական եկեղեցիների, 5480 խաչքարերի եւ 22,700 գերեզմանների



ոչնչացումը, այդ թւում՝ Ագուլիսում 400 խաչքարերի եւ 2005 թ. Նախիջեւանում Ջուղայի հազարաւոր միջնադարեան բնօրինակ եւ հնագոյն խաչքարերի ոչնչացումը:

15) 2016 թ., ապրիլ, ապրիլեան քառօրեայ պատերազմի ու ագրեսիայի սանձազերծում Արցախի Հանրապետութեան եւ Արցախի հայութեան նկատմամբ, պատերազմական նոր յանցագործութիւնների իրականացում:

16) 1988-2019 թթ., ԼՂՀ-ի, ՀՀ-ի շրջափակում, ազատ զարգանալու հնարաւորութեան իրաւունքի խոչընդոտում, արգելափակում:

17) 1988-2019 թթ., միջազգային ընտանիքի կողմից թոյլ իրականացուող վերահսկողութեան պայմաններում, Ադրբեջանի Հանրապետութեան կողմից սպառազինութիւնների թոյլատրելիութեան բոլոր նորմերի ու սահմանումների խախտում, տարածաշրջանային անկայունութեան հրահրում:

18) Ադրբեջանի Հանրապետութեան իշխանութիւնների կողմից, յատկապէս նոր սերնդի մօտ, հայատեացութեան, այլատեացութեան, ռասիզմի սերմանում, ազգամիջեան կոյր ասելութեան բորբոքում ու հրահրում, նոր պատերազմների ու ցեղասպանութեան քարոզչութիւն եւ նախապատրաստութիւն:

## 6. Ամփոփիչ խօսք:

Սա է ոչ ամբողջական ցանկը մարդկութեան եւ հայութեան դէմ՝ Թուրքիայի իրար յաջորդող կառավարութիւնների եւ Ադրբեջանի իրար յաջորդող կառավարութիւնների իրականացրած յանցագործութիւնների, վերջին 100 տարիների ընթացքում:

Այս ամէնին յաւելենք, ոչ մինչեւ այսօր չի կատարուել հայ ժողովրդին հասցուած ողջ վնասի գնահատումն ու հաշուարկը, ինչպէս նաեւ 1923-ից յետոյ ընկած ժամանակահատուածում այլ յանցագործութիւնների միջոցով հայութեանն ու Հայաստանին հասցուած ողջ վնասի չափի գնահատումն ու հաշուարկը:

Սակայն այստեղ թուարկուած յանցագործութիւններն ուղիղ մատնանշում են այն վնասները, որոնք կարելի է եւ պէտք է հաշուարկել ու այդպէս պատրաստել Հայերի ցեղասպանութեան հետեւանքով հայութեանն ու Հայաստանին հասուած ամբողջ վնասի իրական չափը, վնասների հատուցման ամբողջական փաթեթը:

Մէկ կարեւոր նկատառում եւս, որպէս եզրափակիչ խօսք:

Հայերի նկատմամբ 1894 - 1923 թթ. ընթացքում իրականացուած կոտորածն ու բռնագաղթը հանդիսանում է ցեղասպանութիւն, համաձայն՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ դրա պատժի մասին» Կոնուէնցիայի, 9 դեկտեմբեր 1948 թ.: Հայերի ցեղասպանութիւնը ենթակայ է դատապարտման, համաձայն՝ ՄԱԿ-ի «Պատերազմի յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների նկատմամբ վաղեմութեան ժամկէտ չկիրառելու մասին» Կոնուէնցիայի, 26 նոյեմբեր 1968 թ.:

Կարող ենք փաստել, որ Հայերի ցեղասպանությունը մինչև այսօր շարունակում է եւ շարունակուելու է, քանի դեռ չի իրականացուել յանցագործութեան դատապարտումը եւ պատճառուած վնասի ամբողջական հատուցումը: Եւ քանի դեռ հայութիւնը չի վերագտել՝ ապրելու, զարգանալու եւ առաջընթացի իրաւական – քաղաքական, ազգային – պետական ամուր եւ անսասան հիմքերը:

Սոյն յայտարարութիւնն ընդունուած է 19.10.2014 թ. Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 2-րդ նստաշրջանում: Լրացումները կատարուել են 04.09.2019 թ. Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման Խորհրդարանի Նախագահութեան եւ Կառավարութեան համատեղ նիստում:

Արմէն Տէր-Սարգսեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ  
04.09.2019 թ.

### **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

#### **Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ասորիների եւ յոյների ցեղասպանությունը դատապարտելու մասին**

Հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) Նախագահի թիւ 33, 34 հրամանագրերը (06.04.2015) ասորիների եւ յոյների ցեղասպանությունը դատապարտելու մասին,

առաջնորդուելով՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» եւ «Պատերազմի յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների նկատմամբ վաղեմութեան ժամկետ չկիրառելու մասին» Կոնուենցիաների յօդուածների պահանջներով,

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը) դատապարտում է թուրքական իրարհաջորդ կառավարութիւնների կողմից 1914-1923 թթ. իրականացուած ասորիների եւ յոյների ցեղասպանութիւնը:

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը) զօրակցում է բարեկամ ժողովուրդներին նրանց իրաւունքների պաշտպանութեան հարցերում եւ աջակցում ցեղասպանութեան հետեւանքների վերացման ու արդարութեան հաստատման գործում:

Արմէն Տէր-Սարգսեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ  
07.04.2015 թ.

**ՕՐԷՆՔ**  
**ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ**

Օրենքի բովանդակությունը եւ նպատակը

Յօդուած 1. Սոյն օրենքը կը պարունակէ հիմնական դրոյթներ արեւմտահայերէնի, ինչպէս նաեւ արեւելահայերէնի, գրաբարի, հայերէնի բարբառներու, ազգային փոքրամասնութիւններու, այլ ազգերու լեզուներու մասին: Օրենքը կ'ընդգրկէ նաեւ դրոյթներ հանրային պատասխանատուութեան մասին, այն է՝ անհատին տալ հնարաւորութիւն լեզուի եւ անոր գործածման վերաբերեալ հանրային եւ միջազգային ոլորտներումէջ: Ինչպէս նաեւ ժեստերու լեզուի ու Պրայելի համակարգի գործածման վերաբերեալ:

Յօդուած 2. Օրենքի նպատակն է՝ երաշխաւորել արեւմտահայերէնի, ինչպէս նաեւ արեւելահայերէնի, գրաբարի եւ ազգային փոքրամասնութիւններու լեզուներու կարգավիճակը եւ գործածութիւնը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան մէջ: Օրենքը նպատակ ունի պահպանելու եւ զարգացնելու արեւմտահայերէնը, արեւելահայերէնը, գրաբարը, հայերէնի բարբառները եւ ազգային փոքրամասնութիւններու լեզուական բազմազանութիւնը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան մէջ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն

Յօդուած 3. Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն հայերէնն է՝ գրական արեւմտահայերէնը:

Յօդուած 4. Արեւմտահայերէնը պետութեան եւ հասարակութեան միասնական լեզուն է, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներուն համար պէտք է ըլլայ հասանելի՝ կրթութեան եւ կենսագործունէութեան բոլոր ոլորտներուն մէջ:

Յօդուած 5. Հանրութիւնը յատուկ պարտականութիւն եւ պատասխանատուութիւն ունի գործածելու եւ զարգացնելու արեւմտահայերէնը:

Յօդուած 6. Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան մէջ լայն հնարաւորութիւններ կը ստեղծուին ուսանելու, տիրապետելու, գործածելու եւ զարգացնելու արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը, ինչպէս նաեւ անոնց հիմք հանդիսացող գրաբարը:

Ազգային փոքրամասնութիւններու լեզուները

Յօդուած 7. Պետութիւնը եւ հանրութիւնը յատուկ պատասխանատուութիւն եւ պարտականութիւն ունին նպաստելու ազգային փոքրամասնութիւններու լեզուներու գործածութեան ու զարգացման:

Ժեստերու լեզուն եւ Պրայելի համակարգը

Յօդուած 8. Ժեստերու լեզուն եւ Պրայելի համակարգը կը գտնուին պետութեան հոգածութեան տակ:

Լեզուի գործածութիւնը պետական եւ հասարակական գործունէութեան ոլորտին մէջ

Յօդուած 9. Պետական եւ հասարակական գործունէութեան ոլորտին մէջ գործածուող պետական լեզուն գրական արեւմտահայերէնն է:

Յօդուած 10. Անհրաժեշտութեան պարագային, ազգային փոքրամասնութիւններու եւ օտարներու համար, պետութիւնը կ'ապահովէ թարգմանութեան միջոցով այլ լեզուներու գործածութիւնը:

Յօդուած 11. Պետական եւ հասարակական ոլորտի մէջ գործածուող լեզուն պէտք է ըլլայ գրական, մշակուած, պարզ ու հասկնալի եւ մշտապէս պէտք է ըլլայ պետութեան հոգածութեան առարկայ եւ գտնուի պետութեան վերահսկողութեան տակ: Արեւմտահայերէն լեզուի բնականոն զարգացումը ապահովելու համար Կրթութեան նախարարութեան կազմին մէջ կը ստեղծուի «արեւմտահայերէն լեզուի պահպանման ու զարգացման ռազմավարութեան մշակման յանձնաժողով» եւ Արեւմտահայերէն լեզուի անաղարտ գործածութեան նպատակով «արեւմտահայերէն լեզուի հսկողութեան տեսչութիւն»:

Յօդուած 12. Արեւմտահայերէնը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն է միջազգային յարաբերութիւններու ենթահողին մէջ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ  
17.06.2015 թ.

## ՈՒՂԵՐՁ

### Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)

### ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի անդամ պետութիւնների խորհրդարաններին (Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ ուղղուած Ադրբեջանի Հանրապետութեան յարձակման վերաբերեալ)

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը) խստօրէն դատապարտում է Ադրբեջանի Հանրապետութեան եւ նրա հրահրիչների, աննախադէպ յարձակողական եւ անպատասխանատու որոշումը լայնածաւալ ռազմական գործողութիւններ սկսել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ, որը յանգեցրել է Արցախի հետ շփման գծի ողջ երկայնքով եւ Հայաստանի Հանրապետութեան հետ սահմաններում իրավիճակի կտրուկ սրացման եւ գերաճած ռազմական առճակատման, գրահատեխնիկայի, աւիացիայի ու հրետանու օգտագործմամբ: Կան բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ Արցախի խաղաղ բնակչութեան շրջանում, այդ թւում՝ կանանց եւ երեխաների:

Մերձաւոր Արեւելքի հակամարտութեան հրահրողները եւ Թուրքիայի Հանրապետութեան ղեկավարութիւնը, որպէսզի խուսափեն իրենց արարքների անխուսափելի պատասխանատուութիւնից, ձգտում են պատասխանատուութիւնը իրենց եւ Թուրքիայի Հանրապետութեան վրայից փոխանցել ՀՀ-ի եւ Արցախի սահմաններ՝ Ադրբեջանի Հանրապետութեան յարձակման միջոցով: Այսպիսով, փորձելով շեղել համաշխարհային հանրութեան ուշադրութիւնը իրենց իրական նպատակներից եւ յանցագործ ծրագրերից Մերձաւոր Արեւելքում, ու փրկել Թուրքիայի Հանրապետութիւնը եւ նրա հրահրողներին անխուսափելի պատասխանատուութիւնից:

Կոչ ենք անում միջազգային հանրութեանը, մասնաւորապէս այն երկրներին, որոնք ներգրաւուած են հակամարտութեան կարգաւորման գործընթացում, գործուն քայլեր ձեռնարկել, ստիպելով Ադրբեջանի Հանրապետութեանը դադարեցնել յարձակումը եւ հարկադրել խաղաղութեան:

Հակամարտութեան յետագայ վատթարացումը կարող է յանգեցնել անկանխատեսելի հետեւանքների, ինչպէս ադրբեջանական, այնպէս էլ թիրքական կողմի համար: Ամէն ինչ կ'աւարտուի այնտեղ, որտեղ սկսուել է, այդ թում, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան հաստատմամբ՝ Արեւմտեան Հայաստանում:

Արմէն Տէր-Սարգսեան  
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ  
03.04.2016թ.

### Օ Ր Է Ն Ք

#### «Մերի խաղաղութեան պայմանագիրը վաւերացնելու մասին, ստորագրուած 10 օգոստոս 1920 թ., Մերում»

Ընդունուած է՝  
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կողմից, 23 յունիս 2016 թ.

Նկատի առնելով, որ Մերի խաղաղութեան պայմանագիրը՝ խաղաղութեան պայմանագիր է,

հաշուի առնելով, որ Մերի խաղաղութեան պայմանագրի ստորագրումից ի վեր Մերձաւոր Արեւելքում չեն դադարում զինեալ հակամարտութիւնները,

հաշուի առնելով, որ Մերի խաղաղութեան պայմանագրի վաւերացումը կարող է վճռական քայլ հանդիսանալ Մերձաւոր Արեւելքում իրական խաղաղութեան ու համագործակցութեան հաստատման,

հաշուի առնելով, որ Մերի խաղաղութեան պայմանագրով են հաստատուել Մերձաւոր Արեւելքի պետութիւնների սահմանները, այդ թում՝ Հայաստան պետութեան սահմանը, որի վերաբերեալ կայացուել է Իրաւար վճիռ, որը սակայն կեանքի չի կոչուել.

Յօդուած 1.

Վաւերացնել Մերի խաղաղութեան պայմանագիրը, ստորագրուած 10 օգոստոս 1920 թ. Մերում, ինչպէս նաեւ նոյն օրը ստորագրուած լրացուցիչ պայմանագրերի Հաւելուածները:

Յօդուած 2.

Հետապնդել՝ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրոյ Վիլսոնի Իրաւարար վճռի Պաշտօնավարութեան հրամանի իրականացման գործընթացը, ստորագրուած 22 նոյեմբեր 1920 թ.:

Յօդուած 3.

Սոյն օրէնքի կրկնօրինակն ուղարկել Ֆրանսիայի Հանրապետութեան Կառավարութիւն:

Յօդուած 4.

Սոյն օրէնքը ուժի մէջ է մտնում ստորագրման պահից:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ  
24 յունիս 2016 թ.

### Օ Ր Է Ն Ք

«Ծովային Իրաւունքի մասին» Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Համաձայնագիրը  
(Կոնուենցիայ) վաւերացնելու մասին, ստորագրուած 10 դեկտեմբերի 1982 թ.՝

Մոնտէգո-Բէյ քաղաքում,

եւ 29 յուլիսի 1994 թ. «Ծովային Իրաւունքի մասին» Միաւորուած Ազգերի  
Կազմակերպութեան Համաձայնագրի (Կոնուենցիայ) XI մասի համաձայնութեան  
իրականացման վերաբերեալ»

Ընդունուած է՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից,  
8 օգոստոս 2016 թ.:

Ղեկավարուելով ծովային իրաւունքին վերաբերող բոլոր հարցերը փոխըմբռնման եւ համագործակցութեան ոգով կարգաւորելու ցանկութեամբ եւ գիտակցելով սոյն Համաձայնագրի (Կոնուենցիայ)՝ որպէս խաղաղութեան, արդարութեան եւ աշխարհի բոլոր ժողովուրդների համար առաջադիմութեան ապահովման գործում կարեւոր ներդրումի պատմական նշանակութիւնը, նկատի ունենալով, որ 1958 եւ 1960 թուականներին ժնեւում կայացած ծովային իրաւունքի վերաբերեալ Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան խորհրդաժողովներից յետոյ տեղի ունեցած զարգացումներն ընդգծեցին ծովային իրաւունքի նոր, բոլորի կողմից ընդունելի Համաձայնագրի (Կոնուենցիայ) մշակման անհրաժեշտութիւնը,

գիտակցելով, որ ծովային տարածութեան հիմնախնդիրները սերտօրէն փոխկապակցուած են եւ պէտք է դիտուեն որպէս մէկ ամբողջութիւն,

ճանաչելով սոյն Համաձայնագրի (Կոնուենցիայ) միջոցով հաստատելու եւ իրապէս արժեւորելու բոլոր պետութիւնների ինքնիշխանութեան ցանկութիւնը, այնպիսի մի իրաւական ռեժիմ սահմանելու ծովերի ու օւկիանոսների համար, որը կնպաստի միջազգային հաղորդակցութիւններին եւ ծովերն ու օւկիանոսները խաղաղ

նպատակներով օգտագործելուն, դրանց պաշարների արդարացի եւ արդիւնաւէտ օգտագործմանը, կենդանի պաշարների պահպանմանը, ծովային միջավայրի հետազօտմանը, պաշտպանութեանը եւ պահպանմանը,

հաշուի առնելով այն փաստը, որ այդ նպատակների նուաճումը կնպաստի արդարացի եւ իրաւահաւասար միջազգային տնտեսական կարգի հաստատմանը, որի պայմաններում հաշուի կ'առնուեն ողջ մարդկայնութեան շահերն ու պահանջները եւ, մասնաւորապէս, ինչպէս ամփամերձ, այնպէս էլ դէպի ծով ելք չունեցող զարգացող պետութիւնների յատուկ շահերն ու պահանջները,

ձգտելով սոյն Համաձայնագրի (Կոնուենցիայ) միջոցով զարգացնել այն սկզբունքները, որոնք ամրագրուած են 1970 թուականի դեկտեմբերի հ. 17 2749 (XXV) բանաձեւում, որում Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Գլխաւոր ասամբլեան հանդիսաւոր կերպով *inter alia* յայտարարել է, որ ծովերի ու օւկիանոսների յատակի շրջանը եւ դրանց ընդերքը՝ ազգային իրաւագործութիւնից դուրս, ինչպէս նաեւ դրանց պաշարները հանդիսանում են մարդկայնութեան ընդհանուր ժառանգութիւնը, որոնց հետախուզումը եւ շահագործումը իրականացում է յանուն ողջ մարդկայնութեան բարեկեցութեան՝ անկախ պետութիւնների աշխարհագրական դիրքից,

վստահ լինելով, որ սոյն Համաձայնագրի (Կոնուենցիայ) միջոցով ծովային իրաւունքի կողմնակցական եւ առաջադիմական զարգացումը կը նպաստեն խաղաղութեան, անվտանգութեան, բոլոր պետութիւնների միջեւ համագործակցութեան եւ բարեկամական յարաբերութիւնների ամրապնդմանը՝ արդարութեան եւ իրաւահաւասարութեան սկզբունքներին համապատասխան, ինչպէս նաեւ աշխարհի բոլոր ժողովուրդների տնտեսական եւ սոցիալական առաջադիմութեանը՝ Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Կանոնադրութեան մէջ ամրագրուած նպատակներին ու սկզբունքներին համապատասխան,

հաստատելով, որ սոյն Կոնուենցիայով չկարգաւորուող հարցերը շարունակում են կարգաւորուել ընդհանուր միջազգային իրաւունքի նորմերով ու սկզբունքներով.

#### Յօդուած 1.

Վաւերացնել «Ծովային Իրաւունքի մասին» Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Համաձայնագիրը (Կոնուենցիայ), ստորագրուած 10 դեկտեմբերի 1982 թ.՝ Մոնտեգո-Բելքադաքում, եւ 29 յուլիսի 1994 թ. «Ծովային Իրաւունքի մասին» Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Համաձայնագրի (Կոնուենցիայ) XI մասի համաձայնութեան իրականացման վերաբերեալ:

#### Յօդուած 2.

Օրէնքի կրկնօրինակն ուղարկել Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան Գլխաւոր Քարտուղարին:

#### Յօդուած 3.

Սոյն օրէնքը ուժի մէջ է մտնում ստորագրման պահից:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ  
9 օգոստոս 2016 թ.

### Օ Ր Է Ն Ք

**«Պետութիւնների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին» Համաձայնագիրը (Կոնուենցիայ) (ստորագրուած 26 դեկտեմբեր 1933 թ., համաամերիկեան պետութիւնների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեւիդէոյի Կոնուենցիայ), որպէս պետութիւնների իրաւունքներ եւ պարտականութիւններ ճանաչելու մասին»**

Ընդունուած է՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից,  
8 հոկտեմբեր 2016 թ.:

Համաձայն՝

- Ռուսաստանի Կառավարութեան Հռչակագրի «Թիրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին»), 13 յունուար 1918 թ.,
- Դաշնակից Տէրութիւնների Գերագոյն Խորհրդի կողմից դէ ֆակտոյ (de facto) Հայաստան պետութեան անկախութեան ճանաչման, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, 19 յունուար 1920 թ.,
- Դաշնակից Տէրութիւնների Գերագոյն Խորհրդի կողմից դէ իւրէ (de jure) Հայաստան պետութեան անկախութեան ճանաչման, Փարիզ, 11 մայիս 1920 թ.,
- ԱՄՆ Սենատի որոշման, որը ճանաչում էր Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը, Թիւ 359, 11 մայիս 1920 թ.,
- Սերի խաղաղութեան պայմանագրի 88-րդ, 89-րդ եւ 93-րդ յօդուածների, 10 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրոյ Վիլսոնի կայացրած Իրաւարար վճռի Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերեալ, 22 նոյեմբեր 1920 թ.,

հաշուի առնելով՝

- «Գաղութացուած երկրներին անյապաղ անկախութիւն շնորհելու մասին» ՄԱԿ-ի Համաձայնագիրը (Կոնուենցիայ), 14 դեկտեմբեր 1960 թ.,
- «Բնիկ ժողովուրդների իրաւունքների մասին» ՄԱԿ-ի Հռչակագիրը, 13 սեպտեմբեր 2007 թ.,

հիմնուելով՝

- Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի հիմնադիր ժողովի որոշման - 17.12.2004 թ.,
- Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդարանի պատգամաւորների ընդունած հռչակագրի - 20.01.2007 թ.,
- Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւն կազմելու մասին հռչակագրի - 04.02.2011 թ.,



- Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի չեզոքութեա նմասին որոշման - 29.03.2011 թ.,
- Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան դրօշի մասին հրամանագրի - 21.10.2011 թ.,
- Արեւմտեան Հայաստանի հայերի ինքնապաշտպանութեան ուժերի ստեղծման մասին հրամանագրի - 26.12.2012 թ.,
- Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին հռչակագրի - 24.05.2013 թ.,
- Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագրի (թիւ 12), Որոշում՝ յիշեցում, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վերաբերեալ, որը հանդիսանում է 1920 թ.-ի Հայկական պետութեան շարունակութիւնը - 23.02.2014 թ.,
- Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան զինանշանի մասին հրամանագրի - 06.04.2015 թ.,

նկատի առնելով՝

«Պետութիւնների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին» Համաձայնագրի (Կոնուէնցիայ) (Մոնտեւիդէոյի Կոնուէնցիայ) 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ եւ 16-րդ յօդուածների պահանջները, որտեղ նշուած են պետութեան յատկանիշները եւ իրաւունքները, որպէս միջազգային իրաւունքի սուբյեկտ.

1-ին յօդուած - մշտական բնակչութիւն, որոշակի տարածք, կառավարութիւն, այլ պետութիւնների հետ յարաբերութիւնների մէջ մտնելու ունակութիւն,

3-րդ յօդուած - պետութեան քաղաքական գոյութիւնը կախուած չէ այլ պետութիւնների ճանաչումից,

6-րդ յօդուած - ճանաչումը հանդիսանում է անխօս եւ անհերքելի,

7-րդ յօդուած - պետութեան ճանաչումը կարող է լինել ուղիղ կամ ըստ կանխադրման,

16-րդ յօդուած - սոյն Համաձայնագիրը (Կոնուէնցիայ) բաց է միանալու այն պետութիւնների համար, որոնք Համաձայնագրի (Կոնուէնցիայ) կողմ չեն հանդիսանում,

Յօդուած 1.

Ընդունել եւ ճանաչել՝ «Պետութիւնների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին» Համաձայնագիրը (Կոնուէնցիայ) (ստորագրուած 26 դեկտեմբեր 1933 թ., համաամերիկեան պետութիւնների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեւիդէոյի Կոնուէնցիայ), որպէս պետութիւնների իրաւունքներ եւ պարտականութիւններ:

Յօդուած 2.

Սոյն օրէնքի կրկնօրինակը ուղարկել Ամերիկեան պետութիւնների կազմակերպութեան գլխաւոր քարտուղարութիւն:

Յօդուած 3.

Սոյն օրէնքը ուժի մէջ է մտնում ստորագրման պահից:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) Նախագահ  
8 հոկտեմբեր 2016 թ.

## ԳԼՈՒԽ V

### ԾՐԱԳՐԱՅԻՆ ՅՕՂՈՒԱՄՆԵՐ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ

#### Ո՞րն է Թուրքիայի Հանրապետության արեւելեան սահմանը հարեւանների հետ

Ահմեդ Դաուրթոլուն ՍՈԻ-24-ի կործանումը համարել է իրաւաչափ: Մասնաւորապէս «ինչպէս տեղեկացնում է Gazeta.ru-ն՝ վկայակոչելով SkyNews-ին, Ա. Դաուրթոլունի խօսքերով՝ Թուրքիան պարտաւոր է եղել արձագանքել իր օդային տարածքի խախտմանը»:

Դաուրթոլուն խեղաթիւրում է փաստերը, որովհետեւ այդ իրաւունքը նրան տուել են միջազգային հանրութեան հիմնական դերակատարներից շատերը: Ահաւասիկ նրան անմիջապէս ձայնակցում է ՆԱՏՕ-ի ղեկավարը. «Russia Today-ը յայտնում է, որ ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղար Սթըյւենբերգի յայտարարութեան համաձայն՝ կառոյցը գտնում է, որ ռուսաստանեան օդանաւը խախտել է Թուրքիայի օդային տարածքը»:

Սակայն պարոնայք, ո՞րն է Թուրքիայի Հանրապետութեան օդային տարածքը եւ դա արդեօ՞ք իրաւաչափ է ցամաքային տարածքին, սահմանին: Փաստերն այլ բան են ասում:

Յիշեցնենք դրանցից մի քանիսը.

-1918 թ. հոկտեմբերի 30-ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ կնքուած Մուդրոսի զինադադարի 16-րդ յօդուածի համաձայն՝ Թուրքիան պարտաւորուում էր իրականացնել. «Հեջասի, Ասիւրի եւ Եմենի, Սիւրիայի եւ Սիջազէտքի բոլոր կայազօրների յանձնումը դաշնակցային հրամանատարութեանը..., Թուրքական զօրքերի դուրս բերումը Կիլիկիայից»:

-1920 թ. Նոյեմբերի 22-ից յետոյ, ԱՄՆ Նախագահ Վուդրոյ Վիլսոնի կայացրած Իրաւարար վճռի համաձայն՝ թիրքական զինուած ուժերը պարտաւոր էին դուրս գալ Արեւմտեան Հայաստանի չորս վիլայեթներից:

Այսու, հաշուի առնելով նաեւ 1920 թ. օգոստոսի 4-ի Կիլիկիայի անկախութեան հռչակման փաստը, ապա ստացում է ամբողջովին հակաիրաւական եւ անօրինական մի գործընթաց, երբ Թուրքիայի Հանրապետութեան զինուած ուժերը

ա) արդէն շուրջ 95 տարի է, ինչ բռնազաւթուած են պահում Արեւմտեան Հայաստանը եւ Կիլիկեան Հայաստանը,

բ) երբ այդ նոյն բռնազաւթուած տարածքներից նորանոր յարձակումների սպառնալիքներ են ստեղծում տարածաշրջանի ժողովուրդների եւ երկրների համար:

Ճիշտ այնպէս, ինչպէս դա պատահեց Քեսապի բռնազաւթման դէպքում, ինչպէս դա տեղի ունեցաւ Ռուսաստանի Դաշնութեան զինուած ուժերին պատկանող ռազմական օդանաւի հետ:

Հետեւաբար, միջազգային յարաբերութիւնների դաշտում խաղացողներին արժե՞ յիշեցնել, որ նրանց իսկ լուռ թողտուութեամբ եւ համաձայնութեամբ են տեղի ունեցել «իրաւաչափութեան խախտումներ», որոնք էլ յանգեցրել են նոր «իրաւաչափ խախտումների» այժմեան աշխարհի բոլոր տաք ու տաքացող կէտերում, այդ թւում՝ Բէյրութում, Սինայում, Փարիզում, Մայիում...

Եւ արժե՞ արդեօք հիմա Եւրոպայումնտի պատգամաւորներին յիշեցնել, որ նրանք նոյնքան մեղսակցութիւն ունեն սոյն իրադարձութիւնների համատեքստում, երբ 1987 թ. յունիսի 18-ին ընդունելով «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւը այնտեղ նշում էին, թէ Եւրոպական պառլամենտը «գտնում է, որ ողբերգական իրադարձութիւնները, որ տեղի ունեցան 1915-1917 թուականներին Օսմանեան կայսրութեան տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանութիւն, համաձայն «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Համաձայնագրի (Կոնուէնցիայ), ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Խորհուրդի կողմից 1948 թուականի դեկտեմբերի 9-ին: Նշում է միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարուել Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան ողբերգութեան համար եւ ամենայն հաստատակամութեամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձութիւնների ճանաչումը, որպէս ցեղասպանութեան՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրաւական կամ նիւթական որեւէ պահանջի այսօրուայ Թուրքիայի նկատմամբ»:

Ի՞նչպէս էր անդրադառնալու այս ոչ իրաւաչափ որոշումը յետագայում... Ի՞նչպէս էր անդրադառնալու այն ոչ իրաւաչափ որոշումը, երբ Թուրքիայի Հանրապետութեանը թոյլ տրուեց բռնազաւթել Արեւմտեան Հայաստանը, ապա Կիլիկեան Հայաստանը, ապա Ալեքսանդրեթի սանջակը, ապա յետագայում անպատիժ ոչնչացնել հայկական պատմաճարտարապետական ու քաղաքակրթական հետքը Հայաստան աշխարհում եւ նրան յարակից տարածքներում... Եւ անպատիժ ժխտել Հայերի ցեղասպանութեան իրողութիւնը, այդպիսով իրականացնել նոր ցեղասպանութեան քարոզչութիւն: Ի՞նչպէս էր անդրադառնալու... Եթէ ոչ բումերանգի հետագծով:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետականաստեղծ կառոյցները 2012-2015 թթ. ընթացքում բազմիցս դիմել են ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդին եւ Սեւրի խաղաղութեան դաշնագիրը ստորագրած պետութիւններին Արեւմտեան Հայաստանի (ներառեալ Կիլիկիայի) տարածքը ապառազմականացնելու առաջարկով:

Առաջարկը հիմնաւորուել է նաեւ նրանով, որ 2011 թ. Մարտի 29-ին Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը որոշում է ընդունել «Արեւմտեան Հայաստանի հայերի եւ Արեւմտեան Հայաստանի Մշտական, զինուած, դրական չեզոքութեան մասին», ինչը նշանակում է, որ Թուրքիայի Հանրապետութեան զինուած ուժեր չեն կարող լինել նուազագոյնը վիխտնեան Իրաւարար վճռով Հայաստանին յատկացուած այդ տարածքներում:

Առաջարկուել է սկսել միանգամայն իրաւական եւ օրինական (եւ իրաւաչափ) մի գործընթաց, որի նպատակն է լինելու Թուրքիայի Հանրապետութեան զարթիչ ուժերի դուրս բերումը Հայաստանի բռնազարթուած տարածքներից, մասնաւորապէս Արեւմտեան Հայաստանից եւ Կիլիկեան Հայաստանից:

Արեւմտեան Հայաստանի հայերը՝ իրենց ինքնութեան, բնիկութեան, քաղաքացիութեան եւ պետականաստեղծ իրաւասութիւնների համաձայն, վճռական են պաշտպանելու իրենց իրաւական-քաղաքական բոլոր իրաւունքները Արեւմտեան Հայաստանի նկատմամբ, այդ թում՝ տարածքի վերջնական ապառազմականացման՝ զարթիչ ու օտար ուժերից:

Այդպէս միայն կարող են իրաւականութիւնը եւ իրաւաչափութիւնը համապատասխանել, այլապէս բոլոր ճանապարհները չէ որ տանում են դէպի խաղաղութիւն, խաղաղ համակեցութիւն եւ ազգամիջեան ու միջպետական յարաբերութիւնների բնականոն զարգացում աշխարհում:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան  
Լրատուական Բաժին  
25.11.2015 թ.

**Հայկական Հարցը եւ Թուրքիոյ նոր-օսմանական քաղաքականութիւնը,  
մարտահրաւերներ եւ սպառնալիքներ**

(Յատուկ զեկոյց Մերձաւոր Արեւելքի հարցով «REGNUM» Ռուսաստանի դաշնային լրատուական գործակալութեան կազմակերպած «Թուրքիոյ վարած ներկայի նոր-օսմանական քաղաքականութիւնը՝ մատահրաւերներ ու սպառնալիքներ» անուանումով միջազգային խորհրդածողովին, Ռուսաստանի, Հայաստանի, Մուրիոյ, Իրանի, Թուրքիայի, Իրաքի եւ Իսրայէլի ճանչցուած քաղաքագէտներու եւ փորձագէտներու մասնակցութեամբ:)

Թուրքիայի Հանրապետութեան վարած ներկայ նոր-օսմանական քաղաքականութիւնը՝ ըստ էութեան, Օսմանեան կայսրութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան 1894-1923 թթ.-ուն վարած քաղաքականութեան կրկնութիւնն է, որն ալ սպառնալիքներ ու մարտահրաւերներ պարունակող խիստ վտանգաւոր քաղաքականութիւն մըն է Թուրքիայի Հանրապետութեան մէջ ապրող ժողովուրդներուն եւ Մերձաւոր արեւելեան տարածաշրջանի երկիրներուն եւ ժողովուրդներուն համար:

Օսմանեան կայսրութիւնը պատմութեան մէջ յայտնի է որպէս ժողովուրդներու հանրաբանտ: Քանի որ Օսմանեան կայսրութիւնը հարիւրամեակներ շարունակ արգելափակած էր կայսրութեան տարածքին ապրող ժողովուրդներու ազատութեան եւ քաղաքակրթական զարգացման հնարաւորութիւնն ու բնական իրաւունքը: Սակայն իրավիճակը շատ աւելի սրուեցաւ ու վատթարացաւ՝ երբ 19-րդ դարու առաջին կեսին

սկսեալ, կայսրութիւնը որգեգրեց նախ պանօսմանիզմի, ապա 1873-1874 թթ.-էն նաեւ պանթիւրքիզմի քաղաքականութիւնը:

Սա հանգեցուց կայսրութեան մէջ ապրող ժողովուրդներու՝ առաջին հերթին քրիստոնէաներու, ցեղասպանութեանն ու բռնագաղթին: 1916-1923 թթ.-ուն ցեղասպանութեան ու բռնագաղթի ենթարկուեցան յոյները, 1914-1923 թթ.-ուն ասորիները, իսկ ամբողջ 1894-1923 թթ.-ուն ընթացքին՝ հայերը: Աւելի քան 30 տարի տեւած, եւ 19-րդ դարու վերջն ու 20-րդ դարու սկիզբը ընդգրկած մեծագոյն յանցագործութեան հետեւանքով՝ ինչը իրականացուցին թիւրքական երեք զիւար յաջորդող կառավարութիւնները, սուլթանական, երիտթիւրքական, քեմալական, հազարամեակներ շարունակ Բնօրբան Հայրենիքի՝ Հայկական Լեռնաշխարհի մէջ ապրող աւելի քան 1.5 միլիոն հայեր ցեղասպանութեան ենթարկուեցան, նոյնքան ալ բռնագաղթի ու արքայի, իսկ հարիւր հազարաւորներ՝ այդ շարքին կանայք ու երեխաներ, բռնի մահմեդականացման:

Հայերու ցեղասպանութիւնը առաջին անգամ դատապարտեցին Մեծն Բրիտանիան, Ֆրանսան եւ Ռուսաստանը՝ 1915 թ.-ի Մայիս 24-ին, զայն որակելով որպէս «Յանցագործութիւն՝ մարդկայնութեան դէմ», տեղեկացնելով, որ անոր «կազմակերպիչները եւ իրականացնողները ենթակայ պիտի ըլլան քրեական պատասխանատուութեան»: Յետագային աշխարհի յառաջադէմ շարք մը պետութիւններ ճանչցան ու դատապարտեցին թիւրքական իշխանութիւններու հրեշաւոր յանցագործութիւնները: Ճանաչման ու դատապարտման այդ գործընթացը կը շարունակուի նաեւ այսօր: Յատկանշական է, որ նոյնիսկ թիւրքական պետութիւնը՝ ռազմական յատուկ ատեանի միջոցով, Կոստանդնուպոլսի մէջ 1919-1920 թթ.-ուն իրականացուց երիտթիւրքական կառավարութեան պարագլուխներու դատապարտութիւնը՝ որոնցմէ շատերուն համար մահուան դատաւճիռներ արձակեց:

Եթէ 19-րդ դարու վերջաւորութեան ծնունդ առաւ Հայկական Հարցը՝ ապա հայկական իրաւունքներուն շուրջ, այդ շարքին՝ Հայաստան պետութեան վերաբերեալ որոշումները կայացուեցան 20-րդ դարու սկիզբին, 1918-1920 թթ.-ուն:

Յիշենք զանոնք.

- 1918 թ.-ի Յունուար 11-ին Ռուսաստանի Կառավարութիւնն ընդունեց «Թիւրքահայաստանի մասին» Հռչակագիրը,
- 1920 թ.-ի Յունուար 19-ի Փարիզի Վեհաժողովի Ժամանակ՝ Դաշնակից Տէրութիւններու Գերագոյն Խորհուրդը դէ ֆակտո (de facto) ճանչցաւ Հայաստան պետութեան անկախութիւնը,
- 1920 թ.-ի Մայիս 11-ին՝ Դաշնակից Տէրութիւններու Գերագոյն Խորհուրդը դէ Յուրե (de jure) ճանչցաւ Հայաստան պետութեան անկախութիւնը,
- 1920 թ.-ի Օգոստոս 10-ին՝ կնքուեցաւ Սերի խաղաղութեան պայմանագիրը, որու 88-93-րդ յօդուածները կը վերաբերին Հայաստանին,
- 1920 թ.-ի Նոյեմբեր 22-ին՝ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Ուիլսոնը կայացուց Իրաւարար վճիռ, Հայաստանի եւ Թուրքիայի սահմանին վերաբերեալ:

Ներկայ Թուրքիայի Հանրապետության իշխանությունները ո՛չ միայն կը շարունակեն վարել Հայերու ցեղասպանության ժխտողականության քաղաքականություն, ո՛չ միայն կը մերժեն ճանչնալ հայերուն եւ Հայաստան պետութեան 1918-1920 թթ.-ու ընթացքին տրուած իրաւունքները՝ այլեւ կրկին որդեգրելով ու շարունակելով նախորդ թիրքական կառավարութիւններու պանօսմանիզմական ու պանթիրքիզմական քաղաքականութիւնը, նոր սպառնալիքներ ու մարտահրաւերներ կը ստեղծեն հանրապետութեան մէջ եւ անկէ դուրս՝ տարածաշրջանի մէջ ապրող ժողովուրդներուն եւ պետութիւններուն համար:

Թուրքիայի Հանրապետութեան նոր-օսմանական քաղաքականութեան սպառնալիքն ամբողջութեամբ ի յայտ եկաւ՝ Մերձաւոր Արեւելքի Իրաքեան եւ Սուրիական պատերազմներուն ժամանակ, երբ հանրապետութեան իշխանութիւնը սկսեցաւ բացայայտ աջակցիլ Սուրիական ընդդիմութեան, այդ շարքին՝ ծայրահեղ ընդդիմադիր խմբաւորումներուն: Ատոնք հանգեցուցին՝ Սուրիոյ հիւսիսային տարածքներ ներխուժման, Հալէպի մէջ հումանիտար աղէտի բռնկման, բռնի տեղահանուածներու հարցով Եւրոպան ահաբեկելու գործողութիւններուն:

Եւ միանգամայն ճիշդ նշեց Ռուսաստանի Նախագահ Վլադիմիր Պուտինը, երբ 24 Նոյեմբեր 2015 թ.-ին Սուրիոյ մէջ ռուսական ռազմատիեզերական ուժերու ումբակոծիչ ՍՈՒ-24-ի խոցումը Թուրքիոյ կողմէ՝ որակեց որպէս «...հարուած, որ թիկունքէն մեզի հասցուցին ահաբեկիչներու աջակիցները»:

Յատկանշական է, որ 9 Նոյեմբեր 2016 թ.-ին Եւրոյան ձնաժողովն իր ամենամեայ զեկոյցին մէջ Թուրքիային կը մեղադրէ այն բանով, որ այդ երկրին մէջ կը տարածուին յայտարարութիւններ՝ որոնք ատելութիւն կը սերմանեն հայերու նկատմամբ, կը հրապարակուին ելոյթներ ու սպառնալիքներ՝ ուղղուած բնիկ ժողովուրդներու, ազգային եւ կրօնական փոքրամասնութիւններու դէմ: Առանձնապէս կը շեշտուի, որ «Թուրքիոյ իշխանութիւնները կը շարունակեն կոշտ արձագանգել Հայերու ցեղասպանութեան ճանաչման փաստերուն՝ այս կամ այն երկրի մէջ»: Եւրոյան ձնաժողովը Թուրքիային նաեւ կը մեղադրէ 2016 թ.-ին Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած Ապրիլեան չորսօրեայ պատերազմին բացայայտօրէն Ատրպէյջանին աջակցելուն համար: Եւ «Այս ամէնը խորին մտահոգութիւններ կ'առաջացնէ», - կ'ըսէ զեկոյցը:

Ինչպէս նաեւ Արցախեան պատերազմի օրերուն՝ որտեղ Թուրքիայի Հանրապետութեան ներկայ դեկավարութիւնը փորձելով շեղել համաշխարհային հանրութեան ուշադրութիւնն իր իրական նպատակներէն ու գործողութիւններէն, ինչպէս նաեւ անխուսափելի պատասխանատուութենէն՝ կը ձգտէր Ատրպէյջանի Հանրապետութեան կողմէ սանձազերծուած Ապրիլեան չորսօրեայ նախայարձակման միջոցով մոռացութեան տալ այդ խնդիրները, ու փոխադրել ՀՀ-ի եւ Արցախի սահմաններ: Աւելորդ է ըսել, որ ատոնք չեն յաջողիր իրականացուիլ՝ եւ ամէն ինչ կ'աւարտուի անտեղ ուրկէ սկսած է, այդ շարքին՝ Արեւմտեան Հայաստանի մէջ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան հաստատմամբ:

Մինչդեռ պետք չէ մոռնալ, որ 1920 թ.-ին կնքուած Սեւրի խաղաղութեան պայմանագիրը՝ ըստ էութեան խաղաղութեան պայմանագիր է, եւ զայն վաւերացնելու, անոր բոլոր որոշումներն յարգելու եւ իրականացնելու միջոցով միայն՝ հնարաւոր է Մերձաւոր Արեւելքի մէջ հաստատել կայուն խաղաղութիւն, ու իրական համագործակցութիւն:

Սեւրի խաղաղութեան պայմանագիրի առաքելութիւնը աւարտուած չէ՝ տարածաշրջանին համար: Հայերու, ասորիներու, յոյներու, ալեիներու, արաբներու, քրդերու եւ նոյնիսկ թիւրքերու իրաւունքները յարգելով եւ զանոնք իրականացնելով միայն՝ հնարաւոր է իրականացնել այդքան սպասուած խաղաղութիւնն ու խաղաղ համակեցութիւնը տարածաշրջանին մէջ, այդ շարքին՝ հայերուն եւ Հայաստան պետութեան վերաբերող Սեւրի խաղաղութեան պայմանագիրի յօդուածներն ու Ուիլսընեան Իրաւարար վճիռը կեանքի կոչելու միջոցով:

Այլ ճանապարհներ՝ որոնց շարքին նոր-օսմանիզի քաղաքականութեան շարունակումը Թուրքիայի Հանրապետութեան կողմէ, խիստ վտանգաւոր սպառնալիքներ ու մարտահրավերներ կը պարունակեն տարածաշրջանին ապրող բոլոր ժողովուրդներուն համար:

Տակաւին հնարաւորութիւնն ունինք խուսափելու անկէ, ունինք հնարաւորութիւնը յարգելու իրարու իրաւունքները, եւ խաղաղ ճանապարհով կեանքի կոչելու զանոնք: Շտապենք՝ քանզի վաղը ուշ պիտի ըլլայ: Մենք կը հաւատանք, որ այս պարագային՝ առողջ բանականութիւնն ու բարի կամքը պիտի յաղթեն:

Արմէն Տէր-Սարգսեան՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

17.11.2016 թ.

**Հայ ժողովուրդի մշակութային ու հոգեւոր արժէքներու իւրացումն ու ոչնչացումը՝ եւ  
Թիւրքիոյ նոր-օսմանական քաղաքականութիւնը,  
մարտահրաւերներ եւ սպառնալիքներ**

(Յատուկ զեկոյց՝ Մերձաւոր Արեւելքի հարցով «REGNUM» Ռուսաստանի դաշնային լրատուական գործակալութեան կազմակերպած «Թիւրքիոյ վարած ներկայիս նոր-օսմանական քաղաքականութիւնը՝ մարտահրաւերներ ու սպառնալիքներ» անուանումով միջազգային համագումարին, Ռուսաստանի, Հայաստանի, Սուրիոյ, Իրանի, Թիւրքիոյ, Իրաքի եւ Իսրայէլի ճանչցուած քաղաքագետներու եւ փորձագետներու մասնակցութեամբ:)

Թիւրքիոյ նոր-օսմանական քաղաքականութեան ժամանակակից ակնյայտ արտայայտութիւններէն մէկը՝ հայ ժողովուրդի հոգեւոր մշակութային արժէքներու իւրացումն ու ոչնչացումն է: Քաղաքականութիւն՝ զոր տեւական ժամանակ իրականացուցին թիւրքական կառավարութիւնները, ըլլան սուլթանական, երիտթիւրքական կամ քեմալական: Այն արտայայտուեցաւ սարսափելի ձեւերով՝

յատկապէս Հայերու ցեղասպանութեան տարիներուն, 1894-1923 թթ.-ուն իրականացուած թիրաքական կառավարութիւններուն կողմէ՝ Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան տարածքին:

Եւ քանի որ մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ կատարուած այդ սարսափելի յանցագործութեան դատապարտումն ու վնասուց հատուցումը Միջազգային ընկերակցութեան կողմէ ամբողջութեամբ չիրականացաւ՝ ապա ցեղասպանութիւնը շարունակուեցաւ, եւ կը շարունակուի մինչեւ այսօր՝ ընդունելով զանազան այլ ձեւեր, որոնց շարքին՝ նաեւ որպէս մշակութային ցեղասպանութիւն:

Այս տեսանկիւնով է, որ պէտք է ուշադրութիւն դարձնել քաղաքակրթական այդ ժառանգութեան յետագայ ճակատագիրին, ինչն այսօր յաճախ կ'անուանուի «բնօրրան» նկատի առնելով, որ այն կ'առնչուի անոնց՝ որոնցմէ սկիզբ կ'առնէ մեր աշխարհի ոգեղէնութիւնը, մարդասիրութիւնն ու մշակոյթը:

Հայ Ժողովուրդին պատկանող հնագոյն քաղաքակրթութեան, մշակութային ու հոգեւոր ժառանգութեան զգալի մասը՝ ցաւօք սրտի այսօր կը գտնուի այն պետութեան ձեռքին, ով ինքը իրականացուցած է չարագործութիւնը, ով մտածուած կերպով աշխարհին ի ցոյց դրած է իր բարբարոսական վերաբերմունքը այլ ժողովուրդի մշակոյթի եւ այդ արժէքները ստեղծողի նկատմամբ:

Ստիպուած ենք արձանագրել, որ Թիրքիայի նոր-օսմանական քաղաքականութիւնը՝ շարունակաբար եւ տեւական «զարգացնելով» երիտթիրքերու աւանդոյթները, հետեւողականօրէն եւ մեթոդաբար կը շարունակէ ոչնչացնել հայ ժողովուրդի մշակութային եւ հոգեւոր ժառանգութիւնը:

Ցեղասպանութեան տարիներուն՝ 19-րդ դարու վերջերէն մինչեւ 20-րդ դարու սկիզբը, բնիկ հայ բնակչութեան հիմնական մասի ֆիզիկական ոչնչացումէն յետոյ սկիզբ առած է հետեւողական գործընթաց մը՝ արմատախիլ ընելու այն ամէնը, որ կար եւ ընդունուած էր համարել հայկական:

Անցած դարու 28 թ.-էն սկսեալ անուանափոխութեան ենթարկուած է այն ամէնը՝ որ պատմական է ու ազգային, եւ Արեւմտեան Հայաստանի տարածքին վրայ է: Հայկական տեղանուններուն աւելի քան 90%-ը օտարուած է, եւ Արեւմտեան Հայաստանի աշխարհագրական անուանումները փոփոխուած են:

Հայ ժողովուրդին պատկանող հարիւրաւոր ճարտարապետական յուշարձաններ՝ վերածուած են մզկիթներու: Աւերակուած է այն ամէնը՝ որն ունի հայկական ծագում եւ կամ կ'առնչուի հայերուն, հայկական մշակոյթին ու պատմութեան: Յուշարձանները, եկեղեցիները, ճարտարապետութեան գլուխգործոցները՝ որպէս թիրախ կը գործածուին թիրաքական բանակի զինավարժութիւններուն ժամանակ, ինչը վայրենաբարոյ է ժամանակակից որեւէ պետութեան համար, ի հարկէ եթէ իօսքը չի վերաբերիր ահաբեկչական խմբաւորումներու գործունէութեան, ինչպէս ԻՊ-ինն է: Այն սակաւաթիւ



Եկեղեցիները որոնք տակաւին կանգուն մնացած են՝ կը գործածուին որպէս ախոռ, պահեստ կամ բանտ:

Կը ստեղծուին նոր, եւ կը կեղծուին այլազան պաշտօնական փաստաթուղթեր՝ որոնք կը խրախուսեն կեղծ գիտական հրատարակութիւններու ծնունդը, որոնց մէջ հայոց պատմութիւնը եւ մշակոյթը կը կեղծուին եւ կամ միտումնաւոր կերպով կ'անտեսուին:

Ստեղծուած է «տուեալներու» ամբողջ համակարգ մը՝ այսպէս կոչուած «օրինական վանդալիզմի», ոսկիի անօրինական որոնումներու եւ պեղումներու: Թիրքիոյ կառավարութեան հովանաւորչութեամբ՝ «ոսկեխոյզներն» առանց բացառութեան կ'ոչնչացնեն ամէն ինչ: Այն յուշարձանները որոնք Թիրքիային չեն պատկանիր՝ անոնք մարդկութեան սեփականութիւնն են: Անոնց կորուստը անփոխարինելի է: Հայկական յուշարձաններու ոչնչացումն ու իւրացումը՝ Հայերու ցեղասպանութեան շարունակութիւնն է: Ֆիզիկական ոչնչացման հետեւած է մշակութային ցեղասպանութիւնը:

Բազմաթիւ օրինակներէն մէջբերենք մէկ քանին:

Ներքին լեւոն վրայ հայ հին աստուածներու պանթէոն է: Այնտեղ են տեղադրուած հայոց աստուածներէն՝ Արամազդի, Միհրի, Վահագնի, Անահիտի, Աստղիկի 8-9 մետր բարձրութեամբ արձանները: Անոնց շարքին Անտիոքոս առաջինի արձանը տեղադրուած հայ Երուանդունիներու տոհմէն այդ արքայի յիշատակին, ն.ք. 62 թ.-ին: Այսօր թիրքերը իւրացուցեր են այդ ամէնը՝ եւ զանոնք կը ներկայացնեն որպէս իրենց սեփականը:

Հայկական լեռնաշխարհին մէջ Պորտասարը (Գեօրեկլի Թեփե-թուրք.) տաճարական համալիր է, որ կը ներառէ նաեւ աստղադիտարան: Մեծ եւ հնագոյն մեզալիթեան կառոյցներէն է, շուրջ 12 հազար տարեկան: Պորտասարը մեր ժամանակի ամենակարեւոր յայտնագործութիւններէն է: Այն՝ մարդու ձեռքով կառուցուած առաջին տաճարն է: Եւ այն նոյնպէս թիրքական ձեռով անուանափոխուած է:

Անի քաղաքը հայկական «ոսկեդարի» յուշարձան է: Անիի հայկական թագաւորութեան հնագոյն մայրաքաղաքը: «1001» եկեղեցիներու քաղաքէն մնացած են ակերակներ՝ եւ նոյնիսկ զանոնք կ'աւերեն վանդալները: Թիրքերն անուանափոխած են Անին Անը-ի՝ եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջոցով կը փորձեն զայն ներկայացնել որպէս Թիրքիոյ մշակութային ժառանգութիւն:

Անոնք ձեռք բարձրացուցած են նաեւ Աստուածաշնչեան արժէքներու վրայ՝ հայերու հիմնական խորհրդանիշներէն մէկուն, Արարատ լեռան, զոր անուանափոխած են Աղըր:

Համաձայն 1914 թ.-ի տուեալներու՝ հայկական եկեղեցիներու եւ եկեղեցական համալիրներու ընդհանուր թիւն Արեւմտեան Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան մէջ կազմած է 2549 (որոնց շարքին IV-V դդ.-ու վաղ քրիստոնէական յուշարձանները): Անոնց մեծ մասը թալանուած, հրկիզուած եւ ակերուած է ցեղասպանութեան ժամանակ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ.-ի տուեալներուն համաձայն՝ 1923 թ.-էն յետոյ պահպանուած 913

պատմաճարտարապետական յուշարձաններին 464-ը հիմնայատակ ոչնչացուած են, 252-ն աւերակ վիճակ ունի, 197-ն հիմնական վերանորոգման կարիք ունի: Այսօր արդէն գրեթէ ոչինչ մնացած է վերականգնելու, Թիւրքիան զանոնք բոլորը ոչնչացուցած է ծրագրաւորուած կերպով:

Որպէս նոր-օսմանիզմի քաղաքականութեան ժամանակակից դրսեւորում կարելի է դիտել Սսի Կաթողիկոսական համալիրը կաթողիկոսարանին վերադարձնելու մերժումը, ինչը անոնք իւրացուցած են 20-րդ դարու ցեղասպանութիւնն իրականացնելու միջոցով:

Թիւրքիոյ ներկայիս քաղաքականութիւնը հասցուցած է անոր, որ արեւմտահայերէնը յայտնուի ոչնչացման վտանգի տակ գտնուող լեզուներու շարքին, քանի որ Արեւմտեան Հայաստանէն բնագաղթուածները հնարաւորութիւն չունին պատմական հայրենիք վերադառնալու եւ մայրենին այնտեղ գործածելու եւ զարգացնելու, որպէս իրենց բնական իրաւունքի արտայայտութիւն:

Թիւրքիոյ վարած նոր-օսմանականութեան ու ձուլման քաղաքականութեան յատկանշական օրինակ է անոնց վերաբերմունքը Համշէնահայերու նկատմամբ, որոնք հիմնապէս ենթարկուեցան բռնի մահմեդականացման: Շատերը կորսնցուցին իրենց արմատներն ու ազգային ինքնութիւնը, չեն ընդունիր իրենց հայկականութիւնը, իրենք զիրենք կ'անուանեն «հեմշիլներ»: Հմայեական աղօթքներ ասելով հայերէնով անոնք համոզուած են, թէ համշէնական են՝ թիւրքերէն լեզուով:

Իսկ ճարտարապետական գոհարները... թիւրքերը առանց ամօթի կ'արձանագրեն որպէս իրենց ձեռքբերումը: Եւ մենք պէտք է օգտագործենք բոլոր հնարաւորութիւնները՝ օգնելու մեր Համշէնահայ եղբայրներուն եւ քոյրերուն, որ վերադառնան իրենց հայկական արմատներուն:

Հայկական գորգերը թիւրքերը կը ներկայացնեն իբրեւ իրենցը, նոյնիսկ եթէ կը բերեն Հայաստանէն եւ կամ կը կրկնօրինակեն զանոնք, անկախ հայկական խորհրդանիշներէն, գոյներէն եւ այլն..., պնդելով թէ ներկայացուածը թիւրք ժողովուրդի ձեռքբերումն է:

Անոնք այնքան անսկզբունքային ու անշնորհք են՝ որ իւրացուցած են մեր հայրենասիրական «Զարթնիր լառ» երգը, աշխարհիս երեսին միակ օրօրոցային երգը՝ ուր մայրն իր որդիին քնացնելու փոճարէն՝ կոչ կ'ընէ պաշտպանելու Հայրենիքը, երգ՝ որով մեր ֆեդայիներն ու մարտիկները կռուի ելած են: Թիւրքական ֆուտբոլային ակումբը զայն իւրացուցեր է՝ եւ կը գործածէ որպէս հիմն, բնականաբար փոխելով բառերն ու լեզուն թիւրքերէնի:

Հնագոյն հայկական խոհանոցը նոյնպէս «կողոպտուած» է հարեւաններու կողմէ, ինչը դիրքին է ապացուցել՝ եթէ անդրադառնանք ակունքներուն, ուսումնասիրելով թէ ինչն է ինչպէս պատրաստուած է կերակուրը:

Բերենք հացահատիկի օրինակը, թէեւ կրնանք այլ օրինակներու ալ դիմել: Հացահատիկի 3-4 տեսակներ կը համարուին բուն հայկական: Յայտնի է, որ հացահատիկի հայրենիքը

Հայկական լեռնաշխարհին է: Հայերն են, որ հինէն ի վեր զբաղուել են հացահատիկի մշակմամբ: Բլդուր, փոխինձ, կորկոտ, ձաւար, հաճար... Եւ այս ամէնը այլազան ձերերով մշակելով՝ խմորի հետ կ'օգտագործուին հայկական խոհանոցէն ներս: Բոլոր այն կերակրատեսակները, որոնք թիրքերն ու այլ հարեւաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «օժանդակութեամբ» կը ձգտին իւրացնել՝ իրականութեան մէջ բուն հայկական ստեղծագործութիւն են, որովհետեւ ունին պատրաստման մաքուր հայկական եղանակ թոնիրի մէջ, եւ ունին հայկական անուանումներ: Այդ ամէնը կը վերաբերին նաեւ լաւաշին ու մատնաքաշին:

Ինչպէս կը կանխագուշակեն շատերը՝ «քաշիկ» (քաշել խօսքէն) ազգային կերակուրէն յետոյ, թիրքերը կը ցանկան իւրացնել թոնիրը, որն Արեւին երկրպագելու ժամանակներէն ի վեր հայերու համար Արեւի խորհրդանիշն է երկրի վրայ: Թոնիրն ունի քանի մը գործառոյթ բացի անկէ որ վատարան է կերակուր պատրաստելու, նաեւ կը տաքցնէ կացարանը, կը բուժէ հիւանդութիւններ, եւայլն:

Այն ամէնը ինչ ներկայացուցաւ վերը՝ կը կատարուի ցուցադրելու համար որ թիրքերը բնակչութեան գլխաւոր տարրն են Հայկական լեռնաշխարհի: Սակայն որքան ալ ջանան կեղծել իրենց պատմութիւնը, վճարել ամենատարբեր լոբբիստական կազմակերպութիւններուն՝ միեւնոյնն է, չ'ստացուիր այն ընել, որովհետեւ պատմութիւնը կը յիշէ քոչուորներուն՝ որոնք բռանգրաւեցին այլոց հողերը, իւրացուցին անոնց ունեցուածքն ու մշակութային արժեքները:

Թիրքիայի Հանրապետութիւնը ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ է: Ժամանակն է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ու այլ միջազգային կազմակերպութիւններ՝ պահպանեն պատմական արդարութեան սկզբունքները, իրաւունքները, բարեկրթութեան կանոնները, եւ ոչ այնպէս՝ ինչպէս հիմա, գործածելով երկակի սկզբունքներ: Յուսով ենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլ միջազգային կազմակերպութիւններու բարեխիղճ մասնագետները՝ կը կասեցնեն շարունակուող վանդալիզմը, եւ կը սկսին աշխատիլ հաճոյք ստանալով իրական պատմագրութեան ուսումնասիրութենէն՝ այլ ոչ թէ մտացածին, կամ իրենց որպէս իրական ներկայացուած կեղծիքներէն: Սա ոչ միայն Հայ ժողովուրդի պատմութիւնն է՝ այլեւ համաշխարհային, ամբողջ մարդկութեան հոգեւոր մշակութային ժառանգութիւնն է:

ՅուլիաԳիւլոյեան՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Մշակոյթի յանձնաժողովի նախագահ

17.11.2016 թ.

**Մերձաւոր Արեւելքում եւ Արեւմտեան Հայաստանում ապրող հայութեանը պէտք է ղիտել որպէս Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան չորրորդ բաղադրիչ**

(Ելոյթ լրագրողների համահայկական 8-րդ համաժողովում)

Հայաստան - Արցախ - Սփիւռք՝ 25-ամեայ համագործակցութիւնը բաւական լուրջ յաջողութիւններ է արձանագրել ՀՀ պետականութեան ամրապնդման, Արցախի հայութեան ազատ ապրելու եւ ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան, Արցախի ու ՀՀ-ի անվտանգութեան ու պաշտպանութեան բաղադրիչի բարձրացման, ՀՀ-ի ու Արցախի տնտեսութեան, կրթութեան, առողջապահութեան, մշակոյթի ոլորտներում կատարուած կարեւոր ներդրումների եւ աջակցութեան, ՀՀ-ի ու Արցախի ենթակառուցուածքների վերականգման ու զարգացման, ներքին սոցիալական ճնշման թուլացման եւ այլ ոլորտներում, որոնք նոյնիսկ այս պահին դժուար է ամբողջութեամբ թուարկել: Անհրաժեշտ է միայն շնորհակալութիւն յայտնել այս ուղղութեամբ ջանք թափած ու յաջողութիւններ արձանագրած անհատներին, աջակիցներին, հովանաւորներին, իմբերին եւ ազգային-պետական կառոյցներին:

Վստահ ենք, որ Հայաստան - Արցախ - Սփիւռք՝ 25-ամեայ համագործակցութեան հանրագումարի արդիւնքների վերաբերեալ ուշադրութեան արժանի դեռ շատ ելոյթներ կը հնչեն այս համաժողովի ընթացքում, այդ իսկ պատճառով մենք ցանկանում ենք հանդէս գալ հետեւեալ առաջարկութեամբ:

Առաջարկում ենք նկատի առնելով վերջին տասնամեակներին Մերձաւոր Արեւելքում եւ յարակից տարածքներում առկայ նոր իրողութիւններն ու մարտահրաւերները Հայաստան - Արցախ - Սփիւռք եռամիասնութեանը գումարել Մերձաւոր Արեւելքի հայութեան կենսագործունէութեան նոր իրականութիւնը եւ Արեւմտեան Հայաստանում ապրող հայերի գործօնը:

Բանն այն է, որ Մերձաւոր Արեւելքում եւ յարակից տարածքներում առկայ ժամանակակից մարտահրաւերների պայմաններում Մերձաւոր Արեւելքի հայ համայնքների կենսագործունէութիւնն այժմ էապէս տարբերում է աւանդական սփիւռք հասկացութեան կեանքի ու գործունէութեան բնականոն ընթացքից եւ ստանում է բոլորովին նոր սպառնալից իրողութիւն եւ հնչեղութիւն:

Մեզ՝ հայերիս համար իրավիճակը նոր չէ այն իմաստով որ մերձաւորարեւելեան մարտահրաւերները մեզ համար սկսուել են դեռեւս 1975 թ. Լիբանանեան քաղաքացիական պատերազմի սկզբնաւորումից ի վեր, ինչի արդիւնքում Լիբանանի երբեմնի բարգաւաճ 300 հազարանոց հայ համայնքը այսօր նուազել է մինչեւ 60 հազարի, դրա բացասական բոլոր հետեւանքներով հանդերձ: Վերջին տասնամեակներին Իրաքի 20 հազարանոց հայ համայնքը նուազել է մինչեւ չնչին ցուցանիշների, եթէ այդպիսի ցուցանիշ դեռ կայ: Սիրիայի 300 հազարանոց բարգաւաճ համայնքը նուազել է մինչեւ մի քանի տասնեակ հազարի: Իրադարձութիւնների նման զարգացման եւ մարտահրաւերների այսպիսի բարձր մակարդակի պահպանման պայմաններում յայտնի չէ, թէ ինչ ճակատագրի են արժանանալու ոչ միայն Մերձաւոր Արեւելքի միւս հայ համայնքները նոյնպէս, այլեւ Արեւմտեան Հայաստանում ապրող հայերը:

Ուստի՝

- նկատի առնելով վերջին տասնամեակներին Մերձաւոր Արեւելքում եւ յարակից տարածքներում առկայ նոր իրողութիւններն ու մարտահրաւերները,

- նկատի առնելով այն հանգամանքը, որ Մերձաւոր Արեւելքում ապրող հայութիւնը իրականում 1894-1923 թթ. հայութեան նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան ու բռնագաղթի հետեւանքով այնտեղ հաստատուած հաւաքականութիւն է,

- նկատի առնելով, որ Մերձաւոր Արեւելքում ապրող հայութիւնը Բնօրրան Հայրենիք վերադառնալու իրաւունք ունի այն պայմաններով, ինչպէս դրանք նշուած են 1918-1920 թթ. կայացուած մի շարք որոշումներում, այդ թւում՝ Ռուսաստանի Կառավարութեան Դեկրետում «Տաճկահայաստանի մասին», Սերի խաղաղութեան պայմանագրում, ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրոյ Վիլսոնի կայացրած Իրաւարար վճռում՝ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերեալ եւ այլ որոշումներում ու փաստաթղթերում,

- նկատի առնելով, որ Մերձաւոր Արեւելքում եւ Արեւմտեան Հայաստանում ապրող հայութիւնը ապրելու, զարգանալու եւ ապագայ ունենալու իրաւունք ունի, ինչպէս դա սահմանուած է միջազգային իրաւունքի հիմնարար սկզբունքներով ու նորմերով,

առաջարկում ենք, Մերձաւոր Արեւելքում եւ Արեւմտեան Հայաստանում ապրող հայութեանը դիտել, որպէս Հայաստան - Արցախ - Սփիւռք եռամիասնութեան չորրորդ բաղադրիչ:

Այդ իմաստով աւելորդ չենք համարում ուշադրութիւն հրաւիրել այդ ուղղութեամբ կատարուած հետեւեալ աշխատանքների վրայ, որոնք ձեռնարկել է Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը 2004-2006 թթ.-ին, մասնաւորապէս, ՄԱԿ-ի Բնիկ Ժողովուրդների Փորձագիտական մեխանիզմի շրջանակներում, ինչպէս նաեւ 2011-2014 թթ.-ին Արեւմտեան Հայաստանի հայերի պետականաստեղծ կառոյցների՝ կառավարութեան, խորհրդարանի, նախագահական համակարգի ձեւաւորման գործընթացում:

Այս ոլորտում համապատասխան ուսումնասիրութիւնների ու ճանաչողութեան եւ դրանց հիմա վրայ մշակուած ծրագրերի ու համագործակցութեան իրականացումն ու գործարկումը կարող են դառնալ մեր համատեղ պատասխանը հայութեան ու Հայաստանի առջեւ այսօր ծառացած առկայ բոլոր մարտահրաւերների:

Շնորհակալութիւն ուշադրութեան համար:

Տիգրան Փաշաբեգեան  
21.10.2016 թ.

**Պէտք է օգտագործենք բոլոր միջոցները՝ օգնելու համշենահայերին՝  
վերադառնալու իրենց հայկական արմատներին**

(Ելոյթ լրագրողների համահայկական 8-րդ համաժողովում)

Համշենահայերի ամենաստուար սփիւռքեան համայնքները գտնուում են Արխագիայում եւ Ռուսաստանի սեւծովեան ափամերձ շրջաններում: Անշուշտ, համշենցիները դեռեւս կուր բնակչութեամբ ապրում են իրենց պատմական հայրենիքում՝ Համշենում:

Ռուսաստանի հարաւային դաշնային մարզում՝ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան (ք. Դոնի Ռոստով) եւ Սոչիում հիւպատոսութեան մասնաճիւղի գործունէութիւնը, ինչպէս նաեւ ՀՀ Սփիւռքի նախարարութիւնը նպաստել են Հայաստանի հետ ռուսաստանաբնակ համշենահայութեան բազմակողմանի կապերի ամրապնդմանը: Իրավիճակը, յայտնի իրադարձութիւնների պատճառով, մի փոքր այլ է Արխագիայում:

Եթէ Ռուսաստանում եւ Արխագիայում համշենահայերը քրիստոնէաներ են, եւ իրենց համարում են համշենահայութեան չիւլամացուած մասի ժառանգները, ապա բոլորովին այլ պատկեր է բուն Համշենում, որտեղ համշենահայութիւնը բռնի կերպով իւլամացուել է, շատերը կորցրել են իրենց արմատներն ու ազգային ինքնութիւնը...

Հետեւաբար, մենք պէտք է օգտագործենք բոլոր հնարաւոր միջոցները, որպէսզի օգնենք համշենահայ մեր քոյրերին ու եղբայրներին՝ վերադառնալու իրենց հայկական արմատներին:

Այստեղ շատ ու շատ կարեւոր է զանգուածային լրատուութեան միջոցների դերը:

Ցաւօք սրտի, համշենական ԶԼՄ-ներ, ինչպէս տպագիր, այնպէս էլ էլեկտրօնային, Արխագիայում, Ռուսաստանում եւ բուն Համշենում չկան, բացի «Ձայն Համշենական» ամսաթերթից ու «Համշենական գրուցարան» հաղորդաշարից (խմբագիր եւ հեղինակ՝ Սերգեյ Վարդանեան), որի հետեւանքով համշենահայերը լիարժէք տեղեկատուութիւն չեն ստանում իրենց խնդիրների եւ անելիքների վերաբերեալ: Այս իրավիճակի շտկումը պէտք է դառնա օրուայ գլխաւոր հրամայականը, ինչպէս համշենահայութեան սփիւռքեան կառոյցների, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութեան համար:

Շատ կարեւոր ենք համարում ժողովրդական դիւանագիտութիւնը, Արխագիայում եւ Սոչիում բնակուող համշենահայերի եւ պատմական հայրենիքում բնակուող համշենցիների ուղղակի շփումները: Վերջին տարիներին բարի ասանդոյթ է դարձել ճանաչողական փոխադարձ այցելութիւնները, համատեղ մշակութային միջոցառումների կազմակերպումը եւ այլն:

Անկասկած, մեծ եւ անփոխարինելի է յատկապէս հայ կնոջ դերը՝ խաղաղութեան պահպանման, լեզուի, մշակոյթի, ազգային ասանդոյթների, կենցաղի եւ ընտանիքի վերականգնման հարցում: Հայ կինը մշտապէս եղել է ոչ միայն օջախի պահապանը, այլեւ Հայրենիքի պաշտպանը, Ազատարար-զինուորի Մայրը:

Այս իմաստով մեծ դեր է ստանձնել 2012 թուականին ստեղծուած «Համշենահայուհի» Կանանց միջազգային միութիւնը: Այս կարճ՝ 4-ամեայ գործունէութեան ընթացքում միութեան կողմից իրականացուել են բազմաթիւ միջոցառումներ, որոնք նպաստել են համշենահայութեան միջազգային համագործակցութեանը: Եւ մենք երախտապարտ ենք ՀՀ Սփիւռքի նախարարութեանը, անձամբ նախարար տիկին Հրանուշ Յակոբեանին՝ մեր կազմակերպութեան հանդէպ մշտական ուշադրութեան, աջակցութեան եւ բարի խորհուրդների համար:

Համշենահայութեան կեանքում նշանակալի իրադարձութիւն կը լինի 2017 թուականին Սոչիում եւ Աբխազիայում անցկացուելիք համշենահայութեան միջազգային համաժողովը՝ «Համշենեան աշխարհ – մենք միասնական ենք» խորագրով, որի շրջանակում տեղի կ'ունենան կ'ոնֆերանսներ եւ մշակութային տարբեր փառատօներ: Նախատեսուում է, որ միջոցառմանը կը մասնակցեն ստեղծագործական խմբեր, մշակութեան եւ կրթական ոլորտի նշանաւոր գործիչներ, պատմաբաններ, քաղաքագէտներ, միջազգային ճանաչուած լրատուամիջոցների ներկայացուցիչներ:

Աբողջութեամբ պատրաստ է ֆորումի ծրագիրը եւ արդէն իսկ համաձայնեցուած՝ Աբխազիայի եւ Ռուսաստանի համապատասխան կառոյցների հետ:

Ակնկալում ենք, որ Հայաստանի Հանրապետութիւնը կաջակցի մեր նախաձեռնութեանը եւ ֆորումն իրական տոն եւ ինքնութեան ճանաչման հարթակ կը դառնայ համշենահայութեան համար:

Սաիդա Օհանեան

«Համշենուհի», համշենահայերի կանանց միջազգային միութիւն

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր

20.10.2016 թ.

### **«Ազգային ինքնութենէն հեռացած հայերն աշխարհի տարածքին» թեմայով Կլոր սեղանի մասնակիցներուն որոշումը**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հայրենակցական, համայնքային ու հայրենասիրական հասարակական միութիւններու եւ Հաւատքի հարցերու մշտական յանձնաժողովներու ներկայացուցիչներուն կազմակերպած «Ազգային ինքնութենէն հեռացած հայերն աշխարհի տարածքին» թեմայով միջոցառումը, որ տեղի ունեցաւ 11 Մարտ 2017-ին, Կլոր սեղանի մասնակիցներու քննարկումներուն արդիւնքներուն, ինչպէս նաեւ նախորդ խորհրդաժողովի՝ «Այլակրօն հայերն աշխարհի տարածքին» թեմայով 08 Սեպտեմբեր 2016-ի մասնակիցներուն արտայայտած կարծիքներուն հիման վրայ որոշեց ստեղծել աշխատանքային խումբեր, հետապնդելու համար հետեւեալ ծրագրային նպատակները.

1. Ազգային ինքնութենէն հեռացած հայերուն վերաբերեալ տուումնասիրութիւններու եւ հրատարակութիւններու մէկտեղումը մէկ գրադարան-պահոցի մէջ:
2. Ազգային ինքնութենէն հեռացած հայերուն հետ կապերու հաստատման վերաբերեալ տարեկան աշխատանքային ծրագրի (ծրագիրներու) մշակումը:

Արմենակ Հարմանտայեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հաւատքի եւ Հայրենակցական հարցերու մշտական յանձնաժողովներու ներկայացուցիչ

20.10.2016 թ.

**Հայկական Հարցի լուծման վերաբերեալ Եւրամիութեան, ԱՄՆ-ի,  
Ռուսաստանի Դաշնութեան դիրքորոշումները**

**Եւրամիութեան դիրքորոշումը Հայկական Հարցի լուծման վերաբերեալ  
1.**

Հայկական Հարցի լուծման վերաբերեալ Եւրամիութեան դիրքորոշումը, բնականաբար նաեւ այդ շարքին մաս կազմող երկրներու, մինչեւ վերջերս, կ'արտայայտուէր Եւրոպական խորհրդարանի «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւի բովանդակութեան ու յօդուածներու շրջանակներու մէջ (18 Յունիս 1987 թ.):

Գործածեցինք «մինչեւ վերջերս» բառակապակցութիւնը նկատի առնելով այն, որ վերջին ժամանակահատուածին կարելի է եւ ի յայտ գար նոր դիրքորոշումներ: Իսկ եթէ անոնք, այնուհանդերձ, ի յայտ չեն եկած տակաւին, ապա մեր խնդիրն է հասնիլ անոր, որ ի նպաստ Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական լուծման, անոնք եւս ի յայտ գան Եւրոպական խորհրդարանին (եւ ոչ միայն Եւրախորհրդարանի) դիրքորոշումներուն մէջ:

Հայերու ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման Եւրոպական պետութիւններու որոշումներուն մէջ հիմնականօրէն կը նշուի Հայերու ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման, բայց ոչ հատուցման հարցերը, ի տարբերութիւն օրինակ՝ Պօլիվոյ խորհրդարանի երկու պալատներու ճանաչման ու դատապարտման բանաձեւի, որտեղ կը նշուի ոչ միայն հատուցման, այլեւ այդ հարցի նկատմամբ հայ ժողովրդին Պօլիվոյ անվերապահ աջակցութեան մասին, քանի որ Պօլիվեան, ինչպէս նաեւ Եգիպտոսը, սահմանափակուած չեն Եւրոպական խորհրդարանի ընդունած բանաձեւի շրջանակներուն մէջ:

Եւրոպական խորհրդարանի վերոյիշեալ բանաձեւին Հայկական Հարցի քաղաքական լուծման Եւրոպական հայեցակարգը շարադրուած է հետեւեալ կերպ.

ա) Հայերու կոտորածն ու բռնազաղթը, որ տեղի ունեցած է 1915-1917 թթ., կ'որակուի որպէս ցեղասպանութիւն համաձայն ՄԱԿ-ի «Ցեղասպանութեան հանցագործութիւնը կանխարգելելու եւ անոր պատժի մասին» պայմանադրութեան (9 Դեկտեմբեր 1948 թ.),

բ) հաշուի առնելով, որ տեղի ունեցած է ցեղասպանութիւն, ներկայի Թուրքիոյ Հանրապետութիւնը պարտաւոր է ճանաչել այն, առանց սակայն դրա համար որեւէ հատուցման հետեւանքի,

գ) եւ երրորդ, որ Հայկական Հարցի լուծումը Թուրքիոյ Հանրապետութեան փոքրամասնութիւններու իրաւունքներու, անոնց վերականգման ու իրականացման հարց է, այդպիսի կարգավիճակ ունի:

Եւրոպական խորհրդարանի բանաձեւի 2-րդ յօդուածի առաջին պարբերութեան մէջ նշուած է. «Եւրոպական խորհրդարանը... կը գտնէ թէ, ողբերգական իրադարձութիւնները, որ տեղի ունեցան 1915-1917 թուականներուն Օսմանեան կայսրութեան տարածքին հայերու նկատմամբ, կը հանդիսանան ցեղասպանութիւն,



համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ անոր պատիժի մասին» պայմանադրութեան, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Վեհաժողովի կողմէ 1948 թուականի Դեկտեմբերի 9-ին»:

Եւրոպական խորհրդարանի բանաձեւի 2-րդ յօդուածի երկրորդ պարբերութեան մէջ գրուած է.

«Եւրոպական խորհրդարանը... կը նշէ միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի համարուիր Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան ողբերգութեան համար եւ ամենայն հաստատականութեամբ կ'ընդգծէ, որ պատմական այդ իրադարձութիւններու ճանաչումը որպէս ցեղասպանութիւն՝ առիթ չեն հանդիսանար քաղաքական, իրաւական կամ նիւթական որեւէ պահանջի այսօրուայ Թուրքիոյ նկատմամբ»:

Բանաձեւի 5-րդ յօդուածին մէջ փոքրամասնութիւններու իրաւունքներու մակարդակին իջեցուած պարբերութիւնը (պարբերութիւններէն մէկը, եթէ ոչ գլխաւորը) ձեւակերպուած է այսպէս.

«Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովուրդի) ողբերգութիւնը, կը միանայ ազգային ինքնատիպութիւնը զարգացնելու անոր ցանկութեանը, երաշխաւորելու անոր իրաւունքները որպէս փոքրամասնութիւն եւ անարգել օգտուելու մարդկային եւ քաղաքացիական իրաւունքներէն, ինչպէս որ անոնք սահմանուած են Մարդու Իրաւունքներու Եւրոպական Համաժողովի պայմանադրութեան ու անոր համապատասխան արձանագրութիւններուն մէջ»:

Այսինքն, այդ ամէնը կը հանգի երկխօսութեան եւ Թուրքիոյ Հանրապետութեան մէջ փոքրամասնութիւններու՝ հայերու եւ այլ ազգերու, իրաւունքներուն, ինչպէս նշուած է նաեւ բանաձեւի 3-րդ եւ 4-րդ յօդուածներուն մէջ.

«3. Կը պահանջէ (Եւրոպական) Խորհրդէն ճնշում գործադրել ներկայիս թրքական կառավարութեան վրայ, որպէսզի վերջինս ճանչնայ 1915-1917 թուականներու հայերու հանդէպ կազմակերպուած ցեղասպանութիւնը եւ այդպիսով նպաստէ քաղաքական երկխօսութեան հաստատմանը Թուրքիոյ եւ հայերու լիա զօր պատուիրակներու միջեւ:

4. Մեկնելով այն տուեալներէն, որ հայ ժողովուրդի դէմ անցեալին երիտթրքական կառավարութեան կողմէ գործադրուած ցեղասպանութեան մերժումը ներկայ թուրքական կառավարութեան կողմէ, Յունաստանի հետ գոյութիւն ունեցող վիճելի հարցերով միջազգային իրաւական նորմերու կիրառումէն հրաժարումը, Կիպրոսէն ներս թրքական բռնազավթիչ ուժերու պահպանումը, ինչպէս նաեւ քրտական իրադարձութիւններու ժխտումը, այդ երկրի մէջ (Թուրքիոյ) իսկական ժողովրդավար խորհրդարանականութեան բացակայութիւնը, անհատական, հասարակական ու հատկապէս կրօնական ազատութիւններու ոտնահարումը՝ այս ամէնը կը հանդիսանան անյադրահարելի արգելքներ Եւրոպական Տնտեսական Համագործակցութեան կազմի մէջ Թուրքիոյ հնարաւոր ընդունման հարցի քննարկման համար»:

Աւելորդ չէ ըսել, որ դեռեւս 1987 թ. Յունիսի 18-ին ընդունուած այս դիրքորոշումը չի համապատասխաներ Հայկական Հարցի լուծման իրաւական - քաղաքական բովանդակութեանն ու սկզբունքներուն, հատկապէս, եթէ նկատի առնուի, որ Հայկական

Հարցի լուծման ուղղությամբ 1918-20 թթ. արդեն իսկ ընդունուած են որոշումներ, որոնց կարգին՝ Ռուսաստանի Կառավարութեան Հռչակագիրը «Թիրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին», 11 Յունուար 1918 թ.), Հայաստան պետութեան անկախութեան փաստացի դէ ֆակտո (de facto) ճանաչումը Փարիզի Վեհաժողովի ժամանակ Դաշնակից Տերութիւններու Գերագոյն Խորհուրդի կողմէ (19 Յունուար 1920 թ.) եւ դէ յուրէ (de jure) ճանաչումը Դաշնակից Տերութիւններու Գերագոյն Խորհուրդի կողմէ (11 Մայիս 1920 թ.), Սէրի Խաղաղութեան պայմանագրի Հայաստանին վերաբերող յօդուածները (10 Օգոստոս 1920 թ.), ԱՄՆ 28-րդ Նախագահ Ուորոն Ուիլսոնի կայացուցած Իրաւարար վճիռը (22 Նոյեմբեր 1920 թ.) եւ այլ որոշումներ, որոնք սակայն հետագային անտեսուած ու մոռացութեան են մատնուած Եւրոպական պետութիւններու ու կառոյցներու կողմէ:

Աւելին, մեր ժամանակներուն մէջ, երբ կը համեմատենք Եւրոպական խորհրդարանի «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւը եւ Հայաստանի Հանրապետութեան եւ Թրքական Հանրապետութեան միջեւ նախաստորագրուած արձանագրութիւնները, կը համոզուինք, որ արձանագրութիւնները նոյնութեամբ կը կրկնեն բանաձեւի ձեւակերպումները եւ իրաւական, քաղաքական ու բովանդակային իմաստով կը կազմեն բանաձեւի շարունակութիւնը:

Հետեւաբար, այս փաստերէն մեկնած, պէտք է ըսել, որ այն հայկական կառոյցներն ու կազմակերպութիւնները, որոնք կը յաւակնին Հայոց իրաւունքները պաշտպանել Եւրոխորհրդարանի եւ կամ Եւրոպական այլ կառոյցներու հետ համագործակցութեան միջոցով, պէտք է յստակ պատկերացնեն, որ անոնք չեն ներկայացներ Հայկական Հարցի եւ Հայոց իրաւունքներու պաշտպանութեան իրական պատկերը եւ, ըստ այդմ, պէտք է իմանան, որ ինդիր ունին Եւրոխորհրդարանի եւ Եւրոպական այլ կառոյցներու դիրքորոշումներու մէջ փոփոխութիւն իրականացնել: Այլ կերպ Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական լուծման հնարաւոր չէ հասնիլ եւ շատ աւելի հաւանական է կցորդ դառնալ այդ կառոյցներու ժամանակակից քաղաքականութեան, որ կ'իրականացուի Մերձաւոր Արեւելքի մէջ եւ որը ամենեւին չի բխեր տարածաշրջանի ժողովուրդներու ու պետութիւններու անվտանգութեան ու իրաւունքներու շահերէն:

Ամէն կերպ պէտք է խուսափիլ կցորդի կարգավիճակին մէջ յայտնուելու բախտէն եւ ընթանալ Հայոց բոլոր իրաւունքները պաշտպանելու եւ անոր նկատմամբ պետութիւններու, կողմերու ու կառոյցներու դիրքորոշման փոփոխութեան ու ճշգրտման ճանապարհով՝ այնպէս, ինչպէս դա կը պահանջէ Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական լուծման նշեալ թղթածրարի իրաւական – քաղաքական բովանդակութիւնը:

10.12.2016 թ.

-----  
Ծանօթագրութիւն

1. Եւրոպական խորհրդարանի բանաձեւը «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին», 18 Յունիս 1987 թ., «Ուխտ Արարատի» պարբերական, թիւ 1 (19), Մարտ-Ապրիլ, 2010 թ., էջ 10-11:

2. Տես, Պօլիվիոյ խորհրդարանի երկու պալատները ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը: Խորհրդարանի երկու պալատները «կը հաստատեն իրենց հաւատարմութիւնը մարդու իրաւունքներուն, ճշմարտութեան եւ արդարութեան արժէքներուն, կ'արտայայտեն իրենց զօրակցութիւնը եւ կը դատապարտեն Հայոց ցեղասպանութեան եւ հայ ժողովուրդի դէմ իրականացուած մարդկային ծանր հանցագործութեան ժխտողականութեան քաղաքականութիւնը»: 21.04.2015 թ., Orer.am:
3. Տես, «Հայերու ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերու շուրջ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ռազմավարութեան մասին», 19.10.2014 թ.:
4. Տես, Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ Հանրապետութեան միջեւ նախաստորագրուած արձանագրութիւններ, «Ուխտ Արարատի» պարբերական, թիւ 2 (18), Հոկտեմբեր-Դեկտեմբեր, 2009 թ., էջ 8-9:
5. Տես, HDP Եւրոպայի ներկայացուցչութեան կեդրոնին մէջ 17 Նոյեմբերին հանդիպում տեղի ունեցած է Արեւմտահայոց Ազգային Համագումարի (ԱԱՀ) պատուիրակութեան եւ Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան (HDP-ի) ղեկավարութեան եւ Եւրոպայի կառոյցի ներկայացուցիչներուն միջեւ, 17.11.2016 թ., Arevelk.am:  
(Արեւմտահայոց Ազգային Համագումարը (ԱԱՀ) պետք չէ շփոթել Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի (ԱՀԱԽ) հետ, հիմնուած Շուշիի մէջ 2004 թ. - հեղ.)
6. Տես, «Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի իրաւունքներու պաշտպանութեան իրաւական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն (հայերէն, ռուսերէն կամ անգլերէն), որը կարող էք ձեռք բերել «Նոյեան Տապան» հրատարակչութիւն զանգահարելով՝ (+374 60) 2764 62: Հասցէն՝ ՀՀ, Երեւան, Իսահակեան 28: <http://nt.am/am/ourpublication/9>

## Հայկական Հարցի լուծման վերաբերեալ ԱՄՆ-ի դիրքորոշումը

### 2.

Կը թուի, թէ Հայկական Հարցի լուծման վերաբերեալ ԱՄՆ-ի դիրքորոշման հիմքը պետք է որ կազմեր ԱՄՆ 28-րդ Նախագահ Ուորոն Ուիլսոնի 22 Նոյեմբեր 1920 թ. կայացուցած Իրաւարար վճիռը: Սակայն, Հայկական Հարցի լուծման վերաբերեալ ԱՄՆ-ի դիրքորոշումը, մինչեւ վերջերս, Եւրոպական խորհրդարանի բանաձեւի բովանդակութեան ու յօդուածներու գործնական իրականացումն է Մերձաւոր Արեւելքի մէջ որոշ յաւելումով այն իմաստով, որ Արարատ լեռն ու Անի հնաքոյր մայրաքաղաքը կ'ենթադրուի, թէ անցնելու են Հայաստանի Հանրապետութեան:

ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական Հարցի եւ Մերձաւորարեւելեան խնդիրներու վերաբերեալ ներկայացուած է վերջին տասնամեակներու ընթացքին հրապարակուած տարբեր յօդուածներու մէջ: Անոնցմէ մէկը ԱՄՆ բանակի պաշտօնաթող սպայ Ռալֆ Պիտերսի «Մերձաւոր Արեւելքի նոր քարտեզը ըստ արիւնակցական կապերու եւ հաւատքի նմանութիւններու» յօդուածն է ու կից քարտեզը, որն առաւել ամբողջական կ'արտայայտէ ԱՄՆ իշխանութիւններու վերաբերմունքը վերոնշեալ խնդիրներու վերաբերեալ:

Հայկական պահանջատիրության եւ իրաւունքներու մասով յօդուածին մէջ մասնաւորապէս ըսուած է. «Իսկ միասրսափելիչարագործութիւն, ինչպիսինէհայերու հանդէպ հոգեւարքի մէջ գտնուող Օսմանեան կայսրութեան իրականացուցած ցեղասպանութիւնը, երբէք չի կրնար փոխհատուցուիլ տարածքային նուիրատուութեամբ»:

Ակնյայտ կը դառնայ այս ձեւակերպման նմանութիւնը Եւրոպական խորհրդարանի բանաձեւի 2-րդ յօդուածի երկրորդ պարբերութեանը, որտեղ յիշեցնենք նշուած է. «Եւրոպական խորհրդարանը... «Կը նշէ միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կրնայ յամարուիլ Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան ողբերգութեան համար եւ ամենայն հաստատակամութեամբ կ'ընդգծէ, որ պատմական այդ իրադարձութիւններու ճանաչումը որպէս ցեղասպանութիւն՝ առիթ չի կրնար հանդիսանալ քաղաքական, իրաւական կամ նիւթական որեւէ պահանջքի այսօրուայ Թուրքիոյ նկատմամբ»:

Ահա թէ ինչու, 2009 թ. Հոկտեմբերին, երբ Շուէտիոյ մէջ կը նախաստորագրուէին Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ Հանրապետութեան միջեւ յայտնի եւ այնքան աղմուկ հանած արձանագրութիւնները՝ այլ պաշտօնատար անձանց շարքին ներկայ էր նաեւ ԱՄՆ պետական քարտուղար Հիլարի Քլինթօնը:

Ճիշդ է, որպէս յաւելում՝ Ռալֆ Պիտերսի քարտեզին մէջ նշուած է, որ Արարատ լեռն ու Անի հնաքոյր մայրաքաղաքը անցնելու են Հայաստանի Հանրապետութեան, ինչպէս նաեւ բաւական ժամանակ է, կը խօսուի այն մասին, թէ Ամերիկեան քաղաքական շրջանակներու մէջ կը քննարկուի իսլամացած հայերու գործոնը շրջանին մէջ: Նկատենք նաեւ, որ 2012 թ. Փետրուարէն սկսած ամերիկեան պետական շրջանակներու մէջ կը հնչեն ելոյթներ ի պաշտպանութիւն Սուրիոյ ու Մերձաւոր Արեւելքի հայութեան:

Սակայն միեւնոյնն է, տեսանելի է, որ այս կարգի դիրքորոշումները նոյնպէս չեն արտայայտեր Հայկական Հարցի լուծման թղթածրարի իրաւական – քաղաքական ամբողջական եւ իրական բովանդակութիւնը:

Այնպէս որ այստեղ եւս ստիպուած ենք կրկնելու, որ Հայկական Հարցի լուծման ուղղութեամբ 1918-20 թթ. արդէն իսկ ընդունուած են որոշումներ, որոնց կարգին՝ Ռուսաստանի Կառավարութեան Հռչակագիրը «Թիրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին, 11 Յունուար 1918 թ.), Հայաստան պետութեան անկախութեան փաստացի (de facto) ճանաչումը Փարիզի Վեհաժողովի ժամանակ՝ ԴաշնակիցՏէրութիւններու Գերագոյն Խորհուրդի կողմէ (19 Յունուար 1920 թ.) եւ դէ յուրէ (de jure) ճանաչումը ԴաշնակիցՏէրութիւններու Գերագոյն Խորհուրդի կողմէ (11 Մայիս 1920 թ.), Մերի Խաղաղութեան պայմանագրի Հայաստանին վերաբերող յօդուածները (10 Օգոստոս 1920 թ.), ԱՄՆ 28-րդ Նախագահ Ուորրո Ուիլսոնի կայացուցած Իրաւարար վճիռը (22 Նոյեմբեր 1920 թ.) եւ այլ որոշումներ, որոնք սակայն հետագային անտեսուած ու մոռացութեան մատնուած են Եւրոպական պետութիւններու ու անոնց կառոյցներու կողմէ:

Ուստի, Հայոց իրաւունքներու պաշտպանութեան աշխատանքներու ընթացքին պէտք է նկատի ունենալ, որ այս մարզին մէջ եւս հսկայածաւալ աշխատանք կայ կատարելու, նաեւ ամերիկեան պետական շրջանակներուն յիշեցնելու ԱՄՆ 28-րդ Նախագահ Ուորըն Ռիլտնի կայացուցած Իրաւարար վճռի (ինչպէս նաեւ այլ որոշումներու) արծարծման ու իրականացման կարելորդութիւնը հայութեան կեանքին մէջ, այսպիսով նոյնպէս նպաստելու կայուն խաղաղութեան ու համագործակցութեան հաստատմանը Մերձաւոր Արեւելքի եւ ամբողջ աշխարհի մէջ:

11.12.2016

-----  
Ծանոթագրութիւն

1. Տես, Ռալֆ Պիտերս, «Մերձաւոր Արեւելքի նոր քարտէզը ըստ արիւնակցական կապերու եւ հաւատքի նմանութիւններու» յօդուածն ու քարտէզը, թարգմանութիւնը եւ նախաբանը «Ազգ» օրաթերթի, 25.08.2006թ.: Blood borders, How a better Middle East would look, By Ralph Peters, All content © 2006, Armed Forces Journal | Terms of Service.
2. Տես, Եւրոպական խորհրդարանի բանաձեւը «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին», 18 Յունիս 1987 թ., «Ուիստ Արարատի» պարբերական, թիւ 1 (19), Մարտ-Ապրիլ, 2010 թ., էջ 10-11:
3. Տես, ԱՄՆ Քոնկրէսը կը ցանկայ օգնել սուրիահայերուն, 02.08.2012 թ., Azatutyun.am:
4. Տես, Քոնկրէսականը կոչ կ'ընէ պաշտպանել սուրիահայերուն, 10.08.2012 թ., Azatutyun.am:
5. Տես, «Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի իրաւունքներու պաշտպանութեան իրաւական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն (հայերէն, ռուսերէն, անգլերէն), որը կրնաք ձեռք բերել «Նոյեան Տապան» հրատարակչութեան զանգահարելով՝ (+374 60) 2764 62: Հասցէն՝ ՀՀ, Երեւան, Բսահակեան 28: <http://nt.am/am/ourpublication/9>

**Ռուսաստանի Դաշնութեան դիրքորոշումը Հայկական Հարցի լուծման վերաբերեալ**  
**3.**

Ռուսաստանի Դաշնութեան համար Հայկական Հարցի լուծումը, մինչեւ վերջերս, պարզ էր եւ սահմանափակուած Մոսկուայի «Ռուս-թուրքական պայմանագրի» դրոյթներով (16 Մարտ 1921 թ.): Մինչեւ ճշմարտութեան բացայայտման այն պահը, երբ «Գունաւոր յեղափոխութիւններու» հետեւանքով Ռուսաստանը մէկը միւսի ետեւէ կորսնցուց դիրքեր Մերձաւոր Արեւելքի մէջ եւ կը մնար այն վերջնականապէս կորսնցնել, կորսնցնելով նաեւ Սուրիան: Մինչեւ այն պահը, երբ Մերձաւոր Արեւելքի մէջ Թուրքիոյ Հանրապետութեան վարած քաղաքականութիւնը Ռուսաստանի համար կը համարուէր չարիքներու փոքրագոյնը՝ համեմատած արեւմուտքի պետութիւններու վարած քաղաքականութեան: Մինչեւ այն պահը, երբ վերջնականապէս պարզ դարձաւ, որ Թուրքիան չի հրաժարիր նեոսամանական քաղաքականութիւն վարելէն եւ հաւատարիմ կը մնայ յատկապէս ահաբեկչական ծայրահեղ խմբաւորումներուն մինչեւ վերջ աջակցելու ու օժանդակելու

ծրագրին՝ փորձելով զանոնք ծառայեցնել տարածաշրջանային իր ծաւալապաշտական ու յարձակողական ձգտումներուն, որոնց կարգին՝ Սուրիա եւ Իրաք ներխուժման:

Այնուհանդերձ, յիշեցնենք Մոսկուայի պայմանագրի այն հիմնական դրոյթները, որոնք տասնամեակներ շարունակ սահմանափակեցին ինչպէս հայկական իրաւունքները պաշտպանելու հայկական կողմի հնարաւորութիւնները, այնպէս էլ Մերձաւոր Արեւելքի մէջ (եւ նրա միջոցով աշխարհում) լիարժէք քաղաքականութիւն վարելու ռուսական կողմի բոլոր ակնկալիքներն ու պատկերացումները:

Անոնցմէ առաջինը ձեւակերպուած է պայմանագրի 1-ին իսկ յօդուածին մէջ. «Պայմանաւորուող կողմերէն իւրաքանչիւրը սկզբունքօրէն կը համաձայնի չճանչնալ ոչ մէկ հաշտութեան պայմանագիր կամ միջազգային որեւէ այլ փաստաթղթեր, եթէ Պայմանաւորուող կողմերէն միւսին ուժով կը հարկադրեն ընդունել այդպիսին: Ռուսաստանի Սոցիալիստական Տեղերատիւ Սովետական Հանրապետութեան կառավարութիւնը կը համաձայնի չճանչնալ Թուրքիոյ վերաբերուող եւ այսօր Թուրքիոյ Ազգային մեծ ժողովը ներկայացնող անոր ազգային կառավարութեան կողմէ չճանչցուած որեւէ միջազգային փաստաթուղթ: Թուրքիայ հասկացողութեան տակ սոյն պայմանագրին մէջ կը յստակեցուին այն տարածքները, որոնք ներառուած են 1920 թուականի Յունուարի 28-ի թրքական Ազգային ուխտի մէջ, որը Կ. Պոլսոյ մէջ մշակած եւ հռչակած է Օսմանեան պատուիրակութեան Պալատը եւ հաղորդած մամուլին ու բոլոր պետութիւններուն»:

Աւելցնենք, որ պայմանագրի 16 յօդուածներէն եւս մէկը կ'ենթադրուի, թէ կ'առնչուի Ռուսաստանի շահերուն, 5-րդ յօդուածը՝ նեղուցներու անարգել օգտագործման վերաբերեալ, եւ վերջ, մնացած բոլոր յօդուածները կամ չեն առնչուիր ուղղակիօրէն Ռուսաստանի շահերուն, կամ կը հակասեն անոնց:

Միջազգային լայնածաւալ քաղաքականութիւն իրականացնելու տեսակէտէն Ռուսաստանի համար շատ մեծ սահմանափակումներ կը պարունակէ յատկապէս պայմանագրի 8-րդ յօդուածը.

«Պայմանաւորուող երկու կողմերը պարտաւորուած են իրենց տարածքներուն մէջ արգիլել այնպիսի կազմակերպութիւններու եւ խումբերու առաջացումն ու գոյութիւնը, որոնք ունին միւս երկրի, կամ անոր տարածքի մէկ մասի կառավարութեան դերն ստանձնելու հաւակնութիւն, ինչպէս նաեւ կը պարտաւորուի իր տարածքին մէջ արգիլել այնպիսի խումբերու գոյութիւնը, որոնց նպատակն է պայքարը միւս երկրի դէմ: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձութեան պայմանով կը ստանձնեն նոյնպիսի պարտաւորութիւն նաեւ Կովկասի Սովետական Հանրապետութիւններու վերաբերմամբ: Որոշուած կը համարուի, որ սոյն յօդուածին մէջ յիշատակուած թրքական տարածքի տակ կը հասկցուի այն տարածքը, որը կը գտնուի Թուրքիոյ Ազգային մեծ ժողովի կառավարութեան զինուորական եւ քաղաքացիական անմիջական կառավարման ներքոյ»:

Աւելորդ չէ նշել, որ Թուրքիան երբեք հաւատարիմ չէ եղած պայմանագրի ոգիին ու տառին, եւ մշտապէս գործեր է այնպէս, ինչպէս հարմար նկատեր է:

Սակայն ինչպես նշեցինք արդեն, այս հարցին մեջ փոփոխություն յառաջացած է վերջին տասնամեակի ընթացքին՝ Մերձաւոր Արեւելքի մէջ տեղի ունեցող բուռն իրադարձութիւններու լոյսին տակ:

Այս իմաստով յատկապէս շրջադարձային է 2012 թուականը, երբ եւ Ռուսաստանի, եւ ԱՄՆ-ի քաղաքական շրջանակներն առաջին անգամ սկսան խօսիլ Սուրիոյ ազգային եւ կրօնական խումբերու, ասոնց շարքին՝ հայերու անվտանգութեան հարցերու եւ իրաւունքներու վերաբերեալ:

Մասնաւորապէս 2012 թ. Նոյեմբերի 16-ին Ռուսաստանի Նախագահ Վլատիմիր Փութինը յայտարարեց. «Պէտք է համաձայնութեան գալ Սուրիոյ ազգային խումբերու վերաբերեալ: Մեր գնահատակը յայտնի է, մենք կը համարենք, որ սկիզբը պէտք է պայմանաւորուիլ ապագայի վերաբերեալ, սկիզբը պէտք է հասկնալ, թէ ինչպէս ապահովել զանազան ազգային եւ կրօնական խումբերու օրինական շահերն ու իրաւունքները: Եւ ոչ թէ հակառակը՝ Ասատին հեռացնել, եւ յետոյ միայն մտածել, թէ անոնց հետ ինչպէս վարուիլ»:

Սա միայն սկիզբն է, եւ մօտ ապագային շատ աւելի յստակ պիտի ըլլայ Ռուսաստանի Դաշնութեան վարած քաղաքականութիւնը Մերձաւոր Արեւելքի հիմնահարցերուն մէջ, որտեղ աւելի ու աւելի յստականալու է անոր կողմնորոշման փոփոխութիւնը դէպի 1918-1920 թթ. կայացուած որոշումներ ու պայմանագրեր, որոնք հաշուի կ'առնէին տարածաշրջանի բոլոր ժողովուրդներու ու պետութիւններու օրինական իրաւունքներն ու շահերը, եւ անոր միջոցով ձգտումը՝ հաստատելու կայուն խաղաղութիւն Մերձաւոր Արեւելքի մէջ: Ասոնց շարքին նկատի ունենալով, անշուշտ, ոչ միայն Ռուսաստանի Կառավարութեան Դեկրետը «Թիւրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին», 11 Յունուար 1918 թ.), այլեւ Սելի Խաղաղութեան պայմանագիրը (10 օգոստոս 1920 թ.) եւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Ուորըն Ուիլսոնի Իրաւարար վճիռը (22 Նոյեմբեր 1920 թ.), ինչպէս նաեւ Հայերու ցեղասպանութիւնը դատապարտող Մեծ Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Ռուսաստանի համատեղ յայտարարութիւնը, որտեղ 1915 թ. Ապրիլեան կոտորածները որակեցին որպէս «Թուրքիոյ նոր ոճիրը մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ» (24 Մայիս 1915 թ.), Ռուսաստանի Դաշնութեան Պետդումայի ընդունած հռչակագիրը Հայ ժողովուրդի ցեղասպանութեան դատապարտման մասին (14 Ապրիլ 1995 թ.):

Մերձաւորարեւելեան տարածաշրջանի եւ անկէ մեկնած ամբողջ աշխարհի մէջ լիարժէք քաղաքականութիւն վարելու եւ մնայուն խաղաղութիւն հաստատելու այլ տարբերակներ պարզապէս չկան, այդ թվում եւ այնպիսի մեծ ու հզօր տէրութեան համար, ինչպիսին Ռուսաստանի Դաշնութիւնն է:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

26.12.2016 թ.

-----  
Ծանոթագրութիւն

1. Տես, Պայմանագիր Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ, 16 Մարտ 1921 թ., Մոսկուայ: (Ճոն Կիրակոսեան, Ռուբէն Սահակեան, «Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ արտաքին քաղաքականութեան փաստաթուղթերու մէջ՝ 1828-1923 թթ.», «Հայաստան» հրտ., Երեւան, 1972, էջ 499):
2. Տես, Արմէն Տէր-Սարգսեան. «Հայկական Հարցը եւ Թուրքիոյ նեոօսմանական քաղաքականութիւնը, մարտահրաւերներ եւ սպառնալիքներ», զեկոյց՝ ներկայացուած «Ռեզնում» Լրատուական գործակալութեան կազմակերպած կոնֆերանսի ժամանակ, 17 Նոյեմբեր, 2016 թ., «Նոյեան Տապան» Լրատուական գործակալութիւն, <http://nt.am/am/news/229947///?hayworld>: Армен Тер-Саркисян: «Армянский Вопрос и неоосманская политика Турции: вызовы и угрозы», ИА РЕГНУМ-<https://regnum.ru/news/polit/2206970.html>.
3. Армен Тер-Саркисян: «Реализация Севрского договора - путь к миру на Ближнем Востоке», ИА РЕГНУМ- <https://regnum.ru/news/polit/2206970.html/>
4. Տես, «Сначала нужно договориться о судьбе этнических групп и только потом ставить вопрос об отставке Асада», считает президент РФ, Подробнее на ТАСС, 16 ноября 2012, <http://tass.ru/politika/647924/>:
5. ԱՄՆ Քոնկրէսը կը ցանկայ օգնել սուրիահայերուն, 02.08.2012 թ., Azatutyun.am:
6. Տես, «Արեւմտեան Հայաստանի հայերու եւ Արեւմտեան Հայաստանի իրաւունքներու պաշտպանութեան իրաւական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն (հայերէն, ռուսերէն կամ անգլերէն), որը կրնաք ձեռք բերել «Նոյեան Տապան» հրատարակչութիւն զանգահարելով՝ (+374 60) 2764 62: Հասցէն՝ ՀՀ, Երեւան, Իսահակեան 28: - <http://nt.am/am/ourpublication/9/>
7. Տես, Պետական Դումայի յայտարարութիւնը 1915-1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանութեան դատապարտման մասին. «Ռուսաստանի Դաշնութեան Դաշնային Ժողովի Պետական Դուման հիմնուելով անհերքելի պատմական փաստերու վրայ, որոնք կը վկայեն Արեւմտեան Հայաստանի տարածքին 1915-1922թթ. հայերու բնաջնջման մասին, հետեւելով ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ անոր համար պատժի մասին 1948թ. Դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած Կոնուենցիայի ոգուն ու տառին, պատերազմական յանցագործութիւններու եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւններու նկատմամբ վաղեմութեան ժամկետ չ'կիրառելու մասին 1968թ. Նոյեմբերի 26-ի ՄԱԿ-ի ընդունած Կոնուենցիային, ձգտելով վերածնել ռուսական պետութեան մարդասիրական ասանդոյթները, յիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնութեամբ երոպական մեծ տէրութիւնները դեռ 1915թ. հայ ժողովուրդի հանդէպ թուրքական կայսրութեան գործողութիւնները որակեր են որպէս «մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւն», նշելով, որ իր պատմական հայրենիքին մէջ եղբայրական հայ ժողովուրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվեր է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելուն պատակով, կը դատապարտէ 1915-1922թթ. հայերու բնաջնջման կազմակերպիչներուն, իր կարեկցանքը կը յայտնէ հայ ժողովուրդին եւ Ապրիլի 24-ը կը համարէ ցեղասպանութեան զոհերու յիշատակի օր»:  
<http://www.genocide-museum.am/arm/states.php>



## ԳԼՈՒԽ VI

### ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ)

1-ին գումարման 5-րդ նստաշրջանի որոշումներն ու նիւթերը

11.06.2017 թ.

#### Քաղուածք № 1

### Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի նիստի արձանագրութիւնից

11-ը յունիսի, 2017 թ.

Առաջին նիստ

Նիստի սկիզբը ժամը 13:00-ին, աւարտը՝ 15:00-ին:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորների գրանցում (այսուհետ բնագրում՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարան):

Ընտրուած 64 պատգամաւորներից գրանցուել են 51 պատգամաւոր, 7-ը դահլիճում եւ 44-ը ինտերնետ կապով, որը կազմում է 80 տոկոս:

Քուտրումն ապահովուած է:

1. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի օրակարգի մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի օրակարգը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 46, դէմ – 0, ձեռնպահ – 5:

Որոշումն ընդունուած է:

2. Լսեցին՝ նստաշրջանի հաշուիչ յանձնաժողովի ընտրութեան մասին:

Որոշեցին՝ ընտրել նստաշրջանի հաշուիչ յանձնաժողով հետեւեալ կազմով՝ նախագահ՝ Տիգրան Յարութիւնեան, տեղակալներ՝ Աննա Խաչատրեան, Սաիդա Օհանեան:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 48, դէմ – 0, ձեռնպահ – 3,

Որոշումն ընդունուած է:

3. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգում ստեղծուած իրավիճակի եւ դրանից դուրս գալու ուղիների մասին:

Ելոյթ ունեցան՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ Արմէն Տէր-Սարգսեանը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ Տիգրան Փաշաբեգեանը, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)

պատգամատրներ Էդուարդ Փոլատովը, Հայկ Յարութիւնեանը, Սաիդա Օհանեանը, Արտաշէս Մելիքեանը, Ռադիկ Խամոյեանը, Արմէնակ Հարմանդայեանը, Վաղարշակ Սէգերտեանցը, Դաւիթ Խինոյեւը, Վալերայ Սուրադեան, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կրթութիւն նախարար Վրէժ Քոսայեանը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին գործերի նախարար Մարտիրոս Շահբազեանը:

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ՝

-Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը Սահմանադրութեան բոլոր ընթացակարգերով անցած եւ ընդունուած Սահմանադրութիւն դեռեւս չունի եւ նա առաջնորդում է՝ Արեւմտեան Հայաստանի «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամատրների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքով,

Հաշուի առնելով Արմէնակ Աբրահամեանի անժխտելի ներդրումը Արցախեան ազատամարտում, վաստակը Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան գործում, սկսած 2004 թ.-ից, որպէս Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի հիմնադիրներից եւ նախագահ, 2011 թ.-ից, որպէս Արեւմտեան Հայաստանի պետական կառոյցի հիմնադիրներից, 2014 թ.-ից, որպէս Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ, այնուհանդերձ նշենք, որ նախկին ձեռքբերումները չեն կարող արդարացնել ներկայիս նրա կողմից Արեւմտեան Հայաստանի պետական օրէնքների խախտումները եւ իշխանութեան իւրացման փորձը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը խախտել է վերոնշեալ օրէնքի «արեւմտեան Հայաստանի պետական կ'առուցուածքը բաժնի հետեւեալ յօդուածների դրոյթներն ու պահանջները.

Յօդուած 36) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը նախագահա-խորհրդարանական հանրապետութիւն է:

Յօդուած 37) Արեւմտեան Հայաստանի նախագահը՝ պետութեան գլուխն է՝ Արեւմտեան Հայաստանի բարձրագոյն պաշտօնատար անձը, Սահմանադրութեան, մարդու իրաւունքների ու ազատութիւնների երաշխատորը: Արեւմտեան Հայաստանի Սահմանադրութեան եւ օրէնքների համաձայն՝ նա միջոցներ է ձեռք առնում Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան, անկախութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման, պետական իշխանութեան մարմինների միջեւ գործառոյթների ներդաշնակ համադրման եւ համագործակցութեան:

Յօդուած 44) Արեւմտեան Հայաստանի նախագահը՝

-Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնութեամբ նշանակում ու ազատում է Արեւմտեան Հայաստանի կառավարութեան վարչապետին,

-Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնութեամբ որոշում է կայացնում Արեւմտեան Հայաստանի կառավարութեան հրաժարականի մասին,

-Արեւմտեան Հայաստանի վարչապետի առաջարկութեամբ նշանակում ու ազատում է պաշտօնից Արեւմտեան Հայաստանի վարչապետի օգնականներին եւ նախարարներին,

Յօդուած 52) Արեւմտեան Հայաստանի կառավարութեան վարչապետը Արեւմտեան Հայաստանի նախագահին առաջարկում է Արեւմտեան Հայաստանի կառավարութեան

փոխվարչապետի պաշտօնի թեկնածուներին եւ Արեւմտեան Հայաստանի նախարարներին՝ նախապէս տեղեակ պահելով Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովին եւ հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարծիքները:

Որտեղ նշուած է նաեւ,

Յօդուած 14) Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորի լիազօրութիւնների դադարեցումը կարող է տեղի ունենալ հետեւեալ դէպքերում.

- այն դէպքում, երբ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորը իր գործունէութեամբ կամ անգործութեամբ վնաս է հասցնում Արեւմտեան Հայաստանին, Արեւմտեան Հայաստանի պետական կառոյցներին: Սոյն յօդուածի կէտը վերաբերում է նաեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան բոլոր պաշտօնեաներին:

Հակընդդէմ վերը մէջբերուած յօդուածների դրոյթների ու պահանջների՝

-Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը շուրջ երկու տարի է ինչ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ողջ պետական համակարգին պարտադրում է 2016-ի մայիսի 9-ին իր միանձեայ ստորագրութեամբ, իբրեւ թէ իր կողմից հաստատում ստացած Սահմանադրութեան իր տարբերակը,

-որն ի տարբերութիւն վերը նշուած գործող օրէնքի դրոյթի ու պահանջի, ոչ թէ նախագահա-խորհրդարանական, այլ նախագահական կոշտ ու անզիջում կառավարման համակարգի օրինակ է:

Արձանագրենք նաեւ, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի պարտադրած Սահմանադրութեան օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառուցուածքի իրաւական-քաղաքական տրամաբանութիւնը եւ չի կարող ընդունուել, որպէս հիմք կամ օրինակ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան համար, որովհետեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառավարման համակարգը նախագա-խորհրդարանական է:

Դրանով իսկ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը յայտ է ներկայացնում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան իւրացման ու բռնազաւթման, որոնք Սահմանադրութեան իր պարտադրած օրինակում հետեւեալ ձեւերով են արտայայտուած.

Յօդուած 162

4-րդ կէտ. Մինչեւ Ազգային Ժողովի եաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ Հանրապետութեան Նախագահը կրնայ.

- Ազգային Ժողովի նախագահին եւ վարչապետին հետ խորհրդակցելէ ետք՝ արձակել Ազգային Ժողովը, եւ նշանակել արտահերթ ընտրութիւն,
- ազատել վարչապետին:

5-րդ կէտ. Մինչեւ Ազգային Ժողովի յաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ կ'առավարութեան նիստերը կը հրաւիրէ եւ կը վարէ Հանրապետութեան Նախագահը, կամ անոր յանձնարարութեամբ՝ վարչապետը: Կ'առավարութեան որոշումները կը ստորագրէ վարչապետը, կը վաւերացնէ՝ Հանրապետութեան Նախագահը:

Յօդուած 107.

Ազգային ժողովը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի առաջարկութեամբ կը վաւերացնէ, կը կ'ասեցնէ կամ չեղեալ կը յայտարարէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագիրները, բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի:

Մնում էր, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը յիշէր նաեւ, իր իսկ ձեռքով ստորագրուած եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգին պարտադրուած Սահմանադրութեան օրինակի 3-րդ յօդուածի 3-րդ կէտում պատահաբար պահպանուած ու նշուած է, որ՝ «Իշխանութեան իւրացումը որեւէ կազմակերպութեան կամ անհատի կողմից յանցագործութիւն է»:

Այսօր արդէն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան իւրացման ու բռնագաւթման առաջին քայլերն արուած են, դրանք են՝ Նախագահի հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառոյթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին), որպէս Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետի ու կառավարութեան պաշտօնանկութեան հրամանագիր, հիմնուած ապօրինի ու անօրինական Սահմանադրութեան ապօրինի յօդուածի վրայ:

Նախագահի սոյն հրամանագրերը՝ Թիւ 42 – 2017.05.31 եւ Թիւ 43 – 2017.05.31, համարում ենք ապօրինի եւ անօրինական՝ ընդունման պահից:

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը մանրամասն քննելով ու համադրելով ներկայացուած փաստերը՝ Որոշեց՝

1. Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից գործող օրէնսդրութեան գիտակցաբար ու կոպիտ խախտումները, որոնք կատարուել են, մասնաւորապէս, Արեւմտեան Հայաստանի «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքի 36-րդ, 37-րդ, 44-րդ յօդուածները:

2. Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից Սահմանադրութեան միանձնեայ օրինակի ընդունման եւ դրա պարտադրման գործողութիւնները, ուղղուած Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան իշխանութեան օրինական մարմիններին:

3. Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից Սահմանադրութեան միանձնեայ իր օրինակի ընդունման, հաստատման եւ տարածման գործողութիւնները:

4. Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից պետական իշխանութիւնը իւրացնելու փորձը:

5. Անվտանգութիւն յայտնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանին Արեւմտեան Հայաստանի պետական համակարգի օրէնքները խախտելու համար:

6. Ելնելով վերոնշեալից՝ 2017 թ. յունիսի 11-ից դադարեցնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնները, որպէս Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 44, դէմ – 0, ձեռնպահ – 7:

Որոշումն ընդունուած է:

Ընդմիջում՝ 15:00-15:30:

Երկրորդ նիստ

Նիստի սկիզբը ժամը 15:30-ին, աւարտը՝ 18:00-ին:

Հաշուի առնելով, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի լիազօրութիւնները դադարեցուած է եւ նախագահի պաշտօնը այս պահին թափուր է, նստաշրջանում ընտրել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նոր նախագահ:

Համաձայն Արեւմտեան Հայաստանի «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքի՝ Յօդուած 42) Արեւմտեան Հայաստանի տարածքում, որը ժամանակաւորապէս բռնազաւթուած է Թուրքիայի Հանրապետութեան կողմից, ուղղակի ընտրութիւններ անցկացնելու անհնարիւնութեան հետ կապուած՝ այս փուլում ընտրուած Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը) ինքն է ընտրում պետութեան գլուխ՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորների կազմից:

4. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի ընտրութեան մասին: Որպէս թեկնածու առաջադրուեց Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր Ռադիկ Խամոյեանը:

Որոշեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ պետութեան գլուխ, ընտրել Ռադիկ Խամոյեանին:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 44, դէմ – 0, ձեռնպահ – 7

Որոշումն ընդունուած է:

\*\*\*

Համաձայն Արեւմտեան Հայաստանի «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքի՝ Յօդուած 43) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր

նախագահ Ռադիկ Խամոյեանը ստանձնելով պաշտօնը, պատգամաւորների ներկայութեամբ, նախագահի երդումը տուեց:

\*\*\*

Ըստ Արեւմտեան Հայաստանի «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքի՝ Յօդուած 44) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյեանը ընդունում է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի եւ նրա ղեկավարած կառավարութեան հրաժարականը, որը գործել է 2014 թ. յունուարի 20-ից մինչ օրս:

5. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետի ընտրութեան մասին:

Որոշեցին՝ համաձայն «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» օրէնքի՝ յօդուած 44), Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյեանի առաջարկութեամբ, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնում հաստատել Տիգրան Փաշաբեգեանին:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 48, դէմ – 0, ձեռնպահ – 3

Որոշումն ընդունուած է:

6. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կազմելու մասին:

Որոշեցին՝ համաձայն «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» օրէնքի՝ յօդուած 52), Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Փաշաբեգեանը նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյեանի հաստատմանը, իսկ Խորհրդարանի պատգամաւորների հաւանութեանը ներկայացրեց կառավարութեան կազմում փոխվարչապետ Պետրոս Քելիշօղլեանի, Կրթութեան նախարար Վրէժ Քոսայեանը, Մշակոյթի նախարար Վահան Սանանեանի թեկնածութիւնը եւ պարտաւորուեց մէկամսեայ ժամկէտում ներկայացնել կառավարութեան կազմի այլ թեկնածուների:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 48, դէմ – 0, ձեռնպահ – 3

Որոշումն ընդունուած է:

7. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան ծրագրի մասին:

Որոշեցին՝ Առաջիկայ երկու ամիսների ընթացքում Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան ծրագրերը:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 48, դեմ – 0, ձեռնպահ – 3

Որոշումն ընդունուած է:

8. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 3-րդ ընթերցման եւ Սահմանադրութեան ընդունման յետագայ ընթացակարգի վերաբերեալ:

Որոշեցին՝

ա) Հաստատել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի 3-րդ, վերջնական, ընթերցումը եւ հաշուի առնելով պատգամաւորների առաջարկներն ու լրացումները՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը դնել համաժողովրդական քննարկման,

բ) որից յետոյ մէկ ամսուայ ընթացքում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը դնել համաժողովրդական հանրաքուէի:

գ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը հրապարակել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական կայքերում եւ լրատուամիջոցներում:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 45 , դեմ – 0, ձեռնպահ – 6:

Որոշումն ընդունուած է:

9. Լսեցին՝ 4-րդ նստաշրջանից յետոյ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահութեան կողմից ընդունուած որոշումների հաստատում:

Որոշեցին՝ հաստատել 4-րդ նստաշրջանից յետոյ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահութեան կողմից ընդունուած որոշումները:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ -46, դեմ – 0, ձեռնպահ – 5:

Որոշումն ընդունուած է:

Այլ հարցեր:

10. Լսեցին՝ սոյն արձանագրութեան 3-րդ կէտում նշուած որոշումների կատարման ուղիների մասին:

Որոշեցին՝ հաշուի առնելով, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնները դադարեցուած է եւ ընտրուած Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նոր նախագահ Ռադիկ Խամոյեանը, ստեղծել կառավարութեան եւ խորհրդարանի համատեղ յատուկ յանձնաժողով հետեւեալ հարցերի կարգաւորման նպատակով.

ա) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանից ստանալ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կնիքը:

բ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան լիազօր մարմնին յանձնարարել շարունակել աշխատանքները Արեւմտեան Հայաստանի հայերի ինքնութեան ու քաղաքացիութեան յայտերի գրանցման եւ համապատասխան փաստաթղթերի յանձնման:

գ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան լիազօր մարմնին յանձնարարել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ

Արմենակ Աբրահամեանից ստանալ ինքնուրթեան քարտերի պատրաստման սարքաւորումը:

դ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմենակ Աբրահամեանից ստանալ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական քիւլեյի մուտքերի եւ ծախսերի հաշուեկշիռը:

է) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան լիազօր մարմին յանձնարարել կարգաւորել պետական հաշվեհամարների օգտագործման լիազօրութիւնների հարցը եւ նշանակել պատասխանատուներ հաշիւների օգտագործման համար:

զ) Բոլոր հրամանագրերն ու որոշումները, յայտարարութիւններն ու պաշտօնական փաստաթղթերը ստորագրուած 2017 թ. յունիսի 11-ից յետոյ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմենակ Աբրահամեանի կողմից համարել անվաւեր եւ իրաւական ուժ չունեցող:

Քուէարկութեան արդիւնքները.

Կողմ – 43, դէմ – 0, ձեռնպահ – 8:

Որոշումն ընդունուած է:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման հինգերորդ նստաշրջանի նիստն աւարտուեց:

Արմէն Տէր–Սարգսեան՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորեան՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

11.06.2017 թ.,

### **Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմենակ Աբրահամեանի լիազօրութիւնները դադարեցուած են**

2017 թ. յունիսի 11-ին Երեւանում գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի 1-ին նիստում ընդունուել է որոշում 2017 թ. յունիսի 11-ից Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմենակ Աբրահամեանի լիազօրութիւնների դադարեցման մասին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական օրէնքների կոպիտ խախտումների եւ իշխանութեան իւրացման փորձի մեղադրանքներով:

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընդունած որոշման մէջ մասնաւորապէս նշուած է.

«հաշուի առնելով այն հանգամանքը, որ՝



-Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը Սահմանադրութեան բոլոր ընթացակարգերով անցած եւ ընդունուած Սահմանադրութիւն դեռեւս չունի եւ նա առաջնորդում է՝ Արեւմտեան Հայաստանի «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքով,

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը խախտել է վերոնշեալ օրէնքի «Արեւմտեան Հայաստանի պետական կ'առուցուածքը» բաժնի հետեւեալ յօդուածների դրոյթներն ու պահանջները.

Յօդուած 36) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը նախագահախորհրդարանական հանրապետութիւն է:

Յօդուած 37) Արեւմտեան Հայաստանի նախագահը՝ պետութեան գլուխն է՝ Արեւմտեան Հայաստանի բարձրագոյն պաշտօնատար անձը, Սահմանադրութեան, մարդու իրաւունքների ու ազատութիւնների երաշխատորը: Արեւմտեան Հայաստանի Սահմանադրութեան եւ օրէնքների համաձայն՝ նա միջոցներ է ձեռք առնում Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան, անկախութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման, պետական իշխանութեան մարմինների միջեւ գործառոյթների ներդաշնակ համադրման եւ համագործակցութեան:

Յօդուած 44) Արեւմտեան Հայաստանի նախագահը՝

-Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնութեամբ նշանակում ու ազատում է Արեւմտեան Հայաստանի կառավարութեան վարչապետին,

-Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնութեամբ որոշում է կայացնում Արեւմտեան Հայաստանի կառավարութեան հրաժարականի մասին,

-Արեւմտեան Հայաստանի վարչապետի առաջարկութեամբ նշանակում ու ազատում է պաշտօնից Արեւմտեան Հայաստանի վարչապետի օգնականներին եւ նախարարներին,

Յօդուած 52) Արեւմտեան Հայաստանի կառավարութեան վարչապետը Արեւմտեան Հայաստանի նախագահին առաջարկում է Արեւմտեան Հայաստանի կառավարութեան փոխվարչապետի պաշտօնի թեկնածուներին եւ Արեւմտեան Հայաստանի նախարարներին՝ նախապէս տեղեակ պահելով Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովին եւ հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարծիքները:

Որտեղ նշուած է նաեւ,

Յօդուած 14) Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորի լիազօրութիւնների դադարեցումը կարող է տեղի ունենալ հետեւեալ դէպքերում.

-այն դէպքում, երբ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորը իր գործունէութեամբ կամ անգործութեամբ վնաս է հասցնում Արեւմտեան Հայաստանին, Արեւմտեան Հայաստանի պետական կառոյցներին: Սոյն յօդուածի կէտը վերաբերում է նաեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան բոլոր պաշտօնեաներին:

Հակընդդէմ վերը մէջբերուած յօդուածների դրոյթների ու պահանջների՝

-Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը շուրջ երկու տարի է ինչ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ողջ պետական

համակարգին ուժով պարտադրում է 2016-ի մայիսի 9-ին իր միանձեռն ստորագրութեամբ, իբրև թե իր կողմից հաստատում ստացած Սահմանադրության իր տարբերակը,

-որն ի տարբերություն վերը նշուած գործող օրենքի դրոյթի ու պահանջի, ոչ թե նախագահա-խորհրդարանական, այլ նախագահական կոշտ ու անզիջում կառավարման օրինակ է:

Արձանագրենք նաեւ, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի պարտադրած Սահմանադրութեան օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառուցուածքի իրաւական-քաղաքական տրամաբանութիւնը եւ չի կարող ընդունուել, որպէս հիմք կամ օրինակ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան համար, որովհետեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառավարման համակարգը նախագա-խորհրդարանական է:

Դրանով իսկ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը յայտ է ներկայացնում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան իրացման ու բռնազաւթման, որոնք Սահմանադրութեան իր պարտադրած օրինակում հետեւեալ ձեւերով են արտայայտուած.

Յօդուած 162

4-րդ կէտ. Մինչեւ Ազգային ժողովի եաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ Հանրապետութեան Նախագահը կրնայ.

-Ազգային ժողովի նախագահին եւ վարչապետին հետ խորհրդակցելէ ետք՝ արձակել Ազգային ժողովը, եւ նշանակել արտահերթ ընտրութիւն,  
-ազատել վարչապետին:

5-րդ կէտ. Մինչեւ Ազգային ժողովի եաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ կ'առավարութեան նիստերը կը հրաւիրէ եւ կը վարէ Հանրապետութեան Նախագահը, կամ անոր յանձնարարութեամբ՝ վարչապետը: Կ'առավարութեան որոշումները կը ստորագրէ վարչապետը, կը վաւերացնէ՝ Հանրապետութեան Նախագահը:

Յօդուած 107.

Ազգային ժողովը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի առաջարկութեամբ կը վաւերացնէ, կը կ'ասեցնէ կամ չեղեալ կը եայտարարէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագիրները, բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի:

Մնում էր, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանը յիշէր նաեւ, իր իսկ ձեռքով ստորագրուած եւ Արեւմտեան Հայաստանի

Հանրապետության պետական համակարգին պարտադրուած Սահմանադրութեան օրինակի 3-րդ յօդուածի 3-րդ կէտում պատահաբար պահպանուած ու նշուած է նաեւ, որ 3) Իշխանութեան իւրացումը որեւէ կազմակերպութեան կամ անհատի կ'ողմէ յանցագործութիւն է:

Այսօր արդէն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան իւրացման ու բռնազաւթման առաջին քայլերն արուած են, դրանք են՝ Նախագահի հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառոյթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին), որպէս Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետի ու կառավարութեան պաշտօնակութեան հրամանագիր, հիմնուած ապօրինի ու անօրինական Սահմանադրութեան ապօրինի յօդուածի վրայ:

Հետեւաբար, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը մանրամասն քննելով ու համադրելով ներկայացուած փաստերը՝

Որոշեց՝

- 1) Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից գործող օրէնսդրութեան գիտակցաբար ու կոպիտ խախտումները, որոնք կատարուել են, մասնաւորապէս, Արեւմտեան Հայաստանի «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքի 36-րդ, 37-րդ, 44-րդ յօդուածները:
- 2) Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից Սահմանադրութեան միանձնեայ օրինակի ընդունման եւ դրա պարտադրման գործողութիւնները, ուղղուած Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան իշխանութեան օրինական մարմիններին:
- 3) Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի ինքնաստեղծ Սահմանադրութեան միանձնեայ իր օրինակի ընդունման, հաստատման եւ տարածման գործողութիւնները:
- 4) Դատապարտել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից պետական իշխանութիւնը իւրացնելու փորձը:
- 5) Անվստահութիւն յայտնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանին Արեւմտեան Հայաստանի պետական համակարգի օրէնքները խախտելու համար:
- 6) Ելնելով վերոնշեալներից՝ 2017 թ. յունիսի 11-ից դադարեցնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի նախագահական լիազօրութիւնները:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)

Լրատուական ծառայութիւն

11.06.2017 թ.

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ է ընտրուել  
Ռադիկ Խամոյեանը**

2017 թ. յունիսի 11-ին Երեւանում գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ է ընտրուել է Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր Ռադիկ Խամոյեանը:

Յիշեցնենք, որ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի աւելի վաղ տարածած հաղորդագրութեան մէջ ասուած էր, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնները դադարեցուած են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական օրէնքների կոպիտ խախտումների եւ իշխանութեան իրացման փորձի մեղադրանքներով:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)  
Լրատուական ծառայութիւն

11.06.2017 թ.

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ  
Տիգրան Փաշաբեգեանը վերահաստատուել է իր պաշտօնում**

2017 թ. յունիսի 11-ին Երեւանում գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ է հաստատուել Տիգրան Փաշաբեգեանը, որի թեկնածութիւնը առաջադրել է հին կառավարութեան հրաժարականը ընդունած Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյեանը:

Յիշեցնենք, որ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի աւելի վաղ տարածած հաղորդագրութեան մէջ ասուած էր, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնները դադարեցուած են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական օրէնքների կոպիտ խախտումների եւ իշխանութեան իրացման փորձի մեղադրանքներով:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)  
Լրատուական ծառայութիւն

11.06.2017 թ.

**Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ  
Արմէն Տէր-Սարգսեանի ուղերձը պատգամաւորներին, պաշտօնեաներին ու  
քաղաքացիներին**

**11-ը յունիսի 2017 թ. գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի  
(Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանում կայացուած որոշումների կապակցութեամբ**

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանը այսօր փորձում է Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանին «յեղաշրջման փորձի» կեղծ մեղադրանք ներկայացնել մոռանալով, որ ինքն է անձամբ վերջին երկու տարիներին իրականացրել «յեղաշրջման փորձ» Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ողջ պետական համակարգի նկատմամբ, իսկ դրա «իրաւաչափութիւնը» ապահովելու համար համակարգին պարտադրել ինքնաստեղծ Սահմանադրութիւն, որն իր բնութագրմամբ, ստորագրել, հաստատել ու վաւերացրել է 2016 թ. մայիսի 9-ին:

Մոռանալով, որ ունենալով մեծ իշխանութիւն, որը նախագահի լիազօրութիւններով է պայմանաւորուած, ձգտել է ամբողջատիրական (տոտալ) իշխանութեան ողջ համակարգի եւ նրա բոլոր մասնակիցների նկատմամբ:

Յիշեցնենք, որ 2017 թ. յունիսի 11-ին Երեւանում գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի նիստում ընդունուել է որոշում 2017 թ. յունիսի 11-ից Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնների դադարեցման մասին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական օրէնքների կոպիտ խախտումների եւ իշխանութեան իւրացման փորձի մեղադրանքներով:

Նշենք, որ աշխարհում գոյութիւն չունեն ինքնաստեղծ սահմանադրութիւններ, ըստ միջազգային իրաւական համակարգի, ցանկացած Սահմանադրութիւն, որպէսզի համարուի ընդունուած ու իրաւաչափ՝ պետք է անցնի շատ որոշակի գործընթաց.

1. Սահմանադրութեան նախագծի առաջին ընթերցում (ներ),
2. Սահմանադրութեան նախագծի հրապարակային համաժողովրդական քննարկում,
3. Սահմանադրութեան նախագծի օրինակի համաժողովրդական հանրաքուէ,
4. որից յետոյ միայն, եթէ հանրաքուէին մասնակցած հանրութիւնը կողմ է քուէարկում հանրաքուէի դրուած Սահմանադրութեան օրինակին, ապա դա համարում է ընդունուած:

Կարելոյ չէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանը տիրապետում է այդ գիտելիքներին, թէ ոչ: Կարելոյր նրա ձգտումն է անպայման «իրաւաչափ ու օրինական» դարձնելու Սահմանադրութեան ինքնաստեղծ իր օրինակը, որպէսզի դրա միջոցով, հնարաւոր ու անհնարին բոլոր իրաւունքները վերապահելով իրեն, միանձեայ ու լիակատար իր իշխանութիւնը տարածի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ողջ պետական համակարգի եւ քաղաքացիների վրայ եւ իր ինքնաստեղծ Սահմանադրութեան յօդուածների վրայ յենուելով, համակարգի բոլոր

թելերի՝ նախագահական, կառավարութիւն, խորհրդարան եւ համակարգի բոլոր մասնակիցների նկատմամբ, պաշտօնեաներ, պատգամաւորներ, քաղաքացիներ, վարուի օրուայ քմահաճոյքի համեմատ:

Դրա առաջին քայլը, որ կարելի է կոչել նաեւ սողացող «յեղաշրջման փորձ», ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան իւրացման ու բռնագաւթման առաջին փորձ՝ իրականացման է դրուել 2017 թ. մայիսի 31-ին, երբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ (այժմ արդէն նախկին նախագահ) Արմէնակ Աբրահամեանի կողմից ստորագրուել են ապօրինի հրամանագրեր, հիմնուած ապօրինի Սահմանադրութեան ինքնաստեղծ օրինակի վրայ: (Նախագահի հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառոյթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին)

Այդ իմաստով, 5-րդ նստաշրջանում կայացուած որոշումները բնաւ պատահականութեան արդիւնք չէին, այլ խորապէս քննութեան առնուած, կշռադատուած ու պահանջուած:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան պատրաստութեան աշխատանքները սկսուել են 2014 թ. օգոստոսի 10-ից յետոյ, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագրի հիման վրայ, որտեղ նշուած էր. «Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովին (Խորհրդարանին) առաջարկում ենք ձեւաւորել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մշակման յանձնաժողով եւ ձեռնարկել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի մշակումը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառոյցների ձեւի եւ բովանդակութեան համար՝ որպէս հիմք ընդունելով Արեւմտեան Հայաստանի հայերի եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիների կամարտայայտութեան վերաբերեալ վերոյիշեալ հռչակագրերը, որոշումները, օրէնքներն ու իրաւական փաստաթղթերը»:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի առաջին ընթերցումը հաստատել է Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման երրորդ նստաշրջանը (27-ը դեկտեմբերի, 2015 թ., Երեւան): Ահա քաղուածք նստաշրջանի արձանագրութիւնից.

«Լսեցին՝ Առաջին ընթերցմամբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի հաստատման մասին: Ելոյթի համար խօսքը տրուում է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանին:

Որոշեցին՝ հաստատել առաջին ընթերցմամբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը»:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի երկրորդ ընթերցումը հաստատել է Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման չորրորդ նստաշրջանը (17-ը դեկտեմբերի, 2016 թ., Երեւան): Ահա քաղուածք արձանագրութիւնից.

«Լսեցին՝ երկրորդ ընթերցմամբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի հաստատման մասին:  
Որոշեցին՝ հաստատել երկրորդ ընթերցմամբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը»:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի երրորդ ընթերցումը հաստատել է Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման հինգերորդ նստաշրջանը (11-ը յունիսի, 2017 թ., Երեւան): Ահա քաղուածք այդ արձանագրութիւնից.

«Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 3-րդ ընթերցման եւ Սահմանադրութեան ընդունման յետագայ ընթացակարգի վերաբերեալ:

Որոշեցին՝

ա) Հաստատել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի 3-րդ, վերջնական, ընթերցումը եւ հաշուի առնելով պատգամաւորների առաջարկներն ու լրացումները՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը դնել համաժողովրդական քննարկման,

բ) որից յետոյ մէկ ամսուայ ընթացքում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը դնել համաժողովրդական հանրաքուէի:

գ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը հրապարակել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական կայքերում եւ լրատուամիջոցներում»:

Հետեւաբար, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանը երբեք հնարաւորութիւն չունէր հրամանագիր ստորագրել հիճնուած գոյութիւն չունեցող Սահմանադրութեան յօդուածի վրայ: Սա ե՛լ լիազօրութիւնների չարաշահում է, ե՛լ սողացող «յեղաշրջման փորձ», ե՛լ իշխանութեան իւրացման փորձ:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ընդունած որոշման մէջ մասնաւորապէս նշուած է.

«հաշուի առնելով այն հանգամանքը, որ՝

-Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը Սահմանադրութեան բոլոր ընթացակարգերով անցած եւ ընդունուած Սահմանադրութիւն դեռեւս չունի եւ նա առաջնորդում է՝ Արեւմտեան Հայաստանի «արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրէնքով, որ

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ (արդէն նախկին նախագահ) Արմէնակ Աբրահամեանը խախտել է վերոնշեալ օրէնքի «Արեւմտեան Հայաստանի պետական կ'առուցուածքը» բաժնի հետեւեալ յօդուածների դրոյթներն ու պահանջները.

Յօդուած 36) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը նախագահախորհրդարանական հանրապետութիւն է:

Յօդուած 37) Արեւմտեան Հայաստանի նախագահը՝ պետութեան գլուխն է՝ Արեւմտեան Հայաստանի բարձրագոյն պաշտօնատար անձը, Սահմանադրութեան, մարդու

իրաունքների ու ազատությունների երաշխատորը: Արեւմտեան Հայաստանի Սահմանադրութեան եւ օրէնքների համաձայն՝ նա միջոցներ է ձեռք առնում Արեւմտեան Հայաստանի հայերի իրաունքների պաշտպանութեան, անկախութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման, պետական իշխանութեան մարմինների միջեւ գործառոյթների ներդաշնակ համադրման եւ համագործակցութեան:

Յօդուած 44) Արեւմտեան Հայաստանի նախագահը՝

-Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնութեամբ նշանակում ու ազատում է Արեւմտեան Հայաստանի կառավարութեան վարչապետին,

-Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնութեամբ որոշում է կայացնում Արեւմտեան Հայաստանի կառավարութեան հրաժարականի մասին,

-Արեւմտեան Հայաստանի վարչապետի առաջարկութեամբ նշանակում ու ազատում է պաշտօնից Արեւմտեան Հայաստանի վարչապետի օգնականներին եւ նախարարներին,

Յօդուած 52) Արեւմտեան Հայաստանի կառավարութեան վարչապետը Արեւմտեան Հայաստանի նախագահին առաջարկում է Արեւմտեան Հայաստանի կառավարութեան փոխվարչապետի պաշտօնի թեկնածուներին եւ Արեւմտեան Հայաստանի նախարարներին՝ նախապէս տեղեակ պահելով Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովին եւ հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորների կարծիքները:

Որտեղ նշուած է նաեւ,

Յօդուած 14) Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորի լիազօրութիւնների դադարեցումը կարող է տեղի ունենալ հետեւեալ դէպքերում.

-այն դէպքում, երբ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւորը իր գործունէութեամբ կամ անգործութեամբ վնաս է հասցնում Արեւմտեան Հայաստանին, Արեւմտեան Հայաստանի պետական կառոյցներին: Սոյն յօդուածի կէտը վերաբերում է նաեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան բոլոր պաշտօնեաներին:

Հակընդդէմ վերը մէջբերուած յօդուածների դրոյթների ու պահանջների՝

-Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ (արդէն նախկին նախագահ) Արմէնակ Աբրահամեանը շուրջ երկու տարի է ինչ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ողջ պետական համակարգին ուժով պարտադրում է 2016-ի մայիսի 9-ին իր միանձնեայ ստորագրութեամբ, իբրեւ թէ իր կողմից հաստատում ստացած Սահմանադրութեան իր տարբերակը,

-որն ի տարբերութիւն վերը նշուած գործող օրէնքի դրոյթի ու պահանջի, եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան առաջին եւ երկրորդ ընթերցումների մէջ ներառուած յօդուածների, ոչ թէ նախագահա-խորհրդարանական, այլ նախագահական կոշտ ու անզիջում կառավարման օրինակ է:

Արձանագրելով, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ (այժմ արդէն նախկին նախագահ) Արմէնակ Աբրահամեանի պարտադրած Սահմանադրութեան օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառուցուածքի իրաւական-քաղաքական տրամաբանութիւնը եւ չի կարող ընդունուել, որպէս հիմք կամ օրինակ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան համար, որովհետեւ Արեւմտեան Հայաստանի



Հանրապետության պետական կառավարման համակարգը նախագահորհրդարանական է:

Հետևաբար, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը մանրամասն քննելով ու համադրելով ներկայացուած փաստերը՝

Որոշեց՝ 2017 թ. յունիսի 11-ից դադարեցնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմէնակ Աբրահամեանի նախագահական լիազօրութիւնները:

Ահա այս որոշումը եւ այլ որոշումներ նոյնպէս միտուած էին կարգաւորելու հետեւեալ խնդիրները.

ա) Արեւմտեան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի ապօրինի հրամանագրերից ու ոտնձգութիւններից պաշտպանելու համակարգի պաշտօնեաներին, պատգամաւորներին, քաղաքացիներին ու բոլոր մասնակիցներին,

բ) պաշտպանելու համակարգի թելերի՝ նախագահական, կառավարութիւն, խորհրդարան ազատութիւնը, անկախութիւնը, լիակատար համագործակցութիւնը,

գ) պաշտպանելու հայութեան իրաւունքների պաշտպանութեան գործընթացը արտաքին եւ ներքին ոտնձգութիւններից ու թելադրանքներից:

Այդ խնդիրները կարգաւորուած են:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը նոր նախագահ ունի՝ Ռադիկ Խամոյեանը, նոր կառավարութիւն է ձեւաւորուում՝ վարչապետի պաշտօնում երրորդ անգամ անընդմեջ հաստատուել է Տիգրան Փաշաբեգեանը, խորհրդարանը Արմէն Տէր-Սարգսեանի նախագահութեամբ շարունակում է իր աշխատանքները եւ, ըստ այդմ, Արեւմտեան Հայաստանի Հանրապետության ողջ պետական համակարգը կարող է առաջ շարժուել եւ առանց հին արգելքների ու խոչընդոտների շարունակել Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան շատ պատասխանատու գործը:

Արմէն Տէր-Սարգսեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

14.06.2017 թ.

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի ուղերձը  
պաշտօնեաներին, պատգամաւորներին ու քաղաքացիներին**

**11-ը յունիսի 2017 թ. գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի  
(Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանում կայացուած որոշումների կապակցութեամբ**

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի դէմ ուղղուած անօրինականութեան երկու փորձերի մասին իրականացուած 2014 եւ 2017 թուականներին:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգը անօրինականութեան ու ապօրինութեան գործողութիւններին ու փաստերին առնչուել է երկու անգամ՝ 2014 թ. եւ 2017 թ.:

ա) Մեր հայրենակիցներին ու քաղաքացիներին, ընկերներին ու գործընկերներին յիշեցնենք, որ անօրինականութեան առաջին գործողութիւնը իրականացուել է 2014 թուականի յուլիսի 21-ի, երբ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կայացրած անվստահութեան որոշման (համաձայն՝ «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրէնքի 14-րդ յօդուածի) (11.06.2014), Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի հրամանագրի (03.07.2014) եւ վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի թիւ 7 որոշման (22.07.2014) հիման վրայ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան (այժմ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն) Արտաքին գործերի նախարարի պաշտօնից ազատուած Արամ Մկրտչեանը հրաւիրել է Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան ապօրինի նիստ, կայացրել ապօրինի որոշումներ ու անօրինական նշանակումներ, այդ թւում, ինքն իրեն վարչապետ նշանակել, որից յետոյ այդ ամէնը փորձել է ներկայացնել, իբրեւ թէ իրաւական ու իրաւաչափ մի գործընթաց:

Այդ հարցով մենք հանդէս ենք եկել շուրջ 21 յայտարարութիւններով, հրապարակումներով ու յօդուածներով: Վերոյիշեալ պարբերութեան մէկ հատուածը վերցուած էր «Մէկ օրուայ «Լեզիտիմութեան» զաւեշտը» հրապարակումից (16.11.2014 թ.):

2017 թ. յունիսի 15-ին Արամ Մկրտչեանը հանդէս է եկել յայտարարութեամբ, որի շարժառիթը պարզապէս առիթից օգտուելն է, որտեղ իրողութիւնները կրկին կեղծուած են, իսկ նպատակը մէկը՝ «իրաւաչափութեան» շունչ ու բնոյթ հաղորդել անօրինականութեան հիմքի վրայ ձեւաւորուած ինքնաստեղծ իր կառոյցին (Արեւմտեան Հայաստան պետութեան վտարանդի կառավարութեան եւ ազգային ժողովի համատեղ յայտարարութիւնը):

Միւս կողմից, առանց յատուկ ճիգի, իբրեւ թէ անշահախնդիր դիտորդի կարգավիճակով, Արամ Մկրտչեանի կողմից հրամցում է կարծես դիմակայութեան երկրորդ ճակատը, հաւանաբար պահը յարմար նկատելով, բայց դա ճիշտ կը լինէր, եթէ 1-ին գումարէինք 1 ու բնականաբար ստանայինք 2: Սակայն այս դեպքում քանի որ գործ ունենք երկու անօրինականութիւնների հետ, ապա նրանց գումարը տալիս 1, այսինքն՝ անօրինականութիւնը նոյնական է, մէկն է, ուստի դրա դէմ պայքարն էլ մէկն է ու միանշանակ է:

Սակայն, ֆէյսբուքեան ոճով պարզամիտ ձեւակերպումների, մտքերի ու բառակոյտերի միջոցով յայտարարութիւններ ու հրամանագրեր կազմելը, դրանց տակ ստորագրելը որպէս «վարչապետ» ու «պետութեան գլուխ», ինքնաշէն կնիքների ու զինանշանների

գործածությունը, որպես պաշտօնականության ու պետականության անպայման պայման, չեն կարող շտկել եւ կամ փրկել իրավիճակը, որովհետեւ երբ փաստերի հետ գործ ունես, ապա նրանք յամառ են եւ արձանագրում են, որ Արամ Մկրտչեանը այդ պահին՝ 2014-ին, ստեղծուած իրավիճակից անպայման ելք գտնելու ձգտումով դիմել է անօրինական ու ապօրինի քայլերի, աւելի ուշ ինքը նոյնպէս ինքնաստեղծ ու ապօրինի Սահմանադրութեան օրինակի ընդունումով, դրանցով ակամայ կանխորոշելով յետագայ գործողութիւնների ու ճանապարհի անօրինականութիւնը մինչեւ այսօր:

Միջազգային դիւանագիտական յարաբերութիւնների դերակատարներն ու մասնակիցները խուլ ու համր անտեղեակներ չեն եւ այս հարցերը, եթէ նոյնիսկ մենք չբարձրացնենք այսօր, իւրաքանչիւր յարմար պահի նրանք են բարձրացնելու՝ զատորոշելով օրինականը անօրինականից ու դրանց համապատասխան կողմնորոշուելու ու որոշումներ կայացնելու: Ապօրինի հիմքերով ձեւաւորուած կառոյցների հետ գործ բռնելը անվտանգ գործ չէ:

բ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի նկատմամբ անօրինականութեան երկրորդ գործողութիւնը իրականացուել է 2017 թ.: Դրա առաջին քայլը, ինչը կարելի է կոչել սողացող «յեղաշրջման փորձ», ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան իւրացման ու բռնագաւթման փորձ՝ իրականացման է դրուել 2017 թ. մայիսի 31-ին, երբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ (այժմ արդէն նախկին նախագահ) Արմէնակ Աբրահամեանի կողմից ստորագրուել են ապօրինի հրամանագրեր, հիմնուած ապօրինի ու ինքնաստեղծ Սահմանադրութեան օրինակի վրայ: (Նախագահի հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառոյթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին)

Յիշեցնենք, որ 2017 թ. յունիսի 11-ին Երեւանում գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում որոշում է ընդունուել 2017 թ. յունիսի 11-ից Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնների դադարեցման մասին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական օրէնքների կոպիտ խախտումների եւ իշխանութեան իւրացման փորձի մեղադրանքներով:

## 2.

Վարչապետի հրաժարականի մասին:

Վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի հրաժարականի վերաբերեալ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից շրջանառութեան մէջ դրուած տեղեկատուութիւնը, բացատրութիւններն ու պատճառաբանութիւնները նոյնպէս իրականութեանը չեն համապատասխանում, եւ կեղծուած են: Դրանք միտուած են մի կողմից քողարկելու եւ միւս կողմից արդարացնելու ինքնաստեղծ ապօրինի Սահմանադրութեան վրայ շինուած ապօրինի ու նախադէպային երկու հրամանագրերը վարչապետի պաշտօնից ազատելու, կառավարութիւնը ցրելու եւ նոր վարչապետի նշանակման:

Հարցի նախապատմությունը հետևեցին է: 2017 թ. յունուարի սկզբին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան այժմ արդէն նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի հետ մի առանձնագրոյցում յայտնեցինք մեր մտահոգութիւնները առ այն, որ տեւական մի ժամանակահատուած է, շուրջ երկու տարի, ինչ փոխուած է նրա կեցուածքն ու վերաբերմունքը, ինչպէս նաեւ գործելաոճը ընկերների ու գործընկերների, պաշտօնեաների ու պատգամաւորների եւ, համապատասխանաբար, նրանց կողմից ձեռնարկուած ցանկացած նախաձեռնութեան ու գործունէութեան նկատմամբ: Նշեցինք նաեւ, որ եթէ առաջիկայ երեք ամիսների ընթացքում՝ յունուար, փետրուար, մարտ, իրավիճակը արմատես չփոխուի, ապա հրաժարական ենք ներկայացնելու: Կարծում էինք, թէ հրաժարականի մասին սպառնալիքը սթափուելու եւ իրավիճակը փոխելու հնարաւորութիւն է ընձեռելու այժմ արդէն նախկին նախագահին:

Առանձնագրոյցից մէկ շաբաթ անց ներկայացրինք հրաժարականի դիմումը, որը գրուած էր 10 յունուար 2017-ին, բայց թուագրուած 30 մարտ 2017-ով, այսինքն՝ այն եռամսեայ ժամկետով, ինչով պայմանաւորել էին փոփոխութիւններ իրականացնելու մեր առաջարկը: Ահա դրա բովանդակութիւնը.

«Պարոն նախագահ

Խնդրում եմ ընդունել իմ հրաժարականը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետի պաշտօնից՝ ազգային - ազատագրական պայքարի գործընթացում այլ պատասխանատուութիւն ստանձնելու որոշման կապակցութեամբ:

Տիգրան Փաշաբեգեան, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ»

Երկու օր անց, 12 յունուար 2017-ին մէկ այլ գրութեամբ հետ վերցրինք հրաժարականի դիմումը: Գրութիւնը բաղկացած էր 6 կէտից, որից ներկայացնում ենք 1-ին, 2-րդ եւ 4-րդ կէտերը, որոնք առաւել կարեւոր են իրենց շեշտադրումներով:

1. «Հետ եմ կանչում վարչապետի հրաժարականի մասին դիմումը ուղարկուած 10 յունուար 2017 թ., որ նախօրօք մեր պայմանաւորուածութեան համաձայն թուագրել էի 30 մարտ 2017 թ.-ով, այսինքն՝ երեք ամսուայ պայմանաժամկետով:

2. Վարչապետի հրաժարականի դիմումը հետ կանչելը պայմանաւորուած է, այն մտահոգութեամբ, որ չի կարելի այս պատասխանատու պահին համակարգը թողնել առանց հիմնական դերակատարների, առանց նրանց ում ուսերին ու ում ջանքերով է իրականացուել մինչեւ այսօր կայացած բոլոր աշխատանքները եւ ձեռքբերումները, ինչպէս նաեւ համակարգի երեք պատասխանատուներից մէկի հետ քննարկումների վերջնաարդիւնքով:

4. Կարեւոր հանգամանք է, որ ընտրութիւնների արդիւնքում մեր ստանձնած պարտաւորութիւնն ու պատասխանատուութիւնը իրականացնենք մինչեւ վերջ, թէկուզ մինչեւ ընտրութիւնների սահմանած ժամանակը, հինգ տարուայ ժամկետում:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ»

Այնուհետեւ, 2017-ի յունուարի 10-ից եւ յունուարի 12-ից անցնում է ոչ միայն պայմանաժամի եռամսեայ ժամկետը, այլեւ եւս երեք ամիս եւ հրապարակում են վերոնշեալ ապօրինի հրամանագրերը, հիմնուած անօրինական - ինքնաստեղծ Սահմանադրութեան վրայ: Ոչ մի բացատրութիւն յունուարին ներկայացուած առաջարկի վերաբերեալ, այն իմաստով, թէ ինչ որ բան փոխուել է արդեօ՞ք այժմ արդէն նախկին

նախագահի վարքագծում եւ կամ փոխուելը՝ է ընդհանրապէս: Ոչ մի խօսք, ոչ մի բացատրութիւն:

Ոչ մի պատասխան ու բացատրութիւն նաեւ մեր այն պնդումներին ու յորդորներին, թէ չի կարելի միանձեայ ստորագրել եւ հաստատել անօրինական Սահմանադրութիւնը անցած մի թուագրումով՝ 9-ը մայիսի 2017 թ.-ով:

Բացատրութիւնների կամ քննարկումների փոխարէն, ինչպէս արդէն նշեցինք հրապարակում են ապօրինի ու անօրինական զոյգ հրամանագրերը:

Պարզ է, որ երբ անօրինականութեան ուղին եւ բռնում, դա կոծկելու համար այլ բան չի մնում անել, քան դիմել կրկնակի կեղծիքի, ինչպէս եւ արւում է այս դէպքում:

Համակարգը տեսանելի ու անտեսանելի խութերից պաշտպանելու մեր այս նախաձեռնութիւնը այդ վերաբերմունքին արժանացաւ ու ենթարկուեց կեղծիքի ու այլափոխումների, իբրեւ թէ՝ «վարչապետն էր հրաժարական տուել, իսկ եւս ընդամենը ընդառաջել եմ նրան»:

Այս դէպքում այժմ արդէն նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից կոպտօրէն խախտուել է «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» օրէնքի 44-րդ յօդուածի պահանջը, ըստ որի՝ վարչապետի նշանակումը եւ պաշտօնից հեռացումը հաստատում է միայն խորհրդարանը:

Ցանկալին իրականութեան տեղ է ընդունել, այնքան մեծ է եղել ընդդիմախօսութիւնն ու կառուցողական քննադատութիւնը չէզոքացնելու ձգտումը:

Կարծում ենք հիմա հասել է իր նպատակին, թէեւ բաւականաչափ թանկ գնով՝ այժմ արդէն նախկին նախագահի կարգավիճակով:

### 3.

Վարչապետի վերաբերմունքը այժմ արդէն նախկին նախագահի պարտադրած Սահմանադրութեան օրինակի նկատմամբ:

Գործընկերային ընդդիմախօսութեան ու քննադատութեան օրինակ է այժմ արդէն նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի պարտադրած Սահմանադրութեան տարբերակի մերժումն ու հիմնաւորումը:

2017 թ. մայիսին հրապարկուեց Սահմանադրութեան ապօրինի օրինակը, որը, իբրեւ թէ, ընդունուել է դեռեւս 2016 թ. մայիսի 9-ին, որից յետոյ Արմէնակ Աբրահամեանի կողմից շրջանառութեան մէջ դրուեց եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգին պարտադրուեց այն թեզը, որ ինքը ստորագրել, հաստատել ու վաւերացրել է Սահմանադրութեան ինքնաստեղծ այդ օրինակը:

Նշենք նաեւ, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան այժմ արդէն նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի պարտադրած Սահմանադրութեան օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառուցուածքի իրաւական-քաղաքական տրամաբանութիւնը եւ չի կարող ընդունուել, որպէս հիմք կամ օրինակ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան համար:

Իշխանութեան իւրացման փորձ է Արմէնակ Աբրահամեանի կողմից պարտադրուած Սահմանադրութեան ապօրինի օրինակի 107 եւ 162-րդ յօդուածների ձեւակերպումները, որոնցում նշուած է՝

Յօդուած 107.

Ազգային ժողովը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի առաջարկութեամբ կը վաւերացնէ, կը կ'ասեցնէ կամ չեղեալ կը եայտարարէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագիրները, բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի:

Յօդուած 162.

4-րդ կէտ. Մինչեւ Ազգային ժողովի եաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ Հանրապետութեան նախագահը կրնայ.

-Ազգային ժողովի նախագահին եւ վարչապետին հետ խորհրդակցելէ ետք՝ արձակել Ազգային ժողովը, եւ նշանակել արտահերթ ընտրութիւն,  
-ազատել վարչապետին:

Սահմանադրութեան ինքնաստեղծ օրինակի պարտադրանքը ի յայտ էր գալիս բոլոր հարկի ու անհարկի պարագաներում, առանձնագրոյցներում, նիստերի ժամանակ, 4-րդ նստաշրջանին եւ այլ... Վերջին անգամ դա պարտադրուեց Նախագահութեան նիստի ժամանակ, որտեղ բանաւոր արտայայտեցինք մեր անհամաձայնութիւնը, իսկ նիստից յետոյ պատրաստեցինք դրա գրաւոր օրինակը, որը թուագրուած էր 2017 թ. մարտի 16-ով: Ահա այդ դիմումի ամբողջական տեքստը.

«Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանին Պարոն նախագահ

Ես որպէս ԱՀՀ վարչապետ բանաւոր յայտնել եմ իմ անհամաձայնութիւնը 13 մարտ 2017 թ. Նախագահական նիստի օրակարգում ներառուած ԱՀՀ Սահմանադրութեան ձեռնառագարկած տարբերակի ընդունման փորձի նկատմամբ, ընդգծելով երկու խնդիր.

ա) իմ անհամաձայնութիւնը ԱՀՀ Սահմանադրութեան ձեռնառագարկած օրինակի մի շարք յօդուածների նկատմամբ, այդ թւում՝ յօդուած 107, 108, 162 եւ այլ, ինչպէս նաեւ

բ) ԱՀՀ Սահմանադրութեան ձեռնառագարկած օրինակի ընդունման ու հաստատման ձեւի ու եղանակի կապակցութեամբ, որը ենթադրում է Սահմանադրութեան ընդունում առանց Արեւմտեան Հայաստանի հայերի մէջ անցկացուած հանրաքուէի:

Նշեմ, որ երկու դէպքում էլ հաշուի չի առնուած ԱՀՀ վարչապետի վերջին շրջանում ձեռք իսկ համաձայնութեամբ իրականացուած աշխատանքի արդիւնքներն ու առաջարկները, եւ ձեռք ներկայացուած Սահմանադրութեան նախագծի համապատասխան օրինակը, որը կարող էր համարուել որպէս ԱՀՀ Սահմանադրութեան նախագծի 2-րդ ընթերցում, ինչպէս նաեւ հաշուի չի առնուած Խորհրդարանի նախագահութեան ու նախագահի պատրաստուող առաջարկները Սահմանադրութեան նախագծի վերաբերեալ:

Ես որպէս 1980 թ.-ից Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան համար պայքարող, իսկ 2011 թ. փետրուարից որպէս Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան գործին ու նպատակին օր ու գիշեր լծուած ու ծառայած մարդ չեմ կարող ընդունել այն փորձերը, որոնք խախտում են ԱՀՀ պետական համակարգի թելերի

արդիւնաւէտ համագործակցութեան հնարաւորութիւնն ու հաւասարակշռութիւնը եւ ամբողջ իշխանութիւնը փորձում են կենտրոնացնել մէկ մարդու ձեռքում, այս դէպքում՝ ԱՀՀ նախագահի:

Ինչպէս նաեւ չեմ կարող ընդունել, որ Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան գործում բազմաթիւ հռչակագրեր, հրամանագրեր ու օրէնքներ՝ ընդունուած իրաւական-քաղաքական նորմերին համապատասխան պատրաստելուց ու հաստատելուց յետոյ այժմ, ամենապատասխանատու պահին, փորձ է արւում Սահմանադրութեան անընդունելի օրինակի հաստատման փորձ ձեռնարկել՝ ընդունուած իրաւական-քաղաքական նորմերին հակառակ:

Դա ԱՀՀ պետական համակարգի համար կարող է ունենալ անկախատեսելի բացասական հետեւանքներ եւ արտաքին, եւ ներքին քաղաքականութեան ոլորտներում, ինչը բնականաբար անընդունելի է ու մերժելի հիմքից:

Մինչեւ վերջ հաւատարիմ մնալով Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան գործին ու նպատակին՝ հարկ համարեցի իմ սկզբունքային անհամաձայնութիւնների վերաբերեալ տեղեակ պահել ձեզ նաեւ գրաւոր, որոնք բանաւոր արտայայտել եմ 13 մարտ 2017 թ. Նախագահական նիստի ժամանակ:

Այս գրութեան մէկական օրինակ ուղարկուած է նաեւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահին եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան փոխվարչապետին:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ»

Սոյն դիմումը գիտակցաբար չենք հրապարակել ու տարածել առանց այն էլ լարուած իրավիճակին նոր լարուածութիւն չհաղորդելու ակընկալիքով, սակայն իրադրութիւնը մնաց անփոփոխ, Արմէնակ Աբրահամեանը այդ ամէնին անհաղորդ, ինքնավստահ ու անտարբեր:

Երեք ամիս անց Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան այժմ արդէն նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից հրապարակ բերուեց ինքնաստեղծ Սահմանադրութեան հիմքի վրայ ձեւակերպուած զոյգ անօրինական ու ապօրինի հրամանագրերը, որոնք էլ առիթ հանդիսացան Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան մէջ ստեղծուած այս նոր իրավիճակի ու նաեւ դրա հանգուցալուծման, ինչը իրականացուեց Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանում եւ միանգամայն օրինաչափ կերպով աւարտուեց Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի նախագահական լիազօրութիւնների դադարեցմամբ:

Կեանքում պատահականութիւններ չեն լինում, առաւել եւս 5-րդ նստաշրջանում կայացուած որոշումները պատահականութեան արդիւնք չէին, այլ խորապէս կշռադատուած ու պահանջուած վճիռներ:

Ահա այս որոշումը եւ այլ որոշումներ միտուած էին կարգաւորելու հետեւեալ խնդիրները.

- ա) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի ապօրինի հրամանագրերից ու ոտնձգութիւններից պաշտպանելու համակարգի պաշտօնեաներին, պատգամաւորներին, քաղաքացիներին,
- բ) պաշտպանելու համակարգի թեւերի՝ նախագահական, կառավարութիւն, խորհրդարան ազատութիւնը, անկախութիւնը, լիակատար համագործակցութիւնը,
- գ) պաշտպանելու հայութեան իրաւունքների պաշտպանութեան գործընթացը արտաքին եւ ներքին ոտնձգութիւններից ու թելադրանքներից:

Փաստերն անողոք են եւ, ըստ այդմ, պարզորոշ է, որ իրաւաչափութեան եւ օրինականութեան ճանապարհով ընթացել եւ այս պահին ընթանում է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական այն համակարգը, որի պատասխանատուներն են՝ նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյեանը, վարչապետ Տիգրան Փաշաբեգեանը, խորհրդարանի նախագահ Արմէն Տէր-Սարգսեանը: Նրանք խոստացել են պահպանել ու բարձր պահել օրինականութեան եւ իրաւունքի նշանդրը:

Տիգրան Փաշաբեգեան  
 Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ  
 20.06.2017 թ.

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյեանի ուղերձը պաշտօնեաներին, պատգամաւորներին ու քաղաքացիներին**

Որպէս Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահ պարտքս եմ համարում հանդէս գալ ազգային – պետական ռազմավարութեան տեսակետից կարելոր երեք հարցադրումների նկատմամբ վերաբերմունքով եւ դիրքորոշումով:

- Դրանք են՝
- Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան ընդունման գործընթացի մասին:
- Միջազգային պայմանագրերի վաւերացման հարցի մասին:
- Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի լիազօրութիւնների մասին:

1. Սահմանադրութեան ընդունման ու հաստատման գործընթացի մասին:  
 Սահմանադրութեան ընդունումը պարտադիր քայլերի ամբողջականութիւնից բաղկացած գործընթաց է. Ազգային Ժողովի կողմից կազմում է Սահմանադրութեան նախագծի մշակման յատուկ յանձնաժողով, յատուկ յանձնաժողովը Սահմանադրութեան նախագիծը ներկայացնում է 1-ին, 2-րդ եւ 3-րդ ընթերցման, որից յետոյ դրում է համաժողովրդական քննարկման, այնուհետեւ համաժողովրդական հանրաքուէի եւ հանրաքուէի արդիւնքների համաձայն ընդունում է:  
 Սահմանադրութեան տակ ոչ ոք ստորագրութիւն չի դնում, այդ թւում հանրապետութեան նախագահը, ստորագրութիւն չի դնում որեւէ խումբ կամ կառոյց:



Սակայն այս սկզբունքային հարցերում տեղի է ունեցել ապօրինի ու կամայական մօտեցում՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 4-րդ նստաշրջանին ընթերցուած Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ (այժմ նախկին նախագահ) Արմէնակ Աբրահամեանի զեկոյցում կարդում ենք. «Մեր Սահմանադրութիւնը վաւերացուեց 2016 թ. մայիսի 9-ին...», 17.12.2016:

Զուգահեռ, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 4-րդ նստաշրջանի օրակարգի 9-րդ կէտի համաձայն «2-րդ ընթերցմամբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի հաստատում», 4-րդ նստաշրջանը որոշեց «հաստատել 2-րդ ընթերցմամբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը»: Որոշումն ընդունուել է միաձայն, 17.12.2016:

Այսինքն փաստ է, որ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 4-րդ նստաշրջանը 2-րդ ընթերցմամբ հաստատել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը, 17.12.2016:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը 3-րդ վերջնական ընթերցմամբ հաստատել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագիծը, որը դրուելու է համաժողովրդական քննարկման, 11.06.2017:

Մինչդէռ նախկին նախագահը յամառում է Սահմանադրութեան ինքնաստեղծ օրինակի իր կողմից վաւերացման հարցում, որն անօրինական ու ապօրինի դիրքորոշման արդիւնք է, երբ զիտենք, թէ Սահմանադրութիւնը չի վաւերացում, չի ստորագրում, չի հաստատում, այլ ընդունում է ընթացակարգի աւարտին՝ ժողովրդական հանրաքուէի արդիւնքներով:

Մէջբերենք երեք օրինակ.

ա) «Նախագահական Հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31, ԱՀՀԿ վարչապետի, գործառոյթները դադարեցնելու մասին, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը» նիւթի առաջին տողում կարդում ենք.

«Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ԱՀՀ) Սահմանադրութեան Յօդուած 76-ին»:

բ) «Նախագահական Հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05, ԱՀՀԿ վարչապետի նշանակման մասին, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը է նիւթի առաջին տողում կրկին կարդում ենք.

«Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ԱՀՀ) Սահմանադրութեան Յօդուած 76-ին»:

գ) «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին Գործերու Նախարարութեան թիւ 1-2017.06.13 արձանագրութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) իրաւաբանական յանձնաժողովի որոշումներէ, Երեւան, Յունիսի 13, 2017 թուականէ նիւթի առաջին տողում կարդում ենք.

«Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ԱՀՀ) Սահմանադրութեան Յօդուած 76-ին»:

Երեք դէպքերում էլ յղումներ են արուած չընդունուած Սահմանադրութեան ապօրինի յօդուածների վրայ, փորձելով իրաւականութեան ու իրաւաչափութեան պատրանք ստեղծել, սակայն երեք դէպքերում էլ նիւթերի շարունակութիւնը կարելի է չնայել, որովհետեւ գործ ունենք ակնյայտ անօրինականութեան ու ապօրինութեան նախադէպային փաստերի հետ:

Այդպէս նախկին նախագահը կարող էր եւ կարող է անընդհատ շարունակել ու շարունակել, սակայն դրանով իսկ չի կարող ձեւաւորել պետական համակարգի իրաւական իրական ու ամուր հիմքեր, փոխարէնը կարող է ցնցել ու ցնցել ողջ պետական համակարգը, ինչպէս դա արդէն պատահել է եւ նախկինում, եւ ներկայիս:

Ասուածից պարզ է ու յստակ, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը իրաւունքի ու օրէնքի սկզբունքի ու տառի համաձայն ողջ ընթացակարգը չի անցել, հետեւաբար եւ ընդունուած չէ, ուստի նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմից դրա յօդուածներին յղումներ անելը, հրամանագրեր ու յայտարարութիւններ արձակելը անօրինական ու ապօրինի գործողութիւն է՝ սահմանակցուած իշխանութեան իւրացման փորձին, ինչը բոլոր օրէնսդրութիւններում եւ Սահմանադրութիւններում որակւում է, որպէս յանցագործութիւն:

Այն, որ այսօրինակ ակնյայտ ապօրինութիւնն ու չարդարացուած ճնշումները պատճառ են դարձել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի ներսում լարուած իրադրութեան առաջացման ու դրա անխուսափելի հանգուցալուծման, ամենեւին զարմանալի չէ, աւելին՝ օրինաչափ է:

Յիշեցնենք, որ 2017 թ. յունիսի 11-ին գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում որոշում է ընդունուել 2017 թ. յունիսի 11-ից Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնների դադարեցման մասին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական օրէնքների կոպիտ խախտումների եւ իշխանութեան իւրացման փորձի մեղադրանքներով:

Որպէս Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահ ջանք չեմ խնայելու օրէնքի եւ իրաւունքի ոգուն ու տառին հաւատարիմ առաջնորդելու Սահմանադրութեան ընդունման ընթացակարգը մինչեւ վերջ, դրանով իսկ ապահովելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի օրէնսդրական ամուր հիմքն ու անժխտելի իրաւաչափութիւնը:

**2.** Միջազգային պայմանագրերի վաւերացման հարցի մասին:

Միջազգային պայմանագրերի վաւերացման հարցում նոյնպէս առկայ է ընթացակարգի խնդիրը. պայմանագրի ստորագրում, պայմանագրի քննարկում խորհրդարանում եւ

համապատասխան որոշման կայացում, կայացում՝ որոշման հիման վրայ օրենքի ձեւակերպում, օրենքի ստորագրում նախագահի կողմից:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահի կողմից առաջադրուած ու նրա կողմից միակողմանի փոփոխուած Սահմանադրութեան օրինակում կարդում ենք.

Յօդուած 76. «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը Պայմանագիրներու վաւերացման վերաբերեալ

Կէտ 8) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահին կ'ողմէ վաւերացման ենթակայ են այն միջազգային պայմանագիրները, որոնք ունի քաղաքական կամ ռազմական բնոյթ, կամ կը նախատեսեն պետական սահմանի փոփոխութիւն»:

Նոյն ձեւակերպումը կարդում ենք նաեւ 107-րդ յօդուածում.

Յօդուած 107. «Ազգային ժողովը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի առաջարկութեամբ կը վաւերացնէ, կը կ'ասեցնէ կամ չեղեալ կը ետյտարարէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագիրները, բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի»:

Կրկնենք. «...բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի»:

Հնարաւոր է, որ ազգային - պետական նշանակութեան այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն», ենթակայ լինեն մէկ մարդու կամքին ու քմահաճոյքին, նոյնիսկ եթէ նա նախագահ է:

Բացառուած է: Եւ նման օրինակ չէք գտնի աշխարհի եւ ոչ մի քաղաքակիրթ երկրի Գլխաւոր օրէնքում՝ ոչ մի երկրի Սահմանադրութեան մէջ:

Այս կարեւորագոյն հարցում եւս յօդուածը պէտք է ձեւակերպուած լինի այնպէս, ինչպէս ընդունուած է «Միջազգային պայմանագրերի վաւերացման մասին» ընթացակարգում, ըստ քայլերի հերթականութեան, եւ ոչ թէ նախկին նախագահի յամառութեան ու քմահաճոյքի:

**3. Նախագահի լիազօրութիւնների մասին:**

Նախագահի լիազօրութիւնները պէտք է լինեն ճիշտ այնքան, որքան նախատեսում է երկրի պետական կառավարման համակարգի ընտրութիւնը. նախագահական, նախագահա-խորհրդարանական, խորհրդարանա-նախագահական եւ այլ...

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի մէջ նշուած է. «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը նախագահա-խորհրդարանական հանրապետութիւն է»:

Հետևաբար, այստեղ նախագահի լիազորությունները այնքան են, որքան թելադրում է կառավարման համակարգի այս ձևը, բայց ոչ երբեք միապետական:

Այս դեպքում կարելու է նոյնիսկ, թե ի՞նչ ձևակերպում է տրուում նախագահի պարագային՝ «նախագահ», «նախագահ՝ պետութեան գլուխ», թե «պետութեան գլուխ՝ նախագահ», որովհետեւ իրականում պարտականությունների ու լիազորությունների հարցը կարգաւորում է օրէնքով, օրէնքի համապատասխան բաժիններում՝ նախագահ, խորհրդարան, կառավարութիւն, որտեղ յստակ նշուած են նաեւ, թե լիազորությունների, թե իշխանութեան թելերի հաւասարակշռութեան, եւ թե արդիւնաւետ համագործակցութեան սահմանները, դրանց չափն ու կշիռը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանը ձգտել է բացարձակ լիազորությունների, որոնք նախատեսուած չեն եղել ոչ «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» կանոնակարգ օրէնքով (11.06.2014) եւ ոչ էլ յատուկ յանձնաժողովի ներկայացրած Սահմանադրութեան նախագծի օրինակով: Դրանք ամէն անգամ նախկին նախագահը միակողմանի փոփոխել է իր նախագահական յաւակնությունների ու շահերի համեմատ, ձգտելով բացարձակ իշխանութեան ողջ պետական համակարգի նկատմամբ:

Դրա վառ ապացոյցը նրա կողմից միակողմանի փոփոխուած Սահմանադրութեան օրինակն է եւ դրա միակողմանի «վաւերացումը», «ստորագրումը», եւ վերոնշեալ երկու հրամանագրերն ու վերջին յայտարարութիւնը, որոնց՝ օրինականութեան ու իրաւունքի շունչ հաղորդելու փորձեր է արւում, յենուելով չընդունուած Սահմանադրութեան ապօրինի յօդուածների վրայ:

Այժմ լիովին տեսանելի է, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) պետական համակարգը Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի սկզբունքային որոշման հիման վրայ խուսափել է իշխանութեան իւրացման փորձից:

Խնդիրը դիւրին չէ, իրավիճակը կայունացնելու, ապա ամրացնելու, պետական համակարգը դէպի նոր ծրագրային ուղիներ առաջնորդելու հարցը կայ:

Որպէս պատգամաւոր կատարել եմ պարտքս, քուէարկել համակարգի փրկութեան, ազատութեան ու անկախութեան համար:

Որպէս նորընտիր նախագահ, որպէս 1978 թուականից հայաշունչ ազգային ու ազգագրական շարժման ու գործունէութեան անմիջական մասնակից ու դերակատար, այդ թում՝ «Զարթօնք» եւ «Զուարթունք» ազգագրական համոյթների համադեկավար՝ Հայրիկ Մուրադեանի հետ միասին, որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմանների պաշտպանութեան եւ Արցախեան ազատամարտի մասնակից, որպէս արմատներով Սասուն աշխարհից հայ մարդ, մտաւորական ու քաղաքացի՝ անպայման ձգտելու եմ արդարացնել գործընկերների եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքացիների վստահութիւնը:

Նոր երկար ճանապարհի առաջին քայլերն են արուած, միասին ենք, այդ միասնութիւնը կ'օգնի յաջողութեամբ ու պատուով անցնելու մնացած ճանապարհը. ազատագրելու Արեւմտեան Հայաստանը, արդարացի ու վերջնական լուծում տալու Հայկական Հարցին, հաստատելու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը՝ Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ:

Ռադիկ Խամոյեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

23.06.2017 թ.

## **Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Փաշարեզեանի 2-րդ ուղերձը պաշտօնէաներին, պատգամաւորներին ու քաղաքացիներին**

### **Արեւմտեան Հայաստանի, այսպէս կոչուած, կառավարութիւնների մասին**

Ինչպէս պարզուի սովորութային է դառնում ապօրինութիւնների ուղին բռնելը, իրաւական հիմքերին կարելորութիւն չտալը եւ մի նոր «կառավարութեան», ինչպէս նաեւ ինքնակոչ «նախագահի» անուան տակ հանդէս գալը:

Չենք կարող ուշադրութիւն չդարձնել այն իրողութեանը, որ դրանք յաջորդում են Մերձատր Արեւելքում նախապատրաստուող ինչ-ինչ ծրագրերի ու գործողութիւնների, այդ թւում, օրինակ, 2004-ի յուլիսին եւ 2017-ի մայիսին յայտարարուած Իրաքի քրդաբնակ շրջաններում հանրաքուէ անցկացնելու ծրագրերին: Այնքան էլ կարելոր չէ, թէ մեր պետական համակարգի նախկին մասնակիցները ինչ որ բան հասկացել են, թէ՞ ոչ: Կարելորն այս դէպքում փաստերի արձանագրումն է:

Այդ իմաստով եւս մէկ անգամ անդրադառնանք այս հարցին եւ անցնենք առաջ: Մանաւանդ որ, այսպէս կոչուած, կառավարութիւնների բազմաքանակ լինելու հարցը՝ անպայման չէ, որ վնասակար է:

Այսպէս կոչուած, Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնների մասին:

Արեւմտեան Հայաստանի «կառավարութիւնների» իրողութիւնը խօսում է այն մասին, որ այդ կառավարութիւններից կամ ոչ մէկը իրաւաչափ (այսինքն՝ լեգիտիմ) չէ, կամ դրանցից մէկն իրաւաչափ է, որովհետեւ չի կարող այնպէս լինել, որ մէկ կամ աւելի նոյնանուն կ'առոյցներ լինեն եւ միաժամանակ համարուեն իրաւաչափ:

Ըստ այդմ, քննութեան առնենք, թէ երկու յատկանշական թուականներին՝ 2014 եւ 2017, երբ Մերձատր Արեւելքում պատրաստուում էին յատուկ գործողութիւններ, այդ ի՞նչ տեղի ունեցաւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի հետ, որի հետեւանքում «ձեւաւորուեցին» եւս երկու, այսպէս կոչուած, կ'առավարութիւններ:

ա) Այսպէս կոչուած, Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւն, Մայնց, Գերմանիայ (ինքնահռչակուել է՝ 21.07.2014 թ.):

Սա անօրինականութեան առաջին գործողութիւնն է, որն իրականացուել է 2014 թուականի յուլիսի 21-ի, երբ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կայացրած անվստահութեան որոշման (համաձայն՝ «Արեւմտեան Հայաստանի

պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» օրէնքի 14-րդ յօդուածի) (11.06.2014), Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի հրամանագրի (03.07.2014) եւ վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի թիւ 7 որոշման (22.07.2014) հիման վրայ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան (այժմ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն) Արտաքին գործերի նախարարի պաշտօնից ազատուած Արամ Մկրտչեանը հրաւիրել է Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան ապօրինի նիստ, կայացրել ապօրինի որոշումներ ու անօրինական նշանակումներ, այդ թւում, ինքն իրեն վարչապետ նշանակել, որից յետոյ այդ ամէնը փորձել է ներկայացնել, իբրեւ թէ՛ իրաւական ու իրաւաչափ մի գործընթաց:

Յետագայում ստեղծել ու տարածել է ինքնաստեղծ Սահմանադրութեան օրինակ:

բ) Այսպէս կոչուած, Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն, (անօրինական կերպով հիմնուել է նախկին նախագահ Արմէնակ Աբրահամեանի ապօրինի հրամանագրով՝ 31.05.2017 թ.):

Անօրինականութեան երկրորդ գործողութիւնը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի նկատմամբ իրականացուել է 2017 թ. մայիսի 31-ին, երբ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ (այժմ արդէն նախկին նախագահ) Արմէնակ Աբրահամեանը ստորագրել է ապօրինի հրամանագրեր, հիմնուած ապօրինի - ինքնաստեղծ Սահմանադրութեան օրինակի վրայ (Նախագահի հրամանագիր, Թիւ 42 - 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառնությունները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 - 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին), կոպտօրէն խախտելով գործող «Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի կանոնակարգի մասին» օրէնքի յօդուածների պահանջները (11.06.2014):

Այստեղից սկիզբ է առնում ոչ իրաւաչափ երկրորդ «կառավարութեան» ձեւաւորման փորձը, հիմնուած չընդունուած Սահմանադրութեան ապօրինի յօդուածների վրայ:

2017 թ. մայիսի 9-ից, իր կողմից իրականացուած փոփոխութիւններով, պատրաստել ու տարածել է ինքնաստեղծ Սահմանադրութեան օրինակ:

Յիշեցնենք, որ 2017 թ. յունիսի 11-ին Երեւանում գումարուած Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում որոշում է ընդունուել 2017 թ. յունիսի 11-ից Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէնակ Աբրահամեանի լիազօրութիւնների դադարեցման մասին՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական օրէնքների կոպիտ խախտումների եւ իշխանութեան իւրացման փորձի մեղադրանքներով:

գ) Ասուածից զատ, իրականում, մնում է ներկայացնել առաջին ու իրաւասու միակ պետական կառոյցի՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) Կառավարութեան անցած ճանապարհը, միաժամանակ ներկայացնելով փաստեր նրա

իրաւաչափութեան վերաբերեալ (գործում է ստեղծման պահից՝ 04.02.2011 թ., մինչեւ այսօր, վարչապետն է Տիգրան Փաշաբեգեանը):

2011 թ. փետրուարի 4-ին Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհրդի որոշումով սկսուել է Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան ձեւաւորման գործընթացը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի ձեւաւորման առաջին քայլն է սա:

Այնուհետեւ Արեւմտեան Հայաստանի հայերի ինքնութեան (յետագայում ինքնութեան ու քաղաքացիութեան) համակարգի ձեւաւորման միջոցով ընթացել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական կառոյցի օրէնսդրական փաթեթի՝ հռչակագրերի, օրէնքների, որոշումների ու հրամանագրերի ընդունման գործընթացը, որի տրամաբանական շարունակութիւնը «Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին» հռչակագրի ընդունումն է (24.05.2013):

2013 թուականի նոյեմբերի 22-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը՝ ամբողջ աշխարհում բնակուող Արեւմտեան Հայաստանի քաղաքացիները, առաջին անգամ, իրականացրել են Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորների ընտրութիւններ:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման պատգամաւորների մանդատների հաստատումը, խորհրդարանի 1-ին գումարման 1-ին նստաշրջանի անցկացումը եւ խորհրդարանի ձեւաւորումը տեղի է ունեցել 2014 թ. յունուարի 18-20-ը:

2014 թ. յունուարի 20-ին խորհրդարանը ընտրել է նախագահ, նախագահը խորհրդարանի հաստատմանն է ներկայացրել վարչապետի թեկնածութիւնը, վարչապետը ձեռնարկել է կառավարութեան ձեւաւորումը:

Այսպէս ամբողջացել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի ձեւաւորումը, որը 2014 թ. օգոստոսի 10-ից կոչում է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն (Հայաստան):

2017 թ. յունիսի 11-ին Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը 3-րդ ընթերցմամբ հաստատել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը, որը սկզբում դրուելու է համաժողովրդական քննարկման եւ ապա հանրաքուէի:

«Արեւմտեան Հայաստանի պետական կառուցուածքի, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորների կարգավիճակի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրէնքի՝ 9-րդ յօդուածի համաձայն՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2017 թ. յունիսի 11-ին գումարուած 5-րդ նստաշրջանում ընտրուել է նախագահ, ում առաջարկով, համաձայն սոյն օրէնքի 44-րդ յօդուածի, խորհրդարանը վերահաստատել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Տիգրան Փաշաբեգեանի թեկնածութիւնը:

Բոլոր նրանք, ովքեր փորձում են չտեսնելու տալ եւ կամ «արդարացնել» օրէնքից ու օրինականութիւնից ա) եւ բ) կէտերում ներկայացուած ապօրինութիւնները, միգուցէ պնդելով, թէ՛ «այլ ելք չէր մնացել...», նոյնիսկ օրէնքն ու օրինականութիւնը խախտելու գնով, թող յիշեն, որ ամէն ինչ սկսում է հենց այդպէս եւ հենց դրանից...

Եւ թող յիշեն, որ այդ դէպքում այլեւս իրաւունք չունեն տրտնջալու ու բողոքելու այն իրողութիւններից եւ իրավիճակներից, որոնք պատահել են հայութեան ազգային ու պետական, հասարակական ու ընկերային կեանքում ու կենսագործունէութեան մէջ:

2017 թ. յունիսի 11-ը, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի անցկացումն ու որոշումները սովորական երեւոյթներ չէին, դրանք մեր մէջ հաստատեցին օրինականութիւնն ու բարոյականութիւնը պաշտպանելու մեր պատգամաւորների կամքն ու վճռականութիւնը:

Դրանք միտուած էին պաշտպանելու՝

- ա) հայութեան իրաւունքների հետապնդման գործընթացը ու նրա շարունակելիութիւնը,
- բ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգը եւ քաղաքացիներին, նրանց ազատութիւնն ու անկախութիւնը,
- գ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի պաշտօնեաներին, պատգամաւորներին, քաղաքացիներին՝ ապօրինի հրամանագրերից ու ոտնձգութիւններից:

Իրաւաչափ է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան այն կառավարութիւնը եւ այն պետական համակարգը, որի պատասխանատուներն են՝ նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյեանը, վարչապետ Տիգրան Փաշաբեգեանը, խորհրդարանի նախագահ Արմէն Տէր-Սարգսեանը:

Նրանք գիտեն, որ պարտաւոր են արդարացնել գործընկերների՝ պատգամաւորների, պաշտօնեաների ու քաղաքացիների վստահութիւնը, որի ամենակարճ եւ ուղիղ ճանապարհը՝ օրինականութեան ու իրաւունքի սկզբունքներին հաւատարիմ լինելն է:

Տիգրան Փաշաբեգեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ

17.07.2017 թ.



ԳԼՈՒԽ VII

ԴԻՄՈՒՄՆԵՐ ՄԱԿ ԵՒ ՅՈՒՆԵՍԿՕ

Միջազգային առաել կարելոր այն Պայմանագրերի, Կոնուենցիաների, Հոչակագրերի եւ Կանոնադրութիւնների ցանկը, որոնք ճանաչել, որոնց միացել եւ վաւերացրել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) (2018 թուականի մարտի 28-ի դրութեամբ)

№	Միջազգային Պայմանագրերի, Կոնուենցիաների, Հոչակագրերի եւ Կանոնադրութիւնների անուանումները
1	Սելրի Խաղաղութեան պայմանագիր, ստորագրուած 10 օգոստոս 1920 թ.
2	«Օովային իրաւունքի մասին» Կոնուենցիայ, ստորագրուած 10 դեկտեմբերի 1982 թ.՝ Մոնտեգո-Բէյ քաղաքում, եւ 29 յուլիսի 1994 թ. համաձայնութեան «Օովային իրաւունքի մասին» Կոնուենցիայի XI մասի իրականացման վերաբերեալ»
3	«Պետութիւնների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին» Կոնուենցիայ (ստորագրուած 26 դեկտեմբեր 1933 թ., Համաամերիկեան պետութիւնների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեւիդէոյի Կոնուենցիայ), որպէս պետութիւնների իրաւունքներ եւ պարտականութիւններ
4	«Գաղութացուած երկրներին եւ ժողովուրդներին անկախութիւն շնորհելու մասին» Հոչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 14 դեկտեմբերի 1960 թ.
5	«Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» Կոնուենցիայ, ընդունուած Գլխաւոր Ասամբլեայի կողմից 9 դեկտեմբերի 1948թ.
6	«Պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների նկատմամբ վաղեմութեան ժամկետ չկիրառելու մասին» Կոնուենցիայ, ընդունուած Գլխաւոր Ասամբլեայի կողմից 26 նոյեմբերի 1968 թ.
7	«Զարգացման իրաւունքի մասին» Հոչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 4 դեկտեմբերի 1986 թ.
8	Մարդու Իրաւունքների Համընդհանուր Հոչակագիր, ընդունուած Գլխաւոր Ասամբլեայի կողմից 10 դեկտեմբերի 1948 թ.
9	«Միջազգային պայմանագրերի իրաւունքի մասին» Վիեննայի Կոնուենցիայ, ընդունուած 23 մայիսի 1969 թ.
10	«Միջազգային հակամարտութիւնների խաղաղ կարգաւորման մասին» Կոնուենցիայ, ընդունուած Հաագայում (Նիդերլանդներ), 18 Հոկտեմբերի 1907 թ.
11	«Զէզոք պետութիւնների եւ անձանց իրաւունքների եւ պարտաւորութիւնների մասին ցամաքային պատերազմի ժամանակ» Կոնուենցիայ, ընդունուած Հաագայում (Նիդերլանդներ), 18 հոկտեմբեր 1907 թ.
12	«Զէզոք պետութիւնների եւ անձանց իրաւունքների եւ պարտաւորութիւնների մասին ծովային պատերազմի ժամանակ» Կոնուենցիայ, ընդունուած

	Հաագայում (Նիդերլանդներ), 18 հոկտեմբեր 1907 թ.
13	«Զինուած հակամարտութեան դէպքում մշակութային արժէքների պաշտպանութեան մասին» Հաագայի Կոնուենցիայ՝ ստորագրուած 1954 թուականի մայիսի 14-ին Հաագայում, Նիդերլանդներ, Հաագայի Կոնուենցիայի Առաջին արձանագրութիւն՝ 14 մայիսի 1954 թ., ուժի մէջ մտած 7 օգոստոսի 1956 թ. եւ Հաագայի Կոնուենցիայի Երկրորդ արձանագրութիւն «Զինուած հակամարտութիւնների դէպքում մշակութային արժէքների պաշտպանութեան մասին» 1954 թ., ընդունուած Դիւանագիտական համաժողովում՝ 26 մարտի 1999 թ.
14	«Զինուած հակամարտութեան դէպքում մշակութային արժէքների պաշտպանութեան մասին» Հաագայի Կոնուենցիայ՝ ստորագրուած 1954 թուականի մայիսի 14-ին Հաագայում, Նիդերլանդներ, Հաագայի Կոնուենցիայի Առաջին արձանագրութիւնը՝ 14 մայիսի 1954 թ., ուժի մէջ մտած 7 օգոստոսի 1956 թ.
15	«Զինուած հակամարտութեան դէպքում մշակութային արժէքների պաշտպանութեան մասին» Հաագայի Կոնուենցիայի Երկրորդ արձանագրութիւնը, 1954 թ., ընդունուած Դիւանագիտական համաժողովում՝ 26 մարտի 1999 թ.
16	«Բնիկ ժողովուրդների իրաւունքների մասին» Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի կողմից 13 սեպտեմբերի 2007 թ.
17	«Կանանց նկատմամբ խտրականութեան բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի Կոնուենցիայ, 18 դեկտեմբեր 1979 թ.
18	«Կանանց նկատմամբ խտրականութեան վերացման մասին» Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի կողմից 7 նոյեմբերի 1967 թ.
19	«Երեխայի իրաւունքների մասին» Կոնուենցիայ, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի կողմից 20 նոյեմբերի 1989 թ.
20	«Ռասայական խտրականութեան բոլոր ձեւերի վերացման մասին» Կոնուենցիայ, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի կողմից 21 դեկտեմբերի 1965թ.
21	«Ռասայական խտրականութեան բոլոր ձեւերի վերացման մասին» Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի կողմից 20 նոյեմբերի 1963 թ.
22	«Ռասայի եւ ռասայական նախապաշարմունքների մասին» ՄԱԿ-ի՝ Կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութեան Հռչակագիր (ՅՈՒՆԵՍԿՕ), ընդունուած Գլխաւոր կոնֆերանսի կողմից 27 նոյեմբերի 1978 թ.
23	«Կրօնի կամ համոզմունքի հիման վրայ անհանդուրժողականութեան եւ խտրականութեան բոլոր ձեւերի վերացման մասին» Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի կողմից 25 նոյեմբերի 1981 թ.
24	«Ազգային կամ էթնիկ, կրօնական եւ լեզուական փոքրամասնութիւններին պատկանող անձանց իրաւունքների մասին» Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլէայի կողմից 18 դեկտեմբերի 1992 թ.
25	«Ապարտէիդի յանցագործութիւնն արգելելու եւ պատժելու մասին» Կոնուենցիայ, ընդունուած Գլխաւոր Ասամբլէայի կողմից 30 նոյեմբերի 1973 թ.
26	ՄԱԿ-ի Կանոնադրութիւն, ստորագրուած 26 յունիսի 1945 թ. Սան Ֆրանցիսկոյի

	ՄԱԿ-ի կոնֆերանսում, ուժի մեջ մտած 24 հոկտեմբերի 1945 թ.
27	«Ազգային եւ միջազգային մակարդակով իրաւունքի գերակայութեան մասին» Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 24 սեպտեմբերի 2012 թ.
28	«Փախստականների կարգավիճակի մասին» Կոնուենցիայ, ընդունուած Փախստականների եւ քաղաքացիութիւն չունեցող անձանց լիազօրուած ներկայացուցիչների կարգավիճակի կոնֆերանսի կողմից 28 յուլիսի 1951 թ., գումարուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի 14 դեկտեմբերի 1950 թ. № 429 (V) բանաձեւի համաձայն
29	«Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին» ՄԱԿ-ի Միջազգային դաշնագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 16 դեկտեմբերի 1966 թ.
30	«Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրաւունքների մասին» ՄԱԿ-ի Միջազգային դաշնագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 16 դեկտեմբերի 1966 թ.
31	«Փախստականների եւ գաղթականների վերաբերեալ» ՄԱԿ-ի Նիւ Եօրքի Հռչակագիր, ընդունուած Գլխաւոր Ասամբլեայի կողմից 19 սեպտեմբերի 2016 թ.
32	ՄԱԿ-ի Հազարամեակի Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 8 սեպտեմբերի 2000 թ.
33	ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի Կանոնադրութեան՝ հիմնադրուած ՄԱԿ-ի Կանոնադրութեամբ, ընդունուած 26 յունիսի 1945 թ., որպէս ՄԱԿ-ի հիմնական դատական մարմին
34	Միջազգային Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի շարժման խարտիան, ընդունուած Ժնեւի 25-րդ Կարմիր խաչի միջազգային համաժողովում 1986 թ. հոկտեմբերին
35	ՄԱԿ-ի Կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի հարցերով կազմակերպութեան Կանոնադրութիւնը (ՅՈՒՆԵՍԿՕ) ընդունուած Լոնդոնում 1945 թ. նոյեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1946 թ. նոյեմբերի 4-ին
36	«Ժողովուրդների խաղաղութեան իրաւունքի մասին» Հռչակագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 1984 թ. նոյեմբերի 12-ին
37	«Մարդու իրաւունքների եւ հիմնարար ազատութիւնների պաշտպանութեան մասին» Եւրոպական Կոնուենցիայ, թիւ 11 եւ 14 արձանագրութիւնների փոփոխութեամբ եւ լրացումներով, Հռոմ, 4 նոյեմբերի 1950 թ.
38	«Միջուկային զենքերի չտարածման մասին» պայմանագիր, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 1968 թ. յունիսի 12-ին
39	«Քիմիական զենքի մշակման, արտադրութեան, պահեստաւորման եւ դրանց ոչնչացման արգելման մասին» Կոնուենցիայ, ընդունուած 13 յունուարի 1993 թ.
40	«Կոռուպցիայի դէմ» Կոնուենցիայ, ընդունուած ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի կողմից 31 հոկտեմբերի 2003 թ.
41	«Բռնութեամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանութեան մասին» Հռչակագիր, ընդունուած Գլխաւոր Ասամբլեայի կողմից 18 դեկտեմբերի 1992 թ.

## ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) դիմել է ՄԱԿ՝ կեանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) հաստատումը ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճռով սահմանազատուած տարածքի վրայ

Ամփոփելով 2011-2018 թթ Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան ոլորտին մէջ իրականացուած աշխատանքները, ինչպէս՝ 1918-1920 թթ. ընթացքին հայ ժողովուրդին տրուած իրաւունքներու վերաբերեալ իրաւական – քաղաքական միասնական փաթեթը, որը հինգ լեզուներով՝ հայերէն (արեւելահայերէն եւ արեւմտահայերէն), անգլերէն, ռուսերէն, ֆրանսերէն, թուրքերէն, տեղադրուած է կառավարութեան եւ խորհրդարանի <http://gov-wa.info> / <http://wa.nt.am> կայք-էջի վրայ, «Իրաւական փաթեթ» բաժնում:

Ամբողջացնելով Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներու պաշտպանութեան ոլորտում կատարուած օրէնսդրական աշխատանքները եւ որպէս արդիւնք ձեւաւորուած իրաւական – քաղաքական – օրէնսդրական դաշտը, որու եզրափակիչ մասն է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախագծի համաժողովրդական քննարկումը, հանրաքուէն եւ անոր արդիւնքներով Սահմանադրութեան ընդունումը:

Ընդունելով, որ Արեւմտեան Հայաստանի հայերու պետականաշինութեան ոլորտում իրականացուած աշխատանքները աւարտուած են. ձեւաւորուած են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) նախագահական համակարգը, կառավարութիւնը, խորհրդարանը եւ անոնց իրաւաչափութեան ապահովման գործընթացները աւարտած են:

Նկատի առնելով, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) ճանաչել, միացել եւ վաւերացրել է առաւել կարելոր Միջազգային պայմանագրերը, Հռչակագրերը, Կոնուենցիաները, որոնց կարգին նաեւ՝ ՄԱԿ-ի Կանոնադրութիւնը, Մարդու Իրաւունքներու Համընդհանուր Հռչակագիրը, «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգիլելու եւ անոր համար պատժի մասին», «Պատերազմի յանցագործութիւններու եւ մարդկութեան դէմ յանցագործութիւններու նկատմամբ վաղեմութեան ժամկետ չկիրառելու մասին», «Գաղութացուած երկիրներուն անկախութիւն շնորհելու մասին», «Պետութիւններու իրաւունքներու եւ պարտականութիւններու մասին» Կոնուենցիաները, Սերի խաղաղութեան պայմանագիրը, «Ռասայական խտրականութեան բոլոր ձեւերու վերացման մասին» Հռչակագիրը, «Միջազգային պայմանագրերու իրաւունքի մասին» Վիեննայի Կոնուենցիան եւ այլ...

Հաշուի առնելով, որ հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան գործընթացի համար եկել է նոր փուլ թեւակոխելու ժամանակը: Որպէս միջազգային իրաւունքի սուբյեկտ՝ հանդիսանալով 20-րդ դարու 20-ական թթ. Հայաստան պետութեան անխզելի

շարունակողը (continuity) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) ստանձնել է Հայաստան պետութեան բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները եւ համաձայն՝ «Պետութիւններու իրաւունքներու եւ պարտականութիւններու մասին» Կոնունեցիայի (Մոնթեվիտեոյի Կոնուենցիա) կը տիրապետէ անհրաժեշտ յատկանիշներու՝ ա) մշտական բնակչութիւն, բ) որոշակի տարածք, գ) կառավարութիւն, դ) այլ պետութիւններու հետ հարաբերութիւններու մէջ մտնելու ունակութիւն, յայտարարել է իր մշտական, դրական, զինուած չեզոքութիւնը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) որոշել է դիմել ՄԱԿ՝  
ա/ անդամակցութեան,  
բ/ ինչպէս նաեւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. Նոյեմբերի 22-ին կայացուցած Իրաւարար վճիռը կեանքի կոչելու, իրականացնելու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան պետութեան) հաստատումը Իրաւարար վճռով սահմանազատուած տարածքի վրայ,  
գ/ եւ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիոյ Հանրապետութեան բռնագաւաթիչ ուժերը դուրս բերելու վերաբերեալ:

Համապատասխան երեք դիմումնագրերը 2018 թ. մայիս եւ նոյեմբեր ամիսներին ուղարկուել են ՄԱԿ:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) Լրատուական Ծառայութիւն 29 Նոյեմբերի, 2018 թ.

### **ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ**

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) դիմել է ՄԱԿ՝ Հայաստան պետութեան եւ Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ սահմանազատումն իրականացնելու վերաբերեալ առաջարկով**

Սերի խաղաղութեան պայմանագրի կնքման 99-րդ տարեդարձի նախօրեակին Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) դիմել է ՄԱԿ՝ Հայաստան պետութեան եւ Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ սահմանազատումն իրականացնելու վերաբերեալ առաջարկով, հաշուի առնելով՝ Փարիզի խաղաղութեան վեհաժողովի Հայաստան պետութեան սահմանները որոշող Յատուկ յանձնաժողովի 1920 թ. փետրուարի 24-ի զեկոյց-առաջարկը:

Սերի խաղաղութեան պայմանագրի Հայաստանին վերաբերող յօդուածների կեանքի կոչումն ու իրականացումը վճռական քայլ է հայ ժողովրդի իրաւունքների կայացման եւ Հայկական Հարցի վերջնական կարգաւորման գործում:

Սույն դիմումնագիրը թուով չորրորդն է: Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) պետական կառոյցները 2018 թ.-ին որոշում են կայացրել եւ դիմել ՄԱԿ՝  
ա) անդամակցութեան,

բ) ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ին կայացրած Իրաւարար վճիռը կեանքի կոչելու, իրականացնելու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան պետութեան) հաստատումը Իրաւարար վճռով սահմանազատուած տարածքի վրա,

գ) Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետութեան բռնազաւթիչ ուժերը դուրս բերելու վերաբերեալ:

Նշեալ դիմումագրերը 2018 թ. Մայիս, Նոյեմբեր եւ 2019 թ. Օգոստոս ամիսներին ուղարկուել են ՄԱԿ:

Բոլոր դիմումագրերին կարող եք ծանոթանալ հայերէն, ռուսերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) կառավարութեան եւ խորհրդարանի պաշտօնական հետեւեալ կայքերում՝

<http://gov-wa.info>,

<http://parliament-wa.info/> :

Հայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան ոլորտում վերջապես եկել է նոր գործընթաց սկսելու ժամանակը, որն էլ իրականացում է այսօր:

Դիմումագրերը պատրաստելիս հաշուի են առնուել հայ պատմաբանների, իրաւագետների, գիտնականների ուսումնասիրութիւնները, հետազոտութիւնները, հրատարակութիւնները, այդ թում՝ Ջոն Կիրակոսեանի, Ռուբեն Սահակեանի, Մկրտիչ Ներսիսեանի, Յուրի Բարսեղովի, Ալեքսանդր Մանասեանի, Արա Պապեանի, ինչպէս նաեւ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, կարգաւորման ուղիներ» փաստաթղթերի ժողովածուի նիւթերը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) Լրատուական Ծառայութիւն 7 Օգոստոսի, 2019 թ.

## **Բաց նամակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխաւոր տնօրենին, տիկին Օդրէ Ագուլէ-ին**

### **Յարգելի տիկին Օդրէ Ագուլէ**

Թոյլ տվեք Ձեզ յայտնել իմ խորին յարգանքը եւ մէկ անգամ եւս հաստատել, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը (Հայաստան) 2018 թվականի մարտի 20-ին ճանաչել ու վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կանոնադրութիւնը, ամբողջովին ընդունում է կազմակերպութեան յայտարարած սկզբունքներն ու նպատակները, այն է. «...նպաստել խաղաղութեան եւ անվտանգութեան պահպանմանը զարկ տալով միջազգային համագործակցութեանը կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի բնագավառներում բարեփոխումների իրականացման միջոցով, նպատակ ունենալով ՄԱԿ-ի Կանոնադրութեամբ հռչակուած հիմնարար ազատութիւնների հետ մէկտեղ մեծացնել համընդհանուր յարգանքը արդարութեան, օրենքի ուժի, մարդու իրաւունքների

նկատմամբ, ՄԱԿ-ի Կանոնադրութեամբ հռչակուած մարդու իրաւունքների եւ հիմնարար ազատութիւնների ապահովման, բոլոր ժողովուրդների համար, առանց ռասայի, սեռի, լեզուի կամ կրօնի տարբերակման»:

Յարգանքով եմ վերաբերում Ձեզ եւ Ձեր աշխատանքին: Ձեր շնորհիվ իրականացում են շատ կարեւոր աշխատանքներ պահպանելու համար մարդկութեան մշակութային, թե նիւթական, եւ թէ ոչ նիւթական ժառանգութիւնը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդունած կոնուենցիաների շնորհիվ միջազգային հանրութիւնը միաւորում է հասնելու համար ընդհանուր նպատակների, պահպանելու մարդկութեան մշակութային ժառանգութիւնը:

Միեւնոյն ժամանակ, պետք է նշեմ, որ խորապէս հիասթափուած եւ զարմացած եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգութեան կոմիտեի 43-րդ նստաշրջանի անցկացման նպատակով երկրի ընտրութեամբ, որը տեղի ունեցավ 2019 թվականի յունիսի 30-ից մինչեւ յուլիսի 10-ը Ադրբեջանի Հանրապետութիւնում, Բաքում: Նստաշրջանը քննարկում էր Համաշխարհային ժառանգութեան օբյեկտների պահպանութեան վիճակը եւ ընդգրկում նոր օբյեկտներ Համաշխարհային ժառանգութեան ցուցակում: Ես կասկածում եմ Ձեր աշխատակիցների իրազեկութեան վերաբերեալ, որոնք պետք է ուսումնասիրէին այն երկիրը, որտեղ նրանք պատրաստում էին անցկացնել 43-րդ նստաշրջանը:

Ադրբեջանի Հանրապետութիւնը, պետութիւն է, որի կառավարութիւնը աւերել է եւ շարունակում է ոչնչացնել բազմաթիվ հին հուշարձաններ, եկեղեցիներ, հայ ժողովրդի մշակութային ժառանգութիւնը: Այս ամենի վերաբերեալ խօսուն օրինակ է Ադրբեջանի Հանրապետութեան, Արցախի եւ Նախիջեւանի տարածքում գտնվող 89 միջնադարեան հայկական եկեղեցիների, 5480 խաչքարերի եւ 22,700 գերեզմանների ոչնչացումը, այդ թում՝ Ազուլիսում 400 խաչքարերի եւ 2005 թ. Նախիջեւանում Ջուղայի հազարաւոր միջնադարեան բնօրինակ եւ հնագոյն խաչքարերի ոչնչացումը:

Վերոնշյալի առնչութեամբ անհասկանալի է ՅՈՒՆԵՍԿՕ-ի դիրքորոշումը նստաշրջան եւ այլ միջոցառումներ անցկացնել երկրներում, որոնց կառավարութիւնները չեն խոչընդոտում մշակութային հուշարձանների ոչնչացմանը: Դեռ բոլորովին վերջերս ամբողջ աշխարհը սգում էր Պալմիրան եւ այժմ ամբողջ աշխարհը վերականգնում է այն, ինչ դեռեւս հնարաւոր է վերականգնել բարբարոսական գործողութիւններից հետո:

Ցավոք, մեր հուշարձանները վերականգման ենթակա չեն: Նրանք ոչնչացւում են, ջնջւում են, փոշու վերածւում: Բազմաթիվ պատմաբաններ եւ լրագրողներ հաստատում են այն եզրակացութիւնը, որ Ադրբեջանում տարբեր գործիչներ զբաղուած են մէկ ուրիշի պատմական եւ մշակութային ժառանգութեան յուրացման եւ կեղծման մէջ՝ լինեն դրանք խորհրդանշաններ, երաժշտութիւն, խոհանոց, կիրառական արուեստ, ճարտարապետութիւն... եւ պատմութիւն: Ադրբեջանի Հանրապետութեան կառավարութեան կողմից այս խախտումների եւ յանցագործութիւնների նկատմամբ

պատշաճ իրաւական գնահատական եւ հակադարձում չկա: Դեռեւս չկա եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Տիկին Ագուլէ, Դուք կոչ եք անում յարգել Համաշխարհային ժառանգութեան մասին կոնուենցիաների ոգին, որպէս միասնութեան շարժիչ ուժ, բայց Ադրբեջանի Հանրապետութեան ղեկավարութիւնը անտեսում է դրանք: Այլ կերպ ինչպէ՞ս բացատրել այդպիսի անհերքելի հակաքաղաքակրթական վերաբերմունքը այլ երկրների եւ ժողովուրդների մշակութային ժառանգութեան նկատմամբ: Ոչ այլ կերպ, քան ձգտում ջնջելու հիշողութիւնը մի ժողովրդի վերաբերյալ, որն ապրել ու ստեղծագործել է այս հողում: Եվ, կարծես, ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատակիցները դրա մասին չգիտեն:

Ես ուզում եմ հիշեցնել Ձեր խոսքերը, որոնք հնչել են նստաշրջանի բացմանը, որ ժառանգութիւնը երբեք չպետք է գործածուի հասարակութիւնը բաժանելու կամ մէկ խմբի յիշատակը մյուս խմբի դէմ օգտագործելու նպատակին: Ընտրելով մի երկիր, որը ոչնչացնում է մէկ այլ ժողովրդի մշակութային ժառանգութիւնը, դուք ինքներդ հակասում եք Ձեզ:

Որպէս մշակոյթի եւ արվեստի ներկայացուցիչ, ես համոզուած եմ, որ մեր ազնիվ, ճշմարիտ եւ անկաշառ ու բարձր առաքելութիւնից է կախուած նաեւ, ինչպէս երկրների վարած քաղաքականութիւնը, այնպէս էլ ժողովուրդների միջեւ հարաբերութիւնների կարգաւորումը եւ համաշխարհային մշակութային ժառանգութեան պահպանումը՝ հաջորդ սերունդների համար:

Ձեր խոսքում հիշեցրիք վստահութեան մասին. «Համաշխարհային ժառանգութեան մասին» Կոնուենցիան համընդհանուր բարիքի շուրջ երկխօսութեան համար նախատեսուած մի քանի ֆորումներից մէկն է, որ դրա իրականացումը ղեկավարում է գիտական փորձով, որն ապահովում է վստահութիւնը նրա նկատմամբ»:

Կարծում եմ խելամիտ կլինի Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վրա, որ մի երկրի ընտրութիւնը եւ հանդիպումներ ու նստաշրջան այդ երկրում անցկացնելու փաստը, որտեղ «դէ ֆակտո» էթնիկ հայերի համար մուտքն արգելուած է, անկախ նրանց քաղաքացիութիւնից, եւ դա կարող է հանգեցնել քրեական հետապնդման եւ բանտարկութեան՝ լրագրողներին, գիտնականներին, հասարակական գործիչներին եւ շարքային մարդկանց, ովքեր ծագումով հայ են, գրկում է նման միջոցառումներին մասնակցելու հնարաւորութիւնից:

Նման տարօրինակ եւ վատ մտածուած ընտրութիւնը հանդիսանում է իրաւունքների շատ ակնյայտ ու անմիջական սահմանափակում եւ անթոյլատրելի է, ինչպէս իրաւական, այնպէս էլ էթնիկական տեսանկիւնից:

Հուսով եմ, որ Դուք եւ Ձեր գործընկերները կքննարկեք ներկայացուած բոլոր փաստարկները եւ հիմնաւորուած ու ողջամիտ որոշում կկայացնեք, որպէսզի հետագայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո կազմակերպուած նստաշրջաններն ու միջոցառումները չկատարվեն այնպիսի երկրներում, որտեղ խախտում են ՅՈՒՆԵՍԿՕ-



ի եւ «Համաշխարհային ժառանգութեան մասին» Կոնուենցիայի հիմնական սկզբունքները, որտեղ մարդկութեան մշակութային ժառանգութեան պահպանման փոխարեն, դրանք պաշտպանուած չեն ինչպէս հարկն է եւ նոյնիսկ ոչնչացուած են:

Խնդրում եմ Ձեզ ստուգումներ անցկացնել կապուած Ադրբեջանի Հանրապետութեան եւ այլ երկրների ընտրութեան վաւերականութեան հետ, որոնք բացառում են այլ ազգութիւնների ներկայացուցիչների մասնակցութիւնը միջոցառումներին:

Յարգանքներով,

Յուլիա Գյուլտեան,

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) Մշակոյթի նախարար

22 Յուլիսի, 2019 թ.

## ԴԻՄՈՒՄ

**Միացեալ Ազգերի Կազմակերպութեան Անվտանգութեան Խորհրդի անդամ-  
պետութիւններին, Եւրոպական Խորհրդարանին, Եւրոպայի Խորհրդի անդամ-  
պետութիւններին,**

**յոյն, հայ եւ ասորի ժողովրդներին, նրանց հոգեւոր ու ազգային առաջնորդներին, ինչպէս  
նաեւ Մեծ Մերձաւոր Արեւելքի եւ Բալկանների ժողովրդներին, ում պատմական  
իրաւունքները ոտնահարուած էին Թուրքիայի պետութեան եւ կառավարութիւնների  
կողմից**

**(Կիպրոսի Հանրապետութեան հիւսիսային մասի՝ Թուրքիայի Հանրապետութեան կողմից  
բռնազաւթման 45-ամեակի առթիւ)**

Մենք՝ ներքոստորագրեալնեւ, կոչ ենք անում յոյն, հայ եւ ասորի, ինչպէս նաեւ Մեծ Մերձաւոր Արեւելքի եւ Բալկանների միւս ժողովրդներին՝ ռազմավարական համագործակցութիւն հաստատել պատմական արդարութեան եւ միջազգային իրաւունքի հիման վրայ: Մենք մեր պարտքն ենք համարում վերջապէս իրականացնել մեր ազգերի այն իրաւունքները, որոնք արտօնուած էին մեզ եւ նշուած էին միջազգային պայմանագրերում եւ կոնուենցիաներում, սակայն կեանքի չէին կոչուել:

Այս դիմումը հենուում է կոնկրետ պատմական փաստերի վրայ, որոնք արձանագրուած են միջազգային փաստաթղթերում: Դրանք են.

- ՄԱԿ-ի թիւ 541 և 550 որոշումները, ուղղուած աշխարհի պետութիւններին՝ 1974 թուին Թուրքիայի Հանրապետութեան կողմից բռնազաւթուած Կիպրոսի

Հանրապետության հիւսիսային մասը որպէս Հիւսիսային Կիպրոս պետական ձեւաւորում չճանաչելուն: Փաստօրէն մենք այսօր նշում ենք Թուրքիայի Հանրապետության կողմից Կիպրոսի Հանրապետության հիւսիսային մասի բռնազավթման 45-ամեակը:

- Թուրքիայի Հանրապետության կողմից Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի բռնազավթման 99-ամեակը:
- Անհրաժեշտ ենք համարում յիշեցնել, որ Առաջին աշխարհամարտի արդիւնքները որոշուած էին 1919-1920 թթ. Միջազգային պայմանագրերի Վերսալեան համակարգով: Թուրքիայի պարտաւորութիւնները Մեծ Մերձաւոր Արեւելքի, Բալկանների, Միջերկրածովեան եւ Սեւծովեան աւազանների երկրների առջեւ ամրագրուած էին 1920 թ. Սեւրի հաշտութեան պայմանագրով, որը Միջազգային պայմանագրերի Վերսալեան համակարգի հիմնարար եւ հանգուցային պայմանագրերից մէկն է:
- 1918 թ. յունուարի 11-ի՝ Ռուսաստանի Կառավարութեան Դեկրետը (Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի) «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտեան Հայաստանի մասին»):
- Ազգերի Լիգայի յանձնարարութեամբ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրոյ Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրաւարար վճիռը (Լրիւ անուանումը՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահ Վուդրոյ Վիլսոնի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ պետական սահմանի հաստատման, Հայաստանի՝ դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերեալ»)
- Սեւրի հաշտութեան պայմանագիրը՝ Քրդստանի ինքնավարութեան վերաբերեալ եւ յետագայում դրա կողմից անկախութիւն ձեռքբերելու հաւանականութեան մասով (համապատասխան 62, 63, 64 յօդուածների դրոյթների):

Հարկ ենք համարում նաեւ արձանագրել, որ թուրքական պետութիւնը՝ իրար յաջորդող կառավարութիւններով աւելի քան հարիւր տարի է շարունակում է ցեղասպանութեան եւ պետական ահաբեկչութեան քաղաքականութիւնը պետութեան՝ յոյն, հայ եւ ասորի քաղաքացիների հանդէպ, որոնք տարածաշրջանի բնիկ ժողովրդներին են պատկանում: 1920-ական թթ. վերջից նոյն քաղաքականութիւնն է վարում նաեւ քրդերի եւ եզդիների հանդէպ:

Այսպիսով թուրքական պետութիւնը շարունակում է բնիկ ժողովրդների նկատմամբ իր՝ հալածանքի, կոտորածի եւ տեղահանութեան ցեղասպան քաղաքականութիւնը, ստիպելով նրանց լքելու իրենց բնակութեան վայրերը:

Տեղին ենք համարում մէկ անգամ եւս թուարկել թուրք պետութեան այն յանցագործութիւնները, որոնք Մեծ Բրիտանիայի, Ռուսական Կայսրութեան եւ Ֆրանսիայի Հանրապետութեան 1915 թ. մայիսի 24-ի համատեղ յայտարարութեան մէջ որակուել են որպէս «Թուրքիայի նոր ոճիրները մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ»:

- Պանթիրքիզմի եւ նորսամանիզմի քօղի ներքոյ այլատեացութեան (քսենոֆոբիայի), ռասիզմի, ազգային առաւելութեան գաղափարախօսութեան քարոզ՝ թիրքալեզու ժողովուրդների ջջանում:
- Հայ ժողովրդի ցեղասպանութիւնը եւ տեղահանութիւնը 1894-1923 թթ. իրար յաջորդող թուրքական՝ սուլթանական, երիտթուրքական եւ քեմալիստական կառավարութիւնների կողմից:
- Յոյն ժողովրդի ցեղասպանութիւնը եւ տեղահանութիւնը 1915-1923 թթ.:
- Ասորի ժողովրդի ցեղասպանութիւնը եւ տեղահանութիւնը 1915-1923 թթ.:
- Հայերի ցեղասպանութիւնը Բաքում 1918 թ.:
- Հայերի եւ ալեւիների ջարդերն ու ցեղասպանութիւնը Դերսիմում (Թունջելի) 1937-1938 թթ.:
- Յոյների եւ հայերի ջարդերը Կոստանդնուպոլսում, Անկարայում եւ Իզմիրում, 1955 թ. սեպտեմբերի 6-7:
- Յոյների, հայերի, ասորիների եւ այլ բնիկ ազգերի պատմական, հոգեւոր, մշակութային եւ նիւթական յուշարձանների փչացումը, սեփականացումը կամ ոչնչացումը 1894-1923 թթ., որ շարունակուում է մինչեւ օրս:
- Թուրքիայի պատմագրութեան կեղծարարութիւն յոյների, հայերի, ասորիների եւ տարածաշրջանի այլ բնիկ ժողովրդների պատմութեան հաշուին:
- Քեմալ Աթաթուրքի հրամանով 1931 թ. ստեղծուել է «թուրքական պատմական ընկերութիւնը»: Այդ ընկերութեան կազմում ընդգրկուել են թուրք եւ արտասահմանցի վարձու պատմաբաններ, ում յանձնարարուած էր մաքրել արխիւները, կեղծել օսմանեան սրի տակ ապրած ազգերի հին պատմութիւնը եւ յօրինել նորը: Արխիւներն, իհարկէ, մաքրել կարելի է, բայց ինչպե՞ս է կարելի բացատրել միլիոնաւոր յոյների, հայերի, ասորիների անհետանալը Օսմանեան կայսրութեան տարածքից:
- Յոյների, հայերի, ասորիների ցեղասպանութեան փաստի ու պատմական իրողութիւնների մերժում, որը դուրս է բերում Թուրքիայի Հանրապետութեան կառավարութեանը ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ դրա համար պատժի մասին միջազգային հանրութեան ընդունած համաձայնութիւնից:

Սա Թուրքիայի իրար յաջորդող կառավարութիւնների յանցագործութիւնների ոչ լրիւ ցուցակն է. յանցագործութիւնների, որ կատարուել են Մեծ Մերձաւոր Արեւելքի, Բալկանների, Միջերկրածովեան եւ Սեւծովեան աւազանների յոյն, հայ, ասորի եւ այլազգերի նկատմամբ, մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ վերջին 100 տարում եւ որոնք շարունակուում են մինչեւ օրս:

Թուրքիայի Հանրապետութեան կառավարութիւնը չպատժուեց 1974 թ. Կիպրոսի Հանրապետութեան հիւսիսային մասի բռնազաւթման համար: Ուստի լկտիացած Թուրքիայի Հանրապետութեան այսօրուայ իշխանութիւնը շարունակուում է կոպտօրէն խախտել միջազգային իրաւունքի բոլոր նորմերը:

Ահա թե ինչու ենք մենք այսօր դիմում տարածաշրջանի յոյն, հայ, ասորի եւ միւս ազգերին, նրանց ազգային եւ հոգեւոր առաջնորդներին՝ պատմականօրէն անպատիժ մնացած բռնազաւթիչին դիմակայելու միասնական մարտավարութիւն եւ ազգավարութիւն մշակելու համար իրենց ուժերը միաւորելու առաջարկով: Մենք անհրաժեշտ ենք համարում հետամուտ լինել բռնազաւթուած տարածքների վերադարձման եւ մեր ազգերի ոսնահարուած իրաւունքների վերականգման գործին:

Միայն այդպիսի համատեղ, միացեալ ուժերով եւ ջանքերով մենք կը կանոդանանք վերջ դնել Թուրքիայի Հանրապետութեան՝ Մեծ Մերձաւոր Արեւելքի, Բալկանների, Միջերկրածովեան եւ Մեծովեան աւազանների ժողովրդների եւ պետութիւնների դէմ ուղղուած պետական ահաբեկչութեանը:

Մենք բոլորս ականատես ենք այն վայրագութիւններին, որ Թուրքիայի Հանրապետութիւնն այսօր իրականացնում է Մերձաւոր Արեւելքում եւ Միջերկրածովայքում, անուղղելի վնաս հասցնելով Սիրիայի, Իրաքի, Կիպրոսի պետականութեանն ու ինքիշխանութեանը եւ, որ ամենակարեւորն է, այդ տարածաշրջանում ապրող ժողովրդների կեանքին ու բարեկեցութեանը: Թուրքական այդ անօրինութիւններին պէտք է վերջ դնել:

Մենք համոզուած ենք, որ միջազգային հանրութիւնը՝ յանձինս Միացեալ Ազգերի Կազմակերպութեան, պարտաւոր է առաւելագոյն ջանքեր դնել տարածաշրջանի ժողովրդների ապրելու, զարգանալու եւ ապագայ ունենալու հիմնարար իրաւունքներն ապահովելու համար:

Միաժամանակ, այդ նպատակներին հասնելու եւ բռնազաւթիչին սանձելու համար մենք դիմում ենք տարածաշրջանի բոլոր ուժերին՝ միաւորուելու կոչով: Յուսով ենք, որ մեր դիմումն ընկալուելու է ըմբռնումով եւ կառուցողական արձագանք է գտնելու:

Էդուարդ Պօլատիդիս (Փոլատով)  
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր,  
Հայաստանի եւ Արցախի յոյների «պատրիդաւ կազմակերպութեան նախագահ,  
Արցախեան պատերազմի վետերանների «թալիշ. Սահմանամերձ բնակավայրերէ հայրենասիրական կազմակերպութեան նախագահ

Դաւիթ Խինուեւ  
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր,  
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) բնիկ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնութիւնների հարցերով մշտական յանձնաժողովի նախագահ,  
Ռուսաստանեան «ասիրիաւ հայրենասիրական շարժման նախագահ

Մարտիկ Գասպարեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւոր,  
Վերականգման ու փոխհատուցման հարցերի միջազգային անկախ փորձագիտական-  
իրաւական կենտրոնի նախագահ,

Աշխարհի ազգերի հոգեւոր միասնութեան միջազգային ակադեմիայի փոխնախագահ,  
Ռուսաստանի գիտութիւնների ակադեմիայի գիտական խորհրդի անդամ, Ռուսաստանի  
բնական գիտութիւնների ակադեմիայի ակադեմիկոս, տնտեսական գիտութիւնների  
դոկտոր պրոֆէսոր

24 հոկտեմբեր 2019 թ.

## ՀԱԻԵԼՈՒԱԾ

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ինքնութեան եւ քաղաքացիութեան դիմում**  
**Application form for getting the citizenship of the Republic of Western Armenia**

	<b>Հայերէն</b>	<b>In English</b>
<b>Անուն</b> Name / Имя		
<b>Ազգանուն</b> Surname / Фамилия		
<b>Հայրանուն</b> Middle name/ Отчество		
<b>Մօր անունը եւ ազգանունը</b> Mother's first and last names / Фамилия и имя матери		
<b>Ծննդեան տարեթիւ</b> Date of Birth / Дата рождения	(Օրը, ամիսը, տարին) / (День, месяц, год)	(Day, month, year)
<b>Ծննդավայր</b> Date of birth / Место рождения	(Երկիրը, քաղաքը) / (Страна, город)	(Country, city)
<b>Արմատը</b> Roots / Корни		
<b>Ազգութիւն</b> Nationality / Национальность		
<b>Քաղաքացիութիւն</b> Citizenship/ Гражданство		
<b>Ներկայի բնակութեան հասցեն</b> Home address/ Адрес проживания	(Փոստային համարը, երկիրը, քաղաքը, փողոցը, շէնքը, բնակարանը) / (Почтовый индекс, страна, город, улица, дом, квартира)	(ZIP-code, country, city, street, house, apartmen)
<b>Անձնագիր</b> Passport / Паспорт	(Անունուճր, թիւը, ստանալու ամսաթիւր, վաւերական էմիսիոն) / (Наименование, номер, дата выдачи, срок действия)	(Name, number, date of issue, expiry date)
<b>Էլ. Հասցե</b> E-mail		
<b>Հեռախօս</b> Telephone / Телефон		
<b>Skype</b> Скайп		
<b>Լուսանկար</b> Photo / Фото		
<b>Ստորագրութիւն</b> Signature / Подпись		
<b>Ամսաթիւ</b> Date / Дата		

## ԻՆՉՊԷՍ ՍՏԱՆԱԼ

### Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն

Համաձայն ՄԱԿ-ի 1948 թուականի դեկտեմբերի 10-ի Մարդու Իրաւունքների Համընդհանուր Հռչակագրի 21-րդ յօդուածի եւ 2007 թուականի սեպտեմբերի 13-ի «Բնիկ ժողովուրդների իրաւունքների մասին» Հռչակագրի `ստեղծուած է Արեւմտեան Հայաստանի հայերի ազգային ինքնութեան եւ քաղաքացիութեան համակարգ, որի վրայ կառուցուած է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան պետութիւն) պետական կառոյցների իրաւական - քաղաքական հիմքերը, այդ թում` Արեւմտեան Հայաստանի հայերի իրաւունքների պաշտպանութեան եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութեան շնորհման այս ամբողջ գործընթացը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի կարող է դառնալ յուրաքանչիւրը, ում նախնիներից մէկը արմատներով Արեւմտեան Հայաստանից է եւ կամ ցեղասպանութիւնից վերապրած:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան իրաւասու մարմին, լրացնել սույն դիմումագիրը, դրան կցել պահանջուած փաստաթղթերը եւ ուղարկել հետեւեալ էլ. հասցեով` [citizenshipwesternarmenia@gmail.com](mailto:citizenshipwesternarmenia@gmail.com):

Քաղաքացիութիւն ստանալու համար պահանջուող փաստաթղթերը`

- Քաղաքացիութիւն ստանալու դիմում
- Անձը հաստատող փաստաթղթի պատճեն
- Լուսանկար անձնագրի (ID CARD) համար

Դիմումը կարելի է լրացնել Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական կայքերում` [www.western-armenia.info](http://www.western-armenia.info), [www.parliament-wa.info](http://www.parliament-wa.info), [www.gov-wa.info](http://www.gov-wa.info), [www.wa.nt.am](http://www.wa.nt.am) կամ [www.citizenship-western-armenia.info](http://www.citizenship-western-armenia.info), պատասխանելով այնտեղ նշուած հարցերին` հաստատելով, որ ընդունում եք Արեւմտեան Հայաստանի հայերի քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքները, ինչպէս նաեւ «Արեւմտեան Հայաստանի հայերի եւ Արեւմտեան Հայաստանի իրաւունքների պաշտպանութեան [իրաւական-քաղաքական միասնական փաթեթ](#)»-ի հիմնադրոյթներն ու սկզբունքները, ապա սեղմելով ուղարկելու կոճակը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալը անվճար է Ձեր դիմումին որպէս պատասխան` կը ստանաք գրանցումն ու քաղաքացիութիւնը հաստատող էլեկտրոնային նամակ: Այդ գրանցումը հաստատող նամակը Ձեզ իրաւունք է տալիս, որպէս Արեւմտեան Հայաստանի քաղաքացի` մասնակցելու Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամաւորների ընտրութիւններին, հանրաքուէներին, ընտրելու եւ ընտրուելու, ինչպէս նաեւ լիարժեք մասնակցելու Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պետական համակարգի աշխատանքներին:

Եթե ցանկանում եք ստանալ նաև քաղաքացիությունը հաստատող անձնագիր (ID CARD) եւ վկայական, ապա դրա համար պետք է վերը նշված պաշտոնական կայքերում՝ [www.western-armenia.info](http://www.western-armenia.info), [www.parliament-wa.info](http://www.parliament-wa.info), [www.gov-wa.info](http://www.gov-wa.info), [www.wa.nt.am](http://www.wa.nt.am) կամ [www.citizenship-western-armenia.info](http://www.citizenship-western-armenia.info), ընտրել համապատասխան լեզուով դիմումի օրինակը, լրացնել այն եւ վճարել 30 եվրո: Այդ գումարը նախատեսված է անձնագրի (ID CARD) եւ վկայականի պատրաստման, փոստային առաքումների ծախսերի համար: Լրացուած դիմումը պետք է ուղարկել հետեւեալ էլ. հասցեով՝ [citizenshipwesternarmenia@gmail.com](mailto:citizenshipwesternarmenia@gmail.com), սեղմելով ուղարկելու կոճակը:

Վճարումը կարելի է կատարել կանխիկ կամ բանկային փոխանցման միջոցով: Անձնագրի (ID CARD) եւ վկայականի պատրաստութեան ժամանակամիջոցը մինչեւ 6 ամիս է:

Հավելեալ տեղեկությունների համար դիմել հետեւեալ էլ. հասցեով՝ [citizenshipwesternarmenia@gmail.com](mailto:citizenshipwesternarmenia@gmail.com):

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին գործերի նախարարութեան անձնագրային բաժին:



# ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ՔԱՐՏԷԶՆԵՐ

## Հայկական պահանջներու քարտեզը



1919-ի սկիզբը Փարիզի մեջ հրաւիրուեցաւ Հայ ազգային համագումար: Համագումարի կարեւոր ձեռնարկներէն մէկը եղաւ «Ամբողջական Հայաստանի պատուիրակութեան» ընտրութիւնը Պօղոս Նուպարի ու Աւետիս Ահարոնեանի համանախագահութեամբ եւ նախապէս պատրաստուած ու 1919-ի Փետրուար 12-ին Փարիզի հաշտութեան խորհրդածոյցովին ներկայացուած հայկական պահանջներու համատեղ յուշագիրին վաւերացումը, որ կը հիմնաւորէր հայկական անկախ պետութեան ստեղծման անհրաժեշտութիւնը եւ կը ճշտէր անոր տարածքը Արեւմտեան Հայաստանի եօթ վիլայեթներու (ներառեալ Տրապիզոնը), Հայաստանի Հանրապետութեան եւ Կիլիկիոյ միացումով:

Միացեալ պատուիրակութիւնը Փետրուար 26-ին ներկայացաւ Տասի խորհուրդի նիստին՝ կրկնելով յուշագիրի հիմնական պահանջները: Պատուիրակութեան ընդունեց (1919-ի Ապրիլ 17-ին) նաեւ ԱՄՆ Նախագահ Վուորո Ուիլսոնը եւ հաւաստիացուց, որ հնարաւոր ամէն ինչ պիտի ընէ հայերու տարածքային պահանջները պաշտպանելու համար: 1920-ի Յունուար 19-ին Փարիզի խորհրդածոյցովը տէ ֆաքթօ ճանչցաւ Հայաստան պետութեան անկախութիւնը:



Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահ Պօղոս Նուպար



Սերի խաղաղութեան պայմանագրի մասնակիցները



Զօրավար Անդրանիկ




Թիւրքական պատուիրակութիւնը իր ստորագրութիւնը կը դնէ  
Սեւրի խաղաղութեան պայմանագրի տակ



## ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուոդրո Ուիլսոնի կայացուցած Իրաւարար վճիռի քարտեզը




1920 թ. Նոյեմբեր 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուոդրո Ուիլսոնը կայացուց Իրաւարար վճիռ, որուն ամբողջական անուանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թիւրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»:



Կիլիկիոյ քարտէզը



### Պօղոս Նուբար եւ Աւետիս Ահարոնեան կը տեղեկացուին Հայկական պետութեան ճանաչման մասին



1918 թ. Յունուար 13-ին Պետրոգրադի մէջ հրապարակուեցաւ «Թիւրքահայաստանի մասին» (Արեւմտեան Հայաստանի մասին) Հռչակագիրը, ուր «Ռուսաստանը կը հռչակէ Հայաստանի ինքնավարութիւնը. Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը կը յայտնէ հայ ժողովուրդին, որ Ռուսաստանի բանուորագիւղացիական կառավարութիւնը կը պաշտպանէ Ռուսաստանի կողմէն գրաւուած Թիւրքահայաստանի հայերու իրաւունքը՝ ազատօրէն ինքնորոշուելու, ներառեալ նոյնիսկ անոնց անկախութեան իրաւունքը»։ Յետագային այս դրոյթը զետեղուեցաւ 1918 թ. ԽՍՀՄ Սահմանադրութեան 6-րդ յօդուածի մէջ։





Հայաստանի ազգագրական քարտեզը

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն  
(Հայաստան)

Արեւմտեան Հայաստանի հայերու եւ  
Արեւմտեան Հայաստանի իրաւունքներու  
պաշտպանութեան իրաւական-քաղաքական  
միասնական փաթեթ

2019 թ.

-----

«Նոյեան Տապան Հոլտինկ»-ի հրատարակչութիւն  
Թարգմանությունը՝ «Եռագույն»-ի, «Մալբի Տ»-ի, եւ Մովսէս Նաջարեանի  
Համակարգչային ձեւաւորում՝ Տիանա Գրիգորեան  
Տպագրութիւն՝ օֆսէթ, չափը՝ 14.8X21, թուղթը՝ օֆսէթ, 70գ.,  
ծաւալը՝ 5 մամուլ:

«Նոյեան Տապան» տպագրատուն  
ՀՀ, Երեւան 0009, Իսահակեան 28  
Հեռ.՝ (+374 60) 27 64 62  
Էլ. փոստ՝ contact@nt.am,

URL: [www.nt.am](http://www.nt.am)